

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ



ԿՈՆՏՐՈԼՆԻԿԱՆ
ՍԵՐԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ВОПРОСЫ ИСТОРИИ
АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

✓
ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A $\frac{11}{65109}$

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

9185-80



ՀԱՅԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստի-
տուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
բանաս. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ,
բանաս. գիտ. քեկնաժու Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանաս. գիտ. քեկնաժուներ Պ. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ, Ե. Կ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Բ 241 Հայոց լեզվի պատմության հարցեր /Պատ. խմբա-
գիրներ՝ Վ. Առաքելյան, Լ. Հովսեփյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ
հրատ., 1981,—213 էջ:

Ժողովածուի մեջ ղետեղված աշխատությունները նվիրված են
հայ հին մատենագրության երկու նշանավոր դեմքերի (Սեբեոս,
Հովհ. Մամիկոնյան) աշխատությունների լեզվի քննությանը: Ի հայտ
են բերված այն առանձին հատկությունները, որոնք բնորոշ էին հին
գրական հայերենի զարգացման սովյալ փուլին (VII—VIII դդ.):

4601000000

Հ————— 38—81
703 (02)—81

4 Ap
ԳՄԴ 81.2ԴՀ

Ա.Ռ.Ա.ԶԱՐԱՆ

Ներկա ժողովածուով սկսվում է հայոց լեզվի պատմության առանձին հարցերին նվիրված ուսումնասիրությունների շարքը, որոնց հիման վրա ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նպատակ ունի ստեղծել հայոց լեզվի ամբողջական պատմությունը:

Հայերենի պատմական զարգացման քննության ուղղությամբ հայագիտության մեջ ղգալի աշխատանք է կատարվել, հատկապես վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Նախ նշենք, որ ուսումնասիրողի տրամադրության տակ է դրվել բավական հարուստ փաստական նյութ. հրատարակվել են հին, միջին և նոր հայերենով գրված բազմաթիվ և բազմաբնույթ մատենագրական աղբյուրներ, անցյալի բառարանագրության հուշարձաններ, ի մի են բերվել և պարբերաբար հրապարակվել վիմագրական նյութը, ձեռագրերի հիշատակարանները, հայ հին մատենագիրների երկերի համաբարբառները և այլն:

Այնուհետև, որպես լեզվի պատմական նկարագրության անհրաժեշտ ելակետ ու նախապայման, մշակվել է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը¹, ձևավորվել են պատմական լեզվաբանության հիմնական տեսական սկզբունքներն ու ելակետերը, կազմվել է «Հայոց լեզվի պատմություն» աշխատության ընդարձակ նախագիծը:

Ինչ վերաբերում է լեզվական նյութի բուն ուսումնասիրությանը, ապա այստեղ ևս հայ լեզվաբանությունը որոշակի նվաճումների է հասել: Փորձեր են արվել ներկայացնելու հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը ինչպես ամբողջությամբ վերցրած², առնպես էլ ըստ

1 Տե՛ս Գ. Ռ. Զանովյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Ե., 1964:

2 Հ. Անաոյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, 2, Ե., 1940—1951, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1954, նույնի, Հայոց գրական լեզվի պատմություն, Ա, Ե., 1961, Գ. Ռ. Զանովյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

առանձին ժամանակահատվածներին³։ Հայերենի զարգացման անցած փուլերի քերականական կառուցվածքի կամ նրա այս կամ այն կողմի նկարագրությանը, առանձին լեզվական իրողությունների պատմական զարգացման ուսումնասիրությանը, ինչպես նաև հայոց լեզվի պատմության մասնակի հարցերի քննությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ, որոնք բոլորը այստեղ հնարավոր չէ թվարկել⁴։

Մյուս կողմից, սակայն, մենում են հայոց լեզվի պատմության քիչ հետազոտված բնագավառներ, կնճռոտ խնդիրներ, որոնք կարոտ են ուսումնասիրության։ Այդպիսի խնդիրներից են հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում լեզվական իրողությունների բնութագրումը, լեզվի գոյության տարբեր ձևերի (տարածական և հասարակական տարբերակների) գործառության ոլորտների որոշումը, գրական լեզուների ձևավորման առանձնահատկությունների, լեզվական փոփոխությունների բնույթի ու պատճառների բացահայտումը, նորագոյացումների առաջացման ու տարածման ժամանակագրության որոշումը, ինչպես նաև հայերենի քերականական կառուցվածքի, հնչյունական համակարգի, բառապաշարի պատմական զարգացման մի շարք կոնկրետ առանձնահատկությունների պարզաբանման հետ կապված հարցերը։ Դեռևս լիովին պարզաբանված չեն անցումային ժամանակաշրջանների լեզվավիճակները՝ ետ-դասական, նախամիջինհայերենյան, աշխարհաբարացման և այլն։

Հայագիտության կարևորագույն խնդիրներից է նաև պատմական

3 Գ. Ա. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն* (հին շրջան), Ե., 1961, Ս. Ա. Գալստյան, *Ակնարկներ աշխարհաբարի պատմության*, Ե., 1963, Տ. Ա. Շահբազյան, *Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը*, Ե., 1963, Г. Б. Джаукян, *Очерки по истории дописменного периода армянского языка*, Е., 1967, Վ. Լ. Աճեմյան, *Գրական արևմտահայերենի ձևավորումը*, Ե., 1971, Ալեանկեհ միջին գրական հայերենի պատմության, հ. հ. Ա—Բ, Ե., 1972—1975, Ռ. Ա. Խլիանյան, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Ե., 1978, նույնի. *Նոր գրական հայերենը*, XVII—XVIII դդ., Ե., 1979 և այլն։

4 Հիշատակենք գրանցից միայն մի քանիսը. Ս. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձևաբար*, Ե., 1958, Գ. Բ. Զահուկյան, *Հին հայերենի հոլովման սխեման* և նրա ծագումը, Ե., 1959, Է. Բ. Աղայան, *Գրաբարի քերականություն*, 1 ա, Ե., 1964, Э. Г. Туманян, *Древнеармянский язык*, М., 1971, ինչպես նաև՝ К. И. Кусикьян, *Очерки исторического синтаксиса литературного армянского языка*, М., 1959, Э. Г. Туманян, *Очерки исторического развития падежных форм новоармянского литературного языка*, М., 1964, Հայերենի պատմական ֆեռականություն (*«Բառագիտություն»* և *«Խոնարհման համակարգի պատմական զարգացումը»*) հ. 2, Ե., 1975 և այլն։

ոճագիտության ստեղծումը, մասնավորապես, հին և միջին դրական հայերենների գործառական ոճերի ձևավորման ու զարգացման, անհատական և գործառական ոճերի հարաբերության հարցերի լուծումը:

Հայտնի է, որ գրաբար մատենագրության լեզվի ոճաբանական քննությունը սկիզբ է դրվել բավական վաղուց, այդ հարցով զբաղվել են այնպիսի հայագետ-լեզվաբաններ, ինչպիսիք են Ա. Գարագաշյանը, Ա. Այտընյանը, Ն. Բյուզանդացին, Հ. Գաթրճյանը, Հ. Թոռնյանը, Հ. Սպենյանը, Ն. Ակինյանը և ուրիշներ. մեր ժամանակներում՝ հատկապես Վ. Առաքելյանը: Սակայն նրանց ուշադրության կենտրոնում էին հիմնականում գրաբարի դասական շրջանի հեղինակների երկերը, նրանց ոճական դասակարգումն ու բնութագրումը: Ավելի ուշ շրջանի գրաբարագիր հեղինակների լեզուն (բացի Նարեկացուց⁵) այդ առումով զրեթե չի ուսումնասիրված: Ներկա ժողովածուի մեջ ամփոփված աշխատությունները որոշ չափով գալիս են լրացնելու այդ բացը:

Գ. Բաղդիշյանի աշխատությունը նվիրված է ոճագիտական առումով շուտամասիրված մի ստեղծագործության՝ VII դ. հեղինակ Սեբեոսի «Պատմության» լեզվին: Համառոտ կերպով անդրադառնալով Սեբեոսի և նրա երկի հետ կապված բանասիրական հարցերին, ուսումնասիրության հեղինակը առանձին բաժիններով քննում է «Պատմության» բառապաշարի իմաստային, ծագումնաբանական, բառակազմական հարցերը, բացահայտում է այդ երկում տեղ գտած առանձնահատուկ քերականական իրողությունները, այնուհետև անդրադառնում հեղինակի կիրառած ոճական միջոցներին ու հնարանքներին:

Վ. Համբարձումյանի «Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը» ուսումնասիրությունը նվիրված է հայ հին մատենագրության՝ ոճական տեսակետից ուշադրավ մի երկի քննությանը: Վ. Համբարձումյանը անդրադառնում է այդ գրական հուշարձանի և նրա հեղինակի անձնավորության հետ կապված հարցերին, զննահատում է այդ ստեղծագործությանը նվիրված աշխատությունները, բանասիրական և լեզվական փաստերի համադրումով գալիս է այն եզրակացության, որ Հ. Մամիկոնյանը VIII դարի մատենագիր է: Աշխատության մեջ մանրամասն քննվում են երկի լեզվի բառապաշարիմաստային, բառակազմական և քերականական առանձնահատկությունները: Բառապաշարը քննվում է ըստ առանձին շերտերի կամ գործառական-իմաստային դաշտերի, հատուկ ուշադրություն է դարձվում նորա-

5 Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975:

բանություններին, փորձ է արվում բացահայտել նրանց առաջացման ակունքները: Դարձվածաբանական միավորները ուսումնասիրվում են ըստ ծագման, կառուցվածքի և կիրառման առանձնահատկությունների: Բացահայտվում է քննված լեզվական միավորների ոճական արժեքը:

Հատորում տեղ գտած երկու ուսումնասիրություններում էլ ընտրված հեղինակների ոճը դիտվում է որպես իրենց ժամանակի գործառական ոճերից մեկի՝ պատմագրական մատենագրության ձևի արտահայտություն, միաժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում հեղինակների լեզվաոճական անհատական նախասիրությունների բացահայտմանը: Հ. Մամիկոնյանի և Սեբեոսի լեզվում հայտնաբերված նորաբանությունները, քերականական նոր երևույթների կիրառությունների փաստերը կարևոր նշանակություն ունեն հին գրական հայերենի ետ-դասական շրջանի հետագա ուսումնասիրության տեսակետից:

1. Հովսեփյան

ՍԵՔԵՈՍԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն¹

Սեբեոսը VII դարի հայ նշանավոր պատմիչ է: Նրա գրած Պատմությունը երկար ժամանակ համարվում էր կորած: Մեր մատենագրության մեջ նրա կենսագրության մասին ոչինչ չի ասվում: Միջնադարյան մի քանի հեղինակներ (Ստեփանոս Ասողիկ, Մխիթար Անեցի, Կիրակոս Գանձակեցի և այլն) նշում են միայն, որ նա գրել է Հերակլի մասին մի աշխատություն: Սեբեոսն ինքն էլ իր մասին չի գրում: Մինչև այժմ այս պատմիչի ծննդյան ու մահվան ստույգ թվականները հայտնի չեն:

Սեբեոսի Պատմությունն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն դարերից մինչև 661 թվականը:

Սեբեոսը հայագիտությանն առաջին անգամ ներկայացվում է Հովհաննես Շահխաթունյան եպիսկոպոսի միջոցով, որը էջմիածնի մատենադարանում գտնում է առանց հեղինակի ու վերնագրի մի ձեռագիր²: Ուսումնասիրելով այն՝ ենթադրում է, թե իր հայտնաբերած ձեռագիրը հայ պատմիչների կողմից հիշված Սեբեոսի Պատմությունն

¹ Մեր այս աշխատության կապակցությամբ հաշվի ենք առել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալ. Մարգարյանի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Կարապետյանի և Երեանի Խ. Արթուրյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի կողմից արված այն դիտողությունները, որոնք մեր կողմից համարվել են ընդունելի:

² Սեբեոսի Պատմությունը ուսումնասիրողները Հ. Շահխաթունյանի կողմից այդ երկի հայտնաբերման տարեթիվը նշում են 1842: Այսպես է վարվում նաև Գ. Աբգարյանը (տե՛ս Գ. Աբգարյան, Բանասիրական հետախուզումներ, «Բանբեր Մատենադարան», № 4, 1958, էջ 61): Սակայն մի այլ աշխատության մեջ գրում է. «...դեռ 1831 թվականին ծանոթ է եղել (իմա՛ Հ. Շահխաթունյանը— Գ. Բ.) «Սեբեոսի Պատմությանը» (տե՛ս Գ. Վ. Աբգարյան, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 15):

է Հերակլի մասին: Այդ համոզմամբ էլ ձեռագրի վրա գրում է «Սերէ-
ոսի եպիսկոպոսի Պատմութիւն ի Հերակլն»:

Ներսես Շինող կաթողիկոսը 645 թվականին Դվինում հրավիրում
է մեզ հայտնի եկեղեցական ժողովը: Այդ ժողովում ընդունված և մեզ
ալմանդված «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն» խորագրով փաստա-
թղթի վերջում ստորագրել են 17 մասնակիցներ (անշուշտ, հեղինակա-
վոր անձինք): Այդ ստորագրութիւններից ութերորդը «Սէբէոս Բագ-
րատունեաց եպիսկոպոս»-ն է³: Հենց այս անձնավորութեանն էլ Հ. Շահ-
խաթունյանը նույնացնում է Սերբոս պատմիչի հետ: Այսպիսով, հայ
բանասիրութեան մեջ մտնում է Հ. Շահխաթունյանի կարծիքը ձեռագրի
հեղինակի⁴ ու վերնագրի⁵ կապակցութեամբ:

³ Տե՛ս «Կանոնգիրք հայոց», Ձեռագրերի համեմատութեամբ խմբեց Արսէն
Ղլտճեան, Թիֆլիզ, 1913, էջ 130:

⁴ Գ. Արզարյանը «Բանասիրական հետախուզումներում» և հատկապես արդեն
նշված աշխատության մեջ (1965 թ.) առաջին անգամ այն միտքն է հայտնում, թե
մեզ հայտնի Սերբոսի Պատմութիւնը Սերբոսին չի պատկանում, այլ՝ դարձյալ VII
դարում ապրած պատմիչ խոսրովին, իսկ Հերակլի մասին Սերբոսի գրած Պատմութիւնը
դեռ հայտնաբերված չէ (տե՛ս ակնարկված աշխատության հատկապես «Ուսումնասի-
րութեան գլխավոր արդյունքները» գլուխը, էջ 205—206):

Պ. Անանյանն իր «Ո՞վ է Սերբոսի Պատմութեան հեղինակը» գրախոսականում
(տե՛ս «Բաղմամէլ», Վննետիկ, 1970, № 1—3) համեմատում է հատկապես Ասողիկի
այն հատվածները, որոնցում խոսվում է Հերակլի մասին: «...համեմատութիւնը ցոյց
կու տայ՝ թէ Ասողիկ իր քաղուածքը բրած է ճիշտ այս մեր ձեռքը եղած Սերբոսի
Պատմութիւնէն. որովհետեւ ոչ միայն Ասողիկի բոլոր պատմածները, կամ տուած տե-
ղեկութիւնները՝ կան Սերբոսի Պատմութեան մէջ, այլ նաեւ կան բառեր ու բացատրու-
թիւններ, որոնք ուղղակի առնուած են Սերբոսի բնագրէն...» (անդ, էջ 12): Մի այլ
տեղ գրում է. «Ուրեմն Ասողիկի օգտագործած Սերբոսի Պատմութիւն Հերակլի գիրքը
և Շահխաթունեանի ձեռքով Սերբոսի վերագրուած պատմական գրութիւնը՝ նոյն գիրքն
է» (անդ, էջ 15): «Ուրեմն,— գրում է Պ. Անանյանը,— վերոյիշեալ Պատմութիւնը
խոսրովի վերագրելու փաստը՝ հիմնուած է վարդան Բաղիշեցիի (Ժէ. դար) «առանց
կասկածի այդ անունը նշելու» վրայ: Բայց այդ նշումը, եթէ նոյն իսկ բացատրութիւն
մը ունենար (այն է՝ խոսրովի անունը անպայման Պատմութեան հեղինակի անուն նկա-
տելու), տակաւին բաւարար պիտի չըլլար Վարդանի վկայութիւնը անվերապահօրէն
ընդունելու, երբ ԺԱ. դարէն Ասողիկի վկայութիւնը կա՝ նոյն Պատմութիւնը Սերբոս
եպիսկոպոսին վերագրող» (անդ, էջ 20): Պ. Անանյանը նշում է նաեւ, որ Վարդան Բա-
ղիշեցու նշած խոսրովը կարող է հասկացվել նաեւ ոչ թե պատմիչի անունը, այլ Սե-
րբոսի Պատմութեան գլխավոր դեմքերից մեկը: Պ. Անանյանի կարծիքը բավական հըս-
տակ է և համոզիչ:

⁵ Իհարկեւ, հետագայում հայտնվել են կարծիքներ այն մասին, թե Սերբոսի Պատ-
մութիւնը չէր կարող Հերակլի անունով կոչվել, որովհետեւ գրքում Հերակլի մասին

Ճիշտ է, Սեբեոսի լեզուն դիջում է Եղիշեի, Խորենացու, Ագաթանգեղոսի լեզվի պատկերավորությունը, գեղարվեստականությունը և վեհությունը, բայց նրա Պատմությունում էլ կան գեղարվեստորեն կատարյալ որոշ հատվածներ: Սեբեոսի լեզվի ոճական պոսպոսությունը, նրա գեղարվեստական արտահայտչականությունը, համանիշների առատությունը, վկայում են այն մասին, որ նա եղել է կրթված հոգեվոր անձ⁶:

Նշանակալից է Սեբեոսի գերը հայ պատմական գրականության

ընդամենը մի քանի գլխում է խոսվում: Ստ. Մալխասյանցը 1939 թվականին այս Պատմությունը հրատարակեց՝ վերնագրում առանց շեղակի անունը նշելու (տե՛ս «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», բաղդատովեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939: Այսուհետև՝ Սեբեոս և համապատասխան էջը): Մենք մեր ուսումնասիրությունը կատարել ենք նշված հրատարակության հիման վրա: Նշենք, որ նախապես կաղմել ենք Սեբեոսի Պատմության բնագրային համաբարբառը:

6 Այս կապակցությամբ Ստ. Մալխասյանցը դրում է (նշված հեղինակից կատարված բաղմաճերը բերում ենք հայերենի արդի ուղղագրությամբ). «Սեբեոս, ինչպես երևում է նրա գրվածքից, դպրոցական կրթությամբ զույժ՝ ինքնու առն է, երկար ընթերցանությամբ գրելու վարժությամբ ձեռք բերած. ուստի նրա էպոսի դասական լեզվի մեջ սպրդում են համաձայնական անհարթություններ և ստուգաբանական սխալներ, իբրև նշաններ դրարար լեզվի բայթայման» (ընդգծումը մերն է—Գ. Բ.) (Սեբեոս, «Առաջարան», էջ 2Ա.):

Մեզ թվում է, թե Ստ. Մալխասյանցը մի կողմից չափազանցում է, մյուս կողմից՝ հակասում ինքն իրեն: Եկեղեցական հայտնի ժողովին (645 թ.) մասնակցում է նաև Սեբեոս եպիսկոպոսը: Այս առթիվ Ստ. Մալխասյանցը գրում է. «Դվնա ժողովին ներկա լինելը թվագրում է կարծել, թե նա մասնակցած կլինի Դավանության թղթի հորինման, գուցե և զվաճող խմբագիրը» (անդ, էջ 2):

Իհարկե, Ստ. Մալխասյանցը կարող է միայն ենթադրել: Սակայն դա էլ բավական է, որպեսզի Սեբեոսին համարել իր ժամանակի խիստ զարգացած մարդկանցից մեկը: Նշենք նաև, որ պատմաբանները միաբերան հավաստում են, թե Սեբեոսի նշած ժամանակագրական տվյալները մեծ մասամբ ճիշտ են: Իսկ դրանք բավական շատ են: Ինքնու, միայն «երկար ընթերցանությամբ գրելու վարժություն ձեռք բերած» մարդու համար դժվար կլինի պատմական անցքերի ու դեպքերի այդպիսի մանրազնին, ճշգրիտ նկարագրումը:

VII դարի դրարարը, բնական է, անաղարտությամբ չէր կարող պահպանել V դարի լեզվական վիճակը: Ինչ վերաբերում է այն բանին, որ նրա լեզվում հանդիպում են «համաձայնական անհարթություններ և ստուգաբանական սխալներ», որոնց մասին խոսում է Ստ. Մալխասյանցը, դժվար է ասել՝ Սեբեոսի՞ց են գալիս, թե՞ հետագա ընդօրինակողներից: Կարծում ենք, որ դրանք ուշ շրջանի գրիչների կողմից կատարված միջամտությունների արդյունք են:

մեջ: Բավական է ասել, որ առաջին անգամ նա՝ է գրում Դվինի կարևոր ժողովի⁷, արաբների՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքների (իբրև ակառատես)⁸, Ասորիքի արաբական կառավարիչ Մուվիայի հետ Թեոդորոս Ռշտունու կնքած մի կարևոր պայմանագրի⁹, եզր կաթողիկոսի, Հռիփսիմեի տաճարի կառուցման մասին և այլն: Եվ պատահական չէ, որ Սեբեոսի երկը բարձր են գնահատել հայ բանասիրությունը և պատմագրությունը: Այսպես, օրինակ, Ն. Ակինյանը գրում է. «...այն ստույգ է, որ իր շօշափած նիւթերու նկատմամբ ինքն է (իմա՝ Սեբեոսը — Գ. Բ.) միակ ականակիտ աղբիւրը, յատկապէս Զ. եւ է. դարերու համար»¹⁰:

2. Գաթրըճյանը նշում է. «Ստույգ է որ աս դէպքերն (այսինքն՝ Սեբեոսի Պատմությունում հիշված դեպքերը — Գ. Բ.) ըստ մեծի մասին ծանօթ էին մեզի, բայց չէ թէ ազգային ժամանակակից աղբիւրէ մը, ինչպէս է Սեբէոս, այլ աս բաներս մեծաւ մասամբ իրմէ քաղողներուն պատմութենէն, զոր օրինակ Յովհան կաթողիկոս, Կիրակոս Գանձակեցի, Թովմաս Արծրունի, եւ այլն: Ասանկով Սեբէոս իր բուն պատմական մասին համար միշտ սեպհական յարգ ու հեղինակութիւն կ'ունենայ...»¹¹:

Ավելին, Սեբեոսը երբեմն պատմում է V դարի իրադարձությունների մասին, որոնց վերաբերյալ տեղեկություն չեն տալիս և՛ նույն դարի պատմիչները, և՛ ուշ շրջանից՝ անգամ Ղ. Փարպեցին. «Պատմելով Վահան Մամիկոնյանի զխալորությունը Պերոզի դեմ բարձրացված ապստամբության մասին, — գրում է Վ. Վարդանյանը, — Սեբեոսը հիշատակում է Գերանա դաշտում Վահանի տված մի ճակատամարտը, որին Փարպեցին ծանոթ չէր»¹²:

Պատմիչը հավաստի տեղեկություններ է հաղորդում նաև VII դարում հայերին հարևան ժողովուրդների մասին: Ուստի, «Սեբեոսի երկը մեծարժեք աղբյուր է ամբողջ Մերձավոր արևելքի պատմության հա-

7 Ե. Գ. Տեր-Մինասյան, Այսպես կոչված Պարսից ժողովը («Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 45):

8 Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1968, էջ 33:

9 Անդ, էջ 66—67:

10 Զ. Ներսէս վ. Ակինեան, Մատենագրական հետազոտություններ, հ. Բ, Վիեննա, 1924, էջ 50:

11 Տե՛ս «Եվրոպա», Վիեննա, 1852, № 21:

12 Վ. Զ. Վարդանյան, Հայ գրականությունը VII դարում, Երևան, 1970, էջ 131:

մար և լրացնում, ճշտում է բյուզանդական ու ասորական աղբյուրների տվյալները»¹³:

Խոսելով VII դարում տեղի ունեցած քաղաքական որոշ իրադարձությունների մասին, որոնք համաշխարհային նշանակություն են ունեցել, Գ. Աբգարյանը նշում է, որ հույները, պարսիկները, լատինները և այլ ժողովուրդներ այդ իրադարձություններն իրենց մեջ ամփոփող պատմագրական երկ չեն ստեղծել: «Միակ բացառությունը,— գրում է նա,— միջազգային պատմագրության մեջ կազմում է «Սեբեոսի Պատմությունը», որի հեղինակը ժամանակակից ու ականատես է դարաշրջան կազմող այդ դեպքերին և իր գրվածքով մեզ է հասցրել Անդերկովկասի, Իրանի, Մերձավոր արևելքի և Բյուզանդիայի քաղաքական կյանքին վերաբերող ուշագրավ տեղեկություններ:

Այսպիսով, «Սեբեոսի Պատմություն» շնորհիվ հայ մատենագրությունը գրավում է առաջնակարգ դեր VII դարի համընդհանուր պատմագրության ասպարեզում»¹⁴:

Սեբեոսի Պատմությունը հետաքրքրական է նաև լեզվաոճական առումով: Բանն այն է, որ V—XI դարերը մեզ ավանդված գրականության լեզուն հին հայերենն է՝ զրաբարը¹⁵: Սակայն, զարգացման ներքին ու արտաքին գործոններով պայմանավորված, զրաբարն այդ բավական ընդարձակ ժամանակահատվածում լեզվական-որակական առումով միաձուլվելու միատարր չէր: Հիշյալ դարերի գրական լեզուն, ընդհանուր առմամբ զրաբարը լինելով հանդերձ, յուրաքանչյուր դարում փոփոխվել ու զարգացել է: Այդ փոփոխություններն արդեն XII դարում հանգեցնում են միջին գրական հայերենի կազմավորմանը:

Նշված դարերից յուրաքանչյուրում հայոց լեզվի ուսումնասիրումը, տվյալ ժամանակահատվածում ասլրած հեղինակների լեզվական առանձնահատկությունների հետազոտությունը կնպաստի ինչպես լեզվի զարգացման առանձին շրջանների, այնպես էլ՝ V—XI դարերի լեզվական վիճակի առավել լրիվ ու անթերի նկարագրմանը:

Ասվածք վերաբերում է ինչպես ընդհանրապես VII դարի լեզվավիճակին, այնպես էլ՝ այդ ժամանակի պատմիչ Սեբեոսի լեզվին՝ մասնավորապես:

13 Հայ ժողովրդի պատմություն, առաջին մաս, Երևան, 1958, էջ 153:

14 Գ. Աբգարյան, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 7:

15 Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 36—43:

Ուսումնասիրողները մեծ ու արժեքավոր աշխատանք են կատարել Սեբեոսի Պատմության բնագրի հետազոտության, երկի պատմական արժեքի գնահատման ուղղությամբ: Սեբեոսի զուտ լեզվի ու ոճի ուսումնասիրման կապակցությամբ մեր աշխատանքն առաջին փորձն է:

Սեբեոսը ետդասական շրջանի մատենագիր է: Նրա լեզուն, բնականաբար, հին գրական հայերենն է, որը շատ ընդհանուր գծեր ունի դասական հայերենի հետ: Հետևաբար, մասամբ իրավացի է Գ. Զարբ-հանալյանը, որը մատնանշում է. «Սեբիոսի լեզուն մերձավոր է մեր մատենագրության ոսկի դարուն հեղինակաց»¹⁶: Սակայն տվյալ արտահայտությունը քիչ բան կարող է ասել այդ մերձավորության աստիճանի ու շափի մասին: Պատմիչի լեզվի ու ոճի համակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրումը միայն կարողի, թե Սեբեոսի լեզուն որքանով է մերձավոր «մեր մատենագրության ոսկի դարուն հեղինակաց»:

Մեր ուսումնասիրության նպատակն է եղել ներկայացնել գլխավորապես դասական հայերենի հայտնի նորմաներից ու ձևերից կատարված շեղումները, գտնել այն, ինչը բնորոշ է Սեբեոսի լեզվին և ինչը նոր է վկայված նրա գործում¹⁷ դասական գրաբարի համեմատությամբ, ինչը ավելի աշխույժ կիրառություն է ստանում կամ ընդհակառակը: Օրինակ, դասական գրաբարի համեմատությամբ, հնչյունաբանության մեջ ուշագրավ է բառավերջյան ն-ի անկումը երդումն բառում (երդում ձևով). Օրինակ՝ «Եւ տայ նմա զմարդպանութիւն աշխարհին և զՄամիկոնեաց տէրութիւնն, և երդում առ բազում ի ծառայութիւն, և արձակէ բարեաւ յերկիր իւր» (էջ 26):

Ե խոնարհման բայերի (ժողովեմ, հրամայեմ) հրամայական եղանակի հզակի թիվը ժողովեա՛, հրամայեա՛ լինելու փոխարեն Սեբեոսի

16 Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար), Վենետիկ, 1897, էջ 440:

17 Մենք սա ընդունում ենք պայմանականորեն և վերապահությամբ: Նոր ենք համարում բառական այն միավորները, որոնք չկան «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հ.հ. 1—2, Վենետիկ, 1836—1837, այսուհետե՛ նՁԲ) և «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1865, այսուհետե՛ ԱԲ) բառարաններում, այն փաստերը, որոնք կան ԱԲ-ում, բայց չկան նՁԲ-ում, ինչպես նաև հրատարակված հետևյալ համարաբառներում՝ «Հայկական համարաբառ», № 1—7, Երևան, 1972—1974, Թ. Ասառուածատուրեան, Համարաբառ Հին եւ Նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895: Մեր հետազոտության մեջ օգտագործված վիճակագրական տվյալները բերված են ըստ նշված համարաբառների:

երկում ներկայացված է ժողովէ՛, հրամայէ՛ ձևով¹⁸։ օրինակ՝ «Բայց ե՛կ, առէ, ես զիմա ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել» (էջ 49)։ Այստեղ արդեն նկատվում է երկբարբառների վերացում և գրաբարի խոնարհման համակարգի քայքայում։

Ինչպես դասական գրաբարում, այնպես էլ Սեբեոսի լեզվում հանդիպում են գրության տարբերակներով որոշ բառեր։ Պատմիչի երկում, այս առումով, աչքի են ընկնում հատկապես դասական և քառական թվականները։ Օրինակ՝ երանասուն հազար (էջ 9), 2 հազար (էջ 130), քսաներորդ առաջներորդ (էջ 78), ԽԱ-երորդ (էջ 18), Ի-երորդ առաջներորդ (էջ 15) և այլն։ Սակայն թվականների գրության տարբերակների նման առատությունը հատուկ չէ դասական գրաբարին։

Մի քառական թվականը միջին գրական հայերենում գրվում է մէկ ձևով։ Վերջինս, իբրև մի-ի գրության տարբերակ, գտնում ենք Սեբեոսի լեզվում՝ «Յուլիանոս և Գաղիանոս... մնացին որբ ի մէկ հարէ» (էջ 18)։

Հազար թվականի համար մի հազար գրության տարբերակը ժողովրդական մտածողության արդյունք է։ օրինակ՝ «Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲԹ սպառազէնս և ետուն... մի հազար ցՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունոյ» (էջ 55)։ «Եւ բաժանեցին ժԲ հազար արանց, որ յորդոցն Իսրայելի ի ցեղսն իւրեանց, հազար այր մի ի ցեղ մի՝ առաջնորդել նոցա յերկիրն Իսրայելի» (էջ 106)։

Վերջին օրինակի թվականի բաղադրիչների շարադասությունը նույնպես բնորոշ չէ դասական գրաբարին։

Նշելի է, որ հոգնակի ուղղականում չորհ-ին ղուգահեռ ղգալի հաճախականությամբ գործածվում է նաև չորս-ը (չորհ-ի հոգնակի հայցականը)։ Չորս-ի այսպիսի կիրառությունը հատուկ է միջին դրական հայերենին և հայոց լեզվի զարգացման հետագա շրջաններին։

Պատմիչի լեզվում կան կաթողիկոս //կաթուղիկոս¹⁹, որից էլ՝ կաթողիկոսութիւն//կաթուղիկոսութիւն, կորատոր//կուրատոր։ Բերված տարբերակներից Սեբեոսն ավելի շատ գործածել է կաթուղիկոս-ը՝ 39 անգամ, իսկ կաթողիկոս-ը՝ 3, կուրատոր-ը՝ 2 անգամ, իսկ կուրատոր-ը՝ 1։

18 Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևերակ, Երևան, 1958, էջ 483։

19 ՆՆԲ-ն (հ. 1, էջ 1032) գլխաբառ է դնում կաթողիկոս և ավելացնում՝ «Որ առ մեօր ասի կաթուղիկոս»։

Հ. Մուրադյանը ցույց է տալիս, որ նշված ձևերը հանդիպում են նաև միջին գրական հայերենում²⁰։ Սեբեոսի փաստերը, ինչպես տեսնում ենք, այս երևույթը միջին գրական հայերենից տեղափոխում են շատ ավելի առաջ։ Մեզ թվում է, որ կաթողիկոս//կաթուղիկոս, կաթողիկոսութիւն//կաթուղիկոսութիւն, կորատոր//կուրատոր զուգաձևերը պարզապես խոսակցական, բարբառային լեզվի աղղեցության հետևանք են և ոչ թե լեզվի գրական նորմայում ու> ու օրինաչափ հնչյունափոխություն։ Այսօր էլ որոշ բարբառախոսներ գործածում են կաթուղիկոս, կաթուղիկոսություն և այլ ձևեր։ Բացի սրանից, այս բառերում Սեբեոսի երկում հանդիպում են երկգրության դեպքեր։

Միջին գրական հայերենի համար Հ. Մուրադյանի նշած տումար, տումար, տումար, տումար ձևերից Սեբեոսի գործում հանդիպում ենք միայն տումար-ին (9 անգամ)։ օրինակ՝ «Եւ վաղվաղակի առաքեցաւ նմա տումար գրեալ ձեռամբ թագաւորին» (էջ 102)։

Կարծում ենք՝ այսքանն էլ բավական է՝ մեր ընտրած սկզբունքի վերաբերյալ ընդհանուր կողմերով որոշ պատկերացում տալու համար։

20 Հ. Գ. Մուրադյան, Հնչյունաբանություն («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա., Երևան, 1972, էջ 85։ Այսուհետև՝ «Ակնարկներ...»)։

28-5813

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Սերեոսը գործածել է շուրջ 2570 բառ¹։ Ինչպես որ սպասելի էր, այդ բառերը Սերեոսի լեզվում նույն հաճախականությունը չունեն։ Նրանք հավասարապես բաշխված չեն նաև ըստ գործառական ոլորտների։

Ըստ իմաստային դաշտերի Սերեոսի բառապաշարը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Պատերազմին, զորքին ու զորավարությունը վերաբերող բառեր.— ապստամբ, ապստամբություն, արշաւանք, բանակ, գերի, գումարտակ, զարավար։

2. Հավատքին, կրոնին ու եկեղեցուն վերաբերող բառեր.— հաւատ, աստուած, աստուածասէր, խաչ, խունկ, հեթանոս, մարգարէ, ուղղափառ, սուրբ։

3. Պետական կյանքին և պաշտոնավարությանը վերաբերող բառեր.— արքայ, արքունական, դեսպան, թագաւոր, իշխան, կայսր, պատգամաւոր, սուրհանդակ։


4. Հոգեկան աշխարհ, բնավորություն, հույզ, զգացմունք արտահայտող բառեր.— ահ, աղաչանք, աղիողորմ, ամաթ, ամբարտաւան, անարգանք, հպարտ։

5. Մարդու, կենդանու օրգանիզմի մասեր նշող բառեր.— ագի, ազդր, ականջ, ակն, բազուկ, բերան, գարշապար, գլուխ, ժանիք, լեզու։

6. Ժամանակ նշող բառեր.— ամիս, այգ, այսար, առաւատ, գիշեր, երեկոյ, շաբաթ, ուրբաթ։

7. Բնություն, բնության երևույթներ նշող բառեր.— աղբիւր, անապատ, անտառ, արեղակն։

¹ Չենք հաշվել տարբեր աղբյուրներից Սերեոսի կողմից կատարված մեջբերումների բառապաշարը։ Չենք հաշվել նաև վերնագրերի բառերը, որովհետև դրանք մեծ մասամբ զրկել են Միհրդատյանի կողմից (տե՛ս Սերեոս, «Առաջաբան», էջ 28)։



8. Շինութիւնն և նրա մասերն շող բառեր.— ապարանք, դուռն, կամուրջ, հեծան:

9. Կենդանի շող բառեր.— աշծեամն, անասուն, արծուի, արջ, խոզ, ձի, շուն, ջորի:

10. Ուսում, դպրութիւնն շող բառեր.— աշակերտ, գիր, գրեմ, դպրութիւն, ընթերցասէր:

11. Ազգակցական, բարեկամական կապեր շող բառեր.— ազգական, աներ, դուստր, եղբայր, դաւակ, թոռն, կին, հայր, մայր:

12. Մարդու առօրյա օգտագործման նյութեր և իրեր շող բառեր.— աղ, աղ, ճրագ, սեղան, գատի:

13. Սոցիալական վիճակ շող բառեր.— աղքատ, ծառայ, մշակ:

14. Որակ, հատկութիւնն շող բառեր.— անմատոյց, անպիտան, խախուտ, խակ, ոսկեթել, չքնաղ:

15. Բուսականութիւնն շող բառեր.— արմաւենի, բոյս, թուփ, ծառ, ձիթենի:

16. Բնակավայր, բնակարան ու նրա մասերն շող բառեր.— աւան, գեղ, գիւղաքաղաք, յատակ, սենեակ, քաղաք:

17. Տարիք շող բառեր.— երիտասարդ, ծեր, ծերունի, մանուկ:

Ինչ խոսք, մենք Սեբեոսի բառապաշարի բոլոր իմաստային դաշտերը չներկայացրինք: Հեղինակը գործածել է նաև կյանքի զանազան բնագավառներին վերաբերող բաղմամբով այլ բառեր: Սակայն արդեն բերված բառերն իսկ թույլ են տալիս ասելու, որ հեղինակի բառապաշարի մի զգալի մասն այսօր էլ կենդանի է գրական հայերենում: Սեբեոսի Պատմութիւնում կան նաև հնացած բառեր, որոնք այլևս չեն գործածվում՝ հրէապետ, համարակառ, շագոյր, կուր, աւանիկ, երկաթաճիւղ և այլն: Կան և այժմ հնաբանութիւնների վերածված բառեր, որոնք դործածվում են պատմութեան որևէ ժամանակաշրջանի նկարագրման կամ պատմական անձի կերպարի կերտման համար՝ ամ, արտախուրակ, խոյր, մատոռակութիւն և այլն:

Սեբեոսի բառապաշարում կան նաև նոր բառեր².

² Նոր բառ չենք համարում մայրափայտեայն (էջ 5), որովհետև թեև ՆՀԲ-ն և ԱԲ-ն չեն տալիս այն, բայց գտնում ենք Ազաթանգեղոսի լեզվում՝ «Հրամայեաց...մայրափայտեայ...տապան գործել» (էջ 594):

Մի շարք բառերի համար ՆՀԲ-ն վկայութիւններ է բերում Սեբեոսից ավելի ուշ ապրած հեղինակներից՝ ճերմակ, տիրապիւրութիւն, ազգածին, ականակոտ, արիւնաբութիւն, անբանք, քամբեմ, հիմնադրեմ, հիմնադրութիւն, նրէապետ, ձեռնարկ, սրբաշունչ, վտանգեցուցանեմ, փայտայարկ, զոմ, կիւրապաղատ, կուրատոր, նոռզ, ողբգովան, պատրկութիւն և այլն:

Աթաշ «կրակ».— «Առաւ և Հրատն... որ մեծագոյն համարեալ էր քան զամենայն կրակ, որ կոչէր ի նոցունց Աթաշ» (էջ 28):

Աւարացուցանեմ «վտարել».— «Հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա աւարացուցանել ի քաղաքէն սրբոյ իւրմէ նրուսաղէմէ» (էջ 84):

Բանիկ «պատերազմական զրահ».— «Պատահի վերտ և ամուր բանիկ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սրմբատայ. զի հարեալ զնա զաւրութեամբ զիաթաւալ յերկիր կործանէր» (էջ 68): Տվյալ բառի իմաստն այսպէս է մեկնում Հր. Աճառյանը³, իսկ Ստ. Մալխասյանցը (տե՛ս Սեբեոս, էջ 187, ծան. 48) կարծում է, թե բանիկ բառը նշանակում է «Բահլում շինված, Բահլի, (ինչպէս Դամասկոսի անունով ազնիվ սրերը կոչում էին դամասկյան են)»:

Բանդակ (ենթադրվում է՝ «գորգ» կամ նման մի բան).— «Ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոբ և ի բանդակ» (էջ 66):

Բացի «բաց տեղ».— «Իսկ Թէոդորոս Վահուկեանց տէրն կալաւ զբերդն Արփայս. և Գրիգոր որդի նորա էր փեսայ Ռշտունեաց տեառնն. Վարազ Ներսէհն Դաշտկարին ամրացան ի բացտջն, և բանացան ի վերայ գանձուցն» (էջ 142):

Հատկապէս ի վերջահանդով բազմաթիվ բառերի (մասնավորապէս՝ տեղ, ժամանակ նշող) եզակի տրականը կազմվում է -ջ հոլովակերտի օգնութեամբ (տարի-տարուջ, կղզի-կղզուջ, իսկ ի նախդիրով՝ ի տարուջ, ի կղզուջ): Ուստի, օրինաչափ է Սեբեոսի գործածած այս ձևը: Գրաբարում կա ի բացեայ⁴ մակբայը, որը մի անգամ ևս հաստատում է, որ վերջահանգ ի-ն բացի բառում կարող է վերածվել նաև ւ-ի, իսկ ա-ից առաջ՝ ե-ի⁵:

Բնակագոյն «բնիկ».— «Եբարձ սա զամենայն նախարարս և զնախնիս և զտունս բնակագոյնս յաշխարհէն Պարսից» (էջ 33):

Դրունգար «վաշտապետ».— «Տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա դրունգար զաւրաց իւրոց» (էջ 118):

3 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 394: Այսուհետև՝ Արմ.: Մեր աշխատությունում այս բառարանի 1-ին և 2-րդ հատորներին հղումները բերվում են ըստ հետևյալ հրատարակության՝ հ. 1-ին, Երևան, 1971, հ. 2-րդ, Երևան, 1973: Մենք օգտվել ենք նաև այս աղբյուրի առաջին հրատարակությունից (Երևան, 1926—1935):

4 Տե՛ս ԱԲ, էջ 338:

5 Ավելի մանրամասն տե՛ս է. Բ. Աղայան, Գրաբարի բերականություն, հ. 1, գիրք Ա, Հնչյունաբանություն, Երևան, 1964, էջ 90—92:

Զանգապանակ «ծնկներն ու սրունքները ծածկող կտոր, զրահ».— «Զամենայն անալիս մատուռակացն առաքէ նմա ոսկի, և հանդերձս թագաւորականս, արոտախուրակս ոսկեղաւծս և զանգապանակ ակամբք և մարգարտովք կարգեալ» (էջ 64):

Խաչապան «եկեղեցւոյան, խաչն իր մօտ պահող մարդ».— «Կալան և զհայրապետն, որում անուն էր Զաքարիա, և զխաչապանն» (էջ 83):

Կանախտաւ «պալատական պաշտօնյա».— «Եւ ընկալաւ զնոսա իբրեւ զսիրելիս թագաւորութեանն, և զորդի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանախտաւ» (էջ 116):

Հաւայ (ենթադրվում է՝ «քաջագործություն»)— «Քանդի տեսանելով զհաւայս նորա շարաշարս՝ զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ» (էջ 43):

Մագիստրէ «իշխանական տիտղոս».— «Մանուէլ գործէր ի Կոստանդնուպալիս զգործ մագիստրէի»⁶ (էջ 139):

Նախանձաբեր «նախանձը աշխարհ բերողը՝ սատանան».— «Զամենայն երկրպագու տեղիս նորոգեալ լսելով նախանձաբերին, ոչ ի բարի, այլ ի բնիկ նախանձանք հայրենական հար նոցա Կայենի» (էջ 84):

Նախանձանք «նախանձ» (տե՛ս նախորդ նախադասությունը):

Նուանեցուցանեմ «նվաճել», «հնազանդեցնել».— «Երթայր ի կողմանս Պարթևաց... զի նուանեցուցէ ընդ ինքեան զզարս կողմանն այնորիկ» (էջ 59):

Շահրմար «քաղաքների ու գյուղերի վիճակագրական մատյան».— Խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սինեաց ի Դրւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի» (էջ 27):

Պատգոսապան «պարսկական զորապետական տիտղոս».— «Զի թէպէտ և կաղմեցին զերիվարս իւր, և ետ ի ձեռս Շահենայ պատգոսապանի, այլ նուազ էր զարն և չկարացին ունել զդէմ» (էջ 93):

Պերոզական «պերոզին պատկանող».— «Եւ զհետ սոցա հասանէին զարն պերոզակա՞ն» (էջ 60):

Պէշոպա «առաջապահ գունդ».— «Զերծեալ մի ոմն ի հեծելոցն՝ հասեալ ի յԱրճէշ գոյժ արկանէ Խոռեմայ եթէ հասեալ է թշնամին ի վերայ քոյ, և կոտորեցին զզարն պէշոպա յԱղի» (էջ 94):

⁶ Ուշագրաւ է այն, որ մագիստրէ բառաձևը հին հունարենի մագիստրոս բառի կոշականն է: Սկսած այն ըմբռնել է որպէս ուղղական և թերեւ՝ մագիստրէի: Այստեղ մագիստրէի ձևը սեռական է:

Սնդր.— «Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և ղարդարէ ղնա ի սնդր և ի վակաս. պսակէ ղնա ի թագ հայրենի» (էջ 9):

Ըստ Հր. Աճառչանի (Արմ., հ. 6, էջ 308) «այս բառն անստույգ է ու աղավաղված: Ն. Մառն այն համարում է ասորական Snoura բառի փոխառություն, որ նշանակել է «սաղավարտ» (տե՛ս Սեբեոս, էջ 169, ծան. 15):

Արքատուն «սուրբ».— «Բայց և զայս աղաչեմ զհայրական զձեր սրբութիւնդ և որք ընդ ձեր արքատուն հպիսկոպոսունսդ են, առաջի նոցա ընթեռնուլ զթուղթդ» (էջ 85):

Մեխան (ենթադրվում է՝ «մանգաղ»)— «Եւ մինչդեռ սոքա ճակատեալ էին դէմ յանդիման գալ և մերձենալ առ միմեանս... Էլեալ անտի բաղմութեան մանկտույ գերանդաւք և արիանաւ անկան ի վերջոյ նոցա» (էջ 74):

Փայֆար (իմաստը հայտնի չէ).— «Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, և այլ բաղում հպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին, որով և զփայֆարն իսկ հրամայեաց տալ» (էջ 124):

ՆՂԲ-ն (հ. 2, էջ 931) տալիս է այս բառը և հղում պայֆար, որը բացատրում է՝ «վեճ, կռիւ» (տե՛ս նաև ԱԲ, էջ 806): Ինչպես երևում է, սրանք իմաստով տարբեր են և, հավանաբար, համանուններ են⁷:

Երբ լույս տեսավ ՆՂԲ-ն (1836—1837), Սեբեոսի Պատմությունը դեռ հայտնաբերված չէր, իսկ երբ 1865 թվականին Գ. Ճելալյանը հրատարակեց լրացված ԱԲ-ն⁸, Սեբեոսի Պատմությունն արդեն հրատարակված էր:

Տարբեր դարերի հեղինակների գործերի հիման վրա Գ. Ճելալյանը 5000 բառով հարստացնում է ՆՂԲ-ի բառացանկը: Անտարակույս, նա օգտվել է նաև Սեբեոսի երկից: Սակայն ԱԲ-ն բնագրային վկայություններ չի տալիս, որպեսզի իմացվի, թե բառը ո՞ր մատենագրի լեզվում է հանդիպում: Անկասկած, այդ 5000 բառերի մեջ կան նաև այնպիսիները, որոնք առաջին անգամ հանդիպում են հենց Սեբեոսի բառապաշարում: Նկատենք, որ Հր. Աճառչանը «Արարատ» ամսագրում⁹, ապա Արմ.-ում

⁷ Հանդիպում են նաև զանաաբանագրեմ (էջ 1), ըստիլպիմ (էջ 2), անկումուտի (էջ 76) բառերը, որոնք դիտվում են աղավաղումներ, իսկ իմաստներն էլ՝ ենթադրելի:

Այս բառերը գիտակցաբար չենք բերում շարադրանքում:

⁸ Մանրամասն տե՛ս Գ. Կ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 130:

⁹ Տե՛ս «Արարատ», 1911, № 3, էջ 230—231:

հաճախ նշում է, որ տվյալ բառը գործածված է միայն Սեբեոսի լեզվում: Օրինակ, շագոյր-ի մասին գրում է. «Շագոյր բառը ուրիշ տեղ չի պատահում», իսկ կիւնիկ-ի վերաբերյալ՝ «ունի միայն Սեբ. հրտ. Պտկ., էջ 54»¹⁰:

Ստորև բերում ենք Սեբեոսի գործածած այն բառերը, որոնք կան ԱԲ-ում, բայց չկան ՆՀԲ-ում և մեր կողմից հիշված համաբարբառներում.

Անգարեմ «սեպել», «մի բանի հաշվին հաշվել».— «Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժե հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ» (էջ 140):

Անհրամանատար «առանց հրամանատարի, առանց ղեկավարի».— «Բայց զի մեռեալ էր երանելին | Կոմիտաս կաթողիկոսն և կայր տեղին անհրամանատար՝ խորհուրդ անէր ընդ ամենեցուն տեսանել զոմն արժանաւոր» (էջ 98):

Աստուածակարծեալ «ինքն իրեն աստված համարող».— «Ընդ գիրկըս մտեալ՝ ղաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս... յերկիր խարսխեալ վտարեալ նետն. և վաղվաղակի յերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն» (էջ 5):

Բերդակ «փոքր բերդ».— «Եւ երեք հարիւրքն անկեալ ընդ բերդակն որ ի մէջ գիւղաքաղաքին» (էջ 67):

Բոցացոցանեմ «հրդեհել».— «Վէպ արիական... հէն Սասանական՝ յԱպրուէզն խոսրովեան, որ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն» (էջ 32):

Բոնաբարայն «բռնի».— «Եւ ապստամբեալ Մամիկոնեանն Վահան՝ հալածեաց զՊարսիկս և բոնաբարայն գրաւեաց զիշխանութիւնն» (էջ 25):

Դժկոպ «դժնդակ», «դժվարին».— «Բաղումք խոցոտեալ նետիւք ի խարձան դժկոտս ի բաջ և արի պատերազմողացն՝ ոստուցեալ ի բաց ի կողմանցն յայնցանէ, դէմ եղին երթալ ի կողմանս հիւսիսոյ» (էջ 151):

Երդատու «տուն, տնեցիք».— «Արդ՝ Լի երդատու ժողովեսցին ինձ անտի և նստուցին ի Թրակացւոց աշխարհին» (էջ 71):

Երկրորդեան «երկրորդ անգամ ամուսնացած».— «Իսկ երկրորդեանն, և եթէ մին կոյս իցէ, և միւսն երկրորդական՝ հրամայէ ապաշխարել երկոցունցն ի միասին զերեամ մի» (էջ 134):

Երրորդեան «երրորդ անգամ ամուսնացած».— «Իսկ զերրորդեանն և զչորրորդեանն ոչ ընդունի եկեղեցի» (էջ 134):

Զուցակարգեմ «պատմել, շարադրել».— «Բացեալ զաւերածն վասն

¹⁰ Արմ., հ. 3, էջ 1218—1219:

սեանցն՝ ըստդիպան արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի. դամս և զա-
ւուրս հին թագաւորացն Հայոց և Պարթևաց յունարէն դպրութեամբ.
դոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն կամեցայ ձեզ զրու-
ցակարգել» (էջ 2):

Մաղկացու (իմաստը հայտնի չէ).— «Պսակ մխիթարութեան քո ի
ծաղկացու շարշարանաց նորա բոլորի» (էջ 88):

Կիւնիկ «կրկեսի հրապարակ», իսկ բուն իմաստով՝ «որսատեղ».—
«Հատու վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենու ի կիւնիկն»
(էջ 56):

Կողածք «լեռան թեք կող».— «Ելին ընդ կողածս լերինն հազիւ հաղ»
(էջ 151):

Հանդերձագին «հագուստ գնելու համար դրամ».— «Կարգեաց ոռ-
ճիկս և հանդերձագինս յարքունուստ» (էջ 47):

Հիմնաւորագոյն «հավատքի մեջ ամբի հաստատ եղող».— «Մեռեալ
էին հիմնաւորագոյնք» (էջ 144):

Զխանծեալ «ձիավոր զինվոր, հեծյալ».— «Եւ զբազմութիւն ձերբա-
կալաց ձխանծելոց և փղահեծելոցն հրամայէր մերկացուցանել և կապել
զձեռս ի վերայ ուսոց և արկանել կոխան ի ներքոյ ոտից փղացն» (էջ 41):

Զիրնտիր առնեմ «զորքի համար լավ ձիեր ընտրելը».— «Յայնժամ
Երակոս ըստ նմին արինակի ալրընտիր և ձիրնտիր առնէ, և յարձակի
ի վերայ նորա քսան հազարաւ» (էջ 94):

Զորաբերան «ձորի այն մասը, որտեղից սկսվում է մուտքը ձորի
մեջ».— «Եւ անցեալ զաւրն ամենայն զգետովն՝ ոմանք ի թիկանց զա-
մուրն պահէին, և ոմանք զկամրջախելն և զձորաբերանս ունէին» (էջ 52):

Հապաղական «ցրված, ցաքուցրիվ եղած».— «Բայց արք երեք յիշ-
խանացն, որք երթային ժողովել զզաւրն նապաղական, Թէոդորոս Վահե-
վունի, և Խաչեան Առաւելեան, և Շապուհ Ամատունի» (էջ 109):

Հապաղուած «ցրված, ցաքուցրիվ եղած».— «Ժողովեցին ապա և
զաւրն Պարսից ի նապաղուածէ գանձուցն ոչ սակաւ իրս» (էջ 41):

Մաշկապերեան¹¹— «պարսկական թագավորական վրան».— «Եւ
եղև իբրև մտին ի մէջ բանակին և մերձ եղեն մաւտ ի մաշկապերեանն
արքունի, և հրաման հասանէր ընդդէմ» (էջ 44):

Մարդասիրաբար «մարդասիրորեն».— «Այն կարի ահագին, որպէս

¹¹ Սա մաշկապերեան «պարսկական թագավորական վրան» բառի աղավաղված
ձևն է: Սերեոսի գործում կա նաև մաշապերեան, որը չկա ԱՔ-ում՝ թեև կալան զբամ-
բիշն և զբանակն, և թափեցին զՄաշապերեանն ամենայն» (էջ 28):

պարտ իսկ է՝ ըստ աստուածութեանն. և այս կարի խոնարհագոյն և մար-
դասիրաբար՝ ըստ մարդկային բնութեանն» (էջ 127):

Մինրացեալ «պարսկական կրօնն ընդունած մարդ».— «Արդ՝ առեալ
աստատմբին մինրացելոյն զգարս իւր... շու արարեալ գնայ հասանէ
յԱտրպատական» (էջ 38):

Նիգակամուխ «նիզակ մտցնող», բայց մեր բնագրում՝ կապակցվող
բառի հետ՝ «նիզակամարտ».— «Հրաման ետ դարձեալ ժողովիլ... և զիշ-
խանս նախարարացն, որք հմուտ էին և կարող զգէմ ունել՝ կոուել ի նի-
զակամուխ ճակատի» (էջ 53):

Շագոյր «պալուսակ».— «Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ընդ
ուս իւր» (էջ 63): «Մատուցեալ՝ առ յինքն զշագոյրն» (էջ 63):

Շրջեակ «շրջակայք, բոլորտիք».— «Եւ խաղաղութիւն քաղաքիս Աս-
տուծոյ և սորին շրջեկիս, որպէս գէմ յանդիման պատմեն ձեզ, որպէս
տեսին զայս քրիստոսասէր մարդիկդ ձեր» (էջ 85):

Չաստուածացեալ «սուտ աստված հռչակված».— «Յայնմ ժամա-
նակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան, ճոխն
չաստուածացեալ» (էջ 3):

Չորեքնայնեան «մի անգամից չորս ձայն հանող».— «Տայ նմա
զփողոսն չորեքնայնեանս և պահապանս զրանն նորա ի հետեակաց
արբունի» (էջ 66):

Չորրորդեան «չորրորդ անգամ ամուսնացած».— «Իսկ զերրոր-
դեանսն և զչորրորդեանսն ոչ ընդունի եկեղեցի» (էջ 134):

Պատկերանոյս «գեղեցկադեմ».— «Շամիրամ... կամեցաւ առնել
ընդ նմա բարեկամութիւն... զի ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա
այր որ ամենեւին՝ այր պատկերանոյս» (էջ 6):

Սեռնիմ «լցվել».— «Եւ եղև իբրև հասին յաւուրս ամառնային ջեր-
մութեանն, և լցեալ սեռնեցան վայրբն բուսով զալարոյ՝ հրդեհեցին զքա-
ղաքն հուրք» (էջ 80):

Սկայաւրէն «վիթխարի».— «Եւ կանգնէ զկապարճսն ի դետնոյ ընդ
ինքեան յաւղ սկայաւրէն կամարին» (էջ 5):

Սուրակոյս «սրախողխող».— «Զի թէպէտ և այնպէս ահագին և
սաստիկ էր սուրակոյս և հրակէզ արն դատաստանին քոյ, այլ ճարտա-
րապետն իմաստուն... նոյն նորոգեսցէ վերստին զփառս իւր ի վերայ
քոյ» (էջ 88):

Վգեմակալ «սպանված, կորուստ».— «Երեսուն հազար հեծեալ վգե-
մակալ է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց» (էջ 71):

Տարաճալած «դուրս բշված».— «Ո՞րչափ ևս առաւել յերկնաւոր թա-

գաւորին յարքունիս ունիցի որ համարձակութիւն մտանել՝ ոչ ունելով հանդերձ մարքութեան... այլ ոչ տարահալած լեալ արտաքս մերժեսցի» (էջ 135):

Սեբեոսի գործածած, բայց ՆՀԲ-ում գոյութիւն չունեցող բառերի մեջ բաւական շատ են փոխառութիւնները, որոնք համարյա չեն գործածվում հայոց լեզվում: Սրան հակառակ, հայերենի բառակազմական օրինաչափութիւններով կազմված, սակայն ՆՀԲ-ի կողմից չվկայված մի շարք բառեր (նախանձանք, սրբասուն, ձորաբերան, շանթեմ և այլն) նույնիսկ այսօր էլ կենսունակ են գրական հայերենի երկու տարբերակներում էլ. օրինակ՝ «Նս կանգնեցի այն բարձր պատուհանի տակին, որ տանախորշ տղան նախանձանքից պայթի» (Ն. Չարենց, Ընտիր երկեր, էջ 458): «Ներքեւում, ձորաբերանը փակող անտառները դարձել էին ցանցառ խողանակ՝ պարուրվել մրսող տխրութեամբ» (Ս. Խանդավազ, Քաջարան, էջ 23): «Հիմա Ձանոն ամբողջութեամբ մարդկային մի ավերանք էր ներկայացնում» (Ա. Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, էջ 561): «Վե՛րն էր դարձյալ, — եբք շանթեց օր մը մորիկն ախերոն» (Դ. Վարուժան, Բանաստեղծութիւններ, էջ 310):

Ուշադրութիւն է դրավում նաև Սեբեոսի բառապաշարի իմաստաբանական հարստութիւնը:

Յուրաքանչյուր բառ կարող է վերածվել բազմիմաստ բառի, եթե այն լայնորեն է գործածվում լեզվում կամ գոնե նրա զարգացման մի շրջանում: Սրան կարող է նպաստել բառի՝ նեղ, տեղային գործածութեան ոլորտից դեպի համաժողովրդական գործածութեան ոլորտ դուրս գալը:

Բազմիմաստութիւնը Սեբեոսի լեզվին մեծ ճկունութիւն է հաղորդում, բառին տալիս է կիրառութեան լայն ոլորտ: Սեբեոսի երկում բազմիմաստութեամբ են օժտված մեծ մասամբ բայերը և գոյականները:

Սովորաբար մեծ է բառերի այն իմաստների հաճախակնութիւնը, որոնք ամբակալված են անհատի կամ տվյալ լեզվով խոսող հանրութեան լայն խավերի գիտակցութեան մեջ: Նրբեմն, սակայն, այս կամ այն բառն ավելի շատ երկրորդական իմաստներով է գործածվում, քան իր բուն նշանակութեամբ: Այսպես, Սեբեոսը երես(f) բառը գործածել է 20 անգամ, որից միայն 2-ը՝ բուն՝ «ղեմք, երես» նշանակութեամբ, 7-ը՝ «մալերես» իմաստով, իսկ մնացածներն էլ՝ այլ իմաստներով:

Բազմիմաստ բառի յուրաքանչյուր նոր իմաստը մշուսներից կարող է և՛ միայն խիստ նուրբ երանգով տարբերվել, և՛ շատ խիստ հեռանալ

բառի սկզբնական նշանակությունից ու չկապվել նրա հետ: Օրինակ, մանուկ բառը գրաբարում նշանակում է «փոքր», «փոքրիկ», «մանր», «մանրական», «նորածին երեխա», «զավակ», «սրտամանի», «երկտասարգ», «ժիր», «ծառա», «զինվոր» և այլն¹²:

Սեբեոսի լեզվում էլ այդ բառը մի դեպքում գործածվել է «տարիքով փոքրահասակ», մյուս դեպքում՝ «կտրիճ զինվոր, երկտասարգ» իմաստով. Օրինակ՝ «Մանուկ որդի նորա փախստական գնացեալ եկն առ մեզ» (էջ 37): «Թէպէտ և բազում աւճիտս վնասուց գործեալ էր նորա ի զաւրուն Պարսից, սակայն ամենայն զաւրն Պարսից ողբայր զնա վասն քաջութեան և արիութեան, և մանուկ ուժէղ և բարձրահասակ» (էջ 79): «Ասէ. «Ե՛կ միով արամբ հատարալ գիշերի, և ես արարից զկամս քո»: Եւ յարուցեալ հասարակ գիշերի միով մանկամբ գնաց» (էջ 100): «Եւ յետ անցանելոյ ամտոց, մինչ միաբանեալ ամենայն ռամիկ կաճառացն՝ մանկունք քաղաքին սպանին զոստիկանս թագաւորին Պարսից» (էջ 82):

Կան բառեր, որոնք ընդհանրապես մենիմաստ են և՛ գրաբարում, և՛ Սեբեոսի լեզվում, ինչպես օրինակ՝ ականակալ (էջ 66), ականակոտ (էջ 9), գեղեցկադիր (էջ 120) և այլն: Հայերենում այսպիսի բառերը համեմատաբար սակավ են: Այլ բառեր բազմիմաստ են գրաբարում, բայց Սեբեոսի լեզվում կիրառվել են որպես մենիմաստ (այստեղ նկատի ունենք ոչ թե մեկ անգամ գործածվածները, այլ նրանք, որոնք կիրառության մեկից ավելի հաճախականութիւն ունեն, բայց՝ մեկ իմաստով). օրինակ՝ մահ «մահ» (էջ 5, 15), մաքրութիւն «մաքրություն» (էջ 135), պատմութիւն «պատմություն» (էջ 2, 24, 131) և այլն:

Սեբեոսը երբեմն բազմիմաստ բառը գործածում է մի այնպիսի բովանդակությամբ, ինչպիսի բովանդակությամբ արդեն իսկ գործածվել է նրա մոդերն զրմած բառը: Բնագրում այդպիսի բառերը մտնում են համանիշային կապի մեջ. օրինակ՝ «Զի թէ և յառաջինս կանխաւ կատարեալ՝ ալ սակայն և ի վերջինսս մինչև յաւիտեան կատարեսցի» (էջ 154): Այստեղ ալ բառը կիրառված է նույն նշանակությամբ, ինչ որ սակայն-ը:

Բազմիմաստ բառերը հաճախ ոճական երսոնգ են ստանում, երբ հեղինակը դրանք օգտագործում է իր նախասիրած իմաստով: Այսպես, կոչեմ բայի անցյալ դերբայը ավելի հաճախ հանդիպում է կոչեցեալ տարբերակով և երբեմն միայն՝ կոչեալ: Աստվածաշնչում կոչեցեալ-ը

¹² Տե՛ս ՆԶԲ, հ. 2, էջ 206, մանուկ բառի հոգվածում:

գործածվել է 59 անգամ, իսկ կոչեալ-ը՝ 2: Սեբեոսի երկում կոչեցեալ-ը կիրառվել է 13, իսկ կոչեալ-ը՝ 2 անգամ:

Կոչեմ բայի անցյալ դերբայի դուգմակներն արտահայտում են իմաստային տարբեր նրբերանգներ: Նշված աղբյուրներում էլ կոչեալ տարբերակը միշտ գործածված է «կանչել», «հրավիրել» իմաստներով. օրինակ՝ «Կոչեալ զեպիսկոպոսապետն... մկրտեցաւ ի նմանէ» (էջ 29): «Եւ կոչալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի զիտասցե թէ ո՛ր զինչ շահեցաւ» (Ղուկաս, ԺԹ, 15): Նման օրինակներ կարելի է բերել բազմաթիւ հեղինակներից:

Կոչեցեալ տարբերակն ունի և՛ «կանչել, հրավիրել», և՛ «կոչվել, անվանվել» իմաստները: Դասական մատենագրության լեզվում կոչեցեալ-ի նշված իմաստների ընտրության մեջ որոշակի նախասիրութուն չի երևում: Օրինակ, Աստվածաշունչն այդ իմաստների համար կոչեցեալ-ը գործածում է գրեթե հավասարապես: Սեբեոսի լեզվում արդեն որոշակի միտում կա՝ կոչեցեալ տարբերակը «անվանվել, կոչվել» իմաստով (12 անգամ) և շատ հազվադեպ (1 անգամ) «կանչել», «հրավիրել» իմաստներով գործածելու ուղղությամբ:

Սեբեոսը նոր իմաստներով կամ իմաստային նրբերանգներով է գործածել հետևյալ բառերը.

Անուն «սաշտոն», «կոչում».— «Եւ իւր առեալ յանձն զանուն զաւրաւարութեան» (էջ 82):

Առնեմ «բռնել».— «Հայք իմ են, անդ մի՛ երթար. ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ ուր անդրէն փախչել ոչ կարես» (էջ 141):

Արձակեմ «հեռացնել».— «Ասէ Պարիովկն. «Հրամայեա՛ արձակել ի քէն զամբոխդ» (էջ 62):

Գումարեմ՝

ա) «ուղարկել».— «Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրեւելս տանել» (էջ 49): «Իսկ զԱտատն խոսիստունի փութանակի հանդերձ զաւրուն իւրոյ կոչէ Թագաւորն ի պալատն, և մեծարէ շքով և պատուով, և տայ ինչս բազումս և գումարէ ի Թրակացիս» (էջ 51):

բ) «նստեցնել», «տեղավորել».— «Եւ հրամայեաց գործել նաւս թեթևս հինգ հազարս: Եւ գումարեաց ի նոսա արս սակաւ վասն թեթևութեան» (էջ 147—148):

գ) «կարգել», «նշանակել».— «Իսկ Թագաւորն Երակղոս գումարէ զՓիլիպիկոս զամն երէց ի զաւրաւարութիւն» (էջ 81):

Նշենք, որ բերված քաղվածքից 5 տող հետո Սեբեոսը գործածում է կարգեմ բայը «նշանակել» իմաստով. «Արդ՝ ղսա (իմա՛ զՓիլիպիկոս— Գ. Բ.), բռնադատեալ Հերակղի, կարգէ զարարվար և արծա-կէփ կողմանս արեւելից զարու մեծաւ» (էջ 81):

Եթե՛կ «նախնկիրեմ, անցյալում, առաջնկում».— «Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն և եռանդն՝ ընդունել զնա և ողջունել, այլ կայր այնպէս յառաւացեալ» (էջ 45):

Երբամ «հեռանալ».— «Որոյ ոչ զգացեալ զնենգութիւն նորա՝ հրամայեաց մարդկանն երբալ յինքննէ» (էջ 62):

Երկրպագու «երկրպագության արժանի».— «Ոչ յանիրաւութենէ և կամ յաւերանաց շինութիւնք երկրպագու տեղեացս այսոցիկ լինին, այլ ի ձեռն նորա ողորմութեան» (էջ 85): «Զամենայն երկրպագու տեղիս նորոգեալ լսելով՝ նախանձաբերին, ոչ ի բարի, այլ ի բնիկ նախանձանք հայրենական հար նոցա Կայենի» (էջ 84—85):

«Զաւրեմ «հաղթել».— «Իբրեւ մաւտ եղև (իմա՛ Արշակ արքայ— Գ. Բ.) ի Բաբելոն՝ անկանի ի վերայ՝ նորա Անտիոքոս յանկարծակի ի ձմեռն ժամանակի՝ ի նեղ վայրի: Եւ ոչ կարեն զաւրել. սպառեն զզարն. զարկանեն և ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ և սպանանեն» (էջ 9):

Թափեմ «սպանել», «սատկացնել».— «Հարեալ զզարն Պարսից անհնարին հարուածովք մաշէին ի սուր տուսերաց, զփիղսն զամենայն քափէին» (էջ 27):

Թիւ «էություն», «հատկություն».— «Որդին Աստուծոյ որդի մարդոյ լինէր, և զմարդկութիւն իւր խառնէր ի քիւ աստուածութեանն իւրում» (էջ 128):

Նիզակամութիւն.— այս բառը ՆԶԲ-ն չունի, իսկ ԱԲ-ն (էջ 617) բացատրում է «նիզակ խոթող, նիզակով պատերազմող»: Բայց «ի նիզակամութիւն ճակատի» բառակապակցությունը, որ կա Սեբեոսի գործում, ափելի ճիշտ կլինի թարգմանել՝ նիզակամարտում. «Հրաման ետ զարձեալ ժողովել... և զիշխանս նախարարացն, որք հմուտ էին և կարող զգէմ ունել՝ կողել ոաղմ ի նիզակամութիւն նակատի» (էջ 53):

Ուսուցանեմ «հալստտիացնել».— «Ապա բազումք մտեալ տեսին զշարիսն, և գոյժ արկին քաղաքին: Եւ ուսուցին հրեայքն իշխանին, թէ քրիստոնեայքդ պղծեցին զտեղի աղաւթիցն» (էջ 112):

Պատառեմ «բաժանել, պառակտել, քայքայվել, պառակտվել».— «Եւ այնպէս քաղեալ պատառեաց զնոսս ի Հոռոմոց նեռին արբանեակն. զի թէպէտ և բազում աղաշանս և սրադատանս գրեաց առ նոսս կայսրն... և ոչ կամեցան լսել նմա» (էջ 141): «Առաքեաց Աստուած խռովութիւն

ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի, և պատառեցաւ միաբանութիւն նոցա» (էջ 155):

Վերջ «ետևից».— «Եւեալ անտի բաղմութեան մանկուոյ գերանդաւր և սրիանաւր անկան ի վերջոյ նոցա, և գործեցին մեծ աւճիռ վնասուց» (էջ 74—75): Այս իմաստի համար դասական գրաբարին բնորոշ է զկնի, զհետ բառերի գործածումը:

Վերջին «եզր».— «Եւ յական թաւթափել կալան ի վերջնոյ ծովուն մինչև ցեղր գետոյն մեծի Եւփրատայ» (էջ 108):

Տեսանեմ «հանդիպել», «տեսակցել».— «Յետ այսորիկ գնաց Թէոփորոս Ռշտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս և ետես զնա մեծամեծ ընծայիւր» (էջ 146):

Յամաֆ «ջլապինդ», «ջղուտ», «տոկուն».— «Եւ էր սա այր անհեղեղ անձամբ և զեղեցիկ տեսչեսմբ, և բարձր և լաճն հասակաւ, և բուռն և ցամաֆ մարմնով» (էջ 56):

Փփանամ «սաստիկ բարկանալ, սաստիկ զայրանալ».— «Իբրեւ գնաց արքայ Կոստանդին ի Դընայ՝ գնաց և կաթուղիկոսն ընդ նմա: Եւ ելթեալ դադարեաց ի Տայս, և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին ցարսամբ փփացեալ էին ի վերայ նորա» (էջ 146):

Օգնական «օգնութիւն», «օգնական զորք».— «Յայնժամ թաղաօրքն Քուշանաց խնդրեցին իւրեանց օգնական ի Մեծէն Խաքանայ արքայէ կողմանցն հիւսիսոյ» (էջ 67): Պատմիչն այս իմաստը արտահայտում է մեծ մասամբ օգնութիւն բառով:

Սեբեոսի Պատմութիւնում կան որոշ բառեր, որոնց իմաստի համար նշման վկայութիւններ է բերում ավելի ուշ շրջանի հեղինակներից: Բերենք մի օրինակ: Այսպես, նուաւ բառը Սեբեոսի լեզվում գործածվել է նաև որպէս քաղաքավարական արտահայտութիւն, որը հատուկ է նամակագրական ոճին. «Մոդեստոս նուաւ երէց և տեղապահ Երուսաղէմի» (էջ 83):

ՆՆԲ-ն (հ. 2, էջ 450) տալիս է այս իմաստը, բայց վկայութիւններ է բերում Նարեկացուց (X դ.), Լամբրոնացուց (XII դ.):

ՓՈՆԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ

Պատմիչի բառապաշարում փոխառյալ բառերը հատկապես պարսկերենից են և հունարենից:

Արաբները Հայաստանի վրա իշխել են VII դարից, բայց այդ

դարում ապրած Սեբեոսի լեզվում արաբերենից միայն մեկ բառ կա՝
հալայ «օղ»¹³ (խալ պատմիչի հրկում՝ «քաջագործություն») նշանակու-
թյամբ: Սա նշանակում է, որ փոխառություն համար կարևոր պայման
է նաև ժողովուրդների շփման տեղություն չափը:

Պարսկերենից կատարված որոշ փոխառություններ առաջին ան-
գամ գործածվել են հենց Սեբեոսի կողմից. օրինակ՝ արաշ < ātaš,
բահլիկ < *bahlik ենթադրյալ ձևից, անգարեմ < angārtan, զանգապա-
նակ < զենդերեն *Zangōpāna կամ պահլավերեն Zangpān և այլն¹⁴:

Ըստ Հր. Աճառյանի, զանգապանակ բառն այսպիսի հնչյունական
կազմով և կառուցվածքով փրանական լեզուներում չի հանդիպում,
բայց գործածվում են այդ բառի բաղադրիչ մասերը: Սեբեոսը բառը
գործածել է զանգապանակ ձևով:

Ուշագրավ է Մ. Մուրադյանի հետևյալ դատողությունը. «Միջին
դրական լեզուն, — գրում է նա, — վկայում է դասական հայերենին ան-
ծանոթ շուրջ 600 փրանական բառեր՝ մեծ մասամբ նոր պարսկերենից
եկող, ինչպես և պահլավերեն, զենդերեն հնագույն բառաձևեր, որ դրա-
բար մատենագրությամբ չեն ավանդվել երբեմն պատահականորեն,
երբեմն բարբառային և ոչ ընտիր դիտվելով»¹⁵: Հեղինակը ասվածի
հաստատման համար բերում է 29 բառեր, որոնց մեջ նաև. «վզեն
(վսեն) «տուգանք. վարձք. վնաս» < զնդ. vīzyāna, որից՝ վզենակ,
վզենկիլ «վնասվել. տուգանվել»¹⁶ (ընդգծումը հեղինակինն է — Գ. Բ.):

Ըստ Հր. Աճառյանի, վզեան-ի համկոթեն տարբերակն է վզեն-ը,
որից էլ կազմված են վզենակ «ծախս», վզենկիլ «տուգանվել, պատիժը
կրել», վզենկեցուցանել «տուգանքի ենթարկել», վզենկարառ «վնասա-
կար»¹⁷:

Հր. Աճառյանն այս բառաձևերից յուրաքանչյուրի համար նշում է
աղբյուրներ: Սակայն նա չի տալիս վզեն արմատով կազմված վզենա-
կալ բառը, որն ունի Սեբեոսը (էջ 72):

Ուրեմն, վզեն-ը, որից էլ կազմված են վզենակ, վզենակալ, գոր-
ծածվել է ավելի վաղ (VII դարում): Այս կապակցությամբ արդարև
իրավացի է Հ. Գաթրոջյանը, որը գրում է. «...մտադրութեան արժանի

13 Տե՛ս, Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951,
էջ 196:

14 Այս և հետագա բառերը բերում ենք ըստ Արմ.-ի:

15 Մ. Հ. Մուրադյան, Բառագիտություն («Ակնարկներ...», Ա, էջ 224):

16 Անդ, էջ 225:

17 Արմ., հ. 6, էջ 651—652:

են այնպիսի բառերը, որոնք մինչեւ հիմայ կա՛մ քիչ տեղ գտնուելուն համար իրենց նշանակութեան կամ ուղղագրութեան վրայ առարակոյտ կար, որուն մէկ մասը կը փարատէ Սեբէոս, եւ կա՛մ միայն վերջիններէն գործածված ըլլալով՝ այսչափ հին չէին կարծուէր...»¹⁸: Հեղինակն այս կարգի բառերից թվում է հետեւյալները՝ զոմ, նզոված, մաշկապերնան, շառան, տարութեր, պեշասպիկ, բոբ, համահարգ, լաստել, հոռոգ, ներմակ երիվար¹⁹: Վերեւ շարադրանքին, ուրեմն, կարելի է ավելացնել նաեւ վզենակալ բառը:

Պարսկական փոխառութիւնները վերաբերում են կյանքի դանազան բնագավառներին, իսկ հունականները՝ մեծ մասամբ կրօնական կյանքին. օրինակ՝ արհեստիպոս, եկեղեցի, կանոն, կիւրակէ, մարտիրոս և այլն: Հունարենից կան նաեւ այնպիսի փոխառյալ բառեր, որոնք առաջին անգամ հանդիպում են Սեբեոսի երկում՝ զոմ «նավակամուրջ», կիւնիկ «կրկեսի հրապարակ», իսկ բուն իմաստով՝ «որսատեղ»²⁰, դրունգար «վաշտապետ» և այլն: Ըստ Հր. Աճառյանի, վերջին երկու բառերը հայերենը վերցրել է լատիներենից, բայց հունարենի միջոցով²¹:

ԱՅԱՆՅՈՒՄ ԵՎ ԲԱՌԱՐԱՐԴՈՒՄ

Պատմիչի երկում հանդիպող նախածանցները և վերջածանցները կան դասական հայերենում, բայց նրանց շուրջ 95 տոկոսը գործածվում է նաեւ ժամանակակից գրական արեւելահայերենում:

Ածանցները, ինչպես նաեւ արմատական բառերը, լեզվի մեջ երկար են գոյատևում: Ժամանակի ընթացքում լեզվի բանավոր կամ բարբառային գոյաձևում այս կամ. այն ածանցը կարող է մաշվել²², նույնիսկ՝ դուրս մնալ, եթե գործածվել է սակավաթիվ բառերի հետ: Դուրս ընկնելով լեզվի գործուն բառապաշարից՝ այդ բառերն իրենց հետ տանում:

¹⁸ Տե՛ս «Եվրոպա», Վիեննա, 1852, № 31:

¹⁹ Անդ:

²⁰ Արմ., հ. 3, էջ 1218—1219:

²¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 40—42:

²² Սեբեոսի Պատմությունում հանդիպում ենք, օրինակ, ինն ածանցի մաշված ձևին առաջի բառում (առաջին թվականից, որտեղ —ն —ն ընկել է), որը բարբառային արտահայտություն է՝ «Յամի երրորդի նղիանոսի կայսեր, և յամա Լեռնոցի առաջի Մեծի Խոսրովայ արքային Հայոց՝ փոփոխումն թագաւորութեանն այսորիկ լեալ» (էջ 14): Բերված օրինակում առաջի բառը չի հոլովվել, մինչդեռ թվականի վերջին բաղադրիչը միշտ էլ հոլովվում է:

են նաև ածանցը: Այսպես՝ -անաւ ւերջածանցով կազմվել է ուրանաւ բառը (էջ 13): Քանի որ ուրանաւ բառն արդեն գրական արեւելահայերենում չի գործածվում, ուստի -անաւ ածանցը ևս գոյություն չունի լեզվում:

Արդեն իսկ եղած ածանցներով կազմված որոշ բառեր առաջին անգամ հանդիպում են Սեբեոսի Պատմությունում²³:

Նախածանցները վերջածանցների համեմատությամբ սակավ են գործածվում:

Ուսումնասիրվող գործում ան- նախածանցով կազմված միայն մեկ նոր բառ կա՝ անհրամանատար «առանց հրամանատարի» (էջ 98):

Սեբեոսի լեզվում ամենից գործուն նախածանցներն են՝ ան-՝ անարժան (էջ 145), անարի (էջ 15), ա-՝ ազեղ (էջ 99), ազէա (էջ 145), համ-՝ համագունդ (էջ 75), համազգի (էջ 242) և այլն:

Մի քանի բառերում վերջածանցը գրվում է բառի թերված ձևի վրա. օրինակ՝ կայսերական (<կայսր-կայսեր+-ական), երթանեֆին (եւթն-եւթան+-երին) և այլն:

Սեբեոսի Պատմությունում առաջին անգամ գործածվել են վերջածանցաւոր հետևյալ բառերը՝

- | | |
|-----------------------------|---------------------------------|
| - (ա)գոյն—բնակագոյն (էջ 33) | -աւրէն—սկայաւրէն (էջ 5) |
| -ակ—զանգարանակ (էջ 64) | -եալ—ծիահծեալ (էջ 36) |
| -ական—ճարպղական (էջ 109) | -եակ—շրջեակ (էջ 85) |
| -անֆ—նախարհանք (էջ 84) | -եան—խոսրովեան (էջ 32) |
| | -ոտ—դժկոտ (էջ 151) |
| -ացու—ծաղկացու (էջ 33) | -ուած—ճապաղուած (էջ 41) |
| -աւոր—երգաւոր (էջ 77) | -ուրին—կիրապաղատութիւն (էջ 104) |
| | -պան—խաշապան (էջ 63) |

-Աւրէն վերջածանցի օգնությամբ, որը սովորաբար մակբայակերտ է (օրինակ՝ յանկարծաւրէն), Սեբեոսը կազմում է նաև ածական, այսինքն՝ գործածում է այն -ական վերջածանցի նշանակությամբ՝ «Եւ կանգնէ զկապարճան ի գետնոյ ընդ ինքեան յաւղ սկայաւրէն կամարին» (էջ 5):

-Ացի վերջածանցով բառը, խոսակցական ոճով, առանց ազգ բառի հետ համադրվելու, կիրառվել է «ազգ» իմաստով. օրինակ՝ «Եւ զնաց Իսմայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ երթալ սատակել զնոսա իսպառ» (էջ 149):

²³ Այդ բառերը բերվում են նախածանցների, վերջածանցների մասին խոսելիս:

—Նրէն վերջածանցով կազմված բառի հետ սովորաբար գործածվում է լեզու գոյականը: Սեբեոսի գործում —նրէն-ով կազմված բառը գործածվել է և առանց նրա. հմմտ. հոռոմերէն բառը հետևյալ օրինակում՝ «Եւ մատեաւ պատարագ հոռոմերէն ի հոռոմ երիցուէ» (էջ 144):

Որոշ ածանցներ լեզվի զարգացման տարբեր շրջաններում տարբեր հաճախականություն ունեն, իսկ երբեմն հանդես են գալիս նույնիսկ տարբեր հիմքերով: Այս կասկածելիությամբ ուշագրավ է Մ. Աբեղյանի մի դիտողությունը՝ զրաբարում—ային,—ական ածանցների գործածություն հաճախականություն վերաբերյալ. «Գրաբարում «ական» ածանցը,— գրում է նա,— շատ ավելի գործածական է գործուն է եղել, քան «ային»...»²⁴: Սա միանգամայն ճիշտ դիտողություն է: Այն ճիշտ է նաև Սեբեոսի լեզվի համար:

Հաճախ նույն արմատի կամ արմատական բառի վրա դրվում են մեկից ավելի ածանցներ: Սեբեոսի Պատմությունում, այս առումով, առաջին անգամ գործածվել են հետևյալ բառերը՝ հիմնաուրագոյն «հավատքի մեջ ավելի հաստատուն եղող» (էջ 144), բոնաբարայն «բռնի» (էջ 25): Վերջին բառում —աբար ածանցի մթագնման պատճառով ավելացվել է նաև —այն վերջածանցը:

Բազմաթանց բառերի կիրառման մեջ հեղինակի երկում գործուն են մի քանի կազապարներ: Նշենք միայն երկուսը.

1. Աւմատ + վերջածանցներ՝ փախստական (փախ + -տւստ + -ական), փախստեայ (փախ + -տւստ + -եայ):

2. Նախածանց + արմատ + վերջածանց(ներ) անաւթանութին (ան + -արթ + -ան + -ութին) անաւթնութին (ան + -արթն + -ութին):

Սեբեոսի լեզվում կիրառված բայերի շուրջ մեկ երրորդը ածանցաւոր է: Բայերի կազմում հանդես են գալիս երեք կարգի ածանցներ.

Սոսկածանցներից (-ան²⁵, -են-, -ն-, -չ-, -նչ-, -աչ-, -անչ) ամենից շատ բայեր են կազմվել —ան-ով (շուրջ 85 բայեր) և —ն-ով (մոտ 20 բայեր): Մյուսներով կազմվել են մեկ տասնյակից քիչ ավելի բա-

²⁴ Մանուկ Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 161: Նկատենք, որ Մ. Աբեղյանը նույն տեղում նշում է, թե նզնիկի «նզն աղանդոց»-ում —ային վերջածանցով միայն մեկ բառ կա՝ «ցամաքային օձ»: Իրականում նզնիկը նույն երկում ունի նաև աստուածային բառը՝ «Հոգևոր առաջնորդ» աստուածային հուր է» (էջ 312):

²⁵ Իհարկե, որոշ բայերում —ան- ը արդեն ձուլվել է արմատին և հանդես է գալիս նաև կատարյալի հիմքում: Այդպիսի բայերում, բնականաբար, այն այլևս սոսկածանց չէ:

յեր: Բերենը մի քանի բնագրային վկայություններ –ան–, –են– ածանց–ներով բայերի համար՝ «Գայ ճասանէ յերկիրն Արարադայ» (էջ 4): «Ոչ կամեցար արկանել զձեռն քոյ յարին իմ» (էջ 104): «Եւ Հայկն Աբեթայն մերձենայր և ունէր ի ձեռին իւրում զաղեղն» (էջ 5):

Բաղմապատկական ածանցներից (–ատ–, –ոտ–, –տ–) պատմիչը –ոտ–ով ունի 2 վկայություն՝ «Բաղումք խոցոտեալ նետիւր... դէմ եղին երթալ ի կողմանս հրախոտ» (էջ 151): «Ներքուստ ի վեր ծակոտէին զսպառազէնս հեծերոց» (էջ 41):

Պատճառական ածանցը՝ –ոյց–ը, գործածվում է բավական հաճախ: Այս ածանցով հանդիպում են շուրջ 50 բայեր, որոնց մեջ միայն երկուսն են, որ առաջին անգամ վկայվել են Սեբեոսի Պատմության շնորհիվ՝ բոցացուցանեմ (էջ 32), վտանգեցուցանեմ (էջ 53):

Ի դեպ, շնայած –ոյց–ը պատճառական ածանց է, բայց նրանով կազմված բառերից շատերի մեջ այսօր միջնորդավորված գործողություն չի նկատվում: Պատճառականության իմաստն արվելի ցայտուն է բալ–տամ վաղապարով հարադրությամբ արտահայտված պատճառականության մեջ²⁶:

Նոր բառերի կերտման, լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկն է բառաբարդումը՝ հայոց լեզվում բառակերտման ճկուն ու արտադրողական միջոցներից մեկը:

Սեբեոսի Պատմության մեջ հատկապես հաճախ են հանդիպում իսկական և հարադրավոր բարդությունները: Բուն կրկնավոր բարդությունները մեկ տասնյակից քիչ սովելի են:

Սեբեոսի երկում հանդիպած իսկական բարդության բաղադրիչները շուրջ 90 տոկոսով միանում են –ա– հոգակապով. օրինակ՝ անառախիտ (էջ 56), պատկերանոխ (էջ 6), սուսերամերկ (էջ 111) և այլն: Բառաբարդման այս եղանակը հայերենի վարդաքանդան բոլոր շրջաններում էլ ամենից տարածվածն է²⁷:

Սեբեոսի Պատմությունում առաջին անգամ գործածվել են շուրջ 20 համադրական–իսկական բարդությունների՝ ճախանձաբեր (էջ 84), սրբաջունջ (էջ 85), զրուցակարգեմ (էջ 2), ձիւնտիւր (էջ 94), ձորաբերան

26 Այս մասին տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 591:

27 Ժամանակակից գրական արեւելահայերենի համար տե՛ս Տ. Մ. Ավետիսյան, Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը («Հայոց լեզվի կառուցվածքը», Երևան, 1975, էջ 45):

(էջ 52), նիզականոյն (էջ 53), պատկերանոյն (էջ 6), սուրակոյն (էջ 88), տարահալած (էջ 135), ազգածին (էջ 3), ականակոտ (էջ 9), նիմնադրեմ (էջ 130), հրէապետ (էջ 123), փայտայարկ (էջ 89), փայտայարկ (էջ 89) և այլն:

Հեղինակի գործում խեղական բարդության ամենից տարածված կաղապարներից են՝

1. Գոյական + հոդակապ + բայաճառ. — աղգածին, ականատես, ահարեկ:

2. Գոյական + հոդակապ + գոյական. — աւարամասն, բժշկատես, գիւղաքաղաք, քաղաքագէտ:

3. Ածական + հոդակապ + գոյական. — լատինալեզու, գեղեցկադիր:

Կցական բարդության ամենից տարածված կաղապարներից են՝

1. Գոյական + գոյական. — գետեղր, լեռնոտն. «Եւ բնակեալ ի վերայ գետեզերն՝ ասպատակս սփռեցաւ ընդ արեւմուտս» (էջ 67):

2. Դերանուն + գոյական. — ալժմ (< ալս + ժամ), ալլաղգ. «Մի համարիր ի միտս քո խորհել վասն քո ալլաղգ ինչ» (էջ 45): «Ալժմ հասեալ կամ ի դռնն արքունի» (էջ 44):

3. Ածական + գոյական. — հրադոտն, հսկայազն, յաղթանդամ:

Կրկնավոր բարդության հիմնական կաղապարն է գոյական + գոյական. օրինակ՝ գունդ գունդ, անդամ անդամ, փաղանգ փաղանգ. «Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա, յաւշեալ ի միմեանց» (էջ 89): «Զամենեսեան միաբանեաց, արար գունդս գունդս» (էջ 51):

Կրկնավոր բարդություններից առաջացած կցականների մեջ ամենից տարածված կաղապարն է արմատ + արմատ՝ բարբառ, կսկիծ (< կիծ + կիծ), հեղհեղել, փոփոխումն (< փոխ + փոխ + -ումն):

Պատմիչի լեզուն հարուստ է հատկապես բայական հարադրություններով:

ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտողություններ հոլովման վերաբերյալ: Սերեռտի լեզվում ի հոլովումը ավելի կենտրոնակ է և ցուցաբերում է նաև այլ հոլովումների պատկանող բառերի դեպի իր ուղղությամբ ձգելու միտում: Ինչպես հայտնի է, հունական -աս, -ոս հնչյունակապակցություններով վերջացող հատուկ անձնանունները դասական դրաբարում հոլովվում էին արտաքին թեքման և՛ ա, և՛ ի հոլովումներով: Նշված վերջավորություններով բառերը Սերեռտի Պատմությունում շուրջ 90 տոկոսով հոլովվում են արտաքին թեքման ի հոլովմամբ:

Շեղումներ արտաքին թեքման ա հոլովման մեջ: -է-ով վերջացող մի շարք հատուկ անձնանունների պես (Գայիանէ, Հեղինէ) դասական դրաբարում Հռիփսիմէ բառը սեռական հոլովում ունի Հռիփսիմեայ ձևը: Սերեռտի լեզվում, սակայն, մեկական անգամ հանդիպում են Հռիփսիմէի և Հռիփսիմեայ ձևերը. օրինակ՝ «Քաղեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռն սրբոյն Հռիփսիմեայ» (էջ 89): «Երեկեցա... Կուսական մարմին սրբոյ տիեկնոջն Հռիփսիմէի» (էջ 89):

Դասական դրաբարի հայտնի մատենագիրներից (Եղիշիկ, Կորյուն, Խորենացի, Բուզանդ, Եղիշե և քիչ ուշ շրջանից՝ Փարպեցի) միայն Ագաթանգեղոսի Պատմության մեջ Հռիփսիմէ հատուկ անձնանունը հանդիպում է թեքված, բայց միշտ՝ Հռիփսիմեայ ձևով. օրինակ՝ «Նոտն թագաւորն զգեղապանծ վաչկչութիւն... նկարագրին Հռիփսիմեայ»¹:

Կեսարիա² բառի սեռական հոլովը, ինչպես -իա հիմքով բառի սեռականը, ընկում է Կեսարիայ և Կեսարեայ: Հետագա դարերում հանդիպում է նաև Կեսարիոյ: Սերեռտի լեզվում այս բառը հանդիպում է ու

¹ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տիփսիս, 1909, էջ 79:

² Կեսարիա, Նեոկեսարիա բառերի սերիոսյան կիրառություններում մենք շեղում ենք դիտում այնքանով, որ դրանք ավելի ուշ շրջանում հոլովվել են նաև ո հոլովիչով: Սերեռտն այդ բառերը հոլովել է միայն ու հոլովիչով:

հոլովիչով թեքված. օրինակ՝ «Սուրբն Ղևոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սեեալ և ուսեալ էր սուրբ Գրիգորիոս» (էջ 129): «Ամենքեան զնիկիայն խաւսեցան... և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս» (էջ 131):

Նէոկեսարիա բառի սեռականը Նէոկեսարիայ/Նէոկեսարեայ (ալիի ուշ նաև՝ Նէոկեսարիոյ) լինելու փոխարեն Սեբեոսի գործում հանդիպում է Նէոկեսարու (էջ 131):

Շեղումներ ի-ա խառը հոլովման մեջ: Երբեք բառի եզակի գործիականը սովորաբար երբեքկալ է, բայց Սեբեոսը գործածել է երբեքկով. օրինակ՝ «Ի բաց կացին ի ծառայութենէ նոցա, և հապճեպ երբեքկով հնազանդեցան ի ծառայութիւն խաղաւորին Յունաց» (էջ 155):

Պալատ բառը ի հոլովիչով հոլովվելու փոխարեն Սեբեոսի Պատմության մեջ թեքվել է ո հոլովիչով. օրինակ՝ «Յանձնեալ ամենայն մի ծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յարժոռ թագաւորութեան իւրոյ» (էջ 81): «Լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատոյն՝ հրամայեաց անել ի վերայ նորա ողորմութիւն» (էջ 57): Նկատենք, որ դատական գրաբարում այս բառը կա նաև պալատն ձևով, որի սեռական-տրականը լինում է պալատան կամ պալատին, իսկ հոգնակին՝ պալատանց³:

Շեղումներ ո հոլովման մեջ: Ախռ բառի եզակի բացառական հոլովը յախռոյ է, բայց հեղինակը գործածել է՝ յախռոէ. օրինակ՝ «Հրամայէ մօռոյգ տանել ընդ առաջ նորա յախռոէ արքունի՝ արքունական կազմութեով» (էջ 69):

Ողոք բառի եզակի գործիականը սովորական ողոքով-ի փոխարեն գործածվել է ողոքալ. օրինակ՝ «Եւ ժողովեալ համարակարին զամենայն իշխանս և զզարս Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝ ողոքալ և ևս քաղցր բանիւր յորդորեալ զամենեւեան միաբանեաց, արար գոնեղս գոնեղս» (էջ 51):

Պարապ բառի եզակի գործիականը լինելու էր պարապով: ՆՁԲ-ում պարապով բառաձևը դիտվում է նաև որպէս մակբայ. օրինակ՝ «Խնդրէր՝ թէ՛ զիարդ պարապով մատնեսցէ զնա»⁴: Սեբեոսի երկում հանդիպում ենք պարապալ բառաձևին. օրինակ՝ «Ասէ. «Երթայց նախ առաջին զնա վանեցից, և ասա պարապալ դարձեալ զնացից ի Հայս» (էջ 26):

Շեղումներ ո հոլովման մեջ: Սպաս գոյականի հոգնակի գործիա-

³ Տե՛ս ԱԲ, էջ 674:

⁴ ՆՁԲ, հ. 2, էջ 628:

կանը սպասում է, բայց պատմիչը գործածել է սպասիւմ. օրինակ՝ «Ընդ նստին ըմբռնեալ և երանելի ծերունի կաթուղիկոսն Յովհաննի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն. սպասիւմ ևկեղեցւոյն» (էջ 78): Նշենք, որ Սեբեոսն ունի նաև սպասում: Փարպեցին (էջ 38) և Եղիշեն (էջ 69) ունեն սպասում:

Ուրբաք գոյականը հոլովվում է ու հոլովիչով: Այս բառի՝ ի նախդրով տրականը արիտի լինելը յուրբաքու: Դասական մատենագիրների, Աստվածաշնչի (ինչպես նաև Ղ. Փարպեցու) համաբարբառներում այս բառաձևը չկա, իսկ նշՔ-ում⁵ կա յուրբաքու. օրինակ՝ «Ի կիրակէի և ի չորեքշաբաթու և յուրբաքու»: Սեբեոսն ունի յուրբաքի. օրինակ՝ «Աւր Ի էր տրէ ամսոցն, յաւուր ուրբաքի» (էջ 110):

Տիրասպան գոյականի եզակի սեռական-տրականը տիրասպանի բառաձևն է, իսկ հոգնակին՝ տիրասպանից կամ տիրասպանաց: Հոգնակի ուղղականի կամ հայցականի մասին բառարաններում ոչինչ չի նշվում, բայց որպես համանիշ բերվում է տիրասպանու: Վերջինիս համար ևս հոգնակի ուղղականի վերաբերյալ ոչ մի նշում չկա: Տիրասպան բառի հոգնակի ուղղականը լինելու էր տիրասպանք, որից էլ հոգնակի հայցականը՝ տիրասպանն, իսկ տիրասպանու բառինը՝ համապատասխանաբար՝ տիրասպանուք-տիրասպանու: Սեբեոսի լեզվում տիրասպան բառի հոգնակի հայցականը հանդիպում է տիրասպանդուն ձևով. օրինակ՝ «Աւր՝ զի զհակառակորդսն մեր տիրելիս արար, և ետ զմեզ ի գթութիւն և յողորմութիւն առաջի ամենայն գերշաց մեքոց. որ զտիրասպանուն և զհրեայս, որք կարծելին չարչարանաւք սորա դարձեալ թշնամանել զայն» (էջ 84):

Խառխիս բառը հոլովվում է -ի, -աց կամ -ից ձևով: Սեբեոսի Պատմության մեջ կա խառխիսով. օրինակ՝ «Եւ գտեալ գտեղին, որ կոչի սրբութիւն սրբութեանց՝ շինեցին զնա խառխիսով շինուածով տեղի աղաւթից իւրեանց» (էջ 111):

Նաւ բառը հոլովվում է -ու, -ուց և -ի, -աց ձևով: Բայց Սեբեոսն ունի ու հոլովիչով թեքված. օրինակ՝ «Եկին հասին... նաւք... հանդերձ ամենայն փոքր նաւովքն և ամենայն կաղմուածովքն իւրեանց» (էջ 148)⁶:

⁵ ՆշՔ, հ. 2, էջ 559:

⁶ Ուսումնասիրողների տվյալների համաձայն (տե՛ս Հր. Անաոյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 593—595, Գ. Զահովյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 336), գունդ-ը, երբ նշանակում է «զորք», խումբ, բազմություն», հոլովվում է -ի, -աց, կամ -ից ձևով, իսկ գունդ-ը «գունդ, գնդակ» նշանակելիս՝ -ոյ, -ի, -աւ ձևով: Բայց Սեբեոսի Պատմության մեջ

Եթե հենվենք ԱԲ-ի և ՆՀԲ-ի տվյալների վրա, ապա Սերեոսի կողմից գործածված մի շարք բառերում ևս կարելի է դիտել շեղում, սակայն դասական մատենագիրների տվյալները թույլ չեն տալիս այդ անել. օրինակ, պահք բառը հոգնակի գործիականում ունի պահով ձևը, բայց Սերեոսն ունի պահաւ (էջ 48):

Կորյունն ունի միայն պահաւ (էջ 90), իսկ Ագաթանգեղոսը՝ պահաւ (էջ 154) և պահով (էջ 449):

Պատիւ գոյականի հոգնակի գործիականը պատուով-ի փոխարեն Սերեոսն ունի պատուաւ. օրինակ՝ «Մեծացուցանէ ահագին պատուաւ ի ճամբար ականակապ և ի գումարտակ, և ի գահս արծաթիս» (էջ 66):

Ղ. Փարպեցու լեզվում հանդիպում են պատուաւ (էջ 54) և պատուով (էջ 24, 116, 140), իսկ Եղիշեի երկում՝ պատուով (էջ 12) և այլն:

Տեղ, ժամանակ նշող և ո հոլովիչով հոլովվող -ի վերջահանգուվ մի շարք բառեր եզակի տրական հոլովում ստանում են -ջ հոլովակերտը: Ի նախդիրով և հենց այդ տրականով էլ, սովորաբար, արտահայտվում է այդպիսի բառերի ներգոյականի իմաստը: Այս կապակցությամբ Գ. Զահուկյանը գրում է. «Եզակի թվում ներգոյականը՝ ա) նման է լինում տրականին այն բոլոր դեպքերում, երբ տրականը տարբերվում է սեռականից՝ ի միում, յառաջնում, ի հնում, ի նորում, այլև ի տեղոջ, յայգոջ, ի տարւոջ, ի կղզոջ»⁷: Սակայն, այս սովորական ձևի կողքին Սերեոսի Պատմությունում կան նաև այսպիսի ոչ սովորական ձևեր՝ «Զամենայն զպատանդսն... տատակեցին... ուր ոչ դիպեցան ի տեղւոյն, այն միայն յայրեցան» (էջ 155)՝ փոխանակ՝ ի տեղոջն: «Եւ հրաման տուեալ թագաւորն խնդիր անել ի գանձու տեղւոյն, և գտին զնիկիրայն հաստոս ճշմարիտս» (էջ 125)՝ փոխանակ՝ ի տեղոջն:

Սերեոսի լեզվում նկատվում է միտում՝ մի շարք բառերի ներգոյականի իմաստը սովորական ի-տրականով արտահայտելու փոխարեն ի-հայցականով արտահայտելու ուղղությամբ. օրինակ՝ «Թողին ի բաց զքաղաքն խաղաղութեամբ՝ փակեցին զգոռն և ամրացան ի նա» (էջ 105): «Նստէր ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց» (էջ

առաջին բառը հոլովվում է ո հոլովիչով՝ «Գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր զնղով և զբաւոյն» (էջ 58): Կորյունի լեզվում գունդ բառը «խումբ» իմաստով գործածվել է և՛ զնղով, և՛ զնղիւ՝ «Յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական զնղովն... եկեալ հասեալ» (էջ 56): «Ամենայն լուսաճաճանջ զնղին... յԱշականն ելանէին» (էջ 94):

7 Դ. Բ. Զանուկյան, նշվ. աշխ., էջ 91 (ընդգծումը հեղինակինն է—Դ. Բ.):

13): «Լինի անդ կոտորած մեծ, մինչև ի նեղ անկանել զարուն Պարսից յերկիրն Ուրհայո» (էջ 16): «Կաղմեալ ունէր յեզր ծովուն նաւս բաղումս թեթևս» (էջ 148)⁸:

Թվականների հոլովման առանձնահատկություններ: Տառով կամ տառակապակցութեամբ արտահայտված քանակական թվականները Սեբեոսի լեզվում չեն հոլովվում: Բացառություն է կաղմում՝ «Շահէնն ԼՌ-աւ (այսինքն՝ երեսուն հազարս — Գ. Բ.) հատեալ բանակեցաւ... ի Տիգրանակերտ աւանի» (էջ 93): Տառով և տառակապակցութեամբ արտահայտված դասական թվականները հոլովվում են. օրինակ՝ «Յամին ՄԲ-երորդի Շապհոյ արքային Պարսից, Ե-երորդի ամի բարեպաշտին Կոստանդինոսի կայսեր... թագաւորէ խոսրով» (էջ 16):

Հարադրավոր բաղադրյալ դասական թվականների հոլովման մեջ գոյություն ունեն ինչպես բո՛ւն գրաբարի, այնպես էլ՝ ավելի ուշ շրջանի օրինաչափություններ: Այսպես, եթե բաղադրյալ թվականի բոլոր բաղադրիչները դասականակերտ ածանց են ստանում, ապա այդ բոլոր բաղադրիչներն էլ հոլովվում են՝ «Յամին քսաներորդի առաջներորդի արքային խոսրովայ հրաման ետ նմա» (էջ 78): «Եղև ի ժամանակին յայնմիկ գումարել զարս Երակլի... յամի քսաներորդի երկրորդի թագաւորութեանն խոսրովայ» (էջ 79):

Բաղադրյալ թվականի ածանց շտապած բաղադրիչը միշտ մնում է չհոլովված՝ «Թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեանն Արշակայ հար իւրոյ» (էջ 10): «Յամին հարիւր և տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթևաց... զարաժողով լեալ» (էջ 8)⁹:

Եթե նախադասությունն սկսվում է երկու ծավալուն ժամանակի պաշարաներով, երբեմն առաջինում դասական թվականը հոլովվում է, իսկ

8 Սեբեոսի լեզվում նկատելի է նաև որոշակի անկայունություն դերանվան և գոյականի հոլովական համաձայնության հարցում. օրինակ՝ «Հրաման ետ զարավարի իւրոյ Շահր Վարադայ» (էջ 93)՝ փոխանակ՝ զարավարի իւրում, «Ահաւաթիկ տեսան ածեալ ի պանդոկի յայդ» (էջ 88)՝ փոխանակ՝ ի պանդոկիդ յայդմիկ:

9 Ի դեպ, այսպիսի դասական թվականները բավական շատ են հանդիպում Սեբեոսի գործում, բայց պրանց վերջին բաղադրիչը միշտ էլ համապատասխան ածանց է ստանում: Բերենք մի օրինակ ևս՝ «Յամի երանասուն և հինգերորդի կենացն մեռաւ Կոստանդէս» (էջ 133):

Դեռևս Գ. Ավետիքյանը 1815 թվականին այս մասին ակնարկել է. «...պազի տեղ առջի թիվը բացարձակ կրդենն» (տե՛ս Գ. Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 335): Սեբեոսի գործում այս երևույթն արդեն շատ հաճախ է հանդիպում:

երկրորդում՝ ոչ. օրինակ՝ «Յամի ԻԳ-երորդի երանելուն նրակզի կայսեր, և երկրորդ ամի Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ Հրէից ընդ Իս-մայելացիսն» (էջ 22): «Յամին Լ-երորդի շորրորդի Մեծին Խոսրովայ, և շորրորդ ամի արքային Պարսից Արտաշրի Թագաւորէ Տերենտիանոս» (էջ 14):

Անհրաժեշտ է նշել նաև Սեբեոսի լեզվում նկատվող հոլովական զուգաձևութիւնը: Դեռևս դասական գրաբարում գոյութիւն ունեին բաղմամբիւլ բառեր, որոնք հոլովվում էին մի քանի տիպերով: Կային նաև դեպքեր, երբ միեւնույն բառական միավորը նույն հոլովում հանդես էր գալիս մեկից ավելի հոլովաձևերով: Նշանակում է՝ դասական գրաբարում բառացին առանձին միջավորներ դեռևս որոշակիորեն չէին խմբավորվել ըստ հոլովատիպերի, իսկ հոլովաձևերից մեկը գործածութիւնից դուրս չէր մղել մյուսին: Այդպիսի մի շարք բառեր կարելի է գտնել Սեբեոսի Պատմութեան մեջ¹⁰: Նկատենք, սակայն, որ այստեղ չկա մի բառ, որի հոլովական անկայունութիւնը նախկինում իբրև այդպիսին գոյութիւն ունեցած չլիներ: Սակայն, Սեբեոսի լեզվում որոշ հոլովաձևերի կիրառութեան առավել հաճախակիութիւնը վկայում է VII դարում դրանց մի մասի կենսունակութեան մասին: Պատմիչը որոշ զուգ հոլովաձևեր գործածել է համապար քանակով: Այսպես, նրա երկում մեկական անգամ հանդիպում են դրաւոյց և դրաւից բառաձևերը (հոգնակի տրական հոլով)՝ «Նւ զգաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն առ ձեռն գտեալ... ըստ գնդից, ըստ դրաւոյց իւրեանց» (էջ 38): «Տայր նմա զար կայսերական յազնականութիւն... ըստ դրաւից իւրեանց» (էջ 37): Հաճախ նա մի հոլովաձևում գործածում է միայն նույն հոլովիչով թեքված ձևը, իսկ մյուս թուր հոլովնե-րում՝ այլ հոլովիչով հոլովվածները: Այսպես, զանձ բառը հոլովվում է և՛ ու, և՛ ի հոլովիչով: Սեբեոսը հոգնակի գործիականում միշտ գործածել է զանձիւք (էջ 42, 97), իսկ անաղած բոլոր հոլովներում՝ ու հոլովիչով հոլովված ձևերը (էջ 50):

Երբեմն նո՛ւյն հոլովի եղակիում նո՛ւյն բառը գործածված ենք գտնում մի հոլովիչով, հոգնակիում՝ մի այլ. օրինակ՝ «Թափեցին զմաշապերճանն ամենաջն, դեսպակն ոսկեղէն բազմաքանքար, որ էր ակամբք պատուականաւք և մարգարտաւ յօրինեալ» (էջ 28): «Ջամենայն անաւթս մատուականացն առաքէ նմա ոսկի, և հանդերձս Թագաւորա-

¹⁰ Դրանցից մի քանիսի մասին խոսվեց հոլովական շեղումներին վերաբերող հատվածում: Այստեղ անդրադառնում ենք դրանց՝ անհրաժեշտութիւնից կոնկրետ:

կանս, արտախուրակս ոսկեղաւծս և զանգապանակ ակամբք և մար-
գարաով կարգեալ» (էջ 64):

Գրաբարում կան դեպքեր, երբ բառը հոգնակի ուղղականում ունի
զույգ ձևեր: Օրինակ, այն ցուցական դերանունը այդ հոլովում լինում է
և՛ այնք, և՛ այնոքիկ: Պատմիչը այս բառը գործածել է միայն այնք
ձևով. օրինակ՝ «Իսկ այնք, որ էին բնդ նոսա, խնդրեցին երդումն»
(էջ 64):

Հետաքրքիր է նշել, որ Սեբեոսը որոշ բառերի հոգնակի ուղղականի
համար գործածել է կա՛մ հոլովված միայն կարճ ձևը, կա՛մ և՛ կարճ,
և՛ երկար ձևերը, իսկ հոգնակի հայցականը կազմել է այդ բառերի հոգ-
նակի ուղղականի բացառապես երկար ձևերից: Օրինակ, այն ցուցա-
կան դերանվան հոգնակի ուղղականը գործածել է միայն այնք կարճ
ձևով (օրինակը բերվեց վերևում), իսկ հոգնակի հայցականը՝ միայն
երկար ձևով. օրինակ՝ «Գոհանամք զԱստուծոյ ի վերայ մխիթարու-
թեանց, ընդ որ մխիթարեաց զմեզ, որպէս զի և դուք կարող լինիջիք
մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցեն» (էջ 86): «Հա-
րեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և
զգերութիւն» (էջ 118) և այլն:

Եպիսկոպոս բառը հոգնակի ուղղականում հանդիպում է եպիսկո-
պոսք (էջ 124, 131) և եպիսկոպոսումք ձևերով (էջ 121, 133, 144),
բայց հոգնակի հայցականը կազմել է միայն երկար ձևից. օրինակ՝ «Եւ
Ժողովեալ ամենայն եպիսկոպոսունս և իշխանս արարին քննութիւն»
(էջ 98): «Ժողով արար դա, և զամենայն եպիսկոպոսունս այսր ժողո-
վեաց» (էջ 145): Բերենք նաև մի քանի այլ օրինակներ՝

1. Հատուկ անուններ: Երակոս բառը եզակի սեռական հոլովում
հանդիպում է Երակի/-եայ, բայց ալիւի հաճախ՝ Երակլի, Խոսրով-ը՝
Խոսրովայ/-ու, բայց ալիւի հաճախ՝ Խոսրովայ, իսկ տրականում՝ Խոս-
րովու, Կոստաս-ը՝ Կոստասայ/-ու/-ի (յուրաքանչյուրը՝ մեկական ան-
գամ), Հայկ-ը՝ Հայկայ/-ի (ալիւի հաճախ՝ Հայկայ), Հոփիսիմէ-ն՝
Հոփիսիմեայ/-էի (մեկական անգամ), (Վրկան-ը՝ Վրկանայ/-ի (մեկա-
կան անգամ) և այլն: Բերենք օրինակներ նշված բառերից մի քանիսի
համար միայն՝ «Յամի Ժէ-երորդի Երակլի կայսեր թագաւորէ Պարսից
Կաւատ որդի Խոսրովայ» (էջ 21): «Եւ հրաման տուեալ զաւրացն՝ որք
սպառազինեալ շուրջ զխորանան Խոսրովու կային» (էջ 45): «Ազդ լինի
արքային Խոսրովու եղեալ իրքն» (էջ 70): «Ազդ եղև Խոսրովու, եթէ
դարձաւ Երակլոս» (էջ 93): «Եւ եղև ի մահուանն Երակլի թագաւորեաց
Կոստանդին որդի նորա» (էջ 113): «Եւ թագաւորէ Երակոս, որդի

երակեայ» (էջ 113): «Քաակեաց կաթուղիկուն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հովհաննէայ» (էջ 89): «Երեւցաւ... կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հովհաննէի» (էջ 89):

2. Հասարակ գոյականներ: Եղակի սեռական հոլովում խորհուրդ բառը գործածվել է խորհրդեան/-ի/-ոյ (ավելի հաճախ՝ խորհրդեան), մահ-ը՝ մահուան/ու:

Եղակի գործիական հոլովում գետ գոյականը հանդիպում է գետով/-աւ ձևերով, իսկ գունդ-ը՝ գնդով/աւ (մեկական անգամ), հուր-ը՝ հրով/հուրք (յուրաքանչյուրը՝ 3-ական անգամ). օրինակ՝ «Անց զգետովն առ ի յըմբռնել զխոսրով» (էջ 36): «Անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ» (էջ 94): «Զբաղումս վանեցին հրով» (էջ 120): «Այրեցին զքաղաքն հուրք» (էջ 83):

Կին բառը նույն հոլովում գրաբարն ավանդել է կնաւ և կանամբ ձևերով: Սերեոսի ստեղծագործությունում հանդիպում ենք միայն կնաւ ձևին (4 անգամ):

Հոգնակի բացառական հոլովում երեց գոյականը հանդիպում է յերիցունց/-անց, բայց ավելի հաճախ՝ յերիցանց:

3. Գերանուններ: Այս, այդ, այն դերանունները եղակի սեռական հոլովում գրաբարում կարող են ունենալ և՛ կարճ, և՛ երկար ձև, համասպատասխանաբար՝ այս-այսորիկ, այդ-այդորիկ, այն-այնորիկ: Դասական գրաբարում երկու ձևերն էլ գործածվում են: Ընդհանուր առմամբ, ավելի գործածական են երկար ձևերը: Մեր կողմից համեմատվող աղբյուրների մեջ բացառություն են Ագաթանգեղոսը և Մ. Խորենացին, որոնք այդ ցուցական դերանվան այդք ձևն ավելի շատ են գործածել, քան այդորիկ-ը:

Սերեոսի լեզուն նույնպես բնութագրվում է ցուցական դերանունների երկար ձևերի կիրառական առավել հաճախականությամբ: Ավելին, նկատվում է այս դերանունների սոսկ երկար ձևերի գործածության որոշակի հակում: Այսպես, պատմիչն այնորիկ-ը գործածել է 36 անգամ, իսկ այն-ը՝ 1, այսորիկ-ը՝ 16, այս-ը՝ 1, այդորիկ-ը՝ 1, այդ-ը՝ ոչ մի անգամ:

Երբ այս ցուցական դերանունները հոլովվում են երկար ձևով (այս-որիկ, այդորիկ, այնորիկ), Սերեոսի լեզվում նրանք միշտ ետադաս են, լայսինքն՝ դրվում են նախադրությունից կամ գոյականից հետո և թվում աւ հոլովով համաձայնվում գոյականի հետ:

Սերեոսի Պատմության մեջ դերանունների ետադաս կիրառության

կարճ (այսր, այդր, այնր) և նախադաս գործածութեան երկար ձևեր (այսորիկ, այդորիկ, այնորիկ) չկան:

ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԿՆԵՐ

Գրաբարում հոգնակիությունն արտահայտող սովորական ու շատ գործածական -ք/ -ց, -ս/ վերջավորություններից բացի հանդիպում են նաև հետևյալները.

1.—Որայ.— «Ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս» (էջ 141):

Նախասեբեոսյան մատենագիրները —որայ-ը գործածում են հատկապես վան(ֆ) բառի հոգնակին կազմելու ժամանակ՝ «ի վանորայս» (Նղիշե, 22), «վանորայս» (Նորենացի, 356), «ի վանորայս» (Փարպեցի, 13):

2.—Տի.— «Եւ առէ «Վասն արնորիկ, զի մի՛ անկցիս ի ձեռս մանկտոյ իմոյ և մեռանիցիս. ալ և՛ ի ձեռս իմ, և կեա՛ց ի տան իմում խաղաղութեամբ» (էջ 4):

3.—Իկ.— «Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան» (էջ 2):

4.—Ստան.— «Սկեալ էին ի վուժս այգեստանին» (էջ 110):

Հոգնակերտ այս մասնիկները շատ սակավ են գործածվում և դրվում են ընդամենը մի քանի հիմքերի վրա:

Դիտողություններ խոնարհման վերաբերյալ: Ի տարբերություն հոլովման համակարգի, Սեբեոսի լեզուն ավելի հարադատորին է մնացել բայաժամանակների ու բայաձևերի կազմության դասական գրաբարի նորմաներին ինչպես նաև՝ բայական ժամանակների բո՛ւն և երկրորդական միրառություններին:

Պատմիչի լեզվում առավել հաճախականությունը և գրեթե հավասար քանակով են հանդիպում անորոշ և անցյալ դերբայները: Վերջիններիս բաղդատությունը անհամեմատ սակավ են գործածվել ապառնի (հիմնականում՝ բաղդարյալ ժամանակի բաղդարիչ) և ենթակայական դերբայները:

Անորոշ դերբայի փոխարեն երբեմն գործածվել է անցյալ դերբայ՝ «Ասեն զամանէ յերկաբեալ զամս կինացն Ճկ և ունել ի ժամ մահուանն զհերս և զաչս և զլսելիս և զզարութիւնն մանկութեանն» (էջ 15)¹¹:

¹¹ Հետևյալ նախադասության մեջ՝ «Քանզի նա է խաղաղութիւն մեր որ առնէ զամենայն, որպէս ասացեալդ է, և վերստին նորոգէ որպէս ալժմիկ մարտեալ՝ ուրախ արասցէ զմեզ ի ձեռն սուրբ աղաթից ձերոց» (էջ 85) մարտեալ-ը ձևով անցյալ դերբայ է, բայց ոչ մարտնչիմ բայինը, որովհետև իմաստով չի կապվում նախադասության

Սեբեոսի Պատմութեան մեջ կան դատական գրաբարի բոլոր լծորդութիւններով բայեր, սակայն ամենից շատ հանդիպում են ե խոնարհման բայերը (մոտ 400):

Ե, ի խոնարհումներում մեծ թիվ են կազմում սարգ բայերը, ա խոնարհման մեջ՝ ածանցավորները, իսկ ու խոնարհման մեջ բայերի համարյա կեսն ածանցավոր է, կեսը՝ սարգ:

Ա. խոնարհման բայերի անցյալ դերբայը կազմվում է կատարյալի հիմքից: Ուստի անդրանկանամ բայի անցյալ դերբայը օրինաչափորեն լինելու էր անդրանկացեալ. օրինակ՝ «Արամենակ անդրանկացեալ (անդրադիմելն Հայկայ)»¹²: Սեբեոսի լեզվում, սակայն, գտնում ենք մի վկայութիւն, ուր այս բայի անցյալ դերբայը կազմվել է ներկայի հիմքից. «Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց, անդրանկելոցն ի Բաբելոն» (էջ 3):

Առանձին բայերի խոնարհման մեջ հանդիպում են հետեւյալ շեղումները: Տեսանեմ բայը սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի երրորդ դեմքում ունի տեսին ձևը, բայց Սեբեոսի երկում մեկ անգամ հանդիպում է ավելի ուշ շրջանի ձևը՝ տեսան՝ «Որ ահաւատիկ տեսան ածեալ ի պանդոկի յայդ և դարմանել և զերիս դահեկանս, որ ետ ի պանդոկապետն՝ ահաւատիկ դու ունիս ի ձեռս քոյ դարման առատ» (էջ 88)¹³:

Ժողովեմ բայը հրամայական եղանակի եղակի թվում ժողովեա՝ ձևի փոխարեն տունի ժողովէ¹⁴, իսկ հրամայեմ բայը՝ հրամայեա՝ ձևի փոխարեն՝ հրամայէ՝ «Բայց ե՛կ, առէ, ես զիմա ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յարեւելս տանել» (էջ 49):

Տանիմ բայը երկրորդ ապառնի ժամանակի հոգնակի երրորդ դեմքում ունի տարցեն ձևը փոխանակ՝ տարցին, իսկ ունիմ բայը կալցին ձևի փոխարեն ունի կալցեն՝ «Կալցեն զնա և տարցեն յանդիման նորա ի տնեալին» (էջ 145): «Ապատամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան լիշխան աշխարհին Սիւնեաց, և... խնդրեաց ի նոսրովայ յար-

էութեան հետ, իսկ մարտեմ բայ գրաբարը շունի: Ստ. Մախաթանցը ենթադրում է, թե այս բառը կարող է աղավաղված լինել (տե՛ս Սեբեոս, էջ 85, էջատակի 19-րդ կետը):

¹² ՆՀԲ, հ. 1, էջ 136:

¹³ Տեսան բայաձևը պետք է հասկանալ ոչ թե «շատերը տեսնվում են», այլ «շատերը տեսնում են»:

¹⁴ Տե՛ս Ա. Ա. Արաբամյան, Գրաբարի ձևոնարկ, Երևան, 1958, էջ 483:

քայլէն Պարսից, զի տաւրցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դիւնայ ի Փայտակարան քաղաք» (էջ 27)¹⁵:

Դասական գրաբարում բայի անցյալ անկատար ժամանակի կրավորական սեռի արտահայտման համար առանձին ձև չկա: Դասական և ետդասական շրջանի գրաբարի հեղինակների գործերում և խոնարհման բայերի եզակի 3-րդ դեմքը հազվադեպ հանդիպում է -իւր վերջավորութեամբ -էր-ի փոխարեն և միշտ կրավորական սեռի իմաստով. օրինակ՝ «Որոյ անուն Փիսակ կոչիւր» (Բուզանդ, էջ 42): «Որում անուն վարդան կոչիւր» (Անդ, էջ 88): Այս երևույթը վաղուց ի վեր նկատված է լեզվաբանների կողմից¹⁶: Չնայած սեռատարբերական խիստ անհրաժեշտութեանը, -իւր-ով այս արխաիկ ձևերը լեզվում տարածում չստացան, թեև Սեբեոսն էլ երբեմն գործածում է դրանք. օրինակ՝ «Անտեսաներին տեսանիւր, անշաւափելին շաւափիւր, անժամանակն սկսանիւր» (էջ 128): Այստեղ ուշագրավ է այն, որ բերված օրինակում սկսանիւմ-ը թեև ի խոնարհման բայ է, տեսանիւր, շաւափիւր ձևերի նմանակութեամբ տալիս է -իւր:

Ուսումնասիրվող հեղինակի գործում բերված բայական շեղումները վերաբերում են ոչ թե խոնարհման տիպերին, այլ հարացույցի այս կամ այն անդամին: Սակայն ի՞նչն է էականը այս շեղումներում: Առաջին հերթին այն, որ ունենք բայասեռային տարբերակման դասական հայերենին հաստակ բայաժամանակային վերջավորութիւնների (-այ, -ար, -աւ, -ալք, -ան) խախտում, որոնք սեռատարբերական ցուցչի դեր էին կատարում: Իսկ սա նշանակում է, որ VII դարի հայերենն արդեն խոսակցական լեզվի ու բարբառների արդեցութեամբ զգալիորեն հեռացել էր դասական հայերենից: Սեբեոսի լեզուն, դասա-

15 Կարեմ բայը սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքում ունի կարաց ձևը, բայց Սեբեոսի լեզվում հանդիպում է կարացաւ ձևը՝ «եւ այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչև զի խաղացեալ վտակաց սաստկութիւն արեանցն առողանէր զերկիրն ամենայն: Եւ ոչ կարացաւ զդէմ ունել, փախստական լինէր զարն ապստամբական առաջի զարացն Յունաց» (էջ 40): Մ. Գրիգորյանը, սակայն, ընդգծված բառն իրավացիորեն սրբագրում է՝ կարացեալ (տե՛ս Մեսրոպ ծ-վ Գ. Գրիգորեան, Դիտողութիւններ և սրբագրութիւններ Սերէոսի պատմագրոց բնագրին վերայ, Վիեննա, 1973, էջ 30):

16 Վեր. Զալրիւեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 67, էջատակի ծանոթութեան մէջ և խոնարհման բայերի անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքի մասին կարդում ենք. «Կը գտնուի գծածիւր ալ, ինչպէս նաեւ հատանիւր, տեսանիւր, եւ այլն. բայց ընտիր չէ» (ընդգծումները հեղինակինն են — Գ. Բ.): Տե՛ս նաև Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևնարկ, Երևան, 1958, էջ 129:

կան հայերենի հոլովման ու խոնարհման համակարգի ժառանգմամբ և պահպանմամբ հանդերձ, չէր կարող զերծ լինել խոսակցական, ինչպես նաև բարբառային լեզվի ազդեցությունից: «Ճիշտ է, ներկայացված փաստերը դեռ այն ճոխությունը չունեն, որպեսզի կանոնարկված ձևերի բաղմոթյան մեջ անմիջապես աչքի ընկնեն, սակայն եղած փաստերն էլ բավական են հաստատելու, որ VII դարի աջս պատմիչի լեզուն արդեն լատինականաչափ հեռանում է դասական մատենագիրների լեզվից, դասական հայերենի որոշ նորմաներից:

Բայական պարզ ու բաղադրյալ ժամանակների համեմատությունը դասական գրաբարի համապատասխան ժամանակների հետ ցույց է տալիս, որ պատմիչի լեզվում ուշադրության են արժանի առավելապես առաջին և երկրորդ ապառնիները (մասամբ նաև՝ բաղադրյալ ժամանակները):

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՆԻՆՆԵՐ

Գրաբարում ապառնիության իմաստն արտահայտվում է առաջին, երկրորդ ապառնիներով, սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակով, բայական ժամանակների երկրորդական կիրառություններով: Սակայն հիմնական ծանրությունն ընկած է առաջին և երկրորդ ապառնիների վրա:

Դեռևս Մ. Սալլանթյանը նկատել է, թե՝ «Բաղադրյալ ապառնին (խոսքը առաջին ապառնու մասին է— Գ. Բ.)՝ ո՛ր և իցէ բայի սակաւութեի ի գործ ածի ևս և առ նախնիս...» (ընդգծումը մերն է— Գ. Բ.)¹⁷: Առաջին ապառնին երկրորդի համեմատությամբ ինչ-որ չափով քիչ է գործածվում: Լեզվի զարգացման հետագա ընթացքը տառնում է նախ՝ դեպի առաջին, ապա՝ երկրորդ ապառնու աստիճանական նվազում և լեզվից վերացում:

Սեբեոսի գործում երկրորդ ապառնիով կիրառվել է 128 բայ, իսկ առաջին ապառնիով՝ 27, այսինքն՝ 4,74 անգամ քիչ:

Հեղինակը 12 բայեր գործածել է թե՛ առաջին, թե՛ երկրորդ ապառնիով: Դրանցից միայն մեկը՝ կարնչիմ-ը, ապառնիներից յուրաքանչյուրով գործածվել է մեկական անգամ, իսկ մյուսներն ավելի շատ կիրառվել են երկրորդ ապառնիով (տե՛ս աղյուսակը):

17 Մ. Սալլանթեան, Քերականութիւն գրաբառ լեզուիս Հայոց, ի Մոսկով, 1827, էջ 88: Գ

Բայեր	Առաջին ապառնի	Երկրորդ ապառնի
Առնեմ	1	18
Ասեմ	2	10
Լինիմ	3	23
Խնդրեմ	1	5
Կամիմ	8	9
Կարեմ	2	4
Կորնչիմ	1	1
Հասանեմ	2	8
Հատանեմ	1	2
Մեռանիմ	2	7
Ունիմ	2	7
Տեսանեմ	1	4

Դատական գրաբարում առաջին ապառնու գործածության գրեթե բոլոր ոլորտներում էլ գործածվել է նաև երկրորդ ապառնին: Նույնն է վիճակը նաև Սեբեոսի լեզվում:

1. Գլխավոր նախադասության հետ թէ, եթէ բառերով կապվող պայմանի երկրորդական նախադասություններում. օրինակ՝ «Եւ թէ ասորժիցիի և լուիչիի ինձ, ասէ, զբարութիւնս երկրի կերիչիի» (էջ 137—138):

2. Գլխավոր նախադասության հետ զի բառով կապվող նպատակի պարագա երկրորդական նախադասություններում. օրինակ՝ «Դարձի՛ր անդրէն ի տեղի քո, զի մի՛ մեռանիցիս այսար ի ձեռաց իմոց» (էջ 4): «Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեցեն զամենեսեան և ի Թրակէ գումարեցեն» (էջ 49):

3. Հարցական նախադասության մեջ. օրինակ՝ «Իսկ զի՞նչ և առ մշակս այգւոյն ասիցէ տէրն» (էջ 128): «Արդ՝ զի՞նչ արասցուի, ընդունի՞մք» (էջ 37):

4. Գլխավոր նախադասության հետ յորժամ բառով կապվող որոշ ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում: Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ մեծ մասամբ կապվում են իբրև, յորժամ բառերով: Սրանք լայն գործածություն ունեն գրաբարում և մեծ մասամբ նախադաս են գլխավորին:

Սեբեոսի երկում առավել հաճախ հանդիպում են իբրև-ով կապակցվող երկրորդական նախադասություններ (81 անգամ), քան յորժամ-ով (20 անգամ):

Դրաբարում թեև այս կամ այն ձևի գործածության հարցում օրինաչափություն չկա, տառայն առանձին հեղինակներ նկատելի նախապատվություն են տալիս որոշակի կառույցներին: Այսպես, Եփեսիկի լեզ-

վում ավելի շատ հանդիպում են յորժամ-ով կապակցվող երկրորդական նախադասություններ, իսկ Եղիշեի լեզվում՝ իբրև-ով և այլն:

Իբրև-ով սկսվող երկրորդական նախադասության բայը Սեբեոսի լեզվում առաջին կամ երկրորդ ապառնիով երբեք չի հանդիպում: Նույնը կարելի է ասել նաև դասական հեղինակների լեզվի մասին, թեև այդպիսի մի օրինակ գտնում ենք Ագաթանգեղոսի լեզվում՝ «Իբրև ծե-րացի նա և տեսցէ ապականեալ զմարմին իւր՝ զխորհուրդս խորագիտութեանն իւրոյ ի մէջ բերէ» (Ագաթանգեղոս, էջ 306): Այս կարգի նախադասություններում բայը մեծ մասամբ գործածվում է ներկա, անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակներով և դերբայական ձևով:

Հակառակ սրան, Սեբեոսի լեզվում գլխավոր նախադասության հետ յորժամ-ով կապվող 20 երկրորդական նախադասություններից 7-ում (ասել է թե $\frac{1}{3}$ -ում) բայը գրված է առաջին կամ երկրորդ ապառնիով. օրինակ՝ «Պատրաստ լերուք, զի յորժամ եկեսցէ նա... յանկարծակի զձեռս նորա յետս կայարուք և կապեցէ՛ք զնա» (էջ 43): «Զգոյշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դուռն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն և զսուսերն» (էջ 43): «Յորժամ հասանիցեն ի պարիսպ քաղաքին՝ ի վերուստ ի գլխոյ աշտարակացն դիւրեաւ ելեալ ի պարիսպն՝ անկցին ի քաղաքն» (էջ 148): «Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զաւրէն հիւանդաց, յորժամ տագնապեսցի ցան, և հատանիցի ի խաւից՝ աշնպիսի լինչ եղեն» (էջ 150):

Զնայած սրան, դասական գրաբարի համեմատությամբ, Սեբեոսի լեզվում յորժամ-ով կապակցվող երկրորդական նախադասություններում ապառնիները քիչ են գործածվում: Պատմիչը զգալիորեն տարբերվում է V դարի հեղինակներից, որոնց լեզվում յորժամ-ով կապակցվող ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում բայը մեծ մասամբ գրվում է առաջին կամ երկրորդ ապառնիով: Որոշ հեղինակներ ավելի շատ գործածում են առաջին ապառնին, ոմանք՝ երկրորդը: Այսպես, Եղնիկը 72 անգամ գործածել է առաջին, 12 անգամ՝ երկրորդ ապառնի, Ագաթանգեղոսը, ընդհանրապես՝ 22 անգամ երկրորդ ապառնի, 13 անգամ՝ առաջին ապառնի:

5. Առաջին և երկրորդ ապառնիների գործածությունը մի, ոչ ժխտական մասնիկների հետ: Հայտնի է, որ մի՛ արգելական-ժխտական մասնիկը գործածվում է առաջին և երկրորդ ապառնիների հետ: Գրաբարի բայի խոնարհման հարացուցցում առջ մասնիկով է կազմվում նաև արգելական հրամայականը: Այդպիսի կիրառություններ ունի նաև Սեբեոսը:

Մի՛ արգելադրան մասնիկը համապատասխանում է ժամանակակից հայերենի մի՛ արգելադրան մասնիկին՝ մի՛ գրիւ, մի՛ խոսիւ և այլն։ Սակայն, մի՛ + առաջին կամ երկրորդ ապառնի գրաբարյան կաղապարի իմաստն արդի հայերենում հաճախ վարերի է թարգմանել ոչ թե մի՛-ով, այլ ըզձական կամ պայմանական եղանակի ժխտականով (չ- ժխտական մասնիկով), երբեմն էլ՝ քող եղանակավորող բայի հետ միասին. օրինակ՝ «Ոմանք ընդ իւրեանս իսկ սուր ելեալ՝ զի մի՛ լիցին ձերբակալեալ» (էջ 60)՝ այսինքն՝ որպեսզի չձերբակալվեն։ «Թշնամի մի՛ մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արծաղեմ ձեզ զարս յաւգնականութիւն՝ որչափ և դուք կամիցիք» (էջ 141)՝ այսինքն՝ չի մտնի։

Առաջին և երկրորդ ապառնիները գործածվել են նաև ոչ ժխտական մասնիկի հետ, ըստ որում առաջին ապառնին մի՛-ի հետ գործածվել է 2 անգամ, ոչ-ի հետ՝ 7, իսկ երկրորդ ապառնին՝ մի՛-ի հետ՝ 30 անգամ, ոչ-ի հետ՝ 27։ Ընդհանուր առմամբ, նշված մասնիկների հետ երկրորդ ապառնին 4,7 անգամ ավելի հաճախ է գործածվել, քան առաջին ապառնին։

Իհարկե, սա չի նշանակում, թե նշված ուղորտներում ապառնիները պետք է կիրառության նույն հաճախականությունն ունենան կամ անպայման դրանցից որեւէ մեկին է օգտագործվելու։ Օրինակ, հարցական նախադասություններում մեծ մասամբ հանդես է գալիս առաջին ապառնին։ Մյուս կողմից՝ քիչ չեն այն դեպքերը, երբ այդպիսի նախադասություններում բայը ապառնիներով չի դրվում. օրինակ՝ «Ձի՞նչ կամիք առնել... մի՞թե զծով իբլև զցամաք համարիք՝ մարտնչել ընդ նմա» (էջ 90)։

Երբեմն նույն պայմաններում բայից մեկը դրվում է առաջին ապառնիով, մյուսը՝ երկրորդ. օրինակ՝ «Հրաման ետ արքայ խոսրով քանդել զամենեցունց նոցա զեկեղեցիսն և արով սատակել զնոսա, թէ ո՛չ դարձցին ի մոլորութենէն և ելանլիցն յարքայական պողոտայն» (էջ 124)։ Սրանով հանդերձ, կարելի է առանձնացնել երկրորդ ապառնու կիրառության որոշ ուղորտներ՝

1. Երբ բայը դրվում է քող եղանակավորող բայի հետ՝ «նա դարձաւ և ասէ. «Թող տեսից, եթէ զի՞նչ բարի խորհեցի տալ ինձ արքայից արքայ» (էջ 45)։

2. Երբ բայն արտահայտում է այնպիսի իմաստ, որը կարելի է թարգմանել ըզձական եղանակի բայաձևով և քող եղանակավորող բայով. օրինակ՝ «Աւրհնեաց և թագաւորն զեպիսկոպոսն և ասէ. «Աւր-

հնեացի Աստուած դրեզ» (էջ 146): «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ» (էջ 140):

3. Երբ նախադասութեան մեջ հրամայական բայածէի հետ դրվում է մի բայ ու երկուսի հաղորդած իմաստն ըմբռնվում է որպես ցանկութիւն՝ միասնաբար մի գործ, մի բան անելու համար. օրինակ՝ «Եկայք սպանցուի զսա, և մեր եղիցի ժառանգութիւնն» (էջ 128): «Եկայք ելցո՛ւք ի լեռն տեառն» (էջ 87): Այսպիսի նախադասութիւններում հրամայական բայածէներն արդեն, ահա, եղանակավորող բառի դեր ունեն:

Առաջին ապառնին գլխավոր. նախադասութեան մեջ ավելի քիչ է հանդիպում, քան երկրորդ ապառնին: Սեբեոսի գործում գտնում ենք աղայիսի կիրառութեան միայն մի վկայութիւն՝ «Եւ կամ ասիցէ, եթէ ես նստուցից ձեզ թագաւոր» (էջ 90):

Այս ապառնիների կերպային առանձնահատկութիւններն այնքան են մթազնված, որ այն ճշմարտութիւնը, թե ներկայի հիմքից կազմված ժամանակները արտահայտում են համեմատաբար տեական գործողութիւն, իսկ կատարչարի հիմքից կազմվածները՝ ոչ, պարզ ապառնիների կապակցութեամբ, այսօրվա ընկալմամբ, նույնիսկ դժվար է ընդունել:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Բաղադրյալ ժամանակները կազմվում են ապառնի (ոց վերջավորութեամբ), անցյալ դերբայներով և եմ, լինիմ երբեմն էլ՝ ունիմ, կամ բայերով: Ամենից շատ կիրառվում է եմ+անցյալ դերբայ կառուցվածքը¹⁸:

Մեզ թվում է, թե բաղադրյալ ժամանակ պետք է համարել նաև անցյալ դերբայ+չիք պակասավոր բայ կառուցվածքը, որի արձանագործումը չենք գտնում գրաբարի քերականութիւններում: Աղայիսի մի վկայութիւն գտնում ենք Սեբեոսի գործում (պատմիչի երկում այն մեջբերում է Հովհաննեսի ավետարանից)՝ «Եւ նոյն Յովհաննէս ասէ յա-

¹⁸ Գտանեմ բայը շատ հազվադեպ դրվում է դիմավոր ձևով, իսկ լինիմ-ը՝ դերբայական: Բայց քերականական այդ կառուցը, արդի հայերենի ըմբռնմամբ, կարող է դիտվել բաղադրյալ ժամանակ: Սեբեոսն այս կարգի մի երկու վկայութիւն ունի՝ «Գտաւ լեալ ի խորհրդեանն յայնմիկ և Դաւիթ Սահառունի» (էջ 104): «Գտաւ ի խորհրդեանն յայնմիկ լեալ Վարազտիրոց» (էջ 103):

Արդի գրական արեւելահայերենով չի ասվի գտնվեց եղած կամ եղած գտնվեց, այլ՝ գտնվեց:

ւետարանին թէ, «Զարտուած ուրուք չի՛ք տեսեալ» (էջ 127): Այսպիսի կիրառության մի օրինակ վա նաեւ Եղնիկի «Եղծ աղանդոց»-ում՝ «Ի բա-
րերար արարչէն շար ինչ չի՛ք լեալ» (Եղնիկ, 10):

Բաղադրյալ ժամանակի բաղադրիչ անցյալ դերբայը դասական գրաբարում բավական հաճախ դրվում է հոգնակի: Այս երևույթը զգա-
լիորեն տարածված է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազ-
մին» և Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» գործերում, իսկ Սեբեոսի
չեղվում այն խիստ հազվադեպ է պատահում. օրինակ՝ «Արքն այն հա-
յապատանեայք, որ ապստամբեալ էին ի Սմբատայ և գնացեալք առ
Վստամ՝ ընդ նոսա» (էջ 62):

Բաղադրյալ ժամանակի բուն կաղապարն է դերբայ+օժանդակ
բայ, որի անդամները միմյանց նկատմամբ ավելի շատ դրսևորու-
ման են, քան մեկ վամ մի քանի անդամով հեռանում միմյանցից. օրինակ՝
«Անուանեալ էր զնա իւր յորդեգիրս» (էջ 57): «Էին պաշտամունք նոցա
բաժանեալ ի միմեանց» (էջ 106):

Զուգադրական բայերը բառական մեկ բարդություն են: Նրանց
բաղադրյալ ժամանակներում, բնականաբար, օժանդակ բայը դրվում
է մի դերբայի մօտ. օրինակ՝ «Եկեալ հասեալ եմ այսպիսի զինու» (էջ 94):
«Զարքն Քուշանաց ասպատակեալ սփռեալ էին ի վերայ երեսաց սմե-
նայն երկրի» (էջ 66): Երբեմն, սակայն, բնագրային որոշումով պայմա-
նավորված, օժանդակ բայը կարող է զեղչվել. օրինակ՝ «Ի դիմի հարան
նմա արք հրեայք ի գլխաւորաց նոցունց, որոց էին սպանեալ խողս եր-
կուս և տաբեալ եղեալ ի տեղի աղաւթիցն, և զարիւնն հեղեալ զորմովքն
և զյատակաւք տանն» (էջ 112)¹⁹:

Եմ+անցյալ դերբայով կազմված ժամանակներից ամենից շատ
գործածվել է մարդակատար-հարակատար անցյալը, սակայն՝ վաղակա-
տար-հարակատար ներկան և ստորադասական եղանակի բաղադրյալ
ապառնին: Այս ժամանակներում հանդես եկած բայերի մեծ մասը ներ-
գործական սեռի է:

Բաղադրյալ ժամանակների են կազմվում նաեւ, ինչպես արդեն աս-
վեց վերևում, անցյալ դերբայի, կամ, լինիմ, ունիմ, չի՛ք բայերի օգնու-
թյամբ, որոնք եմ-ով կազմվածների կիրառության քանակի համեմա-
տությամբ շնչին տոկոս են կազմում: Այդ բայերը անցյալ դերբայի
հետ դրվում են հիմնականում ներկա և անցյալ անկատար ժամա-
նակներով:

¹⁹ Օժանդակ բայը կարող է զեղչվել նաեւ ոչ զուգադրական բայերի բաղադրյալ
ժամանակներում. օրինակ՝ «Նա ելանելոց է և ունելոց զաշխարհս» (Եղնիկ, էջ 105):

Դասական գրադարձում տվյալ կառուցվածքում օժանդակ բայի դերով ամենից հաճախ հանդես է գալիս լինիմ բայը, իսկ Սեբեոսի լեզվում՝ կամ-ը: Բերենը օրինակներ. «Մինչ ծաղավեալ կային միահամուռ յոսկեզարծ պատշգամբի միող՝ հմուտ եկաց ի մէջ նոցա» (էջ 133): «Գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ և ձեզ» (էջ 39): «Կազմեալ ունէր յեզր ծովուն նաւս բազումս թիթեա» (էջ 148):

Ուսումնասիրվող գործում եմ + -ոց վերջացող ապառնի դերբայով կազմված ժամանակները գործածվել են ընդամենը 7 անգամ, որից 5-ը՝ սահմանական եղանակի բաղադրյալ ապառնիով՝ «վաղիւ պատելոց է զքե պատերադմ քաջաց» (էջ 40): «Տանելոց է սաստկութիւն հողմոյ զգաւրութիւնդ քո իբրև զփոշի» (էջ 40): «Անդրէն երբայոց ես սւստի եկիրն» (էջ 117):

ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅՆԵՐ

Սեբեոսի լեզուն, ինչպես ընդհանրապես հայերենը, հարուստ է հարադրավոր բայերով²⁰: Բավական է նշել, որ պատմիչի լեզվում շուրջ 45 բայեր կիրառվել են որպես հարադրավոր բայի բաղադրիչ: Դրանցից են՝ ածեմ, անկանիմ, անցանեմ, առնեմ, առնում, արկանեմ, դառնամ, լինիմ, հարկանեմ, ունիմ և այլն. օրինակ՝ «Եւ տչ ինչ էա՞ծ զմտաւ արքայն» (էջ 43): «Եւ յարձակեալ Անտոնի՝ ա՞ծ ապաակ ի ծնաւաւ նորա» (էջ 115):

Որոշ բայեր ամբելի շատ հանդես են եկել որպես հարադրավոր բայի բաղադրիչ: Օրինակ, առնեմ-ը անկախ է կիրառվել 67 անգամ, իսկ որպես հարադրության բաղադրիչ՝ 183: Արկանեմ բայն անկախ է կիրառվել 6 անգամ, իսկ որպես բաղադրիչ՝ 27:

Պատմիչի երկում հարադրավոր բայերը հիմնականում կազմվել են հետևյալ կաղապարներով՝

1. Բայ + նախդիր + գոյական՝ ածեմ ի հաշտութիւն:
2. Նախդիր + գոյականի հոլովածն + բայ՝ զմտաւ ածեմ, ի խնդիր անկանիմ:
3. Գոյականի աննախնդիր հոլովածն + բայ՝ աղաւթս առնեմ, ապտակ ածեմ, ազդ առնեմ, ամբաստանութիւն առնեմ:
4. Ածական + բայ՝ փախստական անկանիմ, անքակ առնեմ:
5. Բայ + բայ (սրանք պատճառական կազմութեանն են)՝ տամ բերել, տամ մտանել, տամ տանել՝ Նոյն ժամայն խնդիր արա-

²⁰ Հարադրավոր և զուգահիշ բայերի հարցի քննության պատմությունը տես Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 21—54, 279—293:

րից խաչին և տաց բերել առ քեզ» (էջ 99): «Ետու տանել զնոսա ի մուսս արևու և յեզր երկրի» (էջ 13):

Որոշ հարադրությունների համար ՆԶԲ-ն վկայություններ է բերում Սեբեոսից ավելի ուշ ապրած հեղինակներից. օրինակ, լուծումն լինի-ի համար վկայություն է բերում Հովհաննես Դրասխանակերտցուց (X դար)՝ «Լուծումն ինձ ի կապարանէն լիցի»²¹: Այսպես էլ ժամ առնեմ հարադրության համար վկայություն է բերում միայն Լամբրոնացուց (XII դար)՝ «Տե՛ս, զի ոչ ասէ, թէ տո՛ւր՝ զի քեզ ժամ առնէ»²²:

Ա. Մարգարյանը գրում է. «Հայ հին գրական լեզվի հարադրավոր բայերի զննությունը ցույց է տալիս, որ նրանց մեծագույն մասը կազմված է առնել (>անել), լինել, առնուլ (>առնել), ալլև՝ ղնել, տալ բայերի և դրանց մեջ էլ հատկապես առաջին երկուսի միջոցով» (ընդգծումը հեղինակինն է— Գ. Բ.)²³: Այս դիտողությունը միանգամայն բնորոշ է նաև Սեբեոսի լեզվին: Նշենք, սակայն, որ պատմիչի երկում ամենից գործածական բայը առնեմ-ն է, որով կազմվել են շուրջ 50 հարադրավոր բայեր:

Պատմիչը հարադրավոր բայերից ամենից հաճախ գործածել է հրաման տամ-ը (մոտ 50 անգամ):

Հարադրավոր բայերի մի զգալի մասը դարձվածքի արժեք ունի:

Քիչ հաճախմանորեն խոսենք այն հարադրավոր բայերի մասին, որոնց մի բաղադրիչը տամ-ն է: Սեբեոսի լեզվում տամ-ը նշված կիրառությամբ մեծ հաճախականություն ունի: Ըստ որում, այն անվան հետ շուրջ 5 անգամ ավելի շատ է գործածվել, քան բայի հետ: Ուշագրավ է, որ անվան հետ ավելի հաճախ դրվում է ետադաս (77 անգամ, իսկ նախադաս՝ 8): Սրան հակառակ՝ տամ-ը բայի սնորոշ դերբայի հետ ավելի հաճախ գործածվել է նախադաս (15 անգամ), իսկ ետադաս՝ լոկ 2 անգամ: Բերենք օրինակներ՝

1. Անվան հետ՝

ա) նախադաս՝ «Ետ նախաւ ընդ Մաքսիմիանոսի» (էջ 133): «Գայ հասանէ ի դաշտն Արաջի, և տայ պատեհազմ ընդ Արաջի» (էջ 6):

բ) ետադաս՝ «Խոյս ետ Հայկն յերեսաց նորա» (էջ 4): «Եւ հրաման տայ խիստ սաստիւ» (էջ 25):

2. Բայի հետ՝

²¹ ՆԶԲ, հ. 1, էջ 895:

²² Անդ, էջ 826:

²³ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 83:

ա) նախադաս՝ «Վասն հաւատոյ գիր ետ առնել» (էջ 145): «Եւ տայ տաճել նմա երդումն» (էջ 97):

բ) ետադաս՝ «Զմեզ վատահացոցին և զզարսն նապաղել ետուն յասպատակ յԱտրպատական» (էջ 141): «Զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, և հարկաճել ետուն զմեզ» (էջ 141):

Տամ բայն իբրև հարադրաւոր բայի բաղադրիչ Աստվածաշնչում համեմատաբար սակավ գործածութիւն ունի: Այդպիսի դերով այն հանդիպում է շուրջ 50 անգամ, ըստ որում, մեծ մասամբ անորոշ դերբայի հետ բայ+անորոշ դերբայ կառուցվածքով. օրինակ՝ «Եւ հօրն իւրում ետ տաճել նոյնպէս» (Մենդ., ԽԵ, 23): «Ասէ Յուդա. նմա լիցի այն. այլ զի մի՞ ծաղր կացցուք՝ ես ետու տաճել զուզ, եւ դու ոչ գտեր» (Անդ, ԼԲ, 23):

Աստվածաշնչում տամ բայի ետադաս գործածութեան ոչ մի դեպք չկա, իսկ Սեբեոսը, ինչպես տեսանք վերևում, այդպիսի կիրառութեան երկու վկայութիւն ունի: Հետագա դարերում բայ+տամ կառուցվածքը գրական լեզվում ավելի տարածվելով, տիրապետող դարձավ: Ժամանակակից գրական հայերենում արդեն այն պատճառականութիւն արտահայտող վերլուծական միակ կաղապարն է՝ գրել տալ, վազել տալ և այլն: Մյուս կողմից, եթե Աստվածաշնչում տամ բայը գերադանցապես բայի հետ է հարադրվում, ապա Սեբեոսի լեզվում՝ անվան հետ:

Անվանական բաղադրիչով որոշ հարադրաւոր բայեր Սեբեոսի լեզվում մեծ կիրառութիւն ունեն: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնցում բայը դրվում է գլխավորապես ետադաս: Օրինակ, հրաման տամ-ը գործածվել է մոտ 50 անգամ, բայց բայը միայն մի երկու դեպքում է նախադաս. օրինակ՝ «Զաւրացն կողմանցն այնոցիկ ետ հրաման» (էջ 142): «Ոչ կարաց տալ հրաման» (էջ 45): Մնացած դեպքերում բայը միշտ ետադաս է:

Սեբեոսը սոսկ մի վկայութիւն ունի, ուր տամ-ը գործածվել է հարադրաւոր բայի հետ՝ «Կանգնեաց զպատկերն իւր, և ետ երկիր պագանել իբրև աստուծոյ» (էջ 4):

Ինչպես տեսնում ենք, Սեբեոսի լեզվում բայ+տամ կառուցվածքով հարադրաւոր բայերը համեմատաբար մեծ տարածում չունեն: Ինչ վերաբերում է այն հարցին, թե տամ բայը ժամանակակից հայերենում ի՞նչ սեռի բայի հետ է հարադրվում, Ա. Ա. Աբրահամյանը գրում է. «Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ սովորաբար ժամանակակից գրական հայերենում պատճառական-միջնորդական քերականական իմաստի արտահայտման համար տալ բայը այսօրինակ հարա-

դրությունների մեջ հիմնականում հանդես է գալիս ներգործական սեռի բայի հետ: Չեղոք սեռի սկզբնատիպ բայերը այս դեպքում տալ բայի հարադրությամբ հանդես են գալիս շատ սակավ գործածությամբ» (ընդգծումը հեղինակինն է— Գ. Բ.)²⁴: Հարկ է նշել, որ այս գնահատականը ճիշտ է ոչ միայն ժամանակակից գրական արևելահայերենի, այլև՝ հայերենի համար ընդհանրապես: Մասնավորապես, Սեբեոսի գործում տամ բայն այսպիսի վերառությամբ հանդիպում է 7 բայի հետ, որոնցից 4-ը ներգործական սեռի են, 1-ը՝ չեղոք (մտանել տամ) 1-ի համար էլ ՆՀԲ-ն նշում է և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեղոք (նապաղել տամ)²⁵, իսկ 7-րդն արդեն ինքն է հարադրավոր բայ (երկիր պագանել տամ): Նշենք նաև, որ ողջ Աստվածաշնչում տամ բայը դրվել է ընդամենը 4 չեղոք սեռի բայի հետ. օրինակ՝ «Եւ ոչ ետուն բարձրանալ եղջերն ամբարտաւանութեան» (Ա. Մակ., Բ. 49): «Եթէ ամենայն որ արձակէ զկիւն իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ» (Մատթ., Ե, 32):

Եթե նկատի չառնենք այն հարադրավոր բայերը, որոնք այնպիսի դարձվածքի արժեք ունեն, որի արտահայտած իմաստը հնարավոր չէ արտահայտել մեկ բայով, կարելի է ասել, որ պատմիչի լեզվում եղած գրեթե բոլոր հարադրավոր բայերն էլ ունեն իրենց ոչ հարադրավոր բայազույգը: Սակայն Սեբեոսի լեզվում կան նաև հարադրություններ, որոնց արտահայտած իմաստը և՛ գրաբարում, և՛ պատմիչի երկում համադրական համանիշով շատ սակավ է արտահայտվում: Բացի սրանից, միևնույն համադրական բայի իմաստը երբեմն կարող է արտահայտվել մեկից ավելի հարադրավոր բայերով. օրինակ՝ պատասխանեմ-պատասխանի առնեմ-պատասխանի տամ:

Պատասխանեմ բայը վերը հիշատակված հեղինակների լեզվում չի հանդիպում, իսկ Սեբեոսի Պատմության մեջ այն հանդիպում է ընդամենը 1 անգամ՝ «Նոքա պատասխանեալ նմա զանց արարին զնովաւ և զնացին» (էջ 112):

Սրան հակառակ, պատասխանի առնեմ, պատասխանի տամ-ը հաճախակի են օգտագործված. օրինակ՝ «Պատասխանի ետ թագաւորն և ասէ» (էջ 124): «Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի» (էջ 121):

Կան նաև հարադրավոր բայեր, որոնց համադրական զույգը դա-

²⁴ Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 588:

²⁵ ՆՀԲ, հ. 2, էջ 172:

սական գրաբարում շատ սովորական ու տարածված գործածությունն է, բայց Սեբեոսը նրա փոխարեն գործածում է միայն հարադրավոր ձևը: Օրինակ, ողորմիմ-ը դասական գրաբարում շատ գործածական բայերից է, սակայն Սեբեոսի հեղինակային լեզվում այդ բայի իմաստն արտահայտվում է միայն ողորմութիւն առնեմ հարադրությամբ. օրինակ՝ «Երգմենեցուցանէ զորդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն ի վերայ ամենայն յանցաւորացն» (էջ 109): «Աւառ ի վերայ նորա ողորմութիւն» (էջ 91):

Այս տեսակետից պատմիչն առանձնանում է հիշատակված այլ հեղինակներից: Միայն Եղնիկի լեզվում ենք գտնում մի վկայություն առնեմ ողորմութիւն-ով՝ «Ապա առաքեալ, զի ի վերայ ամենեցուն առնէր ողորմութիւն» (Եղնիկ, էջ 274):

Սեբեոսի լեզվում գոյություն ունեն նաև հարադրություններ, որոնց համադրական բայազույգը (այսինքն՝ ոչ հարադրավոր բայը) ընդհանրապես չկա նրա Պատմությունում: Այսպես, շրջափակեմ բայը V դարի գրականության մեջ սակավ է հանդիպում: Այն շունի նաև Սեբեոսը, բայց դրա փոխարեն հանդիպում ենք շրջափակ առնեմ հարադրությանը. օրինակ՝ «Եւ զմնացեալսն շրջափակ աւառեալ՝ կամէին զամենսեան սատակել» (էջ 95):

Սեբեոսը գործածել է նաև այնպիսի հարադրավոր բայ, որի համադրական (այսինքն՝ ոչ հարադրավոր) բայազույգն ընդհանրապես չկա գրաբարում: Հետևաբար, չպիտի էլ լիներ Սեբեոսի լեզվում: Այսպես, Սեբեոսի Պատմության մեջ կա ապտակ ածեմ²⁶ հարադրությունը, բայց դասական գրաբարում չկա ապտակեմ բայը. օրինակ՝ «Եւ յարձակեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա» (էջ 115): Ի դեպ, այս հարադրությունը ստևավ է գործածվում: Այն չի հանդիպում դասական մի շարք հեղինակների գործերում: Հարկ է նշել նաև, որ որոշ հասկացություններ արտահայտված են ոչ թե համադրական կամ հարադրավոր բայերով, այլ նկարագրական եղանակով: Օրինակ, «հիվանդանալ» իմաստի համար Սեբեոսի լեզվում չկա հիւանդանալ բայը և ոչ էլ որևէ հարադրավոր բայ: Այս իմաստը նրա գործում արտահայտվել է հետևյալ կերպ. «Արդ՝ մինչդեռ գայր հրովարտաւն և պատին առնել զնա կիւրապաղատ՝ յանկարծակի եհաւ նմա հիւանդութիւն և մեռաւ» (էջ 117):

Հարադրավոր բայերի կիրառության այսպիսի փաստերը, կարելի է ասել, ոճական որոշ երանգ են տալիս և վկայում են ժողովրդախո-

²⁶ Իհարկե, նման հարադրություններ կան նաև դասական գրաբարում:

սակցական լեզվի ազդեցությամբ Սեբեոսի երկում վերլուծական ձևերի գործածության աշխուժացման մասին:

ԶՈՒԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Բավական լայն զործածություն ունեն հարադրավորների տարատեսակ հանդիսացող զուգադրական բայերը:

Սեբեոսի Պատմությունում անհամեմատ հաճախ են հանդիպում երկբաղադրիչ զուգադրական բայերը, որոնց մեջ որպես առաջին բաղադրիչ հանդես են գալիս զանազան բայեր՝ անցանեմ, առնում, ասպատակեմ, արշաւեմ, բորբոքեմ, գամ, գնամ, գումարեմ, դառնամ, դիմեմ, ելանեմ, երթամ, զետեղեմ, զերծանիմ, զուարնանամ, ժողովեմ, լիանեմ և այլն. օրինակ՝ «Գայ հասանէ յերկիրն Արարադայ» (էջ 4): «Դիմեալ յարձակեցան ի վերայ նորա» (էջ 78): «Ձոգանամրացան ի Զարեհաւանի» (էջ 152): «Եւ այնպէս քալեալ պատանեաց զնոսա ի Հոռոմոց նեւին արբանեակն» (էջ 141):

Երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպես երկրորդ անդամ հանդես են եկել՝ ունիմ, պաշարեմ, հասանեմ, ասեմ, արձակեմ, աւարեմ, բաժանեմ, բանակիմ, բնակիմ, գամ, գնամ, գումարեմ, դնեմ, ելանեմ և այլն: Բերենք օրինակներ՝ «Գայ հասանէ ի դաշտն Արայի» (էջ 6): «Յայնժամ զաւրացն Խամայելի... երթեալ պաշարեցին զՏիգրեն» (էջ 108): «Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և շոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ» (էջ 5):

Սեբեոսի լեզվում համեմատաբար սակաւ են հանդիպում այնպիսի բայերը, որոնք հանդես են գալիս և՛ որպես առաջին, և՛ որպես երկրորդ բաղադրիչ: Իբրեւ այդպիսիք կարելի է առանձնացնել հետեւյալ բայերը՝ անցանեմ, գամ, գնամ, գումարեմ, ժողովեմ, կարգեմ, հարկանեմ, մեկնեմ, մտանեմ, ունիմ, պատանեմ, սփռեմ. օրինակ՝ «Զաւրացեալ զաւրն Պարսից՝ անցեալ կալաւ զՏարսուսն քաղաք» (էջ 82): «Ելին յանկարծակի և գնացին անցին զգետովն» (էջ 152): «Իսկ այն զաւրն... առ զաւար և զգերութիւն, և եկն էանց ի Նախճաւան» (էջ 119—120): «Եւ դարձաւ եկն անդրէն ի զաւրս Հայոց» (էջ 116):

Բոլոր բայերը չեն, որ կարող են հարադրվել և զուգադրական բայեր կազմել: Բացի սրանից, ոչ բոլոր զուգադրական բայերն են, որ հեղինակի լեզվում նույն հաճախականությունն ունեն:

Երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպես առաջին բաղադրիչ ամենից հաճախ հանդես է եկել երթամ բայը: Նրանով կազմվել է

շուրջ 40 զուգադրական բայ²⁷: Այս առումով աչքի բնկնող երկրորդ բայը գամ-ն է, որով կազմվել է մոտ 20 զուգադրական բայ. օրինակ՝ «Եւ երթեալ դադարեաց ի Տայս» (էջ 146): «Դիմեալ գայ Բէլ արթայ ի վերայ քո, և եկն եմաս մինչ ի տուն անդր» (էջ 4):

Իբրեւ զուգադրական բայի առաջին բաղադրիչ լայնորեն գործածվում են նաև դիմեմ, գումարեմ, առնում, դառնամ, տանիմ, չունեմ, ապա՝ հաւկանեմ, յառնեմ, ելանեմ բայերը:

Սեբեոսի լեզվում երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպէս երկրորդ բաղադրիչ գլխավորապէս գործածվել է գնամ-ը, որը հանդես է եկել շուրջ 35 զուգադրական բայերում, ապա՝ հասանեմ-ը՝ մոտ 15 զուգադրական բայերում. օրինակ՝ «Գումարէ և այլ զաւրս բազումս յաւդնականութիւն իւր, և դիմեալ գնայր ի վերայ աղգին քուշանաց» (էջ 67): «Չունցին տմենայն զաւրքն ի տեղուջէն յայնմանէ, և երթեալ հասանէ ի ն յամուրս աշխարհին իւրեանց» (էջ 63—64):

Երկբաղադրիչ զուգադրական բայերում իբրեւ երկրորդ բաղադրիչ համեմատաբար հաճախ են գործածվել նաև անցանեմ, դադարեմ, ժողովեմ, նստիմ, պաշարեմ, սատակեմ բայերը:

Պատահան գրաբարում նշված դիրքով զգալի հաճախականություն ունի կամ բայը, որը Սեբեոսի լեզվում հանդիպում է ընդամենը 5 անգամ. օրինակ՝ «Խնդրեցին երդումն և պայմանն և եկին կացին առաջի Սմբատայ» (էջ 64): «Բայց ե՛րբ կա՛ց ուր և հրամայեցից քեզ» (էջ 104):

Պատմիչի լեզվում երկբաղադրիչ կառուցվածքի զուգադրական բայերի առաջին բաղադրիչը ամենուից հաճախ (շուրջ 60 տոկոսով) դրվել է անցյալ դերբայով: Այսպիսի զուգադրական բայերում երկրորդ բաղադրիչը գրեթե միշտ դիմավոր բայ է:

Սեբեոսի երկում հանդիպող երկբաղադրիչ զուգադրական բայերի շուրջ 40 տոկոսի մեջ երկու բաղադրիչներն էլ դիմավոր բայեր են՝ դր-

27 «Գնալ» իմաստը դասական հայերենում և Սեբեոսի լեզվում արտահայտվում է հատկապէս գնամ, երբամ համանիչ բառերով: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ դասական հայերենում ավելի հաճախ գործածվում է երբամ բայը. օրինակ, Կորյունը գնամ-ը կիրառել է 6 անգամ, երբամ-ը՝ 7, Եզնիկը՝ գնամ-ը՝ 22 անգամ, երբամ-ը՝ 23, Ագաթանգեղոսը՝ գնամ-ը՝ 43 անգամ, երբամ-ը՝ 53, Բուդանդը՝ երբամ-ը՝ 162 անգամ, գնամ-ը՝ 124:

Սեբեոսի լեզվում պատկերը հակառակն է՝ գնամ-ը հանդիպում է 252 անգամ, իսկ երբամ-ը՝ 118: Հայտնի է, սակայն, որ լեզվի զարգացման հետագա շրջաններում (կոնկրետ՝ գրական արեւելահայերենում) անհամեմատ շատ է գործածվում գնամ բայը, ինչպես որ Սեբեոսի լեզվում է: Նկատենք, որ արեւմտահայերենում առավել շատ գործածականը երբամ բայն է:

ված նույն ժամանակով, դեմքով ու թվով. օրինակ՝ «Կապէ զնա Արշակ արքայ ոտիւր և ձեռաւք, և առնու զնայ յարեւելս» (էջ 28): «Նստուն նմա ինչս և արձակեցին անդրէն ի տեղի իւր, և եկն դադարեաց ի Տայս» (էջ 153):

Երբեմն զուգադրական բայն ունենում է հարադրավոր բայ + զուգադրական բայ կառուցվածքը. օրինակ՝ «Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզարս իւր, զփիղս և զամենայն զգանձս թագաւորական, շու արաբեալ զնայ հասանէ յԱտրպատական» (էջ 38):

Ընդհանուր առմամբ, զուգադրական բայերի բաղադրիչներն անմիջապէս հաջորդում են միմյանց: Զուգադրական բայերի բաղադրիչների հեռացումը բաւական հազվադեպ է. օրինակ՝ «Ի մէջ երկուց ճակատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին» (էջ 68):

Նուաբաղադրիչ զուգադրական բայերը սակավ են հանդիպում. օրինակ՝ «Չուեաց խաղաց զնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն և ամենայն աղխիւն հանդերձ» (էջ 3):

Որոշ իմաստներ կարող են արտահայտվել և՛ երկբաղադրիչ, և՛ եռաբաղադրիչ կառուցվածքի զուգադրական բայերով: Ստորև իբրև ապացույց բերում ենք «զնալ» իմաստը, բանի որ այն հետաքրքրում է մեզ նաև այլ վտղմերով.

1. Երկբաղադրիչ կառուցվածքով՝ «Ապա խաղայ զնայ Արշակ ի Բաբելոն» (էջ 9):

Ուշագրւով է, որ Կորյունի, Բուզանդի, Ագաթանգեղոսի լեզվում զնամ բայի մոտ բացարձակ գերակշռութեամբ դրւում է խաղամ բայը. օրինակ՝ «Խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց» (Կորյուն, 46): «Խաղայր զնայր ամենայն զօրօքն հանդերձ» (Ագաթանգեղոս, էջ 404):

Սեբեոսի լեզվում երկբաղադրիչ կառուցվածքում մեծ մասամբ հանդիպում է շուեմ բայը. օրինակ՝ «Եւ ինքն շուեաց զնաց անտի ևս ի հիւսիսակողմն» (էջ 3): «Չուեաց զնաց Նրակլոս Ճի հազարաւ» (էջ 93):

2. Նուաբաղադրիչ կառուցվածքով՝ «Չուեաց խաղաց զնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն» (էջ 3):

Սեբեոսի լեզվում նշված երկու կառուցվածքներում էլ զնամ բայը միշտ վերջադաս է: Դա հիմնականում օրինաչափ է նաև V դարի մատենադրութեան լեզվի համար: Նշված սկզբունքի խախտումը խիստ հազվադեպ է. օրինակ՝ «Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսիսի զնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց» (Բուզանդ, էջ 185):

Նախադասութեան մտքի շարունակութեան մեջ Սեբեոսի թե՛ երկ-

բաղադրիչ, թե՛ եռաբաղադրիչ կառուցվածքներին հաջորդող առաջին իսկ բայը գերազանցապես երթամ-ն է՝ դրված հատկապես անցյալ կատարյալ ժամանակով. օրինակ՝ «եւ ինքն շուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և շոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոջ» (էջ 3): «Զի շուեաց խաղաց գնաց Հարկն ի Բաբելոնէ կնան և որդեովքն և ամենայն աղխին հանդերձ, և շոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ» (էջ 3):

Սեբեոսի Պատմութեան հարադրավոր և զուգադիր բայերի քննութիւնը ցույց է տալիս, որ այդ բայերը յուրօրինակ թարմութիւն ու հնչեղութիւն են հաղորդում պատմիչի լեզվին ու ոճին և ծառայում են որպէս միջոց՝ զանազան իմաստային նրբերանգներ արտահայտելու համար:

Սեբեոսի Պատմութիւնում հանդիպող հարադրավոր և զուգադիր բայերի կաղապարներն անծանոթ չեն դասական գրաբարին: Նրանք գործածական են ողջ հին գրական հայերենում: Սա նշանակում է, թե քերականական կաղապարները մի անգամից ո՛չ ծնվում են, ո՛չ էլ՝ արագ կերպով դուրս գալիս լեզվից: Սրանով հանդերձ, Սեբեոսի լեզուն հետաքրքրութիւն է ներկայացնում արդեն իսկ եղած կաղապարներով նոր հարադրութիւններ կազմելու, ինչպէս նաև այն հայեցակէտից, թե այլ հեղինակների համեմատութեամբ Սեբեոսը հարադրավոր ու զուգադրական բայերի ինչպիսի՛ կաղապարների է նախապատմութիւն տալիս:

ՆԱԽԴՐՈՒ ՈՒ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՈՐԾԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Սեբեոսի լեզվում ներկայացված են արդէն նախդիրները, որոնք հանդիպում են դասական գրաբարում՝ առ, գ, ընդ, ըստ, ի(յ), ց:

Պատմիչի երկում ամենից շատ փիրառվող նախդիրը գ-ն է, ապա՝ ի-ն, իսկ ամենից սակաւ՝ հանդիպում են ըստ և ց նախդիրները:

Յուրաքանչյուր նախդիր օգտագործվում է մի քանի հոլովի հետ (հատկապես՝ եզակի թվի հետ): Այս առումով ց-ն գործածութեան սահմանափակ ոլորտ ունի:

Նախդիրներն ամենից շատ հանդիպում են հայցական հոլովով: Բնական է, որ իմաստային զանազան նրբերանգներ են արտահայտվել առավելապես հենց այդ հոլովով: Բացառութիւն է գ նախդիրը, որը հայցական հոլովի հետ թեև մեծ հաճախականութիւն ունի (շուրջ 2320

անգամ, իսկ տրական, բացառական, գործիական հոլովների հետ միասին վերցրած՝ մոտ 95 անգամ), սակայն արտահայտել է ընդամենը որոշյալության, ժամանակի տեղության, գործիական հոլովի իմաստներ, դարձել է հարադրավոր բայի և դարձվածքի բաղադրիչ:

Նախդրի դիրքային գործածությունը բաղմադան է Սեբեոսի լեզվում: Սրանով հանդերձ, հնարավոր է նշել, որ ամենից տիպականը, ամենից հաճախականը նախդրի՝ անմիջապես բառի վրա դրվելն է. օրինակ՝ «Իջին ընդ այն արբ ի վայր ի բերդէն» (էջ 118):

Սեբեոսի երկում կան միեւնույն բառից առաջ ի նախդրի կրկնման փաստեր: Նշենք, որ այդպիսի փաստեր կան նաև դասական հայերենում, բայց Սեբեոսի լեզվում դրանք զգալի հաճախականություն ունեն: Նախդրի աշխարհնակ գործածության հանդիպում ենք տրական, հայցական, բացառական հոլովների հետ. օրինակ՝ «Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել» (էջ 118): «Ճանապարհ կալեալ զնացին յամուրն ի յերկրին Գեղմայ» (էջ 60):

Թեև տակաւ, բայց հանդիպում են նախդրի անկման դեպքեր. օրինակ՝ «Այս չորս, յարուցեալ Հարաւոյ կողմանէ՝ Իսմայելեան թագաւորութիւնն. որպէս հրեշտակապետն մեկնեաց» (էջ 114): «Պատեցին զքաղաքն Երեմ կուտէ» (էջ 94): Եթե թվականն ուղիղ ձևով կապակցվում է բացառական հոլովով դրված որևէ բառի հետ, ապա բացառական հոլովի նախդիրը դրվում է թվականից առաջ: Բերենք մի վկայություն ՆՀԲ-ից (հ. 1, էջ 630)՝ «Որբ էին յերեմ աշխարհէ»:

Սեբեոսի լեզվում նախդիրների օգնությամբ արտահայտվել են շուրջ 40 իմաստներ, որոնց մեջ մեծ տեղ են զբաղում «տեղ» նշող բաղմադան իմաստները՝ «դեպի մի տեղ», «մի բանի շուրջը», «մի բանի մոտ», «տեղ, որտեղ կատարվում է գործողությունը» և այլն:

Որոշ իմաստներ արտահայտվում են տարբեր կաղապարներով. օրինակ՝ «մեկի օրոք», «մեկի ժամանակ» վրա ընդհանրապես «գործողության կատարման ժամանակ» իմաստն արտահայտվում է.

1. Առ + գործիական հոլովով. օրինակ՝ «Նիկիոյ ժողովն առ Կոստանդիանոսի եղև» (էջ 124):

2. Ընդ + հայցական հոլովով. օրինակ՝ «Յաւուր Կիրակէի ընդ առաւատս՝ ճշեցին փամայելացիքն ի բերդին» (էջ 119):

3. Ըստ + բացառական հոլովով. օրինակ՝ «Եւ եղև ըստ աւուրց ինչ յետ անցանելոյ պատերազմին այնորիկ մեծի... խաւսել սկսաւ արքայն և ասէ» (էջ 42):

4. Ի+տրական հոլովով. օրինակ՝ «Ի ժամուն յայնմիկ հանդիպեցան անդ» (էջ 35):

5. Ի+հայցական հոլովով. օրինակ՝ «Ոչ սակաւ ինչ լինէր ուրախութիւն յաւուր յայնմիկ ի մտանել նոցա յերուսաղէմ» (էջ 101):

Առաջին հայացքից կարծես ավելի շատ են այն իմաստները, որոնք արտահայտութեան մեկից ավելի կաղապարներ ունեն, և հաղվադեպ են նախդիր+հոլովաձև մեկական կաղապարով արտահայտվածները: Այսպիսի տպավորություն է ստեղծվում, որովհետև որոշ իմաստներ ուղղանք արտահայտող նախդրամբոր կապակցութուններ կիրառման մեծ հաճախականություն ունեն և ավելի շատ են հանդիպում բնագրում: Նախդրամբոր կառուցվածքով արտահայտված վերը նշված շուրջ 40 իմաստների մոտ 50 տոկոսն արտահայտվել է մեկական կաղապարով. օրինակ՝

1. Ընդ+սեռական հոլով կաղապարով արտահայտվել է «փոխարեն» իմաստը. «Որ ոչն կարէր տալ՝ առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի» (էջ 150):

2. Ըստ+բացառական հոլով կաղապարով ունենք «հաջորդականություն» իմաստը. օրինակ՝ «Եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց» (էջ 29) և այլն:

Թվում է, թե զրաբարում տրական հոլովի իմաստն արտահայտվում է մեծ մասամբ ց+հայցական հոլով կաղապարով: Սակայն Սեբեոսի լեզվում վերջահոլով տրականով արտահայտված տրականը շուրջ 6 անգամ ավելի է, քան նախդիր+հոլովաձև կաղապարով արտահայտվածները: Դժվար է ասել՝ ինչո՞ւ նույն իմաստի արտահայտման համար լեզվում հանդես է գալիս մերթ բո՞ւն տրականը, մերթ՝ նախդիր+հոլովաձև կաղապարը: Այսօրվա ընթերցողը դրանք ըմբռնում է լուկ իբրև տրական: Իմաստային կամ ոճական ի՞նչ տարբերություն կարող է լինել հետևյալ նախադասությունների միջև, որոնցում տրական հոլովի իմաստն արտահայտված է մերթ բուն տրականով, մերթ՝ նախդիր+հայցական հոլով կառուցվածքով. «Սկսան տալ ցղետացիսն ի պսակքն՝ խոյս հինգ հազար եւ զուարակս հինգ հարիւր» (Մնացորդաց Բ, ԼԵ, 9) և «Նստուն դետացոցն վասն զատկին ոչխարս հինգ հազար եւ որթս հինգ հարիւր» (Ա Եղբ., Ա, 9): «Եւ տացես զնա ցեղիազար քանանայ» (Թիւր, ԺԺ, 3) և «Եւ զկէս նոցա առնուցուս, եւ տացես Եղիազարու քանանայի զպտուղսն Տեանն» (Թիւր., ԼԱ, 29):

Ուշագրավ է, որ ի+հայցական հոլով կառուցվածքով արտահայտված ուղեկորման հայցականը երբեմն ուղեկցվում է դէպ, ուղիղ, ուղ-

դորդ բառերից որևէ մեկով կամ երկուսով միասին: Այդ եղանակով ավելի է կոնկրետացվում գործողության ուղղությունը. օրինակ՝ «Ճանապարհ կալեալ ընդ կողմանս հիւսիսոյ՝ ել դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք» (էջ 93): «Կոչէ առ փնքն ի Վրկանէ զբոնն ձեռական զաւրսն իւր զհամարշխարհիկ և գնաց ուղղորդ յարեւելս» (էջ 66):

Ընդհանուր առմամբ «մասին» իմաստն արտահայտվում է զ+բացառական հոլով կաղապարով (հատկապես ասեմ, նառեմ, վկայեմ, ամբաստանեմ, ամբաստանութիւն առնեմ և մի քանի այլ ասացական բայերի մոտ). օրինակ՝ «Ասեմ զսմանէ յերկարեալ զամս կենացն ճկ» (էջ 15): «Վկայեցին զսմանէ առաջի ամենայն բաղմութեանն» (էջ 93) և այլն:

Ուշադրութեան է արժանի «մասին» իմաստի արտահայտումը ի+հայցական հոլով կաղապարով, որը հաճախ է հանդիպում Սեբեոսի լեզվում, իսկ դասական գրաբարի շրջանի հեղինակների երկերում՝ համեմատաբար սակաւ. օրինակ՝ «Ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն խորով» (էջ 32): «Բայց ես նախ առաջին զվէպս յահեղն արեայ և յարի այրն սկսայց ասել» (էջ 2):

Բոլորն հարկանեմ հարադրության հետ գործածվում է զ+բացառական հոլով: Սեբեոսի լեզվում ավելի շատ հանդիպում է ի+հայցական հոլով, քան՝ զ+բացառական. օրինակ՝ «Բոլորն հարկանէր յազին և ի կնդակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկնդակն՝ մնայր ի ձեռին նորա» (էջ 57): «Եւ անդէն բոլորն հարեալ զխոշափողիցն՝ խեղդէր զանեմն և սպանանէր» (էջ 57):

Հայտնի է, որ բացառական հոլովի իմաստի համար գրաբարում, որոշ բայերի մոտ, հաճախ ի+բացառական հոլովի փոխարեն դրվում է զ+բացառական հոլով. օրինակ՝ «Եւ ետ ածեալ զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ձեմելով» (Բուզանդ, էջ 141): Բայց Սեբեոսի Պատմությունում զ+բացառական հոլով կաղապարով կա նաև հետևյալ վկայությունը, որը հատուկ չէ դատական գրաբարին. օրինակ՝ «Ած ջուր և երեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար» (էջ 120):

Ուսումնասիրողները նշում են, որ ց նախդիրը դրվում է միայն հայցական հոլովի վրա: Թերեւս բացառություն է Ա. Բագրատունին, որը

վկայությունն է բերում նաև գործիական հոլովով. «Յորքան աւուրբք եղև», «խօսել ցմէջաւուրբք»²⁸:

Սեբեոսի լեզվում գտնում ենք մի վկայություն ց+բացառական հոլովով՝ «Եւ զատուցանէ նմա սահմանս... մինչև ցեղր ծովուն մեծի արևմտից. ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս» (էջ 9):

Այսպիսի փաստերը խիստ հազվադեպ են հանդիպում: Դրանք կարող են և կասկածելի լինել:

«Տակ» («մի բանի տակ», «մեկի իշխանության տակ») իմաստը սովորաբար արտահայտվում է ընդ+գործիական հոլով կառուցվածքով: Սեբեոսի գործում հանդիպում ենք մի վկայության ըստ+տրական հոլովով, որ սովորական չէ. օրինակ՝ «Արշակ արքայ հնազանդեցոյց ի ծառայութիւն զԱսորեստանեայս, որ ըստ Անտիոքայ, և զբաբելացիս և զՊարսիկս և զՄարս» (էջ 8)՝ թարգմանենք՝ «Արշակ արքան ծառայության հնազանդեցրեց ասորեստանցիներին, որոնք գտնվում էին Անտիոքի իշխանության տակ, և՛ բաբելացիներին, և՛ պարսիկներին, և՛ մարերին»:

Մի շարք լեզվաբաններ, խոսելով ց նախդրի հաղորդած «մինչև» իմաստի մասին, նշում են, թե հաճախ կամ երբեմ ց+հայցական հոլով կաղապարի հետ զուգահեռաբար գործածվում է նաև մինչև բառը: Փաստերը ցույց են տալիս, որ ց+հայցական հոլով կարող է գործածվել նաև մինչ բառի հետ՝ արտահայտելով նույն իմաստը (իհարկե, առաջինի համեմատությամբ սակավ հաճախականությամբ). օրինակ՝ «Կայցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչ ցման երկոցունցս» (էջ 37):

Նախդիրները գրաբարում քիչ են, բայց կիրառության մեծ հաճախականություն ունեն, իսկ նախադրություններն ընդհանրապես՝ համեմատաբար շատ են, բայց գործածության սակավ հաճախականություն ունեն:

Սեբեոսի լեզվում ամենից շատ կիրառվել է ի վերայ նախադրությունը (շուրջ 275 անգամ), ապա՝ վասն, հանդերձ, ի մէջ նախադրությունները, իսկ մյուսները՝ ավելի սակավ:

Պատմիչի լեզվում կան նախադրության ու նրա խնդրի շարադասության խախտման, երկբաղադրիչ նախադրությունների (ի վերայ, ի ձեռն) բաղադրիչների միմյանցից հեռացման, նախադրության պահան-

²⁸ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 104:

ջած խնդրի բացակայության ու նախադրության խնդրի՝ նախադրության պահանջած հոլովով շղթվելու դեպքեր և այլն:

Նախադրությունը նախադաս է իր խնդրին: Բայց ահա նախադրության հտադաս կիրառության, ինչպես նաև՝ նախադրության և նրա խնդրի հեռացման մի օրինակ՝ «Եւ Երակոս հասեալ բաճակեցաւ առ դուրս մերձ Տիգրսն քաղաքի» (էջ 95)՝ փոխանակ՝ մերձ առ դուրս Տիգրսն քաղաքի:

Ի ձեռն նախադրության բաղադրիչների միջև սովորաբար այլ բառ չի մտնում: Բայց Սեբեոսի Պատմությունում աչքալիսի դեպք կա՝ «Եթէ ոչ մեռցի այրն այն՝ ի նորա ձեռն կորնչելոց է ամենայն երկիր Հոռվմայեցւոց տէրութեանդ» (էջ 46):

Գրաբարի քերականները նախադրության մեջ են վերցնում նաև հանդերձ բառը: Սակայն այն գործածվում է և՛ նախադաս, և՛ հտադաս, իսկ Ագաթանգեղոսի լեզվում նույնիսկ ավելի շատ հտադաս է: Կիրառված 86 դեպքերից 60-ում հանդերձ բառը հտադաս է, իսկ 26-ում՝ նախադաս:

Աստվածաշնչում հանդերձ-ը հանդիպում է 22 անգամ, որից 13 անգամը՝ նախադաս, 9 անգամը՝ հտադաս:

Կորյունի լեզվում հանդերձ-ի գործածության 32 դեպքերից 28-ում նախադաս է, 4-ում՝ հտադաս:

Եփեսիկի լեզվում հանդիպում է 6 անգամ, որից 4-ը՝ նախադաս, իսկ 2-ը՝ հտադաս:

Սեբեոսը նույնպես նախընտրում է հանդերձ-ի նախադաս գործածությունը: Նրա երկում հանդերձ բառը գործածվել է 62 անգամ, որից 54-ը՝ նախադաս, իսկ 8 անգամ միայն՝ հտադաս:

Հանդերձ նախադրությունը պահանջում է գործիական հոլովով կապի խնդիր: Այս ընդհանուր սկզբունքը, սակայն, խախտված է Սեբեոսի հետևյալ նախադասության մեջ. «Հանդերձ Հ հազար արանց ընտրելոց զխաւորաց յամենայն սահմանացն իւրոց՝ գնաց ի Հոռմ» (էջ 130): Այստեղ նշված նախադրությունը գործածվել է տրական հոլովով զրված գոյականի հետ:

Գրաբարի քերականություններում նշվում է, որ մերձ նախադրության մոտ զրվում է ի վրայ առ նախդրով հայցական հոլով: Սեբեոսի երկում գտնում ենք նաև առ + տրական հոլովով. օրինակ՝ «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր Կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին» (էջ 120):

«Մինչև» իմաստը («մինչև մի տեղ», «մինչև մի ժամանակ», «մինչև մի բանի մոտ») արտահայտվում է՝ որոշ նախադրությունների մոտ նախդիր + հայցական հոլով կաղապարով. օրինակ՝ «Մինչև յերիս անուրս յերկարեալ պատերազմն» (էջ 114): Սեբեոսի լեզվում մի անգամ միայն մերձ և մինչև նախադրությունները հանդիպում են կողք կողքի. օրինակ՝ «Ոչ ուրեք կարաց զետեղել, այլ գնացին փախստական մինչև մերձ լի ծովեղերն» (էջ 146):

Բերված փաստերը, այսպիսով, վկայում են այն մասին, որ Սեբեոսի լեզվում կան դասական հայերենի նախդիրների ու նախադրությունների կիրառության կանոնների շեղումներ:

ՈՃԸ

Սերեոսի Պատմությունն ուսումնասիրողներն առավել կամ նվազ չափով խոսել են նաև նրա ոճի մասին: Դեռևս Սերեոսի Պատմության առաջին հրատարակիչը՝ Թ. Միհրդատյանը, գրել է. «Արդարև ո՛չ համարիմ չափազանց ջատագով՝ յորջորջել զՍա (նկատի ունի Սերեոսի Պատմությունը — Գ. Բ.) Մատենան Ոսկեղէն աղգային հնութեան վասն հայրենախօս ոճոյն. և արժանի վարկանիւմ զայս երկրորդ դասել յետ Քերթոզահօրն ցանկալի դպրութեան»¹:

Բոլոր հետազոտողներն էլ Սերեոսի ոճը համարել են դասական գրաբարի հեղինակների լեզվական ոճից նահանջ: Իհարկե, սա ճիշտ է, եթե նկատի ենք առնում հատկապես այնպիսի հեղինակների պերճ լեզուն, ինչպիսիք են Նղիշեն, Խորենացին, Ագաթանգեղոսը, որոնց ստեղծագործությունների շատ հատվածներ զեղարվեստական խոսքի արժեք ունեն: Սակայն, չի կարելի մոռանալ, որ VII դարի պատմագրության մեջ դասական շրջանի հեղինակների ստեղծագործությունների վեհ ոճն արդեն համարյա բացակայում է, և այդ ժամանակաշրջանի պատմագրությունն արդեն նկատելիորեն հակվում է դեպի գործառական-պատմագրական ոճը:

Հետազոտողները նշում են, որ Սերեոսի ոճի վրա նկատելիորեն ազդել է Աստվածաշնչի և հատկապես Բուզանդի «Հայոց պատմության» լեզուն. «Բայց իւր (իմա՝ Սերեոսի — Գ. Բ.) ոճին վրայ ամէնէն աւելի ազդեցութիւն թողուցած է Փ. Բիւզանդ, — գրում է Ն. Ակիւնյանը: Հայ պատմական գրականութեան այս անդրանիկ մատենանը կ'երևայ թէ Սերեոս կրած է իւր բարձին տակ» (ընդգծումը հեղինակինն է — Գ. Բ.)²: Ըստ Հ. Գաթրոնյանի «Ասոր (իմա՝ Սերեոսի — Գ. Բ.) բանասիրա-

¹ Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, ի Կոստանդնուպոլիս, 1851, էջ 2:

² Հ. Ներսէս վ. Ակիւնեան, Մատենագրական հետազոտութիւններ, հ. Բ, Վիեննա, 1924, էջ 61:

կան ոճին կամ կարգաբանութեան վրայ ընդհանուր դիտողութիւն մ'ընեւու ըլլանք, իր ժամանակի լեզուին ճիշդ պատկերը կը տեսնենք»³։

Անկասկած, VII դարի լեզվի պատկերը պետք է արտացոլած լինէր Սեբեոսի Պատմութիւնում, սակայն նա իր Յամանակի զարգացած, բարձրաստիճան հոգեորականներէց մեկը լինելով՝ չէր վարող լավ չիմանալ Աստվածաշունչը և հայ պատմագիրներին։ Նրա լեզվի վրա զգալի է այդ աղբյուրների լեզվի ու ոճի ազդեցութիւնը։ Կարծում ենք, որ հենց ա՛յս հանգամանքն էլ պատմիչի լեզուն հիմնականում պահել է դասական գրաբարի ընդհանուր ֆոնի վրա։ Այն, որ «Սեբիոսի լեզուն մերձաւոր է մեր մատենագրութեան ոսկի դարուն հեղինակաց. դեռ կը պահէ ալն նոսիրական հնութեան ոճն և պարզութիւնը»⁴, մեր կարծիքով VII դարի բուն լեզվական վիճակը չի արտացոլում, այլ մեծ մասամբ արդշունք է Սեբեոսի լեզվի վրած ազդեցութեան և մասամբ զորքայնութեան։ Մյուս կողմից՝ Սեբեոսը որքան էլ ձգտեր հարադատ մնալ V դարի հայերենի սովանդութիւններին, VII դարի լեզվական վիճակն ու լեզվամտածողութիւնը, այնուամենայնիւ, կիսանգարեին նրան։

Ըստ Վ. Վարդանյանի, երբ Սեբեոսն «... անդրադառնում է կրօնադավանաբանական խնդիրներին, դառնում է երկարաբան, մտնում է ձանձուրի մանրամասնությունների մեջ, որը թուլացնում է շարադրանքի թափն ու ճկունությունը։ Ալիշանն իր ուսումնասիրութեան մեջ այս մասին հակառակ կարծիք է հայտնում՝ քե Սեբեոսը պատմական անցքերը շատ մանրամասնաբար է ներկայացնում, իսկ եկեղեցական պատմութեան վրայից անցնում է քուցիկ կերպով» (ընդգծումը մերն է— Գ. Բ.)⁵։

Ալիշանն աշդպիտի կարծիք չի հայտնել։ Հեղինակը Ն. Ակինյանի հայտնած կարծիքը վերագրում է Ղ. Ալիշանին։ Ահա թե ինչ է գրում Ն. Ակինյանը. «Որչափ մասնը կը նկարէ Սեբիոս քաղաքական անցքերու պատկերը, այնչափ թուլցիկ կ'անցնի եկեղեցական դեպքերու վրայէն, յաճախ լռութեան իսկ տալով»⁶։

Վ. Վարդանյանն իրաւատնոմ հակադրովելով Ն. Ակինյանին՝ նախ Սեբեոսին ինչ-որ չափով կտրում է իր ժամանակից ու բարձրաստիճան

³ Տե՛ս «Եւրոպա», Վիեննա, 1852, № 31։ Ասենք նաև, որ Հ. Գաթրճյանի կարծիքն անվերապահորեն ընդունում է նաև Ն. Ակինյանը (տե՛ս Հ. Ներսէս Վ. Ակինեան, նշվ. աշխ., էջ 55)։

⁴ Գ. Զարբանալեան, նշվ. աշխ., էջ 440։

⁵ Վ. Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 126։

⁶ Հ. Ներսէս Վ. Ակինեան, նշվ. աշխ., էջ 44։

հոգևորական լինելու հանգամանքից, երկրորդ՝ Ակինյանն այն մտքին չէ, թե Սեբեոսը եկեղեցական հաղար ու մի մանր-մունր հարցերի մասին էլ պիտի գրեր: Նա կարծում է, թե պատմիչը լռելյայն չպիտի անցնեի եկեղեցական այնպիսի դեպքերի ու դեմքերի կողքով, որոնք սերտորեն առնչվում են ընդհանրապես հայ ժողովրդի պատմության հետ և նրա կարևոր օղակներից են:

Խոսելով Սեբեոսի լեզվի երբեմն գեղարվեստականությամբ համեմված լինելու մասին՝ Վ. Վարդանյանը գերազնահատում է պատմիչին, երբ գրում է, թե Սեբեոսը. «Հաճախ դուրս է գալիս դուռ պատմությանը հատուկ սրահանջների շրջանակներից և դառնում փսկական բանաստեղծ...»⁷:

ՀԱՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Սեբեոսի լեզուն հարուստ է համանիշներով⁸: Վիճակագրական հետազոտությունը ցույց է տալիս, որ համանիշային կիրառությամբ մակբայը շուրջ 3 անգամ քիչ է հանդես գալիս, քան ածականը կամ գոյականը: Մյուս կողմից՝ գոյականական, ածականական համանիշները գործածվում են գրեթե հավասարապես: Համեմատաբար ավելի շատ են բայական համանիշները: Ուրեմն, համանիշային կիրառության

7 Վ. Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 126:

8 Բառական համանիշության վերաբերյալ Ն. Պառնասյանը գրում է. «Արժաք մագեր և սպիտակ մագեր կապակցություններում հանդես եկած արժաք և սպիտակ բառերը բառական համանիշներ են, որովհետև արտահայտում են առարկայական նույն հատկանիշը և տարբերվելով իրենց հիմնական ձևովից՝ ունեն նույն բերականական հատկանիշները. արժաք բառը այս կիրառություններում ձևոր է բերել սպիտակ ածականին հատուկ բերականական հատկանիշնր: Այսինքն՝ բառական համանիշներ կարող են համարվել նույն խոսքի մասին պատկանող կամ նույն խոսքի մասի բերականական հատկանիշներ ձևով բերած բառերը» (ընդգծումները հեղինակինն են — Գ. Բ.) (տե՛ս Ն. Ա. Պառնասյան, Քերականական համանիշները ժամանակակից հայերենում (գոլտորական դիսերտացիա), Երևան, 1971, էջ 27):

Մեղ թվում է, թե բառական համանիշների առանձնացման հիմքում պետք է դրվի բնագրից դուրս բառի բառական իմաստը: Ուստի, մենք համանիշները դիտում ենք երկու պլանով՝

ա) Համանիշներ, որոնք նույն խոսքի մասի բերականական հատկանիշներն ունեն բնագրից դուրս: Սրանք բուն համանիշներն են, իսկ նրանց առանձնացման հիմքը ընդհանրապես համանիշների առանձնացման սկզբունքն է:

բ) Համանիշներ (համանիշային կապի մի անդամը կամ երկուսն էլ), որոնք առաջանում են բառերի բնագրային, փոխաբերական կիրառությունների շնորհիվ: Սրանք ոչ կայուն կամ հարաբերականորեն կայուն համանիշներն են:

հիմնական ծանրությունն ընկնում է բայի, ածականի, գոյականի, մակ-բայի վրա:

Սեբեոսի լեզվում համանիշային շարքերը մեծ մասամբ երկանդամ են՝ ընտիր-լավ, բրեմ-փորեմ, թեթևըթաց-երագոտն, ապա՝ եռանդամ՝ աղաղակեմ-գոշեմ-ճշեմ, լուծանեմ-քակտեմ-քակեմ, խառն-խառնամ-բոխ-խառնիճաղանճ, ախանջ-ոմեկն-լսելիք: Ամենից սակավը համանիշային քառանդամ կամ ավելի շարքերն են: Սակայն այդպիսի շարքերը, քանի որ բաղմանդամ են, շոշափելի թվով համանիշներ են ընդգրկում իրենց մեջ. օրինակ՝ գնամ-երթամ-ընթանամ-մեկնում-չուեմ-սլանամ-արշառեմ, արի-քաջ-անվիհհել-աճեցիկիսդ, ճակատեմ-սրտերազմիմ-մարտնչիմ-կոռիմ-մարտ զնեմ և այլն:

Պատմիչի լեզվում արտացոլվում են հայերենի համանիշաստեղծ բաղմապիսի միջոցները: Ըստ համանիշային շարքերի անդամների կազմության հարաբերության մենք առանձնացնում ենք հետևյալ համա-նիշային շարքերը՝

1. Պարզ բառեր (բայեր, գոյականներ)՝ աճապարեմ-փութամ-ճե-պեմ: Այս կարգի որոշ բառեր երբեմն կիրառական խիստ ընդգծված տարբեր ոլորտ ունեն և ուղիղ իմաստով չեն կարող փոխարինել միմ-յանց. օրինակ՝ ուս-նուս (առաջինը՝ մարդու համար, երկրորդը՝ կենդանու):

2. Նույն ածանցով բաղադրված տարբեր արմատներ՝ անլուր-ան-խնայ-անողորմ, խնդութիւն-ուրախութիւն, արքայական-թագաւորական, պնդութիւն-ամրութիւն:

3. Նույն արմատից տարբեր ածանցներով կազմված բառեր՝ իւրա-կան-իւրաջին, հայրենական-հայրենի:

4. Նույն հոլովածեր տարբեր արմատների հետ ա հոդակապով բա-կազմելով՝ ականակապ-ականակուռ:

5. Պարզ արմատական և ածանցավոր բառեր՝ պիղծ-անսուրբ:

6. Բնիկ ու փոխառյալ բառեր՝ զոմ-կամուրջ՝ «Գնացեալ ի գիշերի ընդ զոմ ի վեհկաւատ, կալան զնա» (էջ 96): «Հասեալ ի կամուրջն Մե-ծամարի՝ ի բաց աւերեցին» (էջ 110):

7. Բարդ բառեր՝ թեթևըթաց-երագոտն:

8. Արմատ, նրա տարբերակի կրկնմամբ կազմված բառով ու այլ բառերով կազմված համանիշային շարքեր՝ կուր-կերակուր-ճաշ:

9. Պարզ և հարադրավոր բայեր՝ պաշարեմ-շրջափակ առնեմ, հրամայեմ-հրաման տալ:

10. Ժողովրդախոսակցական և գրական ճնում գործածվող որոշ բառեր՝ ծուխ-մոխ:

11. Բառ և բառակապակցություն՝ Հայք (տեղանուն)— Հայաստան աշխարհ:

12. Բառ և դարձվածք՝ զինեմ-զեն զանձամբ արկանեմ:

Համանիշույթյունը պատմականորեն ձևավորվող լեզվական երևույթ է, այդ իսկ պատճառով համանիշային շարքերը կայուն չեն: Որոշ բառեր լեզվի զարգացման որոշակի շրջանում կարող են մտնել համանիշային միեւնույն շարքի մեջ, բայց հետո՝ դուրս մնալ: Օրինակ, գրաբարում կուր և կերակուր բառերը համանիշներ էին, բայց ժամանակակից հայերենում կուր-ն արդեն անկախ չի գործածվում, և համանիշային շարքը քանդվել է:

Համանիշների դերը լեզվում շատ ավելի ցայտուն է երևում, երբ նրանք գործածվում են նույն կամ անմիջապես իրար հաջորդող նախադասություններում: Ի դեպ, երկու դեպքում էլ երևում է Սեբեոսի հմտությունը: Ահա օրինակներ՝ «Երկեալ արքայ և զանգիտեաց, և ոչ կարաց տալ հրաման» (էջ 45): «Վասն այնորիկ ուրախ լինին երկինք, և ցընծացէ երկիր, զուառնացին փառաւ իւրովք եկեղեցի և մանկունք իւր» (էջ 86): «Արձակու անդրէն զՎասպուրական համարաւարն ի Հայս: Յայնժամ հրամայէ Հերակղի զաւրավարի, որ նստեր ի Հայաստան երկրի, առնուլ զզաւրս իւր և գնալ ի վերայ նոցա ի սարտերաղմ» (էջ 50—51):

Սեբեոսը նախընտրում է երկու համանիշներ կողք կողքի գործածել. օրինակ՝ «Հապճեպ տտիպով յ ձեռն բեքերնբաց երագոտն սուրհանդակաց հրաման թագաւորին հասաւ» (էջ 81): «Սա էր այր խոնարհ և հեզ, որ ոչ կամէր զոք ցարուցանել» (էջ 99): «Եւ ածեալ նմա ջորիս, և բերեալ նմա դեսպակ արքունի, և առին գնացին» (էջ 48):

Համանիշային զույգերի աշխարհի գործածությունը ոչ միայն զարդարում է և ոճավորում պատմիչի լեզուն, այլև նպաստում է իմաստի ընդգծմանն ու սաստկացմանը:

Անգնահատելի է համանիշների դերը հեղինակի լեզվի ճկունության, ոճական պեսպիսության, որևէ առարկա, իր կամ երևույթ համակողմանիորեն ներկայացնելու հարցում:

Սեբեոսը շատ հաճախ նույն նախադասության մեջ կողք կողքի վարպետորեն գործածում է գոյական (կամ գոյականի գործառնություն բառ) ու բայ, որոնք իմաստային ինչ-որ ընդհանուր կողմ ունեն և

առաջին հաջադրից, ասես, համանիշային կապի մեջ են մտնում՝ անգարհուրիմ, քախանձանֆ-խնդրեմ և այլն. օրինակ՝ «Իսկ յորժամ եհաս գոյժ աղաղակին այսորիկ առ խոսրով՝ ընդոստուցեալ յահէն՝ զարհուրեցաւ» (էջ 96): «Եւ եղև իբրև թագաւորեաց Հեռակղոս՝ արձակեաց հրեշտակս մեծապէս գանձիւք և հրովարտակաւք առ արքայ խոսրով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ քախանձանաւֆ» (էջ 80):

Նման բառերի այսպիսի կիրառութիւնը հեղինակի ոճը դարձնում է ավելի թարմ ու հնչեղ, խորացնում է հաղորդված միտքը:

Խոսքի տաղտկութիւնը վերացնելու ոճական հիանալի միջոցներ են նաև շարահյուսական համանիշներն իրենց բազմապիսի դրսևորումներով ու կիրառութիւններով: Մեր նպատակից դուրս է Սեբեոսի լեզվում դրանց մանրազնին ուսումնասիրումը:

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Հականիշ բառերը բառային կազմում առանձնացվում են իրենց իմաստային կողմի հակադրութեան հիման վրա և կազմում են փակ խմբեր: Հականիշային ամեն մի փակ խումբ կարող է վերաբերել երեւոյթի, առարկայի կամ հատկանիշի մի կողմին միայն:

Հականիշային հակադրութիւնը յուրահատուկ և արժեքավոր միջոց է՝ օբյեկտիվ իրականութեան բազմազանութեան, իմաստային զանազան երանգների արտահայտման, հեղինակի լեզվի անհատականացման ու ոճավորման համար:

Բերենք հականիշային հակադրութեան մի քանի փակ խմբեր՝

1. Ուղղութիւն՝ աջ-ահեակ, ճիւսիս-հարաւ՝ «Եւ դարձք նորա կային յաջմէ և յահեկէ բացագոյն ի նմանէ» (էջ 62): «Եւ դղրդեալ ամենայն կողմն ճիւսիսոյ գայր յերկրպագութիւն» (էջ 89): «Որպէս մրրիկ ի հարաւոյ ընթացի, յանապատէ գնացեալ յահեղ տեղութէ» (էջ 138):

2. Մակերես՝ լայն-նեղ՝ «Եւ էր սա այր... բարձր և լայն հասակաւ» (էջ 56): «Անցին ի նեղ ինչ տեղիս» (էջ 54):

3. Համ՝ քաղցր-դառն՝ «Քաղցր բանիւք յորդորեալ զամենեւեան միաբանեաց» (էջ 51): «Քանզի ոչ կարացին համբերել դառն և դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն որ ի վերայ նոցա» (էջ 150):

4. Ամբողջութիւն՝ խախտութիւն՝ «Դնացին յերկիրն ամուր Կորդուաց» (էջ 52): «Նորոգեաց և զխախտաւ որմոյն» (էջ 89):

Հականիշային կապի մեջ են գտնվում նաև թիւր (էջ 123)-ճշմարիտ

(էջ 125), լոյս (էջ 61)-մութ (էջ 25), կեանք (էջ 133)-մահ (էջ 5), ճշմարտութիւն (էջ 27)-ստութիւն (էջ 43), մեծ (էջ 33)-փոքր (էջ 47) և այլն:

Հականիշ բառերի առանձնացման ժամանակ խիստ կարևոր է երկու հանգամանք՝

ա) Որեւէ բառի հականիշը գտնելու համար պետք է ելնել տվյալ բառի բնական, հիմնական իմաստից:

բ) Հականիշ բառերից մեկը կամ երկուսն էլ կարող են մտնել համանիշային շարքերի մեջ: Երբ երկու բառեր հակադիր զույգ են կազմում և հականիշ են, ապա հականիշային հարաբերության մեջ են նաև նրանց համանիշները: Օրինակ, ունենք՝ խոնարհ-հպարտ-ամբարտաւան-պոռոտաբան, լի-սին-ունայն և այլն: Այս երկու շարքերում եթե հիմնական համարները առաջին երկու անդամները (խոնարհ-հպարտ, լի-սին), ապա հպարտ բառի համանիշները հականիշ են խոնարհ բառին, իսկ սին բառի համանիշները հականիշ են լի-ին:

Սերեոսի լեզվում առանձնացվում են հետևյալ հականիշային շարքերը՝

1. Արմատական կամ իբրև այդպիսի դիտվող բառեր՝ մեծ (էջ 32)-փոքր (էջ 66), բարի (էջ 45)-չար (էջ 58), բարձր (էջ 120)-ցած (էջ 89) և այլն:

2. Ածանցավոր բառեր՝ բարութիւն (էջ 76)-չարութիւն (էջ 103), քաղցրութիւն (էջ 37)-գառնութիւն (էջ 144):

3. Հականիշային փակ խմբի մի անդամը ածանցավոր է, մյուսը՝ ոչ ողբ (էջ 101)-ուրախութիւն (էջ 101), պատերազմ (էջ 8)-խաղաղութիւն (էջ 13):

4. Հականիշ փակ խմբի երկու անդամն էլ բարդ բառեր են՝ արեւմուտք (էջ 111)-արեւելք (էջ 33), կենսաբեր (էջ 33)-մահաբեր (էջ 137):

5. Հականիշային փակ խմբի անդամներից մեկը փոխառյալ բառ է, մյուսը՝ փառացած հոլովածն՝ ակամայ (էջ 90, 144) (պհլ. اکاماک, «անվճռական»)՝ կամաւ (էջ 144):

6. Հականիշային փակ խմբեր, որոնց անդամները փառացած հոլովածներ են՝ ի ներբուստ (էջ 150)-ի վերուստ (էջ 153), ի դուրս (էջ 145)-ի ներքս (էջ 33):

Լեզվում անկախ, ինքնուրույն կիրառություն ունեցող հականիշային զույգի մի անդամը երբեմն մի այլ բառում կարող է հանդես գալ

⁹ Տե՛ս Արմ., հ. 1, էջ 104:

որպես արմատ կամ հիմք. օրինակ՝ քերե-ծանրագոյն, դալար-գոսանամ և այլն՝ «Կազմեալ ունէր յեղր ծովուն նաւս բաղոմս քերես, զի յորժամ ծանրագոյն նաւըն հասանիցեն ի Քաղկեդոնն՝ նա փութանակի հասցէ յաւնականութիւն նոցա» (էջ 143):

Իհարկե, քերե-ծանրագոյն, դալար-գոսանամ բառերը, որպէս ձեւավորված բառային անկախ միավորներ, բառիս բուն իմաստով հակահիշներ չեն: Հակահիշները պետք է վերաբերեն միևնույն խոսքի մասին: Հետեաբար, վերեւում բերված գույգերի համար հակահիշներ կլինեն՝ քերե-ծանր, դալար-գոս կամ քերակոյն-ծանրագոյն, դալարանամ-գոսանամ:

Ոճական առումով, հակահիշները լեզվի կարևորագոյն միջոցներից են¹⁰:

Հակահիշներն իրենց ոճական բուն արժեքով (ինչպես և համանիշները) առավել ցայտուն են երևում, երբ հանդես են գալիս հատկապես նույն նախադասութեան մէջ: Սա նպաստում է նշութի, նրա իմաստի ավելի հստակ ըմբռնմանը: Բերենք օրինակներ՝ «Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի դուռն արքունի, զի զուղիղն հաստատեսցեն և զքիւրն ի բաց մերժեսցեն» (էջ 123): «Ի նորին աւանդութեան վերայ հաստատեալ կամք, և ոչ խոտորիմք ի նմանէ ո՛չ յայ և ո՛չ յահեակ» (էջ 135): «Եւ կողմն վասպուրականն գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային: Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից» (էջ 47): «Ի սուրբն Կոստանդիանոսէ սկսանի և մինչ ի Փոքր Թէոդոսն զանաբոց և զսբոց գործքն» (էջ 18): «Ոչ ունիմք իշխանութիւն զսուրբն յանսուրբսն մատակարարել» (էջ 134):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԴՏԱԴՈՐԾՄԱՆ
ՅՈՒՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Լեզվի զարգացման նույն շրջանի և հատկապես նման թեմայով ստեղծագործող հեղինակների բառապաշարը շատ ընդհանրութեամբներ է ունենում: Նկատելի ընդհանրութեամբներ կարող են լինել նաև տարբեր

¹⁰ «Հակահիշները, — գրում է Ա. Ա. Ռեֆորմատսկին, — լեզվի ոճական շատ ուժեղ միջոցներ են: Նրանք անհրաժեշտ են հակադրութեան հաղորդման, հետորակա և պոետիկական լեզվում հակադրութեան իրականացման հնարանքի համար» (տե՛ս А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1947, стр. 36).

Բայց չի կարելի հակահիշների դերը սահմանափակել հետորակա և պոետիկական խոսքի ոլորտներով: Հակահիշները նույնքան կիրառական են ինչպես ընդհանրապես գեղարվեստական, այնպես էլ առօրյա խոսակցական լեզվում և լեզվական այլ ոճերում:

շրջանների հեղինակների լեզվում: Համեմատաբար առավել ընդհանրութ-
յուններ կարելի է հայտնաբերել իրար հաջորդող կամ ժամանակով
իրարից ոչ այնքան հեռացած հեղինակների լեզվում:

Հեղինակների անհատականությունը, միմյանց նկատմամբ ունե-
ցած ընդհանրություններն ու տարբերությունները երևում են մասնավոր-
ապես այն բանից, թե ընդհանուր բառերն ու բառակապակցություն-
ներն ինչպե՞ս են օգտագործվում նրանցից յուրաքանչյուրի կողմից: Այս
պատճառով հեղինակի ոճը որոշվում է մի շարք գործոններով:

Կոնկրետ հեղինակի ոճի մանրակրկիտ ուսումնասիրման նպատա-
կով հետազոտողներն ուշադրություն են դարձնում այն բանին, թե տրվե-
լալ ստեղծագործողն ի՞նչ բառ է նախընտրում գործածել ինչ-որ որո-
շակի հասկացություն արտահայտելու և, այսպիսով, իմաստային ինչ-
պիսի՝ երանգներ է արտահայտում: Այսպիսի ուղիով էլ որոշում են
ուսումնասիրվող հեղինակի ոճի անհատականությունը: Այս տեսան-
կյունից կոնկրետ հեղինակի ոճը պարզելու եղանակներից մեկը տվյալ
հեղինակի լեզուն այլ ստեղծագործողների լեզվի հետ համեմատելն է:
Մենք Սեբեոսի լեզուն համեմատում ենք դասական գրաբարի հայտնի մա-
տենագիրների, ինչպես նաև Աստվածաշնչի ու Ղ. Փարպեցու լեզվի հետ:
Ուսումնասիրությունը քաջահայտում է Սեբեոսի և համեմատվող այդ
հեղինակների ու Աստվածաշնչի լեզվի ընդհանուր գծերը, միաժամա-
նակ քաջահայտում է, որ Սեբեոսի լեզուն մի շարք կողմերով նկատելի-
որեն տարբերվում է նրանցից՝

1. Դարձեալ, ա ն դ ր է ն, կ ր կ ի ն, վ ե ր ս տ ի ն մակբայների գոր-
ծածությունը: Եղնիկի, Ագաթանգեղոսի, Խորենացու, Կորյունի, Բուզանդի
լեզվում քաջահայտորեն երևում է դարձեալ մակբայի կիրառության
հակում: Այսպես՝ Եղնիկի երկում դարձեալ-ը հանդիպում է 75 անգամ,
իսկ անդրէն-ը՝ 4, Կորյունի լեզվում անդրէն-ը չի հանդիպում, իսկ
դարձեալ-ը գործածել է 11 անգամ: Եղիշեի լեզվում այս կամ այն մակ-
բայի այսպիսի քաջահայտ նախընտրություն չկա:

Սեբեոսն առավել գործածել է անդրէն-ը (շուրջ 50 անգամ, իսկ
դարձեալ-ը հանդիպում է ընդամենը 30 անգամ)՝ օրինակ՝ «Եւ առեալ
զառ և զաւար քաղաքին, դարձան անդրէն ի Տիզբոն» (էջ 73): «Հրաման
ես դարձեալ ժողովել զամենայն այր և ձի ի Հայաստանեայց» (էջ 53):

Դարձեալ մակբայը դասական հայերենում (իհարկե, չնչին քաջա-
ռությունք) և Սեբեոսի լեզվում գործածվում է նաև նշված մյուս մակ-
բայների ու մի քանի բառակապակցությունների հետ: Սեբեոսի լեզվում
հանդիպում ենք «դարձեալ անդրէն» (էջ 43), «դարձեալ վերստին»,

(էջ 54), «դարձեալ անգամ» (էջ 104), որոնցից ամենից առավել հանգիստում է «գարձեալ անդրէն»-ը:

Մակբայնների շարադասութեան առումով հարկ է նշել, որ դարձեալ-ը սովորաբար գրվում է կապակցութեան սկզբում: Սակայն կան նաև հակառակ շարադասութեամբ մի քանի վկայութիւններ՝ «Եւ արդ՝ գրէ նա անդրէն դարձեալ թուղթ երկրորդ» (էջ 39): «Ապա վերստին դարձեալ այլ զարս գումարեալ՝ հրամայեաց թագաւորն միայն զգուշանալ անձանց» (էջ 54):

Ընդհանուր առմամբ, կրկին, վերստին մակբայները անդրէն-ի և դարձեալ-ի համեմատ տակաւ են գործածվում: Այս առումով Սեբեոսը տարբերվում է առանձնահատկութեամբ: Նրա լեզվում կրկին մակբայը չի հանդիպում, բայց վերստին-ը գործածվել է 12 անգամ. օրինակ՝ «Եւ շինեալ զերկիրն նորոգեաց վերստին» (էջ 26): «Այր քաջ է նա և վերստին այլ զարս գումարէ ի քաջաց ազգաց արեւելից» (էջ 42):

Կորյունը, Բուզանդը չունեն վերստին-ը, բայց այլ հեղինակների երկերում այս մակբայը հանդիպում է մեկ կամ մի քանի անգամ:

2. Ս ա ս տ ի կ, յ ո յ ժ, կ ա ռ ի, ա ն ն ա ռ ի ն, խ ի ս տ մակբայների գործածութիւնը: V դարի հեղինակների լեզվում նշված մակբայների կիրառութեան միօրինակություն չի նկատվում: Սեբեոսի լեզվում և V դարի աղբյուրներում այդ մակբայներից ամենից քիչ գործածվում է խիստ-ը, բայց լեզվի զարգացման հետագա շրջաններում այս մակբայի կիրառական հաճախականությունը մեծանում է: Գրական արեւելահայերենում կարի-ն անգործական է; իսկ անհնարին մակբայը ձեռք է բերում նոր իմաստ: Սա նշանակում է, թե լեզվական որևէ երևույթ լեզվի զարգացման մի շրջանում կարող է խիստ տարածված լինել, բայց հետագայում անհետանալ լեզվից կամ սահմանափակ գործածություն ստանալ, իսկ նրա տեղը կարող է բռնել նախորդ շրջաններում խիստ սակավ կիրառվող մի այլ երևույթ կամ բառ:

Սաստիկ, յոյժ, կարի, անհնարին մակբայների կիրառութեան մեջ V դարի աղբյուրներում ընդհանուր նախասիրություն չի նկատվում: Այսպես, Կորյունը նշված մակբայներից ունի միայն սաստիկ-ը: Խորենացին, Նղիշեն ամենից շատ գործածում են յոյժ-ը, Ագաթանգեղոսը՝ անհնարին-ը, Եզնիկը՝ կարի-ն և անհնարին-ը հավասարապես:

Սեբեոսի Պատմութեան մեջ նշված մակբայներից ամենից հաճախ հանդիպում է յոյժ-ը (223 անգամ, որով նա հարում է Խորենացուն, Նղիշենին, Փարպեցուն), ասպա նվազող՝ հաճախականութեամբ, համապատասխանաբար՝ սաստիկ, կարի, անհնարին, խիստ բառերը, որոն-

ցից մի քանիսր ևս իմաստի կամ հատկանիշի սաստկացման համար երբեմն գործածվում են իրար հետ. օրինակ՝ «Թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան... որոյ հըաւր զաւրութեամբ և սաստիկ յոյժ զեղ պարանոցի իւրոյ» (էջ 3):

3. Ա մ է ն և ա մ ե ն ա յ ն դերանունների գործածությունը: Դասական գրաբարում և Սեբեոսի լեզվում ամենայն դերանունը գործածվում է շատ հաճախ, իսկ ամէն-ը՝ խիստ սակավ: Բայց ահա ամէն-ի գործածությունն մի վկայություն, որ չենք գտնում մեր կողմից ուսումնասիրված դասական հեղինակների նշված գործերում՝ «Երթեալ պաշարէր զբերդն շուրջանակի զամէնն» (էջ 70): Այստեղ ամէն-ը առնչվում է բերդին, իսկ այսպիսի կիրառությունը բնորոշ է ամենայն-ին. օրինակ՝ Զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան» (Բուզանդ, էջ 146):

Ուշագրավ է նաև բոլորովին մահբաշի և ամենայն դերանվան կիրառությունը հետևյալ օրինակում՝ «Իսկ Վարադտիրոց ասպետ... շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց» (էջ 102):

4. Ա մ ե ն ա յ ն, բ ա գ ու մ բառերի գործածությունը: Այս բառերը որոշչային դերով կողք կողքի դրվելու, երկուսը միասին մի գոյականի վերաբերելու հաղվադեպ օրինակ է Սեբեոսի հետևյալ վկայությունը՝ «Եւ ելեալ ի կողմն Ռէոյ ասպատակաւ, և աւար հարկանէր զամենայն զբազում աշխարհս թագաւորութեանն Պարսից» (էջ 59):

5. Ա ո, աւառ, կապուտ բառերի գործածությունը: Մեր ուսումնասիրած հեղինակների լեզվում աւառ-ը հանդես է գալիս և՛ որպես հարադրավոր բայի բաղադրիչ, և՛ անկախ կիրառությամբ: Այս բառն ավելի հաճախ կիրառվում է անկախ: Ա ո և կապուտ բառերը խիստ հաղվադեպ են հանդիպում:

Սեբեոսն աւառ բառը գործածում է թե՛ որպես հարադրավոր բայի բաղադրիչ, թե՛ անկախ: Պատմիչի լեզվին բնորոշը հետևյալն է: Նա առ և աւառ բառերը մեծ մասամբ գործածում է միմյանց հետ՝ առ և աւառ ձևով կամ առ+աւառ+կապուտ, առ+ավար+գերութիւն կաղսպարենբրով: Բերենք օրինակներ՝ «Եւ առեալ զառ և զաւառ քաղաքին, դարձան անդրէն ի Տիղբոն» (էջ 73): «Եւ առեալ զառ և զաւառ զբանակին Պարսից՝ դարձան ի բանակեսողն իւրեանց» (էջ 74): «Առեալ զառ և զաւառ և զկապուտ՝ դնացին ի բերդն իւրեանց» (էջ 75): «Խաղացուցին առ և աւառ և գերութիւն բաղում յոյժ» (էջ 146):

Աւառ բառը գործածվում է նաև՝ աւառ և կապուտ, աւառ և գերութիւն կապակցություններով:

Բուզանդի, Եղիշեի, Խորենացու, Փարպեցու, Ագաթանգեղոսի և այլ

հեղինակների լեզվում վերը նշված բառերի այդպիսի կապակցության կա՛մ ընդհանրապես չենք հանդիպում, կա՛մ՝ հազվագեղ: Սերեոսն այս առումով բերված հեղինակներից որոշակիորեն առանձնանում է:

6. Գ ո Ր Ժ գոյականը ուրպես կապակցության բաղադրիչ: Սերեոսի լեզվում բավական զգալի է «գործ պատերազմի» կապակցության կիրառության հաճախականությունը. օրինակ՝ «Հասեալ ինչ իցե գործ պատերազմի» (էջ 43): «Գործ պատերազմին տազնապէր զնոսա՝ զմիմեանս սատակելով» (էջ 156): «Ո՛չ ընդ ումեք կամեցաւ ոսնել գործ պատերազմի» (էջ 26):

Այս կապակցությամբ նկատվում է, որ Սերեոսը նմանվում է Բուզանդին:

7. Ա պ ա յ ա յ ն ժ ա մ կապակցության գործածությունը: Այս կապակցությունը համապատասխանում է ժամանակի պարագային «ներսնից հետո», «այնուհետև» իմաստով: Այն չի հանդիպում V դարի մի շարք հեղինակների լեզվում, բայց ունի Սերեոսը՝ «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ զերեամ մի. ապա յայնժամ տաջիք երգմամբ, որչափ և դուք կամիջիք» (էջ 140):

8. Հ ա յ ա ս տ ա ն տեղանվան արտահայտության բազմազանությունը: V դարի հեղինակների և Սերեոսի լեզվում այս տեղանունը գործածվում է «Հայաստան աշխարհ», «Հայաստան երկիր», «Հայոց աշխարհ», «Հայոց երկիր», «Կողմն Հայոց», «Հայաստանեայց աշխարհ», «Հայաստանեայց երկիր» և այլ կապակցություններով: Եղիշեն, Խորենացին, Փարպեցին, Սերեոսը անհամեմատ շատ են գործածում «Հայոց աշխարհ» կապակցությունը: Ագաթանգեղոսը և Կորյունը՝ «Հայաստան աշխարհ», իսկ Բուզանդը՝ «Հայոց երկիր»: Սերեոսի երկում «Հայոց աշխարհը» հանդիպում է 25 անգամ, իսկ Հայք-ը՝ 24: Մեր ուսումնասիրած հեղինակներից և ոչ մեկը Հայք-ը իբրև տեղանուն այնքան չի գործածել, որքան Սերեոսը:

Սերեոսի Պատմության մեջ նկատելի է նաև «Հայաստանեայց աշխարհ», «Հայաստանեայց երկիր» կապակցությունների համեմատաբար հաճախակի գործածությունը՝ «Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին Հայաստանեայց» (էջ 6): «Խնդութեամբ ընկալան զնա ամենայն աշխարհն Հայաստանեայց» (էջ 98): «Այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ Եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին» (էջ 120—121):

Այս կապակցությունները չկան Եղիշեի, Եզնիկի, Կորյունի, Ագա-

Թանգեղոսի, Բուզանդի լեզվում, իսկ Փարպեցու երկում կա միայն «Հայաստաննայց աշխարհ» (էջ 6, 131):

«Հայաստան երկիր» կապակցությունը պատմիչը գործածել է 14 անգամ, մինչդեռ Ագաթանգեղոսի, Կորյունի լեզվում հանդիպում է 2-ական անգամ, Բուզանդի լեզվում՝ 3 անգամ, իսկ համեմատվող մյուս հեղինակները չունեն:

Հայաստան տեղանվան անկախ կիրառության մի վկայություն կա Սեբեոսի լեզվում, որին չենք հանդիպում մեր կողմից նախաժեռեցի մի հեղինակի լեզվում. օրինակ՝ «Եւ ընդ կողմանս Հայաստանի արձակէր զԱշտատ զՅեզտայար» (էջ 77):

Կողմն բառը սովորաբար կապակցվում է Հայք բառի Հայոց բառակի հետ: Կիրառության այսպիսի օրինակներ հանդիպում են Ագաթանգեղոսի, Սեբեոսի և Կորյունի լեզվում:

9. Մարդկանց անվանակոչում: Հայտնի է, որ դասական գրաբարում «այսինչ մարդու անունն այս է» դատողությունն արտահայտվում է գանազան կառուցվածքներով, որոնք կարող են դիտվել իբրև համառոտ արտահայտություններ: Այսպիսի երևույթ հանդիպում է նաև Սեբեոսի լեզվում. օրինակ՝ «Եւ էր որդի մի կայսերն Մարկայ, անուն նորա Թէոդոս» (էջ 72): «Նստուցին իւրեանց թագաւոր զայր ոմն անուն Փոկաս կոչեցեալ» (էջ 72): «Եւ էր անուն նորա Հայկ» (էջ 4):

Ուշագրավ է, որ այդպիսի արտահայտություններում հանդիպող որ հարաբերական դերանունը, ինչպես և դասական մատենագիրների լեզվում, Սեբեոսի երկում միշտ գրվում է տրական հոլովով¹¹: Պատմիչի լեզվում, սակայն, իբրև բացառություն, կա մի վկայություն, որ որ հարաբերական դերանունը գրված է սեռական հոլովով՝ «Զորդի նորա, որոյ անունն էր Վարագտիրոց... կարդէր ի մատուռակուսեան» (էջ 64):

10. Որոշ հարադրությունների կիրառման նախասիրության դեպքեր: Մի շարք հարադրությունների ընտրման և գործածության մեջ ևս երեւում է պատմիչի անհատականությունը: Այսպես, Աստվածաշնչում գրեթե միշտ գործածվում է պատերազմ տամ հարադրությունը, իսկ պատերազմ առնեմ-ը՝ բավական հազվադեպ: Նշված հարադրությունների կիրառման առումով Սեբեոսի լեզվում նկատելի է ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությունը: Նա երկու անգամ ավելի շատ է գոր-

¹¹ Այլ կառուցվածքներում որ հարաբերական դերանունը հանդիպում է և՛ սեռականով, և՛ տրականով. օրինակ՝ «Որոյ անունն կոչէր Անանիաս» (Կորյուն, էջ 60): «Որում անուն Թէոդոս կոչէին» (Կորյուն, էջ 64):

ծածում պատերազմ առնեմ-ը (ընդամենը 6 անգամ, իսկ պատերազմ տամ-ը՝ 3). օրինակ «Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր զնոսա սրով սուսերի» (էջ 78): «Թագաւորէ Մաքսիմիանոս՝ ամս ժը, և տալ պատերազմ ընդ Շապհոյ» (էջ 16):

Արկանեմ բայի հետ Սերեոսը նախընտրում է գործածել անձն բառը՝ զանձամբ արկանեմ ձևով՝ «Եւ ոչ որ արկանէր ի նոցանէն զէն զանձամբ իւրով (էջ 75): Սրան հակառակ, Աստվածաշնչում արկանեմ-ի մոտ դրվում է իւր դերանունը. օրինակ՝ «Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկուց» (Մարկ., ԺԴ, 51):

Սերեոսի ոճին բնորոշ է «ճանապարհ ընկնել», «ճանապարհվել» հատկացութիւններ. նաեւ պարհ ունիմ հարադրութեամբ արտահայտելը, որը նույնպէս վկայում է պատմիչի լեզվի վրա ժողովրդականացեալ լեզվի ունեցած ազդեցութեան մասին: Նշված կապակցութիւնը չի հանդիպում դասական շրջանի շատ մատենագիրների լեզվում¹². օրինակ՝ «Եւ կալեալ նաեւ պարհ գնաց ի Մեղիտինէ» (էջ 27): «Ճանապարհ կալեալ յԱտրպատական՝ լաստեցին զերկիրն ամենայն» (էջ 35):

Խորհիմ բայը և զմտաւ ածեմ, ի միտ արկանեմ հարադրավոր բայերը համանշնչներ են¹³: Սերեոսի լեզվում առավել տարածված է խորհիմ-ը, որով նա նմանվում է Եղիշիին, Ագաթանգեղոսին, Փարպեցուն և Խորենացուն¹⁴:

Նշված հարադրավոր բայերից Սերեոսն ամենից շատ գործածել է ի միտ արկանեմ-ը: Այս հարադրութիւնը չկա Խորենացու, Եղիշիի ու Ագաթանգեղոսի լեզվում, իսկ մյուսների լեզվում հանդիպում է մեկ կամ երկու անգամ: Մյուս հեղինակները (բացառութեամբ Բուզանդի) համեմատաբար ավելի հաճախ գործածում են զմտաւ ածեմ-ը: Նրանց մեջ առանձնանում է հատկապէս Խորենացին, որի լեզվում տվյալ հարադրավոր բայը հանդիպում է շուրջ 40 անգամ:

Իհարկե, կան նաև այնպիսի հարադրավոր բայեր, որոնք այլ հեղինակների լեզվում ավելի հաճախ են գործածվել, քան Սերեոսի երկում:

12 ՆՃԲ-ն (հ. 2, էջ 169) նաեւ պարհ բառի հոգվածում նաեւ պարհ ունիմ-ով ոչ մի օրինակ չի բերում: Բայց որպէս կապակցութիւն նշում է ունել զնաեւ պարհ և հղում ունիմ բայը: Սակայն այստեղ չենք գտնում ունել զնաեւ պարհ-ը: Այս հարադրութիւնը չկա նաև Աստվածաշնչում:

13 Ի միտ արկանեմ-ն ունի նաև «մտարերել» իմաստը:

14 Դասական հեղինակներից միայն Եղիշիի լեզվում խորհիմ-ը հանդիպում է 1 անգամ, իսկ զմտաւ ածեմ-ը՝ 6:

Սեբեոսի կողմից մի շարք բառերի հատկապես այսպիսի կիրառությունների զննումը մի անգամ ևս հաստատում է այն, որ բառը, որքան էլ բանաստեղծական լինի ու հնչել, առաջին հերթին պետք է կիրառվի, չմնա զուտ իբրև բառարանային միավոր՝ արձանագրված լոկ բառարանում։ Վերջին հաշվով, բառի կյանքը պայմանավորված է կիրառությամբ։ Խիստ կայունոր հանգամանք է և այն, թե ո՞վ է գործածում բառը, որտե՞ղ և ինչպե՞ս։ Հենց վերջինս էլ իր հերթին օգնում է՝ որոշակիորեն ուղղագծելու ստեղծագործողի, հեղինակի ոճը։ Այստեղից էլ ահա, պատահական չէ, որ բաղմամբով բառերի սեբեոսյան կիրառություններով առավել հստակ են երևում դասական գրաբարի հեղինակների համեմատությամբ այս պատմիչի լեզվաոճական առանձնահատկությունները։ Ասվածը հաստատելու համար դիմենք ևս մի քանի փաստերի։ Այսպես, Սեբեոսի երկում կան բառեր, որոնք մեծ մասամբ կապակցվում են նույն բառի հետ։ Այդ բառերը, անշուշտ, կան նաև V դարի այլ աղբյուրների լեզվում. օրինակ՝ բարոմ բառը հեղինակի լեզվում հանդիպում է միայն ծերութիւն բառի հետ՝ «Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրց ննջեաց ի բարոմ ծերութեան իւրում» (էջ 29)։ «Յայնժամ կատարեալ երանելոյն նրակի զկեանս իւր բարոմ ծերութեամբ» (էջ 109)։

Աստվածաշնչում բարոմ բառը միշտ գործածվում է բարոմ առնեմ կապակցությամբ. օրինակ՝ «Յամենայնի կարօղ եմ աշնու որ զօրացոյցն դիս. բայց բարոմ արարէի դի կցորդ եղբուր ինձ փ նեղութեանս» (Փիլիպ., Դ, 14)։

Կան բառեր, որոնք մեծ մասամբ գործածվում են որոշ բառերի հետ։ Այսպիսիները համեմատաբար շատ են և վկայում են բառերի ընտրման և նրանց օգտագործման հարցում Սեբեոսի լեզվի յուրահատկության մասին։ Այսպես, անշարժ բառը գործածվել է 4 անգամ, որից մեկը միայն՝ կամ բայի հետ, իսկ մյուսները՝ մնամ-ով. օրինակ՝ «Զտեղի վալան և՛ անշարժ մնացին» (էջ 55)։ «Անշարժ մնալ մինչև յաւիտեան» (էջ 126)։ «Յոր հիմնացեալ անշարժ կամ մինչև ցայժմ» (էջ 131)։

Դասական գրաբարում անշարժ բառը մեծ մասամբ հանդիպում է կամ, եմ բայերի հետ. օրինակ՝ «կան անշարժ» (Նզնիկ, էջ 188), «անշարժ են» (Ագաթանգեղոս, էջ 39)։ Սեբեոսը նախընտրում է գործածել «անշարժ մնամ»-ը, իսկ Աստվածաշնչում միայն մի սկիզբություն կա՝ «անշարժ մնայր» (Գործք, Իէ, 41)։

Պատմիչը բազմութիւն բառը գործածել է 61 անգամ, որից 22-ը՝

զաւրբ բառի հետ. օրինակ՝ «Ընկղմեցան բազմութիւն զաւրացն ի խորս ծովուն» (էջ 149): «Եւ ելեալ ընդ պահակն Ճորայ զաւրաւ բազմութեան՝ գնացին յազնականութիւն թագաւորին Յունաց» (էջ 69): «Հարին և կործանեցին զբազմութիւն զաւրացն Պաշտից» (էջ 26):

Սեբեոսը բազմութիւն բառը մեծ մասամբ գործածում է հոգնակի գոյականների հետ, իսկ դասական աղբյուրների լեզվում այն կապակցվում է ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի գոյականների հետ:

Դոհութիւն բառը հանդիպում է 3 անգամ, որից 2-ը՝ մեծապէս մակբայի հետ՝ «Յայնժամ առաքէ առ նա թագաւորն հրովարտակ մեծապէս գոհութեամբ» (էջ 64): «Գրէր առ նա հրովարտակ մեծապէս գոհութեամբ» (էջ 68):

Սեբեոսի լեզվում խնդութիւն բառը հանդիպում է՝

ա) Ընդունիմ բառի հետ. օրինակ՝ «Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսա» (էջ 58): «Իսկ նորա տեսեալ խնդութեամբ ընկալաւ զնա» (էջ 69):

բ) Սէր բառի գործիական հոլովի հետ. օրինակ՝ «Որք եկեսցեն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ» (էջ 77): «Իսկ նա սիրով ընկալաւ զնա» (էջ 71):

գ) Ուրախ լինիմ հարադրության հետ: Դասական գրաբարում խնդութիւն, ուրախութիւն բառերից անհամեմատ շատ գործածվողը ուրախութիւնն է: Ազաթանդեղոսի լեզվում այս բառը հանդիպում է շուրջ 80 անգամ, մինչդեռ խնդութիւն-ը՝ 10: Աստվածաշնչում ուրախութիւն բառի հարյուրավոր վկայությունների դիմաց խնդութիւն-ը հանդիպում է ընդամենը 45 անգամ:

Սեբեոսի լեզվում խնդութիւն բառն ավելի է վենսունակություն ստանում: Այն հանդիպում է 10 անգամ, իսկ ուրախութիւն-ը՝ 6: Ուշագրավ է այն, որ խնդութիւն բառը ավելի հաճախ գործածվում է ուրախ լինիմ հարադրության հետ: Այդպիսի վիրաբույժյան շենք հանդիպում V դարի մի շարք հեղինակների և Աստվածաշնչի լեզվում՝ «Իսկ զաւրն թէպէտ և ընդ բանսն խռովեցան, սակայն խնդութեամբ ուրախ եղեն ի վերայ գալստեան նորա» (էջ 92): Այստեղ խնդութեամբ-ը առավել ակնբախ է դարձնում ուրախ լինելու հոգեվիճակը:

Աստվածաշնչում խնդութիւն և ուրախութիւն բառերը շատ հաճախ գործածվել են կողք կողքի:

Հնազանդիմ բայը Սեբեոսի երկում գործածվել է 24 անգամ, որից 19-ը՝ ծառայութիւն բառի հետ. օրինակ՝ «Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայու-

քիւն Իսմայելի» (էջ 152): «Եւ թագաւորեաց Արշակ Մեծ... որո՞ւմ ամենայն ազգք արեւելից և հիւսիսոյ հնազանդեցան ի ծառայութիւն» (էջ 8):

V դարի մի շարք դասական հեղինակների լեզվում հնազանդիմ-ի հետ «ի ծառայութիւն»-ի կիրառութեան այսպիսի ճոխութիւն չենք գրտնում: Եզնիկը և Կորյունը ընդհանրապես այդպիսի կապակցութիւն չունեն, իսկ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն»-ում հնազանդիմ բառի 15 կիրառութիւններից միայն մեկի մոտ է դրվել «ի ծառայութիւն» օրինակ՝ «Ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն» (Ագաթանգեղոս, էջ 26):

Նախ մակբայն, ասես, առաջին հերթին ենթադրել է տալիս ապա-ի զուգադրում: Սեբեոսի լեզվում, սակայն, նախ-ին երբեմն է միայն զուգադրվում ապա-ն. օրինակ՝ «Կնքեաց նախ իւրով մատանեան, և ապա մեր» (էջ 145): Պատմիչի լեզվում ուշադրութեան է արժանի այս մակբայի հետ առաջին բառի կիրառվելը, որը բավական հաճախ է հանդիպում՝ «Բայց ես նախ առաջին դվէսս յահեղն արքայ և յարի այրն սկսայց ասել» (էջ 2): «Երթայց նախ առաջին զնա վանեցից» (էջ 26):

V դարի մատենագրութեան մեջ այսպիսի կապակցութիւն շատ սակավ է հանդիպում:

Ե՛վ դասական գրաբարում, և՛ Սեբեոսի Պատմութեան մեջ յետ նախադրութեան հետ ցուցական դերանուններից մեծ մասամբ գործածվում են այս, այդ, այն-ը: Նկատենք, սակայն, եթե V դարի մատենագրութեան լեզվում յետ նախադրութեան հետ հազվադեպ է հանդիպում նա դերանվան գործածութիւնը, ապա Սեբեոսի երկում այն գործածվել է զգալի հաճախականությամբ (շուրջ 10 անգամ). օրինակ՝ «Յետ նորա թագաւորէ նորին որդի Արշակ» (էջ 11). «Յետ նորա (թագաւորէ—Գ. Բ.) որդի նորա Արտաշիր՝ ամս ԼԱ» (էջ 11):

Սա, դա դերանուններն այսպիսի կիրառությամբ չեն հանդիպում:

Ուշագրավ է և այն, որ փախստական առնեմ հարադրամոր բայն ամենից շատ հանդիպում է հալածական տանիմ հարադրութեան հետ. օրինակ՝ «Զմնացեալսն փախստական արաբեալ հալածական տանէին» (էջ 25): «Հարին զզարն Պարսից, և փախստական արաբեալ հալածական տանէին» (էջ 63):

Սեբեոսի լեզվում կան բառեր, որոնք մեծ մասամբ կիրառվում են որեւէ որոշիչով: Օրինակ, կոտորած բառը հանդիպում է այնպիսի որոշիչներով, ինչպիսիք են՝ «Լինի անդ կոտորած մեծ» (էջ 16): «Սաստիկ կոտորած լինէր» (էջ 25): «Զարարչաւ լինէր կոտորածն» (էջ 52): «Ան-

հնարին չիներ կոտորածն» (էջ 76): «Անհուն կոտորածով զմիմեանս սատակէին» (էջ 156):

Այլ հեղինակների լեզվում այսպիսի լինողոված միտում չի նկատվում: Այսպես, Աստվածաշնչում, ըստ համաբարբառի, կոտորած բառը հանդիպում է ընդամենը 3 անգամ, որից մեկը միայն որոշիչով՝ «Այլ հզրեանց իբրեւ երկայնագոյն լինէր նոցա մարտ պատերազմի, եւ բազում կոտորածք ի միջի լինէին» (Բ Մակ., ԺԲ, 36):

Գրաբարում շուրջ բառը շատ գործածական չէ: Եզնիկը շունի, Փարպեցին, Կորյունը և Եղիշեն գործածել են մեկական անգամ, Խորենացին՝ 2, Ագաթանգեղոսը՝ 4: Սեբեոսի լեզվում այն հանդես է եկել 5 անգամ և միշտ որևէ որոշիչ դեր կատարող բառի հետ կամ շուրջ և պատիւ բառերը, իբրեւ համանիշներ, կիրառվել են կողք կողքի. օրինակ՝ «Ո՛չ մեծարէր զնա աստուածաւրէն շքով» (էջ 4): «Իսկ զԱստատն Խոռխոռոմի փոթանակի հանդերձ զարուն իւրոյ կոչէ թագաւորն ի պալատն, և մեծարէ շքով և պատուով» (էջ 51): «Երթեալ մեծաւ շքով և փառաւ յանդիման եղև թագաւորին» (էջ 69): «Առեալ զպարզեն՝ դարձաւ մեծաւ շքով ի տուն իւր» (էջ 102):

Սեբեոսի ոճին հատուկ է «հրդհհ», «այրել», «վառել» իմաստներն արտահայտելու համար բորբոքեմ, այրեմ, հրդեհեմ, բոցացուցանեմ, վառեմ, հուր բառերը միմյանց հետ գործածելը. օրինակ՝ «Պատեցին զբաղաքն երեք կուսէ, և բորբոքեցին զնա հուր և այրեցին զգարացն բազմութիւնս» (էջ 94): «Վառեցին հրով, բորբոքեցին հիմունք լերանց նորա» (էջ 154): «Հրդեհեցին զբաղաքն հուր» (էջ 80): «Հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն» (էջ 32): «Բորբոքեաց հրդեհեալ զծով և զցամաք» (էջ 114): «Եւ ըմբռնեալ զնա քարշեցին զտանէ ի մէջ քաղաքին, և այրեցին հրով» (էջ 115):

Կան նաև դեպքեր, երբ խոսակցական ոճով այրեմ բառի հետ գործածվում է հուր հարկանեմ հարադրավոր բայը «վառել, այրել, հրդեհել» իմաստով՝ «Ձեկեղեցի սրբոյն Գրիգորի... հարին հուր և այրեցին» (էջ 27):

«Ավար առնել», «թալանել» իմաստը արտահայտելու համար Սեբեոսն առնում, հարկանեմ, ժողովեմ, խաղացուցանեմ, վառեմ բայերի հետ գործածում է աւար գոյականը կամ առ և աւար կապակցութիւնը: Վերջիններիս հետ երբեմն հանդես են գալիս նաև կապում, գերի, գերութիւն «գերի» իմաստով (վերացականը թանձրացականի փոխարեն) գոյականները:

Առնում բայի հետ դրվել է՝ աւար, աւար և գերութիւն, աւար և կա-

պուտ, առ և աւար, առ և աւար և կապուտ, առ և գերի և աւար՝ «Կամեցաւ առնուլ աւար զգաւրացն բազմութեան» (էջ 142): «Առին զաւար և զգերութիւն» (էջ 118): «Առեալ զաւար և զկապուտ և դարձան անդրէն» (էջ 111): «Եւ առեալ զառ և զաւար զբանակին Պարսից՝ դարձան ի բանակեսողն իւրեանց» (էջ 74): «Առեալ զառ և զաւար և զկապուտ՝ զնացին ի բերդն իւրեանց» (էջ 75): «Առեալ զամենայն առ և գերի և զաւար՝ դարձան յերկիրն իւրեանց» (էջ 35):

Ժողովեմ բայի հետ կապակցվել է միայն «աւար և գերութիւն».
օրինակ՝ «Հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ» (էջ 110):

Խաղացուցանեմ բայի հետ կապակցվել է միայն «առ և աւար և գերութիւն»՝ «Խաղացուցին առ և աւար և գերութիւն բազում յոյժ» (էջ 146):

Վարեմ բայի հետ կապակցվել է լոկ աւար՝ «Դորա զամենայն գանձս թագաւորութեան աւար վարեցին» (էջ 42):

Բերվածներից ամենից հաճախ հանդիպում են առնում և հարկանեմ (աւար հարկանեմ) բայերը:

Եղնիկը, Ագաթանգեղոսը, Բուզանդը նույնպէս հաճախ առնում բայը գործածում են առնում աւար կապակցութեամբ: Սեբեոսի առանձնահատկութիւնն այն է, որ «աւար առնում» և «աւարի հարկանեմ» հարադրութիւններն անհամեմատ շատ է գործածել, քան դասական գրաբարի մյուս հեղինակները: Եթե նշված դասականները սիրում են գործածել «աւար առնում»-ը և շատ հազվադեպ՝ «աւար հարկանեմ»-ը, ապա Սեբեոսը նախընտրում է «աւար առնում»-ի հետ գործածել կապուտ, գերի, գերութիւն, երբեմն էլ՝ առ և աւար և թվարկված բառերից որեւէ մեկը, ինչպէս նաև՝ ժողովեմ, խաղացուցանեմ, վարեմ և այլն: Այսպիսի բան չկա դասական գրաբարի վերը նշված հեղինակների լեզվում:

ԺՈՂՈՎՐԴԱՆՈՍԱԿՅԱԿԱՆ ԼԵԶՎԻՆ ԲՆՈՐՈՇ ԲԱՌԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեբեոսի լեզվում գոյութիւն ունեն հիմնականում ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ որոշ բառեր ու արտահայտութիւններ. օրինակ՝

Առաջի՝ «Եւ անդէն վարդեաց ի վարգն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ» (էջ 116):

Արև: Ժողովրդախոսակցական լեզվի տիպիկ օրինակ է արև բառը

«կյանք» իմաստով գործածելը. օրինակ՝ «Գնացին ընդդէմ նորա և պատահեալ ի սահմանս Ատրպատական աշխարհին՝ հանին զգանձն, և համարակարին զարևն պարգև շնորհեցին» (էջ 50): Այս նախադասութեան մեջ «զարևն պարգև շնորհեցին» նշանակում է «կյանքը բաշխեցին նրան», «խնայեցին նրա կյանքը»: Այսպիսի արտահայտութիւնն այսօր էլ կարելի է գտնել խոսակցական լեզվում և բարբառներում: Հ. Թումանյանն ունի՝ «Սասունցի Դավթին արև խնդրեցեք» (Հ. Թումանյան, Երկեր, հ. 2, էջ 112):

Գեղ՝ «Արար... կռիւ մի ի Վանանդ: ի յՈւթմաս զեղ» (էջ 30):

Խախում՝ «Վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթուղիէին. նորոգեաց և զխախում որմոցն» (էջ 89):

Խակ՝ «Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն այն. քանզի մարտակ տղայ էր և խակ» (էջ 43):

Կտրեմ՝ «Եւ կալեալ զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա և ապա սպանեալէ զնա հանդերձ երկու որդւովք նորա» (էջ 113):

Մովս՝ «Արկին մովս շուրջանակի, մերժեցին ծխովն և նետածգութեամբն զպահապանս պարսպին» (էջ 110):

Ագաթանգեղոսը, Կորյունը, Եզնիկը, Եղիշեն ու Խորենացին գործածում են միայն ծովս բառը, իսկ Փարպեցին միայն մեկ անգամ՝ մովս (էջ 129):

Շատ: Հանդիպում է Ագաթանգեղոսի, Եզնիկի, Կորյունի և ուրիշների լեզվում: Ամենից հաճախ գործածված ենք գտնում Փարպեցու (29 անգամ), ապա՝ Խորենացու լեզվում (16 անգամ):

Սեբեոսի Պատմութեան մեջ շատ բառը հանդիպում է մի քանի անգամ՝ «Այնչափ ձեզ շատ լիցի» (էջ 39): «Շատ լիցի քեզ ունել զերկիրդ մեր» (էջ 107): «Շատ և ոչ է իրաւացի առնել ի տեղոջս յայսմիկ այդպիսի ինչ» (էջ 115):

Վստան եմ / լինիմ՝ «Եւ առնու ընդ իւր արս երկու հազարս ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց, զորս գիտէր արժանիս պատուոյ, և վստան էր հեծելութեամբ» (էջ 43—44):

Վստան բառը մեկտեղան անգամ հանդիպում է նաև Եզնիկի և Փարպեցու լեզվում, իսկ Ագաթանգեղոսը, Բուզանդը, Խորենացին ու Եղիշեն այս բառը չեն գործածել:

«Ականջը գցել», «ականջին հասցնել» դարձվածքները «լուր տալ», «լուր հասցնել մեկին» իմաստներով խիստ գործածական են արդի հայերենում. օրինակ՝ «Նրա ականջին հասցրին, որ իր աները՝ Գեղեցուն է օժանդակել Աստմին» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք, էջ 202): Դարձ-

վածաբանական այս արտահայտությունը դառնում ենք նաև Սերեբուի լեզվում՝ «Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ոնէր զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին» (էջ 56):

Պատմիչի երկում հանդիպում ենք նաև մի այլ դարձվածքի՝ «սիրտը կասկած ընկնել», որ կա արդի գրական հայերենում. օրինակ՝ «Անկաւ կասկած ի սիրտս նորա, սկսաւ պատրաստել և կազմել զինքն յարձակումն» (էջ 44):

ԻՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական գրաբարում արտահայտված որոշ իմաստներ Սերեբուր ներկայացնում է արտահայտության այլ սլաններով: Մասնավորապես՝ «թագավորեցնել», «թագավոր դարձնել» իմաստը դասական գրաբարում ամենից հաճախ արտահայտվում է քաղաութեացանեմ բայով: V դարի մեր կողմից նշված աղբյուրներից միայն Եղնիկի լեզվում է, որ քաղաութեացանեմ-ի գործածության 4 օրինակ կա՝ «Որ ոք ի նոցանէ վաղ հասցէ՝ զնա քաղաութեաց արարից» (Եղնիկ, էջ 114):

Սերեբուի լեզուն այս կապակցությամբ սուանձանում է նրանով, որ նա հաճախ ժողովրդական ոճով գործածում է նաև քաղաութեացանեմ-ը (10 անգամ), որ չի հանդիպում նախորդ և ոչ մի հեղինակի լեզվում՝ «Ես զԹէոդոս զորդին Մաւրկայ նստուցի քաղաութեաց» (էջ 80): «Եւ նստուցանէ քաղաութեաց զԿոստաս զորդի Կոստանդինի» (էջ 113):

«Տեղեկութիւն ստացվել» իմաստը սովորաբար արտահայտվում է լուր լինիմ-ով. օրինակ՝ «Եւ իբրև միջամուխ եղև ի սահմանս Ատրպատական գաւառի՝ ապա ուրեմն լուր եղև Ռոճ Վեհանայ» (էջ 95): Սերեբուր գործածում է նաև լուր հասանել արտահայտությունը, որ չի հանդիպում դասական գրաբարի բազմաթիվ հեղինակների լեզվում. օրինակ՝ «Լուր եհաս ի լսելիս արքային բանն, հրամանս ետ կապիլ զնա ոտիւք և ձեռաւք» (էջ 71):

Լուր(ը) հասնել կապակցությունը գործածական է նաև Ժամանակակից գրական հայերենում. օրինակ՝ «Մեզ վաղուց լուրեր էին հասնում, թե ահագին բազմություն քուրդերի, Շեյխ-Ջալալեդդինի և Շեյխ Իբրահիմ-հի գլխավորությամբ, դիմում են դեպի Բայազեդ» (Բաֆֆի, Ջալալեդդին, էջ 93):

«Խոնարհվել», «երկրպագել» իմաստը դասական և ետդասական շրջանի հայերենում արտահայտվում է գլխավորապես խոնարհիմ կամ

երկիր պագանեմ բայով: Պատմիչի լեզվում աչքի է ընկնում նշված իմաստը բավական հաճախ նկարագրական եղանակով արտահայտվելը՝ «նորա համբուրեալ զձեռն նորա՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց» (էջ 60): «Անկաւ ի վերայ երեսաց իւրոց և աւէ» (էջ 148): Հետաքրքիր է նաև հետևյալ վկայությունը՝ «Իջեալ յերկրիւն երկիր պագանէր ի վերայ երեսաց իւրոց եւրն անգամ» (էջ 62): Այստեղ «եւթն անգամ», «ի վերայ երեսաց իւրոց» արտահայտությունները ժողովրդախոսակցական լեզվի երանգ, համ ու հոտ են հաղորդում շարադրանքին, իսկ «երկիր պագանեմ»-ի մոտ սովորաբար «ի վերայ երեսաց իւրոց» չի գրվում:

«Այսինչ մարդը կամ թագավորը թագավորեց սյսքան տարի» իմաստը սովորաբար արտահայտվում է այսպես՝ «Ապա թագաւորէ Պարսից Վռամ ամս ժԱ» (էջ 19): Սեբեոսը նույն միտքը արտահայտում է նաև հետևյալ կերպ՝ «Յայնժամ կատարեալ երանելոյն Երակլի զկեանս իւր բարութ: Ժերութեամբ. և էին ատուք իւրոյ թագաւորութեանն ամբ և» (էջ 109):

ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Բայական ժամանակների ոճական կիրառությունն ասելով մենք նկատի ունենք այն երևույթը, երբ բայական որևէ ժամանակաձև գործածվում է մի ուրիշ ժամանակի իմաստով, որի համար թեև լեզվում կա արտահայտության համապատասխան եղանակ: Բայական ժամանակների այսպիսի կիրառությունը գալիս է շատ հնուց¹⁵:

Սեբեոսի լեզվում այդպիսի կիրառությամբ հանդես են գալիս առաջին հերթին սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակի բայերը:

Ա. Ներկա ժամանակն արտահայտում է խոսքի պահին կատարվող գործողություն, իսկ երկրորդական կիրառությամբ այն արտահայտում է հետևյալ իմաստները՝

ա) Անցյալ կատարյալի իմաստ¹⁶. օրինակ՝ «Արայն ոչ զպատարազն

¹⁵ Բայական ժամանակների երկրորդական կիրառությունների երևույթը նկատվել և նկարագրվել է տարբեր ժամանակների հետազոտողների կողմից: Այս ուղղությամբ կատարված վերջին աշխատանքներից հետաքրքիր է Լ. Շ. Հովհաննիսյանի թեկնածուական դիսերտացիան՝ «Դասական գրարարի բայական ժամանակների կիրառությունը», Երևան, 1972:

¹⁶ Այս իմաստն արտահայտվել է ներկա, անցյալ անկատար ժամանակների բայաձևերով, անցյալ դերբայով: Սրանով հանդերձ, Սեբեոսի լեզվում անցյալ կատարյալի ժամանակաձևն ավելի շատ է գործածվել, քան մյուս ժամանակներինը միասին վերցրած:

նորա ընկալաւ և ոչ յանձն առնու երթալ ի նինուէ առ Շամիրամ» (էջ 6):

Ուշադրություն դարձնենք հետևյալ նախադասութեանը՝ «Կաղմոս փախստական գնաց ի Հայք առ հայր իւր ազդ առնել նմա և ասէ. «Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն հաստ մինչ ի տուն անդր. և ես կնաւ իմով և որդւովք ահաւասիկ գամ փախստական» (էջ 4): Այստեղ, փաստորեն, Կաղմոսը եկել է հոր մօտ և պատմում է տեսածը կամ լսածը, բայց գործածւած է ներկայի ժամանակաձև:

բ) Ըղծական եղանակի ապառնու իմաստ՝ «Բայց պատրա՛ստ լիջիք, զի այր քաջ է նա, և մի՛ թէ կամ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ: Եւ թէ ինքն վասկ մեռանի՝ ես պատասխանի տաց կայսեր վասն նորա» (էջ 43):

գ) Պայմանական կամ հարկադրական եղանակի ապառնու իմաստ՝ «Եւ կամ առիցէ, եթէ ես նստուցից ձեզ թագաւոր. արասցէ զո՛վ և կամեսցի, և մեք ընդունիմք» (էջ 90): «Պատերազմ լինի զկնի երից ամսոց, և անկանին բազումք ի պատերազմին» (էջ 63):

դ) Հարատև գործողութիւն, որը կարելի է դիտել որպէս վիճակ՝ «Եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հային հանդէպ մեծի դաշտին Արաքի» (էջ 7):

Բ) Անցյալ անկատար ժամանակը ցույց է տալիս ներկայի համեմատութեամբ անցյալի որևէ կետից սկսւած, դեռ անավարտ գործողութիւն: Այս ժամանակի գլխավոր հատկանիշը անավարտութիւնն է՝ երկրորդական կիրառութեամբ այն արտահայտել է՝

ա) Անցյալ կատարյալի իմաստ (սա երկրորդական կիրառութեան հիմնական դրսևորումն է)՝ «Նորա իսկ և իսկ հասեալ ի Դուին քաղաք, կեցեալ սակաւ ինչ աւուրս՝ մեռանէր» (էջ 60):

բ) Ըղծական անցյալ ապառնու իմաստ՝ «Թէ Աստուած արժանի առնէր՝ ընդ ձեզ համարէի թէ ընդ Քրիստոսի ի տեղանոյ և ի նորին ձեռացն վայելեցայց» (էջ 145):

գ) Անցյալ վաղակատարի իմաստ՝ «Եւ էր լեալ Փիլիպիկոսս այս փեսայ կայսերն Մարկայ, և բազում ժամանակաւ արարեալ զարավարութիւն՝ գործէր զմարտից յաղթութիւն (այսինքն՝ արել էր, կատարել էր — Գ. Բ.)» (էջ 81):

դ) Ապագայում կատարվելիք գործողութիւն՝ «Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարեմուտս զարու մեծաւ... որում ոչ ոք կարէր զդէմ ունել պատերազմաւ» (էջ 9): Այսինքն՝ «...որին ոչ ոք չէր կարող (կամ չէր կարողանա) դիմադրել պատերազմով»:

ե) Մի կատարելի գործողութիւն, որը տեղի չի ունեցել՝ «Մինչ

կամէին զնոսա սրով սատակել՝ եկն այրն և եկաց յանդիման» (էջ 112), իսկ սա արդյունք է ժամանակի պարագա երկրորդական նախադասութեան մեջ մինչ կամ մինչև բառերի գոյութեան, գլխավոր և երկրորդական նախադասութեանների իմաստային փոխհարաբերութեան:

զ) Սիաժամանակյա կատարվող գործողություն (ավելի ճիշտ կլինի նաև ասել՝ անցյալ անկատարի ցույց տված տեղիքում ու շարունակվող գործողության մեջ կատարված ու վերջացած մի այլ գործողություն)՝ «Եւ կատարեաց որպէս խաւեցան առ աջն ժամանական, մինչ սիրէն զհարայել» (էջ 106):

Գ. Պարզ ապառներ և բաղադրյալ ժամանակներ Սեբեոսի լեզվում երկրորդական կիրառություններով գրեթե չեն գործածվում: Կա մի նախադասություն, ուր ապառներ գործածված է ստորադասական անցյալի փոխարեն՝ «Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն այն. քանզի մանուկ տղայ էր և խակ» (էջ 43):

Երկրորդ ապառնու երկրորդական կիրառության համար բերենք հետևյալ նախադասությունը՝ «Այլ ես ո՛չ երկեայց ի ժողովեաց երիցանցդ Հռովմայեցւոյդ, որ եկալ են ի վերայ իմ» (էջ 38): Ընդգծված բառն ավելի ճիշտ կլինի թարգմանել՝ չեմ վախենում:

Ինչ վերաբերում է բաղադրյալ ժամանակներին, ապա ուշագրավ է վաղակատար-հաւակատար անցյալի երկրորդական կիրառությամբ ըզձական ապառնու իմաստ արտահայտվելը՝ «Եւ արդ՝ դիմեալ գայ ի վերայ իմ կորուսանել զայնչափ վատտակս ձեր. զի թէ խոսրով յաղթեալ էր՝ երկոքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ ի միջոց» (էջ 38): Փորձենք թարգմանել՝ «....որովհետև եթե խոսրովը հաղթի, դրանք միաբանելով կվերացնեն ձեզ մեջտեղից»:

Դեռևս դասական գրաբարում յաւելում բայն առանձնանում էր յուրահատուկ կիրառությամբ: Ըստ Վ. Չալխյանի, յաւելում բայն անորոշ դերբայի հետ ցույց է տալիս գործողության կրկնում: Այս ոճը համարվում է երբայական. «Այս երբայական ոճը, — գրում է Վ. Չալխյանը, — սուրբ Գրոց մէջ յաճախ է. որուն տեղ հայերէն ձևով կայ բոլոր՝ կրկնէր լինէր զօրաժողով: Կրկնեցաւ եկն յԱղեքսանդրիա» (ընդգծումը հեղինակինն է — Գ. Բ.)¹⁷:

Սեբեոսի լեզվում նույնպես գործածվել է յաւելում բայը: Ուշագրավ է այն, որ թե՛ Վ. Չալխյանը, թե՛ Վ. Առաքելյանը նշում են, որ

17 Վ. Չալխյան, նշվ. աշխ., էջ 398—399, Վարդ Առաքելյան, Գրաբարի հատաքնություն, Երևան, 1946, էջ 31:

յաւելում բայն այսպիսի գործածութիւն ունի միայն անորոշ դերբայի՝ հետ: Սեբեոսի Պատմութիւնում այն գործածվել է դիմաւոր բայի՝ երկ-
րորդ ապառնու հետ. օրինակ՝ «Ի սոյնս յաւելեալ կարգեցից թիւ. որպէս
զկէս ամին Խոռեմայ ի կէս ամին Կաւատայ յաւել ևս ասացից ամ մի»
(էջ 22):

ԻՐԱՍՏԻ ՍԱՍԿԱՅՈՒՄ

Ոճական այս հնարանքից հաջողությամբ է օգտվել Սեբեոսը: Շատ
հաճախ, հոգեկան վիճակի առավել ճիշտ արտացոլման նպատակով,
աղերս, քախանձանք, պաղատանք, աղաչանք և այլ բառերից առաջ,
որոնց բովանդակութեան մեջ արդեն իսկ կա իմաստի սաստկացում, Սե-
բեոսը գործածում է որևէ որոշիչ՝ «Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ
զնոսա Ճենթարուրի յարքայէն Պարթևաց, «զի բարձցէ ի միջոյ. ապա
թէ ոչ՝ լուծցի յախտ խաղաղութեանն՝ որ փ միջի մերում» (էջ 13): «Մե-
ծաւ աղաչանաւ և արտասուալից պաղատանաւ խնդրեցին ողորմու-
թիւն» (էջ 143):

Այսպես նաև՝ մեծապէս բառից առաջ պատմիչը դնում է «եւս
առաւել» կապակցութիւնը՝ «Մանաւանդ իբրև տեսանէր զփախուստ
նոցա ի կայսերէն՝ ևս առաւել մեծապէս սիրով կամէր կորզել առ ինքն»
(էջ 49):

Իմաստի սաստկացման առումով հետաքրքիր են նաև հետևյալ
նախադասութիւնները՝ «Եւ սպան զնա սատակմամբ շարաշար մա-
հումար» (էջ 152): «Բայց թագաւորութիւն նորա էր ի Տիգրբոն, և ամե-
նեքին միաբան պատուէին զնա միաբանութեամբ» (էջ 100):

Տղայ բառի հետ, որը նշանակում է նաև «տարիքով փոքրահասակ»,
«պարզամիտ», «տհաս», պատմիչը դիպուկ կերպով գործածում է մա-
հուկ, խակ բառերը՝ «Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն
այն. քանզի մահուկ տղայ էր և խակ» (էջ 43):

Խակ բառն այսպիսի գործածութիւն ունի նաև այսօր, ժամանա-
կակից գրական հայերենում. օրինակ՝ «Նազոն... Առաքելին էլ իր հետ
տանում էր այն վայրերը, որ դեռ խակ պատանի, նա գլուղի հանդա-
պահի հետ որս էր արել» (Զ. Քոչար, Սպիտակ գիրքը, էջ 106):

Սեբեոսը հաճախ բայի մոտ դնում է նույն արմատից կաղմված մի
գոյական և ածական՝ «Եղև պատերազմ ի դաշտին Եղևարդայ. հարին
զգարն Պարտից և կործանեցին կործանմամբ մեծաւ» (էջ 74):

Հարկանեմ բայը «ջարդել», «կոտորել» իմաստով գործածելիս

իմաստի սաստկացման նպատակով, հեղինակը մեծ մասամբ ընտրում է նշված բայի հետ գործածում է խորտակեմ, կործանեմ բայերը և մեծ ածականը. օրինակ՝ «Հապճեպ զարութեամբ եհար զնա և խորտակեաց և զնաց ընդ Ծղուկս» (էջ 93): «Հարին զՅոյնն և խորտակեցին կործանմամբ մեծաւ, և փախստական վարեցին առաջի իւրեանց» (էջ 54): Հարին զարն Յունաց և խորտակեցին կործանմամբ մեծաւ» (էջ 78):

Դիտենք հետևյալ նախադասությունը՝ «Ոչ արձակեմ քի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ» (էջ 141): Սերբոսն այստեղ հակադրում է բազում և մի հակադրելով՝ ասվածին յուրօրինակ ուժ հաղորդելով, որը նպաստում է իմաստի սաստկացմանը:

ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվող երկում ավելադրությունը դրսևորվում է հիմնականում երկու կերպ՝ բառական ավելադրություն և բառակապակցական (ավելի հաճախ՝ բառական ավելադրություն): Նախադասության ավելադիր կիրառությունը Սերբոսի լեզվում հազվագեպ է:

Սերբոսի Պատմությունում ավելադրական միավորները հանդես են գալիս՝ ա) որպես իմաստի սաստկացման, ընդգծման և այլ երանգների հաղորդման հնարանք, բ) որպես զուտ իբրև զարդ, լեզվի ռճավորման միջոց, գ) որպես պարզապես անհաջող կիրառություն և հեղինակի ոճի համար ավելորդ բեռ:

Դեռևս դասական գրաբարում առանձնապես հարգի էր գոյականի (անկախ նրա հոլովից) համանիշը սեռական հոլովով նույն գոյականի մոտ դնելը: Այս ոճն առկա է նաև VII դարում: Օրինակ, Սերբոսը լուր բառի հետ դնում է համբալ բառը, սուր-ի հետ՝ սուսեր-ը և այլն. օրինակ՝ «Իբրև լուան զլուր համբալոյ նորա՝ ժողովեցան և զնացին» (էջ 66): «Իբրև լուաւ արքայն խորով զլուր համբալոյն այնորիկ՝ ժողովեալ գումարեաց զամենայն բազմութիւն զարաց իւրոց» (էջ 73):

Այսպիսի ավելադրությունն այնքան է հարազատ դասական գրաբարին, որ սուանց ոճական այս հնարանքի դժվար է պատկերացնել V դարի գրաբարը, և այն կարող է համարվել ոսկեդարյան հայերենի տարբերակիչ հատկանիշներից մեկը: Սերբոսն այս երևույթն անաղարտությամբ ու կիրառական զգալի հաճախականությամբ պահելով՝ իր աշխատանքը համեմել է դասական գրաբարի երանգով:

Գերազանցապես հանդիպում են բառական-անվանական այն ամեն-լադրությունները, որոնք դրված են նույն հոլովով ու թվով, որով դրվել է տվյալ իմաստն արտահայտող բուն բառը: Այսպիսի կիրառությունները կորցնում են Սեբեոսի ոճի հակիրճությունը և ծանրաբեռնում այն. օրինակ՝ «Իսկ նոքա և ամենայն զարն իբրև ոչ կարացին ընդդիմանալ արքունի հրամանին՝ ետուն զնա ի ձեռս նոցա. զոր կալեալ կայեցին զնա և տարան յանդիման թագաւորին» (էջ 139): Այստեղ «զոր»-ն արդեն ամեն բան ասում է և, հետևաբար, նա դերանունն ամեն-լադրություն է:

Բայախան ավելադրությունը դրվում է նույն դեմքով, թվով, ժամանակով ու եղանակով, ինչով որ դրված է լինում բուն բայը՝ «Ածջուր և եբեւ զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար» (էջ 20):

Երբեմն թվում է, թե ավելադրությունների գործածությունը սաստկացվում է բառի իմաստը, բայց՝ ոչ. օրինակ՝ «Իսկ Պերողի արքային Պարսից, թէպէտ և կամեցաւ վերստին զարս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց, ո՛չ եղև նմա պարապ. զի համբար թշնամեացն ստիպէին զնա ի կողմանցն Քուշանաց և յայնմ մարզէ» (էջ 26): Բերված քաղվածքում «կողմանցն Քուշանաց»-ին ոչինչ չի ավելացնում «յամմարզէ» արտահայտությունը: Մի օրինակ ևս՝ «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հատարտուն կացցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի՛ մեռցին. այլ ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի, ի տեղին յայն, ուր արեգակն ի մայրն մտանէ» (էջ 13): Այստեղ, երբ արդեն կա «ի մուտս արևու» «արևմուտք» իմաստով, «յեզր երկրի, ի տեղի յայն, ուր արեգակն ի մայրն մտանէ» մասն ավելադրություն է¹⁸:

Հետևյալ նախադասության մեջ՝ «Անագան ուրեմն և ապա յետ աուրց ինչ անցելոց ազդ լինէր ամենայն զարացն» (էջ 62) ավելադրություն է կա՛մ «անագան ուրեմն», կա՛մ «յետ աուրց ինչ անցելոց» մասը: Այսպիսի գործածությունը բավական հազվագեղ է:

Սեբեոսը հաճույքով է դիմում «եւ եղև»-ին (շուրջ 55 անգամ), որը. քստ Վ. Չալըխյանի, երբայական ոճ է՝ «Եւ եղև ի իմ ամի թագաւորութեան իսորովայ... ապստամբեաց Վարդան» (էջ 26): «Եւ եղև ի նուազել

¹⁸ Այստեղ, փաստորեն, ունենք և՛ բառակապակցական, և՛ նախադասության (որոշիչ երկրորդական նախադասության) ավելադիր կիրառություն:

ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի... տիրէ ի վերայ տորա ազգն Կարքեդովմայեցի իշխանութեանն» (էջ 23):

Դասական գրաբարի ոչ բոլոր գործերում է, որ «եւ եղև»-ն այսպիսի առատ գործածութիւն ունի: Սերեոսն այս դեպքում ազդել է Աստվածաշնչից:

ԹՎԱՐԿՈՒՄ

Թվարկումը պատմիչի լեզվի ոճավորման էական միջոցներից է՝ «Եւ թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և ի Լուսին, ի Հուր և ի Ջուր, ի Միհր և յամենայն աստուած, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն» (էջ 38): «Ապաւէն և թիկունս փրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորածորս, զվիսս, զվիմուտս, և զխորածորս դժնդակս... զծիր և զֆաջ ազգացն զաւրութիւնս» (էջ 150): Վերջին նախադասութեան մեջ պարզ երևում է, որ թշնամուն դիմագրաւելու համար ոչ մի բանի առջև կանգ չեն առել և սլաշտպանվել են՝ դիրքերն ամրացնելով ինչով որ հնարավոր է եղել: Այս եղանակով տեղ հասցված միտքը, անկասկած, ավելի տպավորիչ է:

Թվարկումը տեղի է ունենում տարբեր կերպ: Թվարկվող անդամները կարող են կապվել եւ շաղկապով. օրինակ՝ «Եւ եղև յետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթանեսին և զարս նոցա, զուստերս և զդստերս նոցա և զամենայն աղիս իւր, և շոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն դաւառին» (էջ 5):

Թվարկման ժամանակ երբեմն հանդես են գալիս նաև դասակամ թվականներ. օրինակ՝ «Եւ այսոքիկ են նախարարք և դարբ, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք և դրաւշու ի դուռն թագաւորին Պարսից հոտարովու, յամի վեցերորդի թագաւորութեանն նորա. Առաջին՝ Գագիկ Մամիկոնեան... երկրորդն՝ Պապ Բազումատունի... երրորդն՝ Խոսրով Վահեունեաց տէր. չորրորդն՝ Վարդան Արծրունի. հինգերորդն՝ Մամակ Մամիկոնեան. վեցերորդն՝ Ստեփանոս Սիւնի. երեքերորդն՝ Կոստիտ Ամատունեաց տէր, և այլք քնդ նոսա ի նախարարաց» (էջ 58):

Թվարկումը, սակայն, կարող է ձանձրույթ պատճառել, եթե հեղինակը հմտորեն չօգտվի նրանից: Դա առանձնապես նկատելի է, երբ

թվարկման շարքը շատ երկար է. օրինակ՝ «Եւ բազումք յառաքելոցն ընկալան զձեռնադրութիւն հպիսկոպոսութեան, որպէս զՅուստիանոս և զԵնանկլիտոս ի Հռոմ, և զԱնանիաս յԱղեքսանդրիա, և զՇմատոն Կղէովպեանց յերոսասաղէմ, զԴիոնէսիոս Արիսպագացի յԱթէնս և զմես ևս Դիոնէսիոս ի Կորինթոս, և զմիս Տիմոթէոս յԵփեսոս, և զՏիտոս ի Կրետէս, և զՊաղիկարպոս ի Զմիւռնիա Ասիացոց, և զԵւոդիա, որ է Պետրոս՝ յԱնտիոք, և Յրանիոս Գալիլեացի աշակերտ Պաղիկարպոսի յԵկեղեցւոջն Լատդիկեցոց: Եւ այլ ևս անթիւ բազմութիւն սփանչելի եպիսկոպոսաց և քահանայից և հոգեկիր հաւատասանից, փիլիսոփայից և սփանչելի մանկանց Եկեղեցւոյ, որք զճշմարիտ հաւատս Եկեղեցւոյ ըստ առաքելական ձայնին գրով դրոշմեցին յիւրաքանչիւր Եկեղեցիս» (էջ 129):

ՈՃԻ ԱՅԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեբեոսը երբեմն նկարագրում է իրար արագ հաջորդող իրադարձութիւններ: Վերջիններիս դիւնամիկ զարգացումը մեծ մասամբ պայմանավորւած է հեղինակի կողմից մատուցվող նյութով, նրա ներկայացման համար հատկապէս հաջող ընտրված բայերով ու գործողութիւնների սրընթաց զարգացմամբ ու փոփոխմամբ, քան այն բանով, թե բայի ո՞ր ժամանակով կամ եղանակով է նկարագրվում գործողութիւնը: Բերենք մի հատված, ուր սրընթաց ու փոփոխվող գործողութիւնները զարգանում են և՛ անցյալ անկատարով, և՛ անցյալ կատարյալով, և՛ դերբայական ձևով՝ «Եւ արձակեալ ի վերայ նորա արջ: Եւ եղև՝ իբրև դիմեաց ի վերայ արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ զճաղատն, և անդէն սատակէր զնա ի տեղւոջն:

Երկրորդ. անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բռուն հարեալ զեղջերացն ցլուն... և զաղաղակ հղարին... և յազնեալ ցուլն ի մարտին՝ զելոյր զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն և յետս գնալով ի փախուստ ղառնայր: Իսկ նորա զհետ ընթացեալ՝ բռուն հարկանէր յագին և ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա: Եւ ցուլն գնայր ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ:

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առնձ: Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծոն՝ այնպիսի իմն յաջողեալ նմա ի

տեառնէ, բուն հարեալ յականջ առիծուն՝ հեծաւ ի վերայ նորա: Եւ ան-
դէն բուն հարեալ զխուչափողիցն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ
աղաղակ բաղում ամբոխին զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա
ողորմութիւն ի թագաւորէն» (էջ 57):

V դարի գրաբարում սովորական է ու տարածված վերացական գո-
յականը թանձրացականի փոխարեն գործածելը: Այս երևույթը կա նաև
Սեբեոսի լեզվում, բայց ոչ այն հաճախականությամբ, ինչ V դարի հե-
ղինականների լեզվում՝ «Հաստատեաց զմիտս իւր ի վերայ բանիցն ստու-
քեան» (էջ 43): «Արկ ի գործ զխորամանկութիւն իւրոյ շարութեան»
(էջ 121): «Եւ անդէն առաջի արկեալ զիւրեանց շարութեան խորհուրդ,
լնուլ կամեցեալ զերուսաղէմ ծայր ի ծայրէ արեամբ» (էջ 111):

Սեբեոսը դիմում է նաև երկխոսությանը, որը ֆունկցիոնալ-պատ-
մադրական ոճում բավական հազվագեպ երևույթ է: Ստորև բերվող
հատվածում լավագույն ձևով երևում են ժողովրդական, կենդանի խոս-
քին հատուկ մի շարք առանձնահատկություններ՝ հակիրճություն, պար-
զություն, անմիջականություն, շարահյուսական պարզ կառուցվածք և
այլն՝ «Պատասխանի ետ թագաւորն և ասէ. «Քահանայ՛ս ես»: Ասէ հպիս-
կոպոսն. «Եթէ՛ կամի Աստուած և ձեր փառք»: Ասէ թագաւորն. «Եւ զի՞նչ
ես դու, որ ես՝ քո թագաւոր, և դա՛ քո կաթնուղիկոս և հայր մեր. և դու
ոչ արժանի համարիս զիս ընդ քեզ հաղորդութեանն, և ոչ զդա»: Ասէ
հպիսկոպոսն. «Ես այր մեղաւոր եմ և անարժան, չեմ արժանի ընդ ձեզ
հաղորդութեան, բայց թէ Աստուած արժանի առնէր՝ ընդ ձեզ համարէի
թէ ընդ Քրիստոսի ի սեղանոյ և ի նորին ձեռացն վայելեցայց»: Ասէ
թագաւորն. «Թո՛ղ զայդ և զայս ասա ինձ, եթէ՛ դա Հայոց կաթնուղիկո՛ս
է, թէ ոչ»: Ասէ հպիսկոպոսն. «Այնպէս որպէս զսուրբն Գրիգոր: Ասէ
թագաւորն. «Ունի՛ս զդա կաթնուղիկոս»: Ասէ «Այո՛»: Ասէ թագաւորն.
«Հաղորդի՛ս ընդ դմա»: Ասէ. «Այնպէս՝ որպէս ընդ սրբոյն Գրիգորի»: Ասէ
թագաւորն. «Իսկ այսաւր վասն է՞ր շահողողեցար»: Ասէ. «Բարե-
րար թագաւոր, մեք զձեզ մինչ ի յորմա նկարեալ տեսանէաք՝ զողումն
ունէր զմեզ, թող թէ ահաւասիկ դէմ յանդիման տեսանեմք, և բերան ի
բերան խաւսիմք: Մեք-մարդիկ եմք տգէտ և տխմար, ո՛չ լեզու դիտեմք
և ոչ գպրութիւն, բայց եթէ նախ ուսանիմք՝ և ի վերայ հասանիմք. այլ
զբարեբար հրամանսդ սքուծել ո՞վ իշխէ» (էջ 145):

Սեբեոսի ոճի համար կարևոր նշանակություն ունի հատկապես հա-

մեծատուօթյունը¹⁹։ Առանց համեմատութեան մարդկային խոսքը շատ շոր կլիներ և, իմաստային նրբերանգների արտահայտման տեսակետից, շատ քան կորցրած։ Համեմատութեանը մարդկային լեզվի համարեր աղն է, որից շահել է նաև Սեբեոսի լեզուն։ Բերենք օրինակներ՝ «Ամենեքեան սոքա սպառազէնք, ընտիրք պատերազմողք, վառեալք քաջութեամբ՝ իբրև զհուր, որ ո՛չ դանգիտեն և ոչ զթիկունս դարձուցանէին» (էջ 38)։ «Վահրամն եկն եհաս փութանակի իբրև զխոյանալ արծուոյ» (էջ 36)։

Համեմատութեան հիմքը համեմատվող և համեմատելի անդամների միջև եղած նմանությունն է։ Այդ նմանությունը կարող է լինել ներքին (մարդկային հոգաշխարհին, հոգեվիճակին վերաբերող) կամ արտաքին (մարդու, առարկայի, երևույթի արտաքինին, ձևին, տեսքին վերաբերող)։

Սեբեոսը համեմատութեան համար գործածում է հատկապես իբրև, քան, որպէս, այնպէս, ի նմանութիւն, նման, զարէն և այլ բառեր, որոնցից առավել շատ կիրառել է առաջին երեքը. օրինակ՝ «Հնկալաւ զնոսա իբրև զսիրելիս քաղաւորեանն» (էջ 116)։ «Դա է որդի թագաւորին՝ Մարկայ, Թէոդոս, և արասցես ի վերայ դորա ողորմութիւն, որպէս և հայր դորա ի վերայ քոյ» (էջ 73)։ «Եւ ի նաւն և էանց ընդ ծովն, և հապճեպ գնացեալ ի նմանութիւն քոյնոյ՝ եկն եհաս փութանակի ի Տայս» (էջ 117)։ «Եւ ահա գազանն երկրորդ նման արջոյ» (էջ 114)։ «Եւ աստ էր տեսանել զաղէտս տաւակուսի, զարէն հիւանդաց, յորժամ տագնապեսցի ցան, և հաստանիցի ի խաւից՝ այնպիսի ինչ եղեն» (էջ 150)։

Համեմատութեանը հաճախ վառուցվում է ոչ թե պարզ նախադասութեան սահմաններում, այլ բարդ ստորադասականի, որի մեջ որպէս բառը գերադասապես կատարում է հարաբերական բառի պաշտոն. օրինակ՝ «Ասէ. «(հաղորդիմ— Գ. Բ.) այնպէս՝ որպէս ընդ սրբոյն Գրի-

¹⁹ Համեմատութեանները կարող են կազմվել տարբեր սկզբունքներով և ուղիներով, սակայն «Համեմատութեան ճիշտ կառուցման համար,— գրում է Բ. Վ. Տոմաշևսկին,— անհրաժեշտ են հետևյալ տարրերը՝ առաջին՝ ի՞նչ է համեմատվում, երկրորդ՝ ինչի հետ և երրորդ՝ ինչ հատկանիշի հիման վրա է համեմատվում» (ընդգծումը հեղինակինն է—Գ. Բ.) (տե՛ս Բ. В. Томашевский, Стилистика и стихосложение, Л., 1959, стр. 208—209)։

Սա համեմատութեան կառուցման իդեալական վիճակն է, երբ կան համեմատութեան համար անհրաժեշտ անդամները։

գորի» (էջ 145): «Այնպէս արարեւ՝ որպէս վայել է քո իմաստութեանդ» (էջ 146):

Համեմատութեան համար հետաքրքիր է հետեւյալ օրինակը՝ «Իսկ միջնորդն միոյ ուրուք ոչ է. զի յերկոցունցն զմիութիւնն. որպէս յԱբրահամէ և ի Սառայէ Իսահակ ծնեալ միաբանութեամբ: Այսպէս և Քրիստոս ի Հոգւոյ արքայ և ի Մարիամայ ծնեալ մի բնութիւն» (էջ 127): Այստեղ համեմատութեան իրականացել է նախադասութեաններէ զուգադրութեամբ, ուր «որպէս յԱբրահամէ և ի Սառայէ Իսահակ ծնեալ միաբանութեամբ» մասը համեմատութեան եզր է և՛ նախորդ, և՛ հաջորդ նախադասութեաններէ համար:

Երբեմն գրողը կամ խոսողը ինչ-որ անցքերի կամ երևույթների մասին պատմելով, նկատում է, որ թույլ է տվել ժամանակագրական, տրամաբանական հաջորդականության խախտում, բայց է թողել կարևոր պահեր: Նման դեպքերում «մոռացված» ասվելիքը խոսքի մեջ մտցնելու համար գործածում են որոշ դարձվածքներ, կապակցություններ: Օրինակ, ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է՝ «հա, չմոռանամ ասել, որ սրանից առաջ այսինչ բանը տեղի ունեցաւ» և ներկայացվում է ասելիքը: Նման դեպքում Սեբեոսը առավելապես դիմում է համեմատութեան օգնությանը, ուր համեմատութեան երկու անդամներն իրար հետ կապվում են քան նախադրությամբ՝ «Սպանեալ զՍուրէնն մարդպան յանկարծարէն ի Դուին քաղաքի՝ առին զաւար բազում և գնացին ի ծառայութիւն Յունաց:

Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց» (էջ 26—27):

Սեբեոսը գործածում է նաև նկարագրութեան փոխաբերական միջոցներ: Սակայն բառի փոխաբերական գործածութեան դեպքերը չունեն կիրառական այն հաճախականությունը, ինչ համեմատությունները, համանիշ բառերը և այլն: Փոխաբերական կիրառությունների մեջ համեմատաբար մեծ տեղ են զբաղում անձնավորումները, ապա՝ պարունակվածը պարունակողի միջոցով արտահայտելու հնարանքը: Բերենք անձնավորման օրինակներ՝ «Եբաց ծովն զբերան իւր, և եկով դնոսա. և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի» (էջ 149): «Զամենեսին եկեւ հուր ահագին» (էջ 94): «Եւ եկաց խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմեհանգամ առածն Երուսաղէմի յորդոցն Իսմայելի, և ապա գնաց փախստական ի քաղաքն Թագաւորանիստ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն» (էջ 101—102):

Սեբեոսի լեզվին բավական բնորոշ է պաղատ «պալատ» բառը ոչ

թե բառիս բուն իմաստով՝ «պալատ», «ապարանք», «ճարտարապետական կառույց» գործածելը, այլ նաև փոխաբերաբար՝ «պալատական», «պալատականներ» բովանդակությամբ կիրառելը. օրինակ՝ «Ջոր առեալ արքայի ուրախ եղև ինքն և ամենայն պաղատն և արձակեաց անդրէն շնորհակալութիւն մեծ» (էջ 119): «Եւ նա զարմացեալ ընդ զաւրուցիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն» (էջ 57):

Պաղատ բառի գործածությունն այս օրինակներում կարելի է դիտել որպես պարունակվածք պարունակողով արտահայտելու միջոց: Այդպիսի մի օրինակ է նաև հետևյալը՝ «Յայնժամ զաւրն արքային Պարսից նստէր ի Կեսարիա Պաղեստինացւոց, և զաւրավարն նոցա... խաւսէր ընդ Երուսաղէմի, զի կամաւք հնազանդեացին ի ծառայութիւն» (էջ 82): Ուշադրություն է գրավում նաև հետևյալ նախադասությունը՝ «Թափեցին ի նոսա զկապաւրնս իւրեանց» (էջ 75), այսինքն՝ նեաերը:

Սեբեոսի լեզվում զգալի հաճախականությամբ հանդիպում է ամբողջը մասով արտահայտելու եղանակը. օրինակ՝ «Եւ նստաւ արքայ Կոստանդին ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ» (էջ 142): Այստեղ, իհարկե, «Կոստանդին արքայ»-ով պետք է հասկանալ և՛ իրեն, և՛ նրա հետ եղած զորքի ամբողջ բաղմունքները:

Փոխաբերությունը հաճախ լեզվին մեծ գեղարվեստական արտահայտչականություն է հաղորդում: Փոխաբերաբար գործածված ոոսկ մեկ բառով կարելի է արտահայտել որևէ միտք, բայց այնքան տպավորիչ ու խոր, այնքան ամբողջացնող, որ մի այլ բառով կամ նույնիսկ ամբողջական նկարագրությամբ մենք երբեք չենք ստանա այն, ինչ փոխաբերությամբ ենք ստանում: Սա առանձնապես ակնհայտ է դառնում կենդանական աշխարհ նշող բառերի փոխաբերական կիրառություն մեջ՝ օրինակ՝ «Անդ թագաւորն խոսքով կայր ի մեծ վտանգի, և տեսանէր զմահ առաջի աչաց. զի զերծեալ էր ի բերանոյ առիւծու և անկեալ ի բերան²⁰ թշնամեաց, ուստի փախուստ ոչ գոյր» (էջ 37):

Այսպիսի բնութագրումների մեջ հատկապես ընդգծված ձևով բացահայտվում է, շոշափելի դառնում հեղինակի ներքին վերաբերմունքը նկարագրվածի նկատմամբ. օրինակ՝ «Այլ ոչ զաղարեաց վիշապն այն ապստամբ» (էջ 120): «Եւ սկսան զմնացեալ մարդիկ զաւրս ժողովել, և

²⁰ Այստեղ բերան բառը նույնպես փոխաբերաբար է գործածված:

գունդս գունդս կազմել, և թերևս կարասցեն զերծանել ի ժանեաց վիշապին և դառնաշունչ գազանէն» (էջ 151):

Բերված քաղվածքներում պատմիչը Մառերի նկատմամբ իմացելական թագավորության վայրագությունը շեշտված ձևով ներկայացնելու համար գործածել է վիշապ բառը: Դեռ ավելին՝ իր վերաբերմունքն անմիացորդ կերպով արտահայտելու նպատակով վիշապ-ին հարադրել է նաև զազան բառը և նույնիսկ մակդիրով՝ «դառնաշունչ գազան», որն իր հերթին փոխաբերություն է: Նրանց մի մասը (մասնավորապես՝ մարդու գազանաբարո արարքները վիշապի միջոցով արտահայտելը և այլն) ժողովրդական մտածողության հիմք ունի:

Հարցական նախադասությունները սակավ են հանդիպում Սեբեոսի Պատմության մեջ: Եղածների մեջ զգալի թիվ են կազմում հոնտորական հարցական նախադասությունները: Նրանք տրե՛տ երևույթի նկատմամբ խոսողի վերաբերմունքի, մտորումների, զգացմունքի ավելի վառ արտահայտման լավագույն միջոցներից են. օրինակ՝ «Բայց աստուածութիւնն, որ յամենայն տեղուջ է, և զինչ կամի զամենայն լինել կամ առնել ո՛չ կարէ, աստուածութիւնն զի՞նչ է» (էջ 125): «Երակկոս ցարդ յինէն փախտական գնալոյ. արդ եկեալ հասեալ եմ այսպիսի զինու, և նա յինէն ո՛չ փախիցէ» (էջ 94): «Ընդէ՞ր և ոչ դուք մեռալուք ի տեղուջ պատերազմին, քան եթէ դալ առ իս. արդեօք զեռսուով մեռեա՞լ կարծէիք» (էջ 96):

Հոնտորական հարցով արտահայտված միտքը (ինչպես բերված նախադասություններում, այնպիս էլ ցանկացած հոնտորական հարցական նախադասությունում) կարելի է արտահայտել նաև պարզ պատմողական նախադասությամբ: Սակայն հենց որ փորձում ենք հոնտորական հարցը փոխակերպել պարզ պատմողական նախադասության, անմիջապես տեսնում ենք, թե ի՞նչ է կորցնում լեզուն արտահայտչականության, գեղարվեստականության առումով²¹:

21 Այստեղից էլ իրավացի է Գ. Բ. Զահուկյանը (թեև չի գործածում «հոնտորական հարց» կամ «ճարտասանական հարց» տերմինները, բայց նրա կողմից բերվող օրինակներից պարզ երևում է, որ խոսքը հենց հոնտորական հարցի մասին է), որը խոսելով հարցական նախադասություններով հաստատումը և ժխտումը արտահայտելու հնարավորության մասին՝ գրում է. «Եվ այս բոլորն այն պատճառով, որ մարդկային խոսքը, բացի անմիջական հաղորդակցման և իմացական կարիքները բավարարելուց, ձեռք է բերում գեղագիտական հաճույք պատճառելու և, սրա հետ կապված, ուժեղ ներգործելու: գործառություն, որ երբեմն իմացականը մղում է երկրորդ պլանը» (տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 359):

Հոետորական հարցական նախադասությամբ հնարավոր է արտահայտել տարբեր իմաստներ, բայց հիմնականում՝ հաստատում, ժխտում, հեզմանք, հանդիմանություն:

Հոետորական հարցական նախադասության իմաստը դրական, թե ժխտական ըմբռնելու հարցը կախված է այն բանից, թե հեղինակն իր մտքի զարգացման ի՞նչ հանգույցում է գործածել այն, ինչպիսի՜ նախադասություններ են նախորդում ու հաջորդում հոետորական հարցին և իմաստային ինչպիսի՜ կապ է ստեղծվում նրանց միջև: Երբեմն հոետորական հարցն իր ներքին բովանդակությամբ, լեզվական միջավայրով նպաստում է հակադրության կառուցմանը, որը յուրովի կարող է բնութագրել այս կամ այն հերոսին, բացահայտել նրա էության որոշ կողմեր: Օրինակ, Խոսրով արքան պատմում է՝ «Իցէ՞ որ արդեանք լեալ թագաւորաց աշխարհի, որ կարող է ըմբռնել զմեւ այլ թագաւոր զՅշնամի իւր, զաւերիշ թագաւորութեան իւրոյ, և ոչ սպանցէ զնա և ջընջեացէ զամենայն արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ՞ զնա յորդեգիրս...: Այսպիսի պարզևս շնորհեաց ինձ Մաւրիկ թագաւոր հայր իմ» (էջ 42):

Ինչպես տեսնում ենք, «իցէ՞... լեալ» հարցին կարելի է միայն ժխտական պատասխան տալ, որը բխում է հատվածի ընդհանուր բովանդակությունից: Մյուս կողմից՝ ստեղծվում է յուրատեսակ հակադրություն, որովհետև բերված մեղադրանքների համար Մորիկը սպանելու էր նաև վերևում բերված շարադրանքի հեղինակին, բայց չի սպանում: Սրանով մասամբ բնութագրվում է նաև Մորիկն իբրև անձ, նրա բնավորությունը, արտահայտվում նրա վերաբերմունքը տվյալ անհատի նկատմամբ:

Երբեմն մի շարք ճարտասանական նախադասությունների, իրար հետ մեկ ընդհանուր մտքի թելով կապված, հաջորդում են միմյանց: Այս եղանակով խոսքն ստանում է առանձնահատուկ ոճական երանդավորում, առավել ընդգծվում է խոսողի հաստատական կամ ժխտական վերաբերմունքը, հանդիմանությունը կամ հեզմանքը և այլն՝ մեկի նկատմամբ. օրինակ՝ «Ո՞չ ապաքէն սպառեցի զՅոյնս: Եւ դու ասես վստահանալ յԱստուածն քոյ. վասն է՞ր ոչ փրկեցին զԿեսարիա և զԵրուսաղէմ և Աղեքսանդրիա մեծ ի ձեռած իմոց: Միթէ և այժմ ո՞չ դիտես, եթէ զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. իսկ արդ՝ միայն զԿոստանդնուպալիս ոչ կարացից բրել» (էջ 91):

Հաճախ բուն հարցական և ճարտասանական նախադասությունները գործածվում են կողք կողքի՝ «Ինքն նստեալ ի վերայ նաւու՝ կայր ի մէջ ծովուն և խաւսէր ընդ նոսա այսպէս. «Զի՞նչ կամիք առնել, կամ

է՞ր եկիր ի տեղիս յայս. մի՞թէ զծով իբրև զցամաք համարիք՝ մարտըն-
չել ընդ նմա» (էջ 90): «Մինչև յե՞րբ ոչ յագեսցի արեամբ. միթէ ո՞չ կա-
րէին Հոռոմք սպանանել զնա և բառնալ զտէրութիւնն Պարսից» (էջ 91):
Հոռոմորական հարցը կարող է ուղղված լինել խոսողին, որով արտահայտ-
վում է հեղինակի իսկ տարակուսանքը, զարմանքը, ասեւիքն ամէլորդ
համարելու միտումը և այլն՝ «Իսկ արդ՝ զի՞նչ ևս զԱտատ խոռխոռունուց
ասացից և զմիւսանգամ զապստամբութիւնն: Էր սա պատրիկ մեծ»
(էջ 70):

Հոռոմորական հարցը կարող է հիմնավորել, պատճառաբանել իրեն
նախորդող նախադասութեամբ (կամ նախադասութեաններով) արտա-
հայտված միտքը. օրինակ՝ «Արդարև անքնին են դատաստանք նորա,
և առանց զննելոյ են ճանապարհք նորա: Զի ո՞վ ծանեաւ զմիտս տեառն,
կամ ո՞ր խորհրդակից եղև նմա, կամ ո՞վ ետ նմա փոխ և հատուցանէ
նմա, զի ի նմանէ են և նովաւ և ի նմա ամենայն» (էջ 84):

Ուսումնասիրվող երկի հոռոմորական նախադասութեաններում կի-
րառութեան զգալի հաճախականութիւնն ունի ո՞րչափ բառը՝ «Իսկ արդ՝
զի եհան զմեզ Աստուած ի ծառայութենէ խաւարային իշխանութեանն և
արժանի արար երկնաքաղաքացի թագաւորութեանդ, ո՞րչափ ևս առա-
ւել քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան» (էջ 126):
«Իսկ եթէ նոցա այնպէս զողջախոհութիւնն համբուրեալ, ո՞րչափ ևս
առաւել երկիրդիւ արժան իցէ և մեզ զառաքելականն կատարել զձայն»
(էջ 135):

Հեղինակի լեզվում ոճական խիստ տարածված հնարանք է կրկնու-
թիւնը: Սեբեոսի երկում հիմնականում հանդիպում են ա) նույն բառի
կրկնութիւն, բ) նույն բառի բառաձևերի կրկնութիւն, գ) թե՛ բառի,
թե՛ նրա բառաձևերի միաժամանակյա կրկնութիւն, դ) նույն կառուց-
վածքով ու բովանդակութեամբ բառակապակցութեանների կրկնութիւն,
ե) հաճախ գրեթե նույն բառերով կազմված նախադասութեանների
կրկնութիւն: Սեբեոսն ամենից հաճախ կիրառում է բառական
կրկնութիւնը:

Ոճական այս հնարանքի ճիշտ օգտագործումը լեզվին հաղորդում
է թարմութիւն, նպատակի ու ասեւիքի ընդգծվածութիւն, երբեմն էլ՝
հուզականութեան շեշտում և այլն:

Հաճախ կրկնութիւնն անհրաժեշտութիւն է, երբ նախապես տըր-
վում է նրա նախադրյալը՝ «Խառնեցան ընդ միմեանս, և բաժանեցան ի
չորս մասոնս: Մասն մի այն՝ որ ի Հնդկաց կողմանէն. մասն մի այն՝
որ ունին զԱսորեստանն և զկողմանս հիւսիսոյ. մասն մի այն՝ որ

յնգիպտոս և ի կողմանս թետալացոց, մասն մի ի կողմանս Տաճկաց» (էջ 155): Բերված քաղվածքում «մասն մի»-ի կրկնման համար նախադրյալ է ծառայում նախադասության սկզբում դրված «բաժանեցան ի շորս մասունս» արտահայտությունը:

Երբեմն կրկնվում է ենթակա-գոյականը, իսկ բայերն արտահայտվում են համանիշներով: Նման դեպքերում, ասես, յուրովի կրկնվում է նույն միտքը, որն ավելի է ուժեղացնում հաղորդված իմաստը՝ «Եւ սաստկացաւ պատեւազմն ի վերայ երեսաց երկրի, և խմբեցաւ պատեւազմն յոյժ» (էջ 27):

Կրկնությունը հաճախ բարեհնչունություն է առաջացնում և ոճականորեն արդարացվում է նաև մասամբ որպես ալիտերացիա. օրինակ՝ «Շամիրամ.... կամեցաւ առնել ընդ նմա բարեկամութիւն.... զի ո՛չ գտանէր յայնմ ժամանակի նման նորա այլ որ ամենեկն՝ այլ պատկերաճոխ» (էջ 6):

Ալիտերացիայի և իմաստի ընդգծման լավ հնարանք է նույն արմատից կազմված բառերը (գոյականներ, բայեր) կամ բառն ու նրա՝ ժխտական ածանցով ածանցված ձևը նախադասության մեջ, մի հատվածում իրար մոտ կրկնելը. օրինակ՝ «Հայր գթութիանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարեաց զմեզ մխիթարութեամբ բաղմաւ» (էջ 84): «Անտեսանելին ոչ երևէր, այլ ի տեսանելումն տեսանէին զանտեսանելին. զի ի տեսանելումն՝ հայրենի բնութիւնն աստուածային և մայրենի բնութիւնն մարդկային» (էջ 127): «Զի անմարմինն մարմնանայր, և անտեսանելին տեսանիւր, անշաւալափելին շաւալիւր, անժամանակն ակտանիւր, որդին Աստուծոյ որդի մարդոյ լինէր» (էջ 128):

Ուշադրության է արժանի Սեբեոսի հետևյալ վկայությունը՝ «Նոքա զարհուրեալ խաւսեցան ընդ նոսա, նախ՝ ի խաղաղութիւն, ասացին ոչ տնել պատերազմ, այլ թողուլ զբերդն և երբալ խաղաղութեամբ» (էջ 75): Սեբեոսը սովորաբար գործածում է «ի խաղաղութիւն» առանց այսպիսի լրացուցիչ բացատրությունների՝ «Զի ոչ ուստեք գոյր նոցա ակնկալութիւն փրկութեան՝ խաւսեցան ի խաղաղութիւն» (էջ 77):

Երբեմն որոշ բառեր կրկնվում են, երբ պատմիչը մի անգամ ասվածը ձգտում է հաստատել, հիմնավորել մի օժանդակ աղբյուրի վկայակոչման և մեկնաբանման պատճառով. օրինակ՝ «Նոցին ի հիւսիսոյ կողմանէ, ի մեծ և յահագին անապատէ, ուրանար Մովսէս և որդիքն Իսրայելի բնակեալ էին, զոր ասաց մարգարէն, եթէ. «Որպէս մրրիկ ի

հարաւոյ ընթացի, յանապատէ՝ գնացեալ յահեղ տեղուշէ», այն է անապատն մեծ և անագին» (էջ 138):

Որոշ բառերի կրկնումը հաճախ լեզվին «կարող է հանդիսավորութուն հաղորդել, որով, ըստ հեղինակի, հնարավոր է լինում արժանին մատուցել արժանավորին. Օրինակ՝ «Երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով և մատանեաւ երեսնելոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իւրով և մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատանեաւ f» (էջ 89):

Կրկնությունը գեղեցիկ միջոց է, բայց միշտ չէ, որ գեղեցկացնում է հեղինակի ոճը: Քիչ չեն փաստերը, երբ այն պատմիչի լեզուն դարձնում է միապաղաղ, ձանձրալի: Այս նկատելի է հատկապես նա դերանվան կրկնության ժամանակ: Վերջին դեպքում երբեմն նույնիսկ ինչ-որ չափով դժվար է լինում մի անգամից որոշել, թե նա դերանվամբ հեղինակն ո՞ւմ նկատի ունի. օրինակ՝ «Իսկ նորա տեսեալ խնդութեամբ ընկալաւ զնա, և ձգեաց առ նա զձեռն իւր. և նորա համբուրեալ զձեռն նորա՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց» (էջ 69): «Եւ եղև մինչդեռ երթային նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի ոմն ի փուշտիպանաց արքայի, և ըմբռնեալ (տպված է՝ ըմբռեալ— Գ. Բ.) զնա՝ առին գնացին ընդ իւրեանս. և սպառնացաւ նմա Մուշեղ երդմամբ, զի եթէ ոչ պատմեսցէ նմա զեղեալն վասն նորա խորհուրդ՝ մեռցի» (էջ 45):

Հեղինակը ոճական տաղտուկությունից կարող էր ազատվել զանազան միջոցներով: Բերենք մի վկայություն, ուր այդ հաջողվում է անել նրան՝ «Զի՞նչ է նոցա միաբանութիւնն այն և խորհուրդն. կամ զի՞ իսկ իշխեցին համարձակաբար արձակել առ քեզ զայսպիսի բանս» (էջ 115):

Հայտնի է, որ իշխեմ բայն ունի նաև «համարձակվել» իմաստը (այդ իմաստով էլ գործածված է բերված նախադասության մեջ): Գրաբարում կա նաև համարձակիմ բայը: Սակայն, հեղինակը համարձակաբար մակբայի մոտ չի դնում համարձակեցան բայաձևը՝ որպեսզի ոճը չժանրանա: Պատմիչը հմտորեն խուսափել է գրանից և գործածել է իշխեմ բայը համարձակիմ բայի իմաստով: Դրանից Սեբեոսի ոճը միայն շահել է:

Սեբեոսի ոճն առավել սառը, ճապաղ է դառնում առանձնապես այն ժամանակ, երբ մի փոքրիկ հատվածում կրկնվում են միանման կամ նույն կապակցությունները, նախադասությունները, արտահայտությունները: Այս առումով կարելի է նշել Սեբեոսի Պատմության հատկապես

Զրբեմնի Ա, Բ դպրություններ կոչված հատվածները: Բերենք տաղտուկ ոճի օրինակներ՝ «Եւ Մագիստրոս էր իշխան զաւրուն որ յայնմ կողմանէ և աիրելի ամենայն զաւրացն: Եւ Սմբատ էր իշխան զաւրու Թբալկացոց իշխանացն» (էջ 139): «Իբրև գնացին նոքա յերկիրն որ կոչի Կոմշ.... հասին ի գետն, որ կոչի Խնկանդ» (էջ 62): «Յամի չորրորդի Կոստանդեայ և յերրորդի ամի Արշակայ թագաւորեաց Պարսից Որամազդ որդի Շապոյ ամս Դ: Կոստանդիաս և Կոստաս՝ Դ: Որամազդ՝ զառաջինն:

Յամի Զ-երրորդի Արշակայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ Պարսից Շապուհ որդի Որամազդայ՝ ամս Հ: Կոստանդիաս և Կոստաս՝ է-երրորդն: Արշակ՝ Զ-երրորդն: Շապուհ՝ զառաջինն» (էջ 17):

Կրկնությունների մի մասն այստեղ արդարացվում է մատուցվող նյութի բովանդակությամբ: Բայց դրանք ինչպիսի պատճառ էլ որ ունենան, այնուամենայնիվ, Սեբեոսի ոճին ճկունություն չեն հաղորդում:

Որոշ դեպքերում Սեբեոսի լեզվում կրկնությունը ազդեցության արդյունք է: Բերենք Եւ շաղկապի կրկնման օրինակներ, որոնք Աստվածաշնչի ոճի ազդեցության հետևանք են՝ «Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և շոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչև ցայժմ» (էջ 5): «Սա ծնաւ զԲագամ և զԲագարատ. և Բագարատ ծնաւ զԲիրատն. և Բիրատ ծնաւ զԱսպատ» (էջ 6):

Հանդիպում է նաև ոճական աստիճանավորման եղանակը, որն իմաստային երանգների և հերոսի հոգեկան վիճակի արտահայտման միջոցներից մեկն է՝ «Անդ թագաւորն Խոսրով կայր ի մեծ վտանգի, և տեսանէր զմահ առաջի աչաց. զի զերծեալ էր ի բերանոյ առիւծու և անկեալ ի բերան թշնամեաց, ուստի փախուստ ոչ գոյր» (էջ 37): Այստեղ շատ հաջող կերպով ներկայացված է Խոսրովի հոգեվիճակը: Տըվյալ աստիճանավորման մեջ լուելյան ունենք համեմատություն՝ թշնամին առավել վատթար է, քան ասեղ առյուծը (իհարկեհ, առյուծ բառն իր հերթին գործածված է փոխաբերաբար՝ ակնարկելով մի այլ թշնամու):

Ոճավորման համար պակաս արժեք չեն ներկայացնում նաև հակադրությունները: Ահա մի քանի օրինակներ՝ «Տեառն Աստուծոյ մերում արդարութիւն, և մեր ամաւթ երեսաց» (էջ 87): «Եւ Յովհան ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենեկին ոչ լինէր ի նոսա հուպ» (էջ 55): «Ասպատակ արարեալ Շահենայ՝ արշաւեաց ի կողմանս արեւմրտից և գնացեալ ի Կեսարիա Կապադովկացոց. իսկ բնակիչք քաղաքին քրիստոնեայք ելին ի քաղաքէն և գնացին. բայց Հրեայքն ընդ առաջ երթեալ հնազանդեցան ի ծառայութիւն» (էջ 79):

Հետևյալ հակադրությամբ Սեբեոսն արտահայտել է իր հեգնական վերաբերմունքը՝ «Աստուածոց պատուական և ամենայն երկրի տէր և թագաւոր և ծնունդ մեծի Արամազդայ հոսորով՝ առ Երակլէս անմիտ և անպիտան ծառայդ մեր» (էջ 91):

ՍԵՐԵՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ ԻՐ ՕԳՏԱԳՈՐԾԱՍ ՍԿՋՐԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ
ԼԵԶՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սեբեոսն իր Պատմությունը գրելիս օգտվել է Մ. Խորենացուց, Ստ. Տարոնացուց, Աստվածաշնչից և այլ աղբյուրներից: Նա գրեթե միշտ շատ ազատ է վարվել բնագրերի նկատմամբ: Նա ավելի հարազատ է մնացել Աստվածաշնչի լեզվին, որից հաճախ քաղվածքներ է բերում: Օրինակ, Սեբեոսը 87-րդ էջում Աստվածաշնչից բերում է հետևյալ քաղվածքը՝ «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած. քահանայքդ խաանեցարո՛ւք ի սիրտ Երուսաղէմի եւ մխիթարեցէ՛ք զդա, զի լի եղև տառապանաւք»: Սա բառացի մեջբերում է Եսայի մարգարեությունից (զլխ. 40, № 1):

Նույնիսկ 325 թվականին Նիկիայում ընդունված «Հավատքի հանգանակը» Սեբեոսի երկում բերված է բառերի հավելումով ու որոշ փոփոխությամբ: Ավելին, այլ տեղերում նկատվում է նաև շփոթ: Օրինակ, պատմիչը գրում է՝ «Մեք զՊաւղոսին ասասցուք. «Ո՛րպէս մեծացան գործք քո, տէր. զամենայն իմաստութեամբ արարեր» (էջ 34): Այս տողերը, սակայն, Պողոս առաքյալինը չեն, այլ Սաղմոսների գրքինը՝ «Որպէս զի՛ մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր» (Գիրք սաղմոսաց, ՃԳ, 24):

Հայկի և Բելի առասպելն առաջին անգամ գրի է առել Մ. Խորենացին: Սեբեոսը եւ անդրադարձել է այդ առասպելին: Առասպելի շարադրման տրամաբանական հաջորդականությունը երկու պատմիչների լեզվում էլ համարյա նույնն է, բայց Սեբեոսն ունի երկխոսության մի հատված, որը չկա Խորենացու «Հայոց պատմություն» գործում: Բերենք այդ հատվածը՝ «Զտեղի կալաւ Հայկն և ասէ ցնա. «Զի՞ պնդեալ դաս զհետ իմ. դարձի՛ր անդրէն ի տեղի քո, զի մի՛ մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց. քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք»: Պատասխանի ետ Բէլ, և ասէ. «Վասն այնորիկ, զի մի՛ անկցիս ի ձեռս մանկուոյ իմոյ և մեռանիցիս. այլ ե՛կ ի ձեռս իմ, և կեա՛ց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»:

Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. «Շո՛ւն ես դու և յերամակէ

շանց՝ դու և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից իսկ աշտար-ի քեզ զկապարճս իմ» (էջ 4):

Խորենացու ոճն ավելի կուռ է, մշակված, գրական, իսկ Սեբեոսի ոճը թողնում է զրուցապատումի տալավորութիւն: Սեբեոսը, սակայն, շարադրանքի զեղարվեստականութեան մեջ երբեմն ինչ-որ չափով, ասես, մրցում է Խորենացու հետ՝

Խորենացի

«Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, զիպեցուցանէ զերեթեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փշէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրոց» (էջ 36—37):

Սեբեոս

«Եւ Հայկն Արեթայն մերձեւ նայր և ունէր ի ձեռին իւրում զաղեղն, որպէս հեծան հզար մայրափայտեայ: Եւ Հայկին զտեղի կալեալ ընդդէմ նորա աղեղամբ: Եւ կանգնէ զկապարճսն ի գետնոյ ընդ ինքեան յաւղ սկայարէն կամարին, և ընդ գիրկս մտեալ՝ զաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, և ընդ պըղընձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մահելէն արձանն, յերկիր խարսխեալ վտարեալ նետն. և վաղվաղակի յերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն. և զարք նորա փախստական լինէին» (էջ 5):

Խորենացու բնագրում նույնիսկ Հայկին բնութագրող որոշ մականորէններ ու բառեր՝ «կորովածիդ հաստաղեղն», «գեղապատշաճ և անձնեայ, քաջազանգուր, խայտակն և հաստաբազուկ» և այլն չկան Սեբեոսի Պատմութեան մեջ:

Սեբեոսը նույն ձևով է վարվում նաև Արա Գեղեցիկին ու Շամիրամին վերաբերող լեգենդի հետ: Խորենացու կողմից Շամիրամին տրված «կաթտոն Շամիրամ» (էջ 52), «վաւաշն այն և բորբորիտոնն Շամիրամ» (էջ 48) և այլ բնութագրումներ չենք գտնում Սեբեոսի երկում: Ամբողջ առասպելի մեջ, լեզվական առումով, երկու պատմիչների շարադրանքում մի երկու տեղ միայն շատ թե քիչ նույնութիւն կա:

1. Պատմիչի լեզվում թեև շատ կողմերով պահպանվում են դասական գրաբարի ձևաբանական, շարահյուսական ու ոճական առանձնահատկությունները, բայց նրանում կան նաև դրալի շեղումներ: Նա մի կողմից հենվում է դասական գրաբարի, մյուս կողմից՝ ժողովրդախոսակցական լեզվի իրողությունների վրա:

2. Պատմիչը գործածել է շուրջ 2570 բառ, որոնց մի մասն առաջին անգամ կիրառվել է հենց Սեբեոսի կողմից:

3. Զգալի թվով բառեր հեղինակի կողմից կիրառվել են նաև նոր հիմաստներով:

4. Հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառեր, իսկ մի քանիսը բարբառային բառեր են:

5. Ակնառու է քանակական և դասական թվականների գրության տարբերակների առատությունը, որը հատուկ է դասական գրաբարին:

6. Հոլովվող, խոնարհվող բառերի հարացույցներում սովորական շեղումները վերաբերում են ոչ թե ողջ հարացույցներին, այլ՝ հարացույցների այս կամ այն անդամին:

7. Հեղինակի կողմից նախդիրներն առավելապես գործածվել են եզակի հացական հոլովի հետ: Նկատելի են նախդրի ու նախադրության յուրօրինակ կիրառության դեպքեր:

8. Պատմիչը, լեզվական առումով, գրեթե ազատ է վարվում իր կողմից օգտագործված սկզբնաղբյուրների նկատմամբ:

9. Պատմիչի ոճն առավելապես գործառական-պատմագրական է, բայց կան նաև այլ ոճերի տարրեր:

10. Ոճական առումով Սեբեոսի լեզուն առանձնանում է պատկերավորման, արտահայտչական միջոցների վարպետ կիրառմամբ, ինչպես նաև բառապաշարի յուրօրինակ ընտրությամբ:

11. Սեբեոսի Պատմությունը մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն իբրև պատմական հավաստի աղբյուր, այլև՝ լեզվաոճական առումով:

ՕԴՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Դ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կա-
նայեանց, Տիփլիս, 1909:
- «Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր կտակարանաց» ըստ միարան վաղեմի գրչադրաց
մերոց եւ յոյն բնագրաց, Վենետիկ, 1860:
- «Եզնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի եղծ աղանդոց», Վենետիկ, 1826:
- «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ
ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երեւան, 1957:
- Կորիւն, Վարբ Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածքներով, թարգմա-
նութեամբ, առաջարանով եւ ծանոթագրութիւններով ի ձեռն պրոֆ. զոկտ. Մանուկ
Արեղյանի, Երեւան, 1941:
- «Ղազարայ Փարսեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան»,
Տիփլիս, 1904:
- «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Արեղեան եւ
Ս. Յարութիւնեան, Տիփլիս, 1913:
- «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլին», ի Կոստանդնուպօլիս, 1851:
- «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», շորթորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձե-
ռագրաց, հանդերձ առաջարանի եւ ծանօթութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց,
Երեւան, 1939:
- «Փառաստի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883:
- Ա. Սեկոյան, Ոսկե վաղերի մեջ, Երեւան, 1958:
- Դ. Դեմիրճեան, Երկերի ժողովածու, հ. 4, Երեւան, 1957:
- Դ. Վառուժան, Բանաստեղծութիւններ, Երեւան, 1955:
- Ե. Զարեան, Ընտիր երկեր, Երեւան, 1954:
- Հ. Թումանյան, Երկեր, հ. երկրորդ, Երեւան, 1958:
- Հ. Քոչար, Սպիտակ գիրք, Երեւան, 1965:
- Ս. Խանգաղյան, Քաջարան, Երեւան, 1965:
- Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1955, հ. 5, Երեւան, 1956:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ «ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի ընդհանուր պատմական քննության, նրա այս կամ այն հատվածի կոնկրետ ուսումնասիրության դեպքում պետք է առաջնորդվել որոշակի շրջաբաժանմամբ: Հայոց լեզվի զարգացման պատմական ընթացքը մի շարք հայագետների կողմից ենթարկվել է առանձին շրջաբաժանման: Մեր օրերում հայ լեզվաբանության մեջ դիտական ընդունելություն է գտել և ուղենըշային է համարվում Գ. Զահուկյանի կողմից կատարված հայոց լեզվի զարգացման պատմության ամբողջական շրջանաբաժանումը, որը հիմնվում է հայոց լեզվի և նրանով հաղորդակցվող հանրության պատմության ճիշտ ըմբռնման, ինչպես նաև այդ նույն լեզվի ընձեռած փաստերի և սրանց մշակմանը նվիրված աշխատությունների տվյալների վրա¹:

Այս շրջանաբաժանման մեջ ութերորդ դարի հայերենը հաջորդող երեք դարերի հետ միասին բնութագրվում է իբրև հին հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզվական վիճակ: Այս ենթաշրջանը նույնպես ունենալով գրական և խոսակցական տարբերակներ, այնուամենայնիվ համակարգային լեզվավիճակների շղթայի օղակ է դառնում հին հայերենի դասական, ետդասական ենթաշրջանների և միջին հայերենի շրջանի համար:

Լեզվի պատմության առանձնահատկությունների քննությունը չի կարող ամբողջական լինել, եթե գրական և խոսակցական տարբերակների առանձնահատկությունների, սրանց միջև կատարված և կատարվող տեղաշարժերի հետ միասին հաշվի չառնվեն նաև գործառական ոճերի և ընդհանուր լեզվի փոխհարաբերությունները:

Այս տեսակետից, ինչպես դասական գրաբարի ենթաշրջանում, այնպես էլ հայոց լեզվի հաջորդ ենթաշրջաններում անհրաժեշտ է գրա-

1 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:

կան և խոսակցական (այլև՝ բարբառային) տարբերությունների կողքին հնարավոր գոյություն տեղ հատկացնել ռճական ուղղությունների և ֆունկցիոնալ ռճերի համար:

Գ. Զահուկյանը հայոց լեզվի պատմության խնդիրների մեջ որոշակի տեղ է հատկացնում նաև ռճերին. «Ուսական տարբեր սխառնանքի պատմությունը ևս պետք է մտնի հայոց լեզվի պատմության շրջանակների մեջ՝ ավելի պարզ դարձնելով գրական լեզվի փոփոխությունների կամ խոսակցական հիմքից հեռանալու կոնկրետ պատմությունը»²:

Ա. Այտրեյանը «Քննական բերականություն» աշխատության մեջ, հայերենի վերլուծության ուրույն հայեցակետով ցույց է տալիս, որ դասական գրաբարը ընդամենը հիսուն տարում գրական լեզվի օրինաչափությունների կողքին ի հայտ է բերում մի շարք այլ առանձնահատկություններ: Ա. Այտրեյանին առավել ևս հետաքրքրում էր հին հայերենի դասական վիճակի մեջ եղած «բերականական մասնավորությունների» և նրանց հետագա զարգացման քննությունը, որին և նվիրված է նշված աշխատության «նախաշաղիղը»: Ա. Այտրեյանը գտնում էր, որ «մեկ կողմանէ դպրաց դասու մը տկար եղեգներուն յեցած աղնուագոյն լեզուն իւր գոյութիւնը հաստատ բռնել կը ջանար, միւս կողմանէ ժողովրդական բաղմութիւնն իւր ցածրագոյն բարբառը՝ նորանոր փոփոխութիւններով ու աղաւաղութիւններովը մէկտեղ կը շարունակէր»³:

Եթե մի այնպիսի համակարգի ներսում, ինչպիսին որ է դասական գրաբարը, բացահայտվում են խոսակցական և գրական ենթահամակարգերի տարբերություններ, ռճերի բաղմազանություններ⁴, ապա լեզվահամակարգի շուրջ երեքհարյուրամյա զարգացումը, բնականաբար, կարող էր խորացնել հնչյունական, բառային-բառակազմական, քերականական երևութների, ինչպես նաև ֆունկցիոնալ ռճերի տարբերությունները:

Ութերորդ դարի հայերենը դասական գրաբարի զարգացման հե-

2 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 28:

3 Ա. Այտրեյան, Քննական բերականություն աշխարհաբար կամ արգի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, նախաշաղիղ, էջ 48:

4 Ա. Այտրեյան, նշվ. աշխ., էջ 3—334, Հ. Գալբրեյան, Մաշտոցյան լեզուն, ՀԱ, Վենետիկ, 1913, էջ 719—723, Գ. Գալեմբյարյան, Ոսկեդարյան և ոչ-ոսկեդարյան հայերենը, ՀԱ, Վենետիկ, 1893, էջ 257—272, Ն. Բյուզանդյան, Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունը, Տփղիս, 1900, Ն. Ակիմյան, Դասական հայերենը և Վիեննայի Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 49—55, Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 76—94:

տագա գրսևորումներից է, աչքի է ընկնում ոչ միայն գրական և խոսակցական ենթահամակարգերի, այլև առանձին ֆունկցիոնալ ոճերի տարբերություններով, որոնք հիմնականում բխում են ժամանակի խոսակցական (թերևս նաև բարբառային) ոլորտներից, ֆունկցիոնալ ոճերի առանձնահատկություններից, հիմնավորվում են այս դարից ավանդված և մեզ հասած մատենագրական երկերի համապատասխան իրողություններով։ Ավելացնենք նաև, որ ֆունկցիոնալ ոճերի գոյացման մեջ նշանակալից է մատենագրական երկերի հեղինակների ոճական անհատականության դերը։ Այս տեսակետից ութերորդ դարի մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» երկը։

Բովանդակության տեսակետից Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» ժողովրդական զրույցների, վիպական պատմությունների ժողովածու է։ Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «Մի կողմ թողնելով Վարդ Պատրիկի կնոջ՝ Մարիամի մասին պատմածը և վերջին երկու հատվածները՝ Ծիծառնա խաչի և Տիրանի մասին, որոնք առանձին զրույցներ են, մնացածն, ինչ որ պատմում է Հովհան Մամիկոնյանն իբրև «Տարոնի պատերազմ», կամ երկրորդ հին վեպի մնացորդներ են, կամ տեղական զրույցներ, որոնք խմբված են եղել «Պարսից պատերազմի» շուրջը և կապված են եղել այդ պատերազմը վարող հերոսներից՝ մեկի անվան հետ։ Անշուշտ, որոշ տեղերում երևում են նաև խմբագրողի հավելումները, ինչպես են՝ խոտաճարակների աղտթբը (էջ 16), գլուխների վերջում (էջ 28, 29, 43, 49) տրված տեղեկությունները ս. Կարապետի վանքի մասին, վանահայրերի հաջորդությունը, այլև շատ տեղերում ավելացրած կրոնական բովանդակությամբ կտորներ։ Բայց ամբողջն ընդհանրապես ժողովրդական է»⁵։

Միանգամայն գիտական և ընդունելի համարելով Մ. Աբեղյանի վերոհիշյալ տեսակետը, իբրև հավելում կարելի է նշել նաև այն, որ պատմության բուն մասը՝ իրոք ժողովրդական զրույցներն ու պատմությունները (ի հակադրություն մյուսների), պահպանելով են բառապաշարի այնպիսի նորակազմություններ և նոր իմաստային կիրառություններ, աչքի են ընկնում ձևաբանական և շարահյուսական այնպիսի

5 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 455 (Տե՛ս նաև՝ Յովհանն Մամիկոնեան, Պատմություն Տարոնոյ, աշխատությամբ և առաջարկով պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ XXV—XXIX, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 331)։

առանձնահատկություններով, որոնք բխում են ժամանակի հայերեն ժողովրդախոսակցական լեզվից ու ոճերից:

«Տարոնի պատմություն» շարադրանքը ընթանում է մերթ պատմագրական ոճի երկերին բնորոշ, մերթ հեղինակի ոճին յուրահատուկ միջոցներով ու եղանակներով, սրունք հետապնդում են որոշակի գործառական նպատակներ:

Այս «Պատմություն» լեզուն արժեքավոր տվյալներ կարող է մատուցել հայերենի պատմական բարբառագիտությանը: Այս նպատակով կարելի է ուսումնասիրել պատմություն մեջ նկատվող հնչյունական այն տարբերությունները, որոնք դրսևորվում են կամ հնչյունական ամփոփումների, կամ կրկնակ ձևերի տեսքով, եթե դրանք չեն բացատրվում «Պատմություն» հետագա գրչագրական աղավաղումներով: Բառային, քերականական առանձնահատկությունները նույնպես արժեքավոր են բարբառագիտական ուսումնասիրությունների համար:

Եթե լեզվի դարգացման պատմությունը ընդհանրապես ինչ-որ չափով կապվում է նաև այդ նույն լեզվի գրական ոճերի պատմության հետ, ապա Հ. Մամիկոնյանի լեզվաոճի ուսումնասիրությունը նույնպես նպաստում է հայոց լեզվի պատմական ոճագիտության ստեղծմանը:

Հայ բանասիրության մեջ այս հեղինակի և նրա «Պատմություն» մասին եղած աշխատանքները հիմնականում կատարվել են երեք ուղղություններով: Դրանք վերաբերում են Հ. Մամիկոնյանի անձնավորության, նրա պատմության գաղափարական բովանդակության բացահայտումներին, ինչպես նաև «Տարոնի պատմության» լեզվի որոշ կողմերին:

Ա. Առաջին խմբի մեջ մտնում են բանասիրական այն աշխատանքները, որոնք կատարվել են Գ. Խալաթյանի, Գ. Զարբհանալյանի, Ա. Զամինյանի, Մ. Աբեղյանի, Լեոյի և ուրիշների կողմից:

Գ. Խալաթյանի աշխատությունն աչքի է ընկնում հետևյալ երկու կողմերով՝ ա) Հ. Մամիկոնյանի և նրան զուգահեռ նշվող Զ. Գլակի ժամանակագրական մերձեցումը (VII դար), բ) Զ. Գլակին հատկացվող «Պատմության» մասերի համեմատությունը նախորդ շրջանի որոշ մատենագիրների հետ: Երկրորդ դեպքում ուսումնասիրությունը կապվում է Հ. Մամիկոնյանի հետ այնքանով, որքանով որ Հ. Մամիկոնյանը նույնացվում է Զ. Գլակի հետ⁶:

6 Գ. Խալաթյան, Զենոբ Գլակ (համեմատական ուսումնասիրություն), Վիեննա, 1893:

Մ. Աբեղյանը զբաղվել է այս երկի գրության ժամանակի, հիմնական աղբյուրների, նպատակների ու խնդիրների և այլն հարցերով՝ կապված հայ ժողովրդական բանահյուսությանը նվիրված ուսումնասիրությունների և «Հայոց հին գրականության սպառմություն» աշխատության շարադրման հետ⁷:

Հայ բանասիրության մեջ առաջին անգամ Մ. Աբեղյանն է, որ հայ վիպական բանահյուսության ժամանակագրական տարբեր նստվածքներից, գաղափարական-բովանդակային պատմաներից առանձնացնում է այս «Պատմությունը»՝ վերջինս գնահատելով որպես հայոց հին վիպական ստեղծագործության՝ «Պարսից պատերազմի» վերապրուկային նորություն: Մ. Աբեղյանը հանգում է այն եզրակացության, որ «Տարոնի պատմությունը» հայ ժողովրդական վիպասանության տեղայնացված երևույթ է, և որ Հ. Մամիկոնյանն այդ գործում ունի միայն շարադրողի կամ խմբագրողի դեր: «Այս վեպն իսկական ժողովրդական մի պատմված է, իսկական պատմվածքներ, որոնք գրեթե ամբողջովին ավանդական բանահյուսությունից են ծագում, ուստի և ունին իրենց մեջ ժողովրդական վիպական տճի հատկություններն ու մոտիվները»⁸:

Մ. Աբեղյանը քննում է հետևյալ կարևոր հարցերը. ա) Հ. Մամիկոնյան անունով մատենագրի գոյությունը և վերջինիս ժամանակը (VIII դար և դեռ ավելի ետ), բ) նրա «Պատմությունը» իբրև վիպական զրույցների ժողովածու, գ) այդ «Պատմությունը» որպես հայ ժողովրդի հին վեպի տեղայնացված տարբերակ և այլն:

Այնուհետև, Մ. Աբեղյանը «Տարոնի պատմության» ժողովրդական ծագման առումով, վիպական հենքի վերաբերյալ նշում է այսպիսի փաստեր՝ 1) ժողովրդական զրույցն ու հորինոսմանը իբրև աղբյուր ունենալը, 2) այդ զրույցների՝ վիպական հերոսներից որևէ մեկի կամ մի քանիսի հետ կապվելը և նրանց շուրջ պատվելը, 3) ժողովրդական զրույցներին բնորոշ լեզվամիջոցների, բառային ստուգաբանությունների արտահայտվածությունը, 4) վիպական հերոսների արյունակցական հաջորդականությունը, վիպական գծերով օժտվածությունը, 5) Հ. Մամիկոնյանի կողմից կատարված խմբագրական աշխատանքի անհետևողականությունը (ժամանակախախտում, հերոսների մի մասի չափից ավելի ընդարձակ, մյուս մասի սեղմ բնութագիր, որոշ դեպքերի, իրադարձությունների լայն կամ նեղ արտացոլում և այլն):

7 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա և Գ, Երևան, 1966 և 1968, էջ 324 և 447—472:

8 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 454:

Մ. Աբեղյանը «Տարոնի պատմությունը» գնահատում է նաև որպես իր ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական պայքարի զրուհի ման արտահայտություն. «Ինչքան էլ կրոնական տարրը բավականին շեշտված է այս վեպի մեջ, բայց և այնպես էականը ոչ թե այդ է, այլ քաղաքական և տնտեսական կողմը և պատերազմը դրա համար: Դա մեր երկրորդ հին վեպի մնացորդն է, որ ձևափոխված է հետագա դարերի պատմական ազդեցությամբ: «Պարսից պատերազմը» սրա մեջ կորցրել է իր ընդհանուր ազգային բովանդակությունը և դարձել է Տարոնի տեղական վեպ»⁹:

Հայ ժողովրդի հոգեւոր մշակույթի արժեքավոր հիմնադրամասը այս «Պատմության» (հատկապես Զենոբ Գլակի անունով հայտնի առաջին մասի) պատմաբանասիրական կարեւորագույն և հանդուցային խնդիրները լուսաբանելու և գրական-մշակութային կապերի համեմատաբար լայն ֆոնի վրա ներկայացնելու փորձ է Ղ. Ալվազյանի բոլորովին վերջերս լույս տեսած աշխատությունը¹⁰: Այս աշխատության կարեւորագույն խնդիրները հետևյալներն են. 1) արժեքավորել «Պատմության» հետ առնչվող բանասիրական մինչ այս հայտնի վերլուծությունները, 2) բացահայտել և բնութագրել «Պատմության» պատմագիտական, թե ժողովրդական-բանահյուսական նմուշ լինելու հանգամանքը, 3) քննության առնել «Պատմության» առաջին մասը՝ գաղափարական-թեմատիկ բովանդակության և երկու մասերի տիպային, գրական-ոճական (ոչ՝ լեզվաոճաբանական) տեսանկյուններից, որոնք էլ, ըստ էության, կազմում են հեղինակի այս ուսումնասիրության հիմնական երեք բաժինները: Հետագա վերլուծությունը նվիրված է «Պատմության» նախնական բնագրի վերականգնման, ինչպես և IV—VII դդ. հայ գրականության մեջ «Տարոնի պատմության» ունեցած նշանակության բացահայտման հարցերին: Ինչպես նշվում է տարբեր առիթներով, աշխատության հեղինակը ունեցել է հետևյալ նպատակը. «Տարոնի պատմության» տեքստի տրամաբանական-իմաստային վերլուծության օգնությամբ հիմնավորելու հուշարձանի, հատկապես նրա առաջին մասի, բովանդակության հավաստիությունը»¹¹: Ինչպես տեսնում ենք, հեղինակի նպատակադրումից դուրս է եղել «Տարոնի պատմության» լեզվական քննությունը: Պետք է, սակայն, նշել, որ «Տարոնի պատմության»

⁹ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Ա, էջ 471:

¹⁰ К. В. Айвазян, «История Тарона» и армянская литература IV—VII веков (Историко-филологическое исследование), Ереван, 1976.

¹¹ Նույն տեղում, էջ 7:

երկրորդ մասը, որը մեզ է ավանդվել Հովհաննես Մամիկոնյանի անունով (ի հակադրություն Զենոբ Գլակի անունով հայտնի առաջին մասի) երևան է բերում լեզվաոճական միանգամայն առանձնահատուկ ու ինքնատիպ նյութ՝ բառապաշարային, բերականական և հեղինակային կամ ֆունկցիոնալ-ոճական զգալի տարբերություններով։ Սրանք հիմնական գծերով արտացոլում են հին հայերենի նախամիջին ենթաշրջանի (հատկապես VIII դարի հայերենի) լեզվավիճակը։

Եթե Գ. Խալաթյանի, Մ. Աբեղյանի և Ղ. Ալվաղյանի ուսումնասիրությունները հարցադրումների և սրանց հիմնավորումների տեսակետից ունեն հետազոտական ինքնուրույնություն, ապա բանասիրական մյուս աշխատանքները մնում են որպես առաջ քաշված և վերլուծված հարցերի սահմաններում կատարված դիտարկումներ։

Բ. «Տարոնի պատմության» թարգմանության և բնագրային հրատարակությանը նվիրված աշխատանքներում հեղինակները կամ սովորաբար պաշտպանում են ընդհանուր և հայտնի տեսակետներ և հաճախ դրանցով առաջնորդվում (օրինակ՝ Վ. Լանգուան, վենետիկցիները), կամ, ինքնուրույն ուսումնասիրության տվյալներից ելնելով, կատարում են կարևոր բանասիրական ճշգրտումներ, առաջ քաշում նոր հարցադրումներ (օրինակ՝ Ա. Գ. Աբրահամյանը)¹²։

Ա. Աբրահամյանի աշխատանքը առանձին դիրք է բռնում նախորդ բանասերների ուսումնասիրությունների շրջանակում։

ՀՍՍՀ Պետական ձեռագրատան (Մատենադարանի)՝ «Տարոնի պատմության» հետ առնչվող, առանձին, հայտնի ձեռագրերի, մինչ այդ հրատարակված համարյա բոլոր բնագրերի մանրակրկիտ քննությունը, վերջիններիս խորազնին համադրումը Ա. Աբրահամյանի համար հիմք են հանդիսանում հանդելու նոր մեկնաբանությունների և եզրակացությունների։

Ինչպես հայ մյուս մատենադիրների գործերի, այնպես էլ Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» ձեռագրերի համադրությամբ բնագրային հրատարակությունները պարունակում են արժեքավոր տվյալ-

¹² Jean Mamigonian, Continuation de l'histoire de Daron, traduite pour la première fois de l'arménien, par Jean-Raphael Emine (*Տես*, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, par V. Langlois, t. premier, Paris, MDCCCLXVII, էջ 359—382), Գովհաննես Մամիկոնեցի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջարկով պատմական դիտողությունների թեկնածու Ա. Աբրահամյանի, Երևան, 1941։

ներ հայոց լեզվի պատմության և հարակից խնդիրների ամբողջական ուսումնասիրությունների համար: Ա. Աբրահամյանի կողմից Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» բնագրի հրատարակությունը նոր մտորումների է մղում բանասերներին և լեզվի պատմաբաններին:

Ա. Աբրահամյանի ուսումնասիրության ամենակարևոր եզրակացություններից մեկն այն է, որ «Հովհան Մամիկոնյանը ո՛չ թե VII դարի հեղինակ է, ինչպես ենթադրել են ոմանք նրա հիշատակարանի նորամուտ հատվածի հիման վրա, և ո՛չ էլ IX դարի հեղինակ, ինչպես ենթադրել են մի քանի քննադատ բանասերներ, այլ VIII դարի»¹³:

Գ. Ա. Այտրնյանը Հ. Մամիկոնյանի «Պատմության» լեզվի փաստերով ցույց է տալիս նաև, որ հայերենի դասական գրաբարյան ձևերն ու համակարգային օրինաչափությունները բարեըջվում էին դեպի աշխարհաբարը՝ «նախնյաց ռամկորեն»¹⁴: Ա. Այտրնյանն իր լեզվական վերլուծությունների արդյունքները վերագրում է VII դարին, քանի որ Հ. Մամիկոնյանին նա համարում է այդ դարի հեղինակ: Ա. Այտրնյանը «Տարոնի պատմության» լեզվի փոփոխությունները դասական գրաբարի համեմատությամբ համարում է հետևյալները. 1) գրական լեզվի ենթահամակարգ են ներթափանցում նոր բառեր, 2) մինչ այդ հայտնի որոշ բառեր գրսևորվում են նոր իմաստային կիրառություններով՝ կապված ժողովրդական մտածողության որոշ առանձնահատկությունների հետ, 3) տեղի են ունենում բառերի արտահայտության պլանի որոշ փոփոխություններ՝ ղուգաձևում, ամփոփում կամ սղում, 4) փոփոխություններ են նկատվում նաև ածականական և դերանվանական հոլովաձևերի մեջ՝ ձևաիմաստային ոլորտների լայնացումով, 5) գրսևորվում են բայերի և շեքիով որոշ խոսքի մասերի փոփոխություններ՝ նոր բաձևերի առկայություն, խոնարհման տիպերի պարզեցում, ընդհանրացում, 6) նկատվում են բառերի ստուգաբանության փորձեր՝ դերազան-

¹³ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ..., Երևան, 1941, էջ XXIX: Նկատի ունենալով այն հանգամանքները, որ նախ՝ Ա. Աբրահամյանի կազմած բնականահամեմատական բնագրի լեզվական տվյալները միակերպ չեն, ամենահին ձևագիրը (Մատենադարանի ձեռագիր № 1912, ավանդված՝ 1220 թ.), ինչպես նաև այս պատմության վննտիկյան (1832 թ.) հրատարակությունը աչքի են ընկնում ավելի միակերպ լեզվական տվյալներով, երկրորդ՝ բանասերները (օրինակ՝ Հ. Աճառյան, Մ. Աբելյան և ուրիշներ) վննտիկյան հրատարակությանն են նախընտրություն տալիս, մենք էլ լեզվաոճական վերլուծությունների համար հիմք են ընդունել վննտիկյան հրատարակությունը և բառային-քերականական համադրումն էլ կազմել ենք ըստ այս հրատարակության:

¹⁴ Ա. Այտրնյան, նշվ. աշխ., էջ 124—130:

ցապես ժողովրդական ստուգաբանություններ, 7) կան շարահյուսական տեղաշարժեր՝ կապված ոչ միայն ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի, այլև հեղինակի խոսքի, լեզվամտածողության պարզեցման, սեղմության հետ:

2. Մամիկոնյանի լեզվի նման իրողություններին անդրադարձել է նաև Ս. Ղազարյանն իր աշխատության մեջ՝ նպատակ ունենալով ցույց տալ «հին հայերենի կրած փոփոխությունները V—X դարերում»¹⁵:

Այս ամենով հանդերձ, ոճագիտական տեսակետից Հ. Մամիկոնյանի երկի լեզվի առանձնակի քննություն մինչև օրս դեռ չի կատարված: Ակներև է, որ առանձին հեղինակների լեզվի և ոճի ուսումնասիրությունը կարող է որոշակի նպաստ մատուցել լեզվի պատմության տվյալ շրջանի առանձնահատկությունների, նրա զարգացման միտումների բացահայտմանը:

2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզվաոճական առանձնահատկությունների քննությանը նվիրված ներկա աշխատանքում առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով:

Լեզվական և ոճական իրողությունների, սրանց առանձնահատկությունների քննությունը կատարել ենք պատմական հայեցակետից, որի դեպքում կիրառվել է համեմատության և համադրության եղանակը: Այլ կերպ ասած՝ իբրև հին հայերենի նախամիջին ենթաշրջանի կոնկրետ լեզվավիճակի վկայություն, այս «Պատմության» լեզվաոճական իրողությունները ուսումնասիրության ընթացքում համարյա միշտ համեմատվել են հին հայերենի դասական գրաբարի ենթաշրջանի իրողությունների հետ, ընդ որում նկատված տարբերությունները համադրվել են միմյանց հետ և դրվել համապատասխան եզրակացությունների հիմքում: Բոլոր դեպքերում նկատի ենք ունեցել պատմական արժեք ներկայացնող երկերի ուսումնասիրության այն մոտեցումը, ըստ որի՝ «լեզվի որ շրջանով էլ որ զբաղվելու լինենք, աղբյուրների լեզվի մեջ պետք է տարբերել դեպի խոր հնություն գնացող շերտերը, մեր ժամանակին մոտիկ կանգնած շերտերից»¹⁶: Վերահիշյալ եղանակով կատարված աշխատանքի հիմնական նպատակն է եղել բացահայտել Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզվական նկարագիրը, ինչպես նաև ֆունկցիոնալ-ոճական արժեքը՝ ոչ միայն հին հայերենի նախամիջին ենթաշրջանի, այլև ընդհանուր հայերենի առումով:

¹⁵ Տես, Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 52—64:

¹⁶ Б. А. Ларин, Лекции по истории русского литературного языка (X—середина XVIII в.), М., 1975, էջ 145:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Տարոնի պատմությունը» հայ հին մատենագրության կարեւոր երկերից է, և որպես այդպիսին՝ հետաքրքրական աղբյուր ութերորդ դարի հայերենի պատմական գոյավիճակի մասին, կարծում ենք, որ ներկա ուսումնասիրությունը կարող է հետաքրքրական նյութ ընձեռել հայերենի ընդհանուր պատմության, մասնավորապես ութերորդ դարի հայերեն լեզվավիճակի ուսումնասիրության, ինչպես նաև հայերենի ֆունկցիոնալ ոճերի հետագա սիստեմատիկ քննության համար:

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն աչքի է ընկնում հարուստ բառապաշարով: «Տարոնի պատմության» բառապաշարը մի շարք առանձնահատկություններով տարբերվում է ոչ միայն հին հայերենի նախորդ ենթաշրջանների, այլև ութերորդ դարի մյուս երկերի բառապաշարից: Հ. Մամիկոնյանի բառապաշարը իր ակունքներով կապվում է ժողովրդախոսակցական լեզվի և նրա ոճերի հետ: Այս պատմության լեզուն համեմատաբար ավելի շատ ժողովրդախոսակցական բառեր և ոճեր է պարունակում, քան ութերորդ դարից ավանդված և մեղ հատած մյուս երկերը:

«Տարոնի պատմության» բառապաշարի ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրության կենտրոնում են հետևյալ հարցերը: Նախ՝ բացահայտվում են բառապաշարի աղբյուրները և զանազանվում հիմնական շերտերը: Երկրորդ՝ ընդհանուր բառապաշարի շրջանակներում քննվում են նորակազմ բառերի բառակազմական միջոցներն ու եղանակները, որոնք դրսևորվում են գերազանցապես հայերենի զարգացման ներքին գործոնների ազդեցության պայմաններում: Երրորդ՝ առանձին ուշադրություն է հատկացվում նոր բառերի և խմաստային կիրառությունների հանգամանակից քննությանը՝ հիմնվելով հայերենի բառաքննության և բառարանագրության ընձեռած տվյալների և ընդհանրապես մինչև այժմ այս ուղղությամբ ձեռք բերված նվաճումների վրա: Չորրորդ՝ ըստ ծագումնային, ֆունկցիոնալ-ոճական և կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրվում են դարձվածային միավորները, որոնք բառապաշարի հարստության մի մասն են կազմում:

«Տարոնի պատմության» բառապաշարի ատաղձը կազմում է հին հայերենի դասական գրաբարի շերտը, որը համարվում է մի շարք նոր և նորակազմ բառերով: Դասական գրաբարից եկող բառապաշարային որոշ միավորներ այս երկի մեջ կիրառվում են նոր իմաստներով, իմաստային նրբերանգներով:

Այս «Պատմության» բառապաշարի հարստությունը բաժանվում է երեք խմբերի, որոնք անմիջականորեն բխում են երեք աղբյուրներից: Դրանք հետևյալներն են՝ 1) գրաբարի բառապաշարից վերցված և իմաստային ոչ մի փոփոխության չենթարկված, 2) գրաբարի բառապաշարից վերցված և իմաստային որոշ փոփոխության ենթարկված և 3) ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից ներթափանցած, հեղինակի բառաստեղծամբ կամ ինքնուրույն կիրառությամբ դրսևորված բառեր և բառաձևեր:

Այս «Պատմության» բառապաշարի ուրույն առանձնահատկությունները և իմաստային կիրառությունները կապվում են վերջին երկու կարգի աղբյուրների հետ:

«Տարոնի պատմության» բառապաշարի նորակազմությունները և իմաստային կիրառությունները համարում են հայերենի ընդհանուր բառապաշարի իմաստային և ոճանրբերանգային հարստությունը, լայնացնում այդ ուղյակով բառապաշարի հարողորակցական, գործառական-ոճական տարողունակությունը:

«Տարոնի պատմությունը», թեև ժողովրդական զրույցների սահմաններում, մի որոշակի ժամանակահատվածի պատմական հուշարձան է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, ուղմապետական, իրավական, հոգևոր-մշակութային, կրոնական-եկեղեցական կյանքի մասին, մյուս կողմից՝ այն կարևոր վկայարան է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի մտածողության և հոգեբանության, նիստուկացի, շրջապատող բնության, մարդկային բազմազան հարաբերությունների մասին:

Բառապաշարի տարբեր միավորները ծագելով վերահիշյալ երեք կարևորագույն աղբյուրներից՝ կողք կողքի կազմում են մի համակարգային միասնություն, որը առկայն գործառական տեսակետից միատարր չէ: «Տարոնի պատմության» բառապաշարը խմբավորում ենք բառապաշարային հետևյալ շերտերի կամ գործառական-իմաստային դաշտերի մեջ:

1) Հոսսորակական-քաղաքական, ռազմապետական, իրավական
 կյանքի հասկացություններ արտահայտող բառերից են հետևյալները՝
 ազատք (<ազատաց), աթոռ («թագավորություն» իմաստով), աղեղ,
 ամուր («ամրոց» իմաստով), ամրոց, այրուձի, աշտարակ, աշտենաւոր,
 ապստամբել, ապստամբութիւն, առաջնորդ, ասպար, ասպարապետ,
 արքայ, արքունի, աւագ, աւարամտ, բանակել, բնակեցող, բանտ, բերդ,
 գաւառապետ, գերել, գերի, դիստետել, գող (գոյական), գործաւորք,
 գունդ, դաստակերտ, դատաստան, դատաւարտել, դարան, դարանա-
 կալ, դարապաս, զենպան, ղոնապան, դրօշ, դուռ («արքունիք» իմաս-
 տով), զենուլ, զենք, զրուցատար, զրուցարար, զօրք (նաև՝ զօր), զօրա-
 ժողով, զօրավար, զօրապետ, զօրութիւն, թագաւոր, թագաւորութիւն,
 թագաւորաբնակ, թիկնապահ, թշնամի, ժողովուրդ, իշխան, իշխանոր-
 դի, իշխանութիւն, իշխել, խաղացուցանել, ծառայ, ծառայութիւն, կո-
 տորել, կոտորած, հարկ, հարկապահանջ, հարկատու, հեծեալ(ք), հիմ-
 նարկութիւն, հրաման, ճակատել, մարդպան, մարդպանութիւն, մարտ
 («կռիւ» իմաստով), մեղաւոր, մեղադրել, յաղթութիւն, նախճիր, որ-
 դեգիր, որդեգրութիւն, որոգայթ, պանդխտութիւն, պաշտօնեայ, պա-
 տերազմ, պատգամաւոր, պատրիկ, պարիսպ, ռազմ, սաղաւարտ, սպա-
 րապետ, սլաք, սուր, տէր, տէգ, տուրք, փախուտ, փանդանել, փրկու-
 թիւն, օրէնք, օրինադրեալ և այլն:

2) Կրօնապաշտամունքային բառերից են հետևյալները՝ աս-
 տուած, աստուածային, աստուածապաշտութիւն, աղաշանք, աղաչել,
 աղօթել, անխօծել, անէծք, անհաւատալի, անմահական, անոխակալ,
 անսասանելի, անօրէն, ասպաստանիչ, աջ («սուրբ ձեռք» իմաստով),
 ատրուշան, արարած, աւետաւոր, աւետիք, բարեպաշտ, բարեպաշտօն,
 գերեզման, զժոխք, դիւարած, դեւ, դրախտ, եկեղեցի, եկեղեցական, եղ-
 կել, եպիսկոպոս, երդում, երկրպագեցուցանել, թողութիւն, ժամհար,
 խաչ, խաչադրօշ, խոտաճարակ, խստակրօնութիւն, խունկ, կաթողի-
 կոս/կաթողիկոս, կաթողիկէ/կաթողիկէ, կախարդ(ք), կախարդա-
 սարք, կախարդութիւն, կնկուղ, կնկղաւոր, կրակատուն, կրօնաւոր, հայ-
 րապետութիւն, հայրապետ, հաւատամք, հաւատացեալ, հրեշտակ, հօտ
 («հոգեւոր միասնություն» իմաստով), ձայնարկու, ձեռնադրել, ճգնա-
 ւոր, ճգնութիւն, մասունք, մարգարէ, մարգարտապսակ, մարտիրոս,
 մարտիրոսական, մեղք, նախաստեղծ, նախավկայ, նահատակութիւն,
 նշաւակ, նշխարք, նուիրակ, ռիսակալ, ռղբալ, ռգի, պաշտամունք, պատ-
 ժապարտութիւն, պատարագ, պենտակոստէ, սատանայ, սուրբ, սրբա-
 տէր, վանականութիւն, վանորայք, վկայարան, առճար, տապանատուն,

ուխտ, փափաքումն, փարախ («հոգևոր միասնություն» իմաստով), քա-
հանայ, քրիստոնեայ, Քրիստոս, օրհնութիւն, օգնականութիւն և այլն:

3) Իբրև մշակութային բառեր հանդես են եկել հետեւյալները՝ աշա-
կերտ, գիր, գրել, գրող, գուսան, դպիր, դպրութիւն, ընթեռնուլ, ընթեր-
ցող, ժամանակագրութիւն, իմաստուն, իմաստութիւն, մշակութիւն,
նշանագիր, շարագրութիւն, շէր, պատճեան, պատմութիւն և այլն:

4) Բնության երևույթների նկարագրության ժամանակ հեղինակը
կիրառում է այսպիսի բառեր՝ ալիք (<ալեօք), աղբեր, աղբի, ամառն,
ամպ, անապատ, անդադատան, անտառ, անտառաբլուր, առաւօտ, արե-
վելք, արօտ, գետ, գետավիժութիւն, գահավիժել, գիշեր, գիւ (<գլօք),
դաշտ, դաշտաձև, երեկոյ, երիկուն, երկիր, երկինք զառիվեր, լեռնաբը-
լուր, լեռն, խոպան, ծով, կաղամախիք (-անտառ), հարաւ, հարաւ-
կողմն (-տեղ), հեղեղատ, հիւսիս, հիւսիսական, ձոր, ճանապարհ, շարժ
(«երկրաշարժ» իմաստով), ջուր, ջրառատ, ստորոտ, ցամաք, փայտ,
քարայր, քարագլուխ («տեղ» իմաստով) և այլն:

5) Կենդանիների անուններից ունենք հետեւյալները՝ աղուէս, ան-
գեղք, արծուի, արջ, առեւծ, բուէճք, գայլ, եղջերու, երիվար, կուզ, մուկն,
նապաստակ, շուն, ջորի, ուղտ և այլն:

6) Մարդուն, նրա մարմնի մասերին վերաբերող բառերից են հե-
տեւյալները՝ ակն, աջ («ձեռք» իմաստով), արբունք, արիւն, արիւնոտ,
արիւնաթաթախ, բազուկ, բարձ, բերան, գագաթ («գլուխ» իմաստով),
գէշ, գիրկ, գլուխ, դի(ն), դիակ, թլփատ, թէկն, թիկնախառն, լեզու,
լեարդ, ծեր, ծերունի, ծերութիւն, կառափն, կուրծք, հասակ, հեր, հիւանդ,
ձեռն, ճակատ, մարմին, միտք, ողն, ոսկր, ոտն, ջիլ, ջան, սիրտ, վերք,
ունկն, փոր, քիթ, քրտինք և այլն:

7) Մարդկային զգացմունքների, վերաբերմունք, հարաբերություն-
ներ արտահայտող բառերից են հետեւյալները՝ ամաչել, ամօթ, անամօ-
թիլ, գանել, գոգչիլ, ընկեր, թրակոծել, լլկումն, լրբութիւն, խաբեութիւն,
խաղաղաբնակ, խնամատար, համբուրել, հեշտութիւն, ճիշ, ճշալ, մահ,
մարդասիրութիւն, մարմնական, մեծաբանել, մեռանել, մերձենալ,
միաբանել, միութարութիւն, նախանձ, նպխանձել, նեղանալ/նեղենալ,
նեղութիւն, շարաբարոյ, շարութիւն, սէր, վախճան, տարակուսանք,
տառապանք, ցանկութիւն, ցաւ, ցասումն և այլն:

8) Իբրև դրամական, տարածական, ժամանակային չափի անվա-
նումներ կիրառւում են հետեւյալ բառերը՝ ամ, ամիս, դրամ, դահեկան,
ժամ, կանգուն, վաղ, տարի, օր:

9) Ազգակցական կապ արտահայտող բառերից են հետեւյալները՝

ազգ, աղգական, աղգատոհմ, աղխ, եղբայր, եղբորորդի, դաւակ, ժառանգ, ժառանգութիւն, հայր, հօրեղբայր, որդի, պապ, տիկին, ցեղ, քեռորդի և այլն:

10) Առօրյա խոսակցութեան մեջ հանդիպող բառերից են հետևյալները՝ աղբ, աղաղակ, աղաղակել, արժանահաս, աւելախօս, բարեխօս, բարերարութիւն, բարկութիւն, գիշահոտ, դեհ («կողմ» իմաստով), զրոյց, խեղդել, ձիագող, ձորամուտք, մօրաթաթխ, մօրահեղձ, շատախօս, շատակեաց, շատակեր, պարսաքար, քաղաքացի, քարապաշտ և այլն:

11) Եվ վերջապես, իբրև առտնին իրեր, հարաբերութեաններ արտահայտող բառեր հանդես են եկել հետևյալները՝ արօր, բեռ, բժշկել, բժշկութիւն, գինի, դանակ, հանդերձ («զգեստ, հագուստ» իմաստով), ճաշ, ճաշակել, ճենձ (<ճենձերաց), մախաղ, մահիձ, մատանի, մուրձ, շամփուր, պահարան, պսակ, ջահ, սապոն, սպասք, սոնապան, օթեան և այլն:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս խմբավորումները կարելի է վերախմբավորել ավելի կոնկրետ իմաստային փնջերի մեջ, սակայն մի բան պարզ է, որ այս խմբավորումները նույնպես ճիշտ են արտացոլում հեղինակի բառապաշարի շերտերը:

2. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ելնելով լեզվի բառապաշարի հնարավորութեաններից, մարդկային հաղորդակցման գործընթացում բառակազմական ճանապարհով նույնպես տեսողծով են նորակազմ բառեր և բառաձևեր:

Հայոց լեզվի բառապաշարի հարստացման ներքին գործոնը դրսևորվում է բառակազմական՝ հիմնականում բառաբարդման և ածանցման երևույթներով:

Ներքին՝ բառակազմական գործոնին հակադրվում է արտաքին գործոններից մեկը՝ փոխառութեանը: Երկու դեպքում էլ լեզուն ձգտում է արտահայտել մտածողութեան նոր որակներ:

«Տարոնի պատմութեան» բառապաշարի մեջ նույնպես նկատվում են բառակազմութեան և փոխառութեան երևույթներ:

Հ. Մամիկոնյանի պատմութեան բառապաշարի բառակազմական միջոցների և եղանակների քննութեան դեպքում հիմնական ուշադրութեանը հատկացվում է պատմութեան մեջ հանդես եկած նոր և նորա-

կազմ բառերին, թեև չեն անտեսվում հայերենի նախորդ փուլերից բխող բառային միավորները:

«Տարոնի պատմության» հեղինակը օգտագործել է այնպիսի նորակազմ բառեր, որոնք կազմվում են հայերենի բառակազմական ներքին օրենքներով՝ անկախ դրանց ժամանակի խոսակցական լեզվի կամ հեղինակի լեզվի արդյունք լինելուց: Այսպիսիք են, օրինակի համար, անլախօս, բարձրաբուն, դիարած, ձիաառք, մօրաքաքալս, մօրահեղձ, պատերազմագլուխ, փոխատու և այլն:

Մյուս կողմից, այս պատմության մեջ կիրառված նոր բառերը հիմնականում փոխառություններ են, որոնք նախապես անցել են հայոց լեզվի ընդհանուր բառապաշարին, այնուհետև՝ գործածվել այս երկի մեջ: Այսպիսին են հալալ, շէր, սապոն, դիմէսլեկոս գոյականները, փանդանել բայը և սրանից կազմված ֆանդիկ տեղանունը, ինչպես նաև՝ Ռահան, Համամ անձնանունները:

Նախ խոսենք բառաբարդման երևույթների մասին:

Ինչպես գիտենք, հայերենում բառաբարդման ճանապարհով գոյանում են երկու տիպի՝ անիսկական և իսկական բարդություններ, որոնք իրենց հերթին վերախմբավորելի են բառակազմական որոշ առանձնահատկությունների հիման վրա: Հ. Մամիկոնյանի պատմության բառապաշարը արտացոլում է հայերենի համապատասխան իրողությունները: Բառային միավորները հանդես են գալիս բազմազան դրսևորումներով, ունեն ոչ միայն հեղինակային, այլ նաև պատմագրության գործառական ոճի յուրահատկություններ՝ կապված պատմության նյութի շարադրանքի հետ:

Անիսկական բարդությունների բառակազմական, իմաստային, շարահյուսական էական առանձնահատկությունների հիման վրա հայ լեզվաբանության մեջ արդեն ավանդական է դարձել տարբերակել կրկնավոր, հարադրական, բաղձյուսական և կցական բարդություններ:

«Տարոնի պատմության» մեջ բառաբարդման այս երևույթները ավելի լայն կիրառություն ունեն հարադրական բարդությունները, որոնց կողքին կրկնավորները և կցականները պակաս, իսկ բաղձյուսականները աննշան դրսևորումներ ունեն:

Հ. Մամիկոնյանի մոտ հանդիպում են կրկնավոր բարդության ընդամենը երեք օրինակ, որոնք կազմվում են մի դեպքում թվականի՝ մի

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1964, էջ 168—169, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1954, էջ 159—170:

մի, մյուս դեպքում մակբայների՝ գէշ գէշ, սակաւ սակաւ, հիման վրա. «...և զիշխանսն մի մի կոշել տայր, և զգլուխսն կտրէր» (27): «Զոր տեսեալ զօրաց, զրոհ տուեալ, մի մի հասանէին» (40): «...և ի նոյն տեղոջն ականաւ մի մի ունել զնոսա» (48): «...տակայն այսօր չպրծնուտ ի ձեռաց քաջ արամեցս, որ գէշ գէշ պատառնն զձեզ սուսերք մեր» (35): «...և քանզի նուրբ էր մուտ քաղաքին, սակաւ սակաւ կարէին մտանել ի ներքս» (22):

2. Մամիկոնյանի լեզվում հարադրավոր բայերը բավական տարածված են: Իբրև հարադրավոր բայաբաղադրիչ հանդես են գալիս առնել, անցանել, գալ, գնալ, ելանել, լինել, պրծնուլ և նման միավորները, իսկ որպես հարադրավոր այլ կարգի բաղադրիչ կիրառվում են գոյականը, մակբայը, նախադրությունը, մասամբ՝ ածականը:

Վերոհիշյալ կարգի հարադրավոր բայերը պարունակում են մեկ բառի արժեք ունեցող իմաստային, ոճական յուրահատկություններ, դրանց մի մասն ունի դարձվածային-ոճական իմաստներ և այսուհանդերձ հակադրվում է հարադրավոր բայերի մյուս մասին՝ սովորական հարադրավոր բայերին: Իմաստային այսպիսի հակադրությունը բնորոշ է համարվում հայերենի ժամանակակից փուլին ընդհանրապես: «Հայոց լեզվի հարուստ բառազանձի ու հատկապես նրա բայական կազմի մեջ ուրույն տեղ գրավելով՝ հարադրավոր բայերն ունեն ոչ միայն դարձվածաբանական, այլև իմաստաբանական ու ոճաբանական մեծ արժեք ու նշանակություն, որը պայմանավորված է նրանց ձևաբանական յուրահատուկ կառուցվածքով և այն իմաստով, որ արտահայտում են հարադիրն ու բայական բաղադրիչը միասին, իբրև բառային մի միություն: Ըստ որում, եթե իրենց ձևաբանական ընդհանուր, այսինքն՝ հարադիրբայ կառուցվածքով հարադրավոր բայերը չեն տարբերվում իրարից, ապա իմաստային-իմաստաբանական տեսակետից, ընդհակառակն, էական տարբերություններ են երևան հանում միմյանց նկատմամբ և մեղ ներկայանում են կամ իբրև դարձվածային հարադրավոր բայեր, կամ իբրև ոչ-ալգալիսիք»²:

Ինչպես նկատելի է, հայերենի հարադրավոր բայերի դասակարգումը կատարվում է միակ ու էական՝ դարձվածային կամ ոչ-դարձվածային իմաստային տարբերակիչ հատկանիշի հիման վրա, արդյունքում ունենալով բուն հարադրավոր բայեր և դարձվածային հարադրավոր բայեր:

2 Ա. Մարգարյան, Արդի հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 226:

Այս տեսակետից, Հ. Մամիկոնյանի բառապաշարի բուն հարադրավոր բայերի մի մասը (հմմտ. աղօթս առնել—աղորել, սուգ առնել—սգալ և այլն) կարելի է ուսումնասիրել առանձին, իսկ մյուս մասը՝ դարձվածային հարադրավոր բայերը (հմմտ. ընդ գինի մտանել—արբել, հարբել, հասանել ի քիկունս—օգնության հասնել, օգնել և այլն) առանձին³: «Տարոնի պատմության» մեջ կիրառված հարադրավոր բայերը լինելով պատմագրական երկի բառապաշարային միավորներ, ունեն ոչ միայն համապատասխան բառաքերականական, շարահյուսական տարբերություններ, այլև՝ ոճական գործառնություններ:

Գործառական-ոճական տեսակետից բայական միավորները ընդհանրապես ունենում են իմաստային ակնառու տարբերություններ կամ մտնում են բառիմաստային առանձին դաշտերի մեջ (հմմտ. շարժման բայեր, եղելության բայեր, զուգընթաց գործողության բայեր, ցանկության բայեր, մտածական բայեր, վիճակային բայեր և այլն): Սրանք կարող են հիմք դառնալ խոսքի շարադրանքի ոճական երանգավորումների, հաղորդակցական որոշակի նպատակների իրագործումների համար:

Հ. Մամիկոնյանի բառապաշարի հարադրավոր բայերի բայական բաղադրիչները ցույց են տալիս հիմնականում երեք իմաստ. 1) գործողության՝ առնել, առնուլ, գործել, դնել, խոստանալ և այլն, 2) լինելության կամ վիճակային՝ հիմնականում լինել բայը, 3) շարժման՝ ելանել, մտանել, պրճնուլ և այլն, որոնք ունենում են որոշակի ոճական գործառնություններ:

Անդրադառնալով Հ. Մամիկոնյանի պատմության բնագրում երեք կարգի իմաստային խմբեր կազմող հարադրավոր բայերի կազմությանը և կիրառությանը:

1) Առաջին խմբի՝ «առնել» իմաստն ունեցող հարադրավոր բայերի ղեկավարում իբրև հարադրի բաղադրիչներ հանդես են գալիս գոյականը, մակբայը, նախադրությունը՝ նվազող հաճախականությամբ:

ա) Այս պատմության մեջ մեծ չափերի է հասնում հարադիր-առնել բայ կաղապարն ունեցող հարադրավոր բայերի խումբը: Հարադիրը՝ կոնկրետ ղեկավարում մեծ մասամբ գոյական է, մասամբ՝ մյուս

³ Այստեղ քննվում են առաջին խմբի մեջ մտնող հարադրավոր բայերը՝ կապված սրանց բառակազմական միջոցների և եղանակների նույնության հետ, ուր հնարավոր է, որ մասամբ օգտագործվեն նաև երկրորդ խմբի միավորները՝ նկատի ունենալով վերջիններիս բառակազմական (արտահայտության պլանի) ընդհանրությունը և ոչ թե իմաստային (բովանդակության պլանի) համընկումը:

խոսքի մասերից որևիցե մեկը: Այսպիսի բայերից են՝ աղօթս առնել, աւետես առնել, յանձն առնել, բանս առնել, գետալէժ առնել, զանց առնել, իջեանս առնել, ի մէջ առնել, ի քուն առնել, խոյս առնել, ծաղր առնել, հանդէս առնել, ճաշ առնել, մերկ առնել, մօտահեղձ առնել, պատ-
րաստի առնել, սէր առնել, փախստական առնել և այլն: *Օրինակ՝ «Իսկ նորա հրամայեալ սպասաւորացն ճաշ առնել իւրոց կրօնաւորացն...» (11): «Բայց ի թիկունս նմա եհաս Վարազ իշխանն Պալունեաց, և առաջի եղեալ զգօրսն՝ գետալէժ առնէին» (48) և այլն:*

բ) *Հարադիրութաւ*. քոյլ տալ, տեղի տալ, տալ ի ձեռս, տալ պատասխանի, հրաման տալ, նշան տալ, խրատ տալ, զրոյց տալ, տալ բանից նիշ, տալ բանից նշան, տալ պատուէր, խոյս տալ, ձայն տալ: *Օրինակ՝ «Աղաչէր բազում անգամ զկրօնաւորսն, զի քոյլ տացեն մտանել յեկեղեցին» (9): «Ի դուռն կոչեաց զնոսա, և ետ խրատ՝ թէ յորժամ ի ձեզ հային, դուք միաբան ի քաղաքն դարձէք» (22): «Զի՞նչ է այդ, զրոյց տուր ինձ» (24) և այլն:*

գ) *Հարադիրութառնալ*. բառնալ զգլուխ, ձայն բառնալ: *Օրինակ՝ «...ի սակաւ ժամու բարձին զգլուխ նորա...» (24): «...եթէ կարի սաստկացան ի վերայ նորա, ձայն բարձեալ ասէ...» (40):*

դ) *Հարադիրութգործել*. դարան գործել, մեղս գործել: *Օրինակ՝ «Իսկ նա խորհեցաւ մանու դարան գործել նմա, և արձակեաց կոչել առ ինքն Մուշեղ...» (14): «...և ի ներքս նենդութեամբ դարան մանու գործեալ՝ ի ձեռս գալ զօրացն» (22): «...և բազում մեղս գործեալ իցեն և առատաձեռնին ի մեղաւոր ընչից իւրեանց սրբոյ Կարապետին...» (19):*

ե) *Հարադիրութդնել*. առաջի դնել, դնել ի մտի, ի վերայ դնել, դնել ի միջի: *Օրինակ՝ «...և յորդորեալ զգօրսն ի պատերազմի, առաջի եղեալ զնոսա ի փախուստ...» (13): «Եւ արդ, որդեակ, դի գայս ի մտի քում, զի եթէ ի վերայ քրիստոնէից մեռանիս...» (21):*

զ) *Հարադիրութստանալ*. բարիս խոստանալ, չարիս խոստանալ: *Օրինակ՝ «Սա բազում անգամ բարիս խոստանայ, և բազում անգամ չարիս, բայց խնդրէ զնշխարս Մուշեղայ իշխանին...» (43):*

է) *Հարադիրութգել*. ձգել զձեռն, ի բաց ձգել: *Օրինակ՝ «Եւ նորա ձգեալ զձեռն իւր ի սուրն՝ որ առաջի կայր...» (25): «Եւ աճապարեալ ի բաց ձգեաց զաջոյ ոտնն սոնապանօք հանդերձ...» (51):*

ը) *Հարադիրութառնուլ*. կասկած առնուլ, առնուլ բանից նշան, ի մէջ առնուլ: *Օրինակ՝ «...սկսան կասկած առնուլ, և կամէին յետս դառնալ» (22): «...մինչև էառ բանից նշան զգօրսն կոչելոյ» (27): «Եւ ի վերայ*

շրջեալ, զմեւս թեւն Վահանայ բոլորեալ, ի մէջ առեալ զգօրսն Պարսից, կոտորեցին մինչև յերեկոյն» (42):

2) Երկրորդ խմբի՝ «լինել» իմաստ ունեցող հարադրավոր բայերի դեպքում որպէս հարադիր բաղադրիչներ հանդես են գալիս հիմնականում գոյականը, մակբայը, նախադրութիւնը, որոնցից մեծ թվով կիրառւում է մակբայը: Եթե առաջին խմբում որպէս հարադիր բաղադրիչ գերակշռում էր գոյականի, ապա այստեղ՝ մակբայի կիրառութիւնը:

ա) Հարադիր+լինել կաղապարով ունենք հետեւյալ բաղադրութիւնները՝ ազդ լինել, գիշերագնաց լինել, ժողով լինել, ի մօտս լինել, ընդ առաջ լինել, լի լինել, ուրախ լինել, նշաւակ լինել, լուռ լինել: Օրինակ՝ «...մի առնէր յիս զցասումն բարկութեան քո, զի մի եղէց նշաւակ աշխարհի...» (10): «Եւ իբրեւ ազդ եղել առ թագաւորն խոստով, և խնդաց յոյժ...» (14): «Եւ նորա գիշերագնաց եղեալ գնաց ի վերայ նոցա...» (31):

բ) Հարադիր+կալ. ի կալ առաջի, առաջի կայ (<կալ), յոտն կալ: Օրինակ՝ «Այո՛ աղաչեմք, եթէ մեղք մեծամեծ իցեն, ի կալ առաջի արքոյ եկեղեցւոյս...» (18): «Եւ զայս ասացեալ միաբան՝ յոտս կացին և զնշան խաչին դարձուցանէին...» (50):

3) Երրորդ՝ շարժման իմաստ ունեցող հարադրավոր բայերի դեպքում իբրեւ հարադիր բաղադրիչ հանդես են գալիս մակբայը, գոյականը, որոնք կարող են ուղեկցվել նախդիրներով: Մակբայը դարձյալ գերակշռում է:

ա) Հարադիր+ելանել. յառաջ ելանել, ընդդէմ ելանել, ելանել ի վերայ, եզր ելանել, ի գլուխ ելանել, ընդ միջոցն ելանել: Օրինակ՝ «Եւ ել ջահիւք ի վերայ զօրացն Պարսից...» (34): «...զի այնչափ կուտեցան ի վերայ, որ և տեղի չգտանէին՝ որ եզր ելանէին» (41): «Եւ ի մօտս եղեւ արեն, մնացին ի պարսից շորեքհարեւր, որք ընդ միջոցն ելեալ փախեան...» (42): «Եւ ի գլուխ ել աղօթքն Մանգնոսի...» (57):

բ) Հարադիր+գնալ. ընդ առաջ գնալ, գնալ ի վերայ, ի վայր՝ գնալ: Օրինակ՝ «Իսկ Վահանայ ընդ առաջ գնացեալ նոցա, իջոյց զնոսա...» (27): «Իսկ նորա ժողովեալ տասն հազար այր, գնաց ի վերայ նորա յԱնդակն...» (34): «...և հնարս իմացեալ, ընդ Մարկուց փողն ի վայր գնացին յեզր Արածանոյ...» (47):

գ) Հարադիր+գալ. ի ձեռս գալ, ընդ առաջ գալ, գալ ի վերայ, ընդդէմ գալ, գալ ի գլուխ, ի շուրջ գալ: Օրինակ՝ «...և ի ներքս ննեզութեամբ դարան մահու գործեալ՝ ի ձեռս գալ զօրացն» (22): «Իսկ Վահան փութով ընդ առաջ եկեալ զօրացն, աւետիս տայր...» (22): «...Զի Յոյնք են ի գալ

ի վերայ մեր, ասէ...» (27): «Եւ արք բերդին ընդդէմ եկեալ, քարամբ և զօր յանխնայ կոտորեցին զնոսա...» (27):

դ) Հարադիր-մտանել. մտանել ի ներքս/մտանել ի ներս, զնետ մտանել: Օրինակ՝ «...և քանզի նուրբ էր մուտ քաղաքին, սակաւ սակաւ կարէին մտանել ի ներքս» (22): «...և ներս մտեալ՝ սկսաւ կոտորել, և ի մօրսն լնուլ...» (22):

ե) Հարադիր-անցանել. ընդ առաջ անցանել, ի դուրս անցանել: Օրինակ՝ «Քանզի որդի նորա Սմբատ ընդ առաջ անցեալ, կտրեաց չորեք հազար երիվարս...» (38):

Սրանցից բացի, Հ. Մամիկոնյանի երկի մեջ տեղ են գտել հարադրա-վոր բայերի եզակի կիրառութիւններ. «...և ամենայն խստութեամբ տուեալ պատասխանի, և ի լոյս ածեալ զմահու դարանն, թքակոծեցին զնա...» (14): «...և զքիթսն կտրեալ ի շարի արկանէին և բերէին առ Սմբատ» (36): «Եւ Սմբատ ձայնս արձակեալ, ասէր...» (35): «Զոր տեսեալ դարանակալացն՝ յարեան ի վերայ, և կալան զնոսա» (27) և այլն:

Զուգադրական բայերը նույնպէս դասական գրաբարում գործուն լեզվական իրողութիւններ էին: Ա. Այտընյանը այսպիսի կազմութեան բայերը բաժանում է հիմնականում երեք տիպի՝ նկատի ունենալով զուգադրվող բաղադրիչների թեքման (խոնարհման, դերբայականացման) բնույթն ու եղանակները, ընդ որում այսպիսի բաղադրութիւնները համարում է գրաբարի պերճութեան մի մասը⁴:

Հ. Մամիկոնյանի բառապաշարի զուգադրական բայերը նույնպէս սովորաբար գոյանում են երկու բայի զուգադրումից՝ շարահյուսական փոխկապակցումով և համատեղումով արտահայտելով համեմատաբար կտրուկ և սլացիկ ընթացք ունեցող գործողութիւն: Այսպիսի միավորները գտնվում են իմաստային սերտ հարաբերակցութեան մեջ, լայնացնում և ուժեղացնում են վիպական պատումի մեջ առնվող գործողութիւնների ընթացքը: Այս տեսակետից, պատմութեան մեջ կիրառվող զուգադրական բայերը ոճական արժեք են ստանում: Այսպէս, օրինակ,

⁴ Հմմտ. Վ. Չալիխան, Քերականութիւն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելումով, աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885, էջ 399: Ըստ այս աշխատութեան՝ զուգադրական բայերի բաղադրիչները խոսքի մեջ ենթարկվում են թեքման, ընդ որում մի դեպքում խոնարհվում են երկու բաղադրիչները՝ դիմեաց եկն ի վերայ, խաղաց ելանէ ի ներքստ ի վեր, մյուս դեպքում՝ առաջին բաղադրիչը, իսկ երկրորդը առնվում է անորոշ դերբայով՝ դիմեաց զալ ի վերայ, խաղայ ելանէ ի ներքստ ի վեր, մի այլ դեպքում առաջին բաղադրիչը գրվում է անցյալ դերբայով և կիրառվում իմաստով մերձավոր մի այլ դիմավոր բայաձևի հետ՝ դիմեալ եկն ի վերայ, խաղացեալ ելանէ ի ներքս (տես նույն տեղում, էջ 433—434):

եթե համեմատելու լինենք զուգադրական բայերով դրսևորված «...և յետ ութ աւուրն եկն եհաւ Վախտանգն ի դաշտն անդր...» նախադասութիւնը իր երկու՝ սովորական բայերով կիրառելի տարբերակների հետ (հմտտ. «...և յետ ութ աւուրն եկն Վախտանգն ի դաշտն անդր...» և «...և յետ ութ աւուրն եհաւ Վախտանգն ի դաշտն անդր...»), ապա նկատելի կդառնա զուգադրական բայով արտահայտված իմաստային-ոճական տարբերութիւնները մյուսների համեմատութեամբ:

Նկատելի է, որ այս պատմութեան զուգադրական բայերի մեջ անցողական բայերի մասնակցութիւնը ավելի շատ է, քան մյուս բայերինը:

2. Մամիկոնյանի պատմութեան մեջ այսպիսի բայերը հանդես են գալիս զանազան եղանակներով՝ խոնարհվող և դերբայական ձևերի տարբեր կարգի զուգադրումներով: Այսուամենայնիվ, համապատասխան միավորները խմբավորում ենք նկատի ունենալով բայական բաղադրիչների հանդիպման դեպքերը:

ա) Առաջին խումբը կազմում են առնույ և այլ բայով զուգադրված հարադրութիւնները, ինչպես՝ առնույ-տանել, առնույ-գնալ. «Իսկ զորդին Վախտանգայ և զկինն առեալ տաւան յԱթից բերդն...» (36): ...զբաղաքն աւերեաց, և կրակատունսն այրեաց, և զսուրբ խաչն գերեաց, և առեալ գնաց ի պարսիկսն» (54):

բ) Գալ և այլ բայերով զուգադրութիւն, ինչպես՝ գալ-հասանել, գալ-մտանել. «...և յետ ութ աւուրն եկն եհաւ Վախտանգն ի դաշտն անդր...» (34): «...և ինքն եկն եմքտ առ Վահան ի վրանն...» (27):

գ) Ելանել և այլ բայով զուգադրութիւն, ինչպես՝ ելանել-անցանել, ելանել-գնալ. «...ի բաց կաց, զի ի պատերազմօղ արսն ելանեմ անցանեմ» (38): Եւ ելեալ գնաց ժողովել զզօրսն...» (47):

դ) Երթալ և այլ բայով զուգադրութիւն, ինչպես՝ երթալ-իջանել, երթալ-մտանել. «...Երթեալ մտին ի ձոր մի, և թագեան ննջեցին խոյս առեալ մինչև ի միւս աւուրն հասարակն» (42): «...և երթեալ էջ ի Հաշտեանս...» (44):

Հանդիպում են զուգադրական բայերի մենակաղապար բաղադրութեան եզակի օրինակներ, ինչպես՝ անցանել-գնալ, հասանել-կտրել, տանել-ածել. «...և ընդ Հայոց զօրսն հպարտացան բնակել Յոյնքն, անցին գնացին աւուր միոյ ճանապարհ ի դաստակերտն և անդ իջին» (13): «...որք զկրօնաւորսն կոտորեցին, անցեալ զնացին յԱստղօն ամրոցն...» (21): «Եւ տաւեալ ածեալ զնոսա ի դաշտին...» (32):

2. Մամիկոնյանի «Տարոնի պատմութեան» մեջ պատճառական հա-

բաղիր բայերը նախորդ երկու տիպի բայերի համեմատութեամբ քիչ են գործածւում: Այսպիսի բայերը հիմնականում հետեւյալներն են՝ ածել տալ, արկանել տալ, այրել տալ, արածել տալ, գրել տալ, դնել տալ, տալ զենուլ, թողուլ տալ, հանել տալ, կտրել տալ, շինել տալ, տանել տալ, կոչել տալ, տալ մօտիլ. «Եւ բարկացեալ Վաշդեան, ետ ածել զՀամամ...» (57): «...և ետ գրել բանից նիշ և ողջոյն, թէ երից աւուրց ել ի բլուրդ...» (25): «...և կոշեաց ի ծառայիցն Միհրանայ տասն այր հաւատարիմ, և ետ տանել զթուղթն առ Վաշիր...» (25): «Սուրէն բերեալ ետ զհարիւր հազար դահեկանսն և զուղտսն և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն...» (38) և այլն:

Հ. Մամիկոնյանի բառապաշարի մեջ չեն հանդիպում բաղճուսական բարդութեան կիրառութիւններ, եթե հաշվի չառնենք մեկ-երկու թվականական աշն. կազմութիւնները, որոնք զերծ են ֆունկցիոնալ-ոճական երանգներից:

Հայերենում սովորաբար կցական բարդութիւնները կազմւում են կրկնավոր, հարադրական, բաղճուսական բարդութիւններից՝ հիմնված իմաստային, կառուցվածքային փոփոխութիւնների, ինչպէս նաև արտասանական սերտաճումների վրա: Այսպիսի, օրինակ, հարադրական բարդութիւններից առաջացած կցականների դեպքում տեղի է ունենում բաղադրիչների սերտ կցում, արտասանական փոփոխութիւն՝ միասնական շեշտի առաջացում (համառ. ալկն ածել, յանձն առնուլ, ձայն արկանել→ալկնաձուլ, յանձնառուլ, ձայնարկուլ և այլն):

Այստեղ իբրև կցական բարդութիւններ մեծ մասամբ կիրառւում են թվական անուն բաղադրիչներ ունեցող կազմութիւնները, մասամբ՝ այլ կարգի միավորները, որոնք ընդհանուր առմամբ հանդես էին եկել հայոց լեզվի նախորդ ենթաշրջաններում:

Չնայած որ միայն թվական անուն բաղադրիչներով կազմված կցական բարդութիւնները այստեղ ունեն համեմատաբար լայն կիրառութիւններ, կազմութեան տեսակետից էլ նույնական են դասական գրաբարի համապատասխան եղանակների հետ, թեև հնարավոր է, որ նաև այդպիսի բաղադրութիւններ լինեն իրենց գրութեամբ միայն, այնուամենայնիվ այսպիսի կազմութիւնները չենք անտեսում: Այսպիսի թվականներից են՝ իննսունևութ, ութսունևեփ, ութուտասն, քսանևերորդ, քսանևիններորդ, քսանևութ և այլն: Օրինակ՝ «...զի հայր էր վանացն, և ընդ ձեռամբ փութով ունէր երեքհարիւր իննսունևութ կրօնաւորս...» (29): «...և նստաւ յարթոռ նորա Դաւիթ ամս երիս, որ է քսանևերորդ ի սրբոյ Գրիգորէ...» (49):

Հանդիպում են նաև անշաղկապ թվականական կադմությամբ կցական բարդությունների կիրառություններ՝ այս պատմության հրատարակության ընագրում ունենալով միաձուլյալ գրություն, ինչպես՝ երեքհարեւ, երեքհազար, իննհարեւ, չորեքհազար, ութհարեւ և այլն. «...քանզի զօրք իշխանին Պալունեաց թագուցեալ էին ի բլուրն ի փոքր ամրոցին ի Մեծամօրին, որք երեքհարեւ, ի ներքս Անդակայ...» (39): «Իսկ Սմբատ զՎահան կողմնապահ էր թողեալ ի գիշերին չորեքհազարաւն...» (46):

Եղակի դեպքում ունենք կցական բարդությանը զուգահեռ հարադրական՝ անջատական կադմությամբ հանդես եկած թվականի կիրառություն. «Կիրեղ (եկաց հայր վանացն.— Վ. Հ.) ամս Բաան և երկու» (8):

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» բառապաշարի իսկական բարդությունները սովորաբար կադմվում են այնպիսի բաղադրիչներով, որոնք ըստ էության առանձին բառեր են, բառարմատներ կամ առանձին արմատներ: Անկախ բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերությունից, բարդության առաջին բաղադրիչները սովորաբար դրվում են ուղղականով, մյուս բաղադրիչին միանում են ա հոդակապով կամ առանց հոդակապի, այլև շեշտափոխության ժամանակ կրում են որոշակի հնչյունափոխություն կամ զերծ են մնում դրանից⁵:

Մ. Աբեղյանը հայոց լեզվի բառակազմական համակարգում առանձնացնում է իսկական բարդությունների մի քանի տիպեր: «Տարոնի պատմության» բառապաշարի բարդությունները ներկայացնում ենք նույնաբերի խմբավորումներով. այս դեպքում նույնպես նկատվում են բարդության մասնակից բաղադրիչների կրած հնչյունական փոփոխությունները, ձևաբանական (կամ խոսքիմասային) պատկանելությունը, ինչպես նաև շարահյուսական զանազան փոխհարաբերությունները:

Նախ՝ այս պատմության նորակազմ բառերից մի քանիսը, լինելով իսկական բարդության նմուշներ, նույնպես ունեն հայոց լեզվին ընդհանրապես բնորոշ հնչյունափոխություններ. բռնատեղ (<բռուն-ատեղ), դիարած (<դէւ-արած), զրուցատար (<զրոյց-ա-տար), զրուցարար (<զրոյց-արար), խստակրօնութիւն (<խիստ-ա-կրօնութիւն), մարգարտապսակ (<մարգարիտ-ա-պսակ), գետավիժութիւն (<գետ-ա-վիժ-ութիւն), գիշահոտ (<գէշ-ա-հոտ) և այլն: Օրինակ՝ «Եւ իբրեւ

⁵ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 189:

վճարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւն, երկերիւր այր համարով թողեալ զրուցատարս այլոցն վասն առն՝ զոր տեսին ի գիշերին...» (34): «...կամ ի վիշտս կամ ի ցանկութիւն շարեաց կամ ի լիկումն կամ ի գետալիժութիւն կամ ի գազանացն բեկումն...» (18):

Երկրորդ՝ իսկական բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելության հատկանիշով այս պատմության մեջ կիրառված (հիմնականում նորակազմ, մասամբ՝ նախկինում վկայված) համապատասխան միավորները խմբավորվում են հետևյալ կերպ:

ա) Միայն գոյական անուն բաղադրիչներով կազմված իսկական բարդություններից են հետևյալները, ընդ որում առաջին անգամ այս պատմության մեջ հանդիպող մի քանի նույնատիպ տեղանուններն էլ միասին. Աստղաբերդ, բռնատեղ, գաւառապետ, Հայրաբլուր//Հայրբլուր, ձիագող, Մատրավան, մարգարտապսակ, պատերազմագլուխ, Սրեմավայր, Վարագաբլուր, Բարագլուխ և այլն: Օրինակ՝ «...և ետ զենուլ ի վերայ ձեռիսն և սրոյն, դի իջցէ արիւնն և թուլացուցցէ զբռնատեղն» (41): «...թէ արժան է ձեզ մարգարտապսակն զմարդպանին գողանալ...» (26): «...և յինքեանս առեալ զպատերազմն, սկսան կոտորել զպատերազմագլուխսն» (42):

բ) Գոյականով և բայարմատով կամ բայաբնով բաղադրված բարդություններից են հետևյալները, ընդ որում՝ միմիայն նորակազմ (մասամբ՝ տեղանուններ), ինչպես՝ այծարած, գետալիժութիւն, զրուցատար, զրուցարար, Համամաշէն, Զինկերտ, մօրաքաքախ, մօրահեղձ, ձիատար(ֆ), Բարակոփ, Բարապաշտ: Օրինակ՝ «...լինել զրուցատարս սքանչելեացն՝ որ հանդիպեցաւ ի կրօնաւորացն նոցա» (53): «Իսկ ոմանք փախստեայ լեալ, անցանէին հանդէպ մօրաքաքախ յՕձ քաղաքի» (58):

գ) Երրորդ խմբի մեջ մտնում են այնպիսի բարդությունները, որոնք կազմվում են ածականով և գոյականով, մակբայով և բայարմատով կամ բայաբնով, ինչպես՝ աւելախօս, բարձրաբուն, փոխատու: Օրինակ՝ «Առ ի՞նչ դարձայք ի պատերազմ, ով աւելախօս» (32): «...և ընդ տասն առնն ժամահար մի, և ընդ երկուսն խաշաղրօշ բարձրաբուն...» (50):

Իսկական բարդությունների այլ կարգի միավորներ էլ կան, որոնք հիմնականում կիրառված ենք գտնում հնագույն մատենագրական երկերում, ուստի և դրանց չենք անդրադարձնում (համտ. միաբան, միանաշակ և այլն):

Եվ երրորդ՝ այս պատմության բառապաշարի իսկական բարդությունների բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերությունը նույն-

նական է դասական գրաբարի համապատասխան երևույթների հետ: Այսպես, գոյականական կաղմություն ունեցող բարդությունների դեպքում նկատվում է բաղադրիչների հատկացուցիչ-հատկացյալային շարահյուսական փոխհարաբերության գերակշռող դրսևորում (հմմտ. գալառապետ, ձիագող, վարազաբլուր, ֆառագլուխ): Գոյականով և բայարմատով կամ բայաբնով կաղմված բարդությունների մեջ առկա է բաղադրիչների խնդրային կամ պարագայական փոխհարաբերություն (հմմտ. այծառած, զրուցատար, զրուցարար, մօրաթաթախ, մօրանեղծ, ձիատարֆ): Այն բարդությունները, որոնք գոյանում են ածական անուն և գոյական անուն խոսքի մասերով, ունեն բաղադրիչների որոշիչ-որոշյալային փոխհարաբերություն (հմմտ. բարձրաբուն), իսկ մակբայով և որևէ բայարմատով կամ բայաբնով կաղմված բարդությունների դեպքում գոյանում է բաղադրիչների պարագայական շարահյուսական փոխհարաբերություն (հմմտ. աւելախօս, փոխատու):

Մի քանի խոսք ածանցման մասին:

Իբրև ընդհանուր դիտողություն նկատելի է, որ Հ. Մամիկոնյանի պատմության բառապաշարի մեջ բառակաղմական միջոցի արժեք ունեցող ածանցները հին հայերենի դասական և ետդասական գրաբարի ենթաշրջաններում գործող համապատասխան օրինաչափությունների սահմաններից չեն անցնում:

Այս պատմության մեջ կիրառվում են հետևյալ ածանցները՝ -ակ, -ական, -անք, -ատ, -արան, -աւոր, -եայ, -եղէն, -եստ, -իկ, -իք, -ոտ, -ոտի, -որդ, -ութիւն, -ումն, -ունի, -ուտ, -ստան և այլն: Օրինակ՝ հետեակ, տափարակ, հալածական, փախստական, հալածանք, տառապանք, հեղեղատ, վկայարան, կտակարան, ամետատր, նենգատր, պաշտօնեայ, ի բացեայ, մագեղէն (<մագեղինօք), պանեստ, փոքրիկ, աւետիք (<աւետիս), աներախտիք (<աներախտիս), ստորոտ, օտարոտի, առաջնորդ, հակառակորդ, վանականութիւն, օգնականութիւն, մոռացումն, փափաքումն, քագուտ (<քագստեան), փախուտ (այլև՝ փախստեայ, փախստեայք, փախստէից), բուրաստան և այլն:

* * *

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» բառապաշարի որոշ միավորներ պարունակում են հնչյունների սղման դեպքեր, որոնք հիմնականում ժողովրդախոսակցական լեզվի աղդեցություններ գրական լեզվի մեջ ներթափանցած երևույթներ են: Հանդիպում են դեպքեր, երբ հնչյունական սղում պարունակող տվյալ բառը մի այլ դեպքում հանդես

է գալիս առանց հնչյունական սղման, որի հետեւեալքով, բնականաբար, առաջանում է բառային զուգահեռ ձևերի կիրառութիւն: Այսպիսի զուգահեռ ձևերի կիրառութիւնները, հավանաբար, հեղինակի բառագործածութեան անհետեւողականութեան արդյունք են. ժողովրդախոսակցական լեզվատարբերը, ներթափանցելով գրական լեզվի մեջ, վերջինիս բառապաշարի մեջ մտնում են որոշակի փոփոխութիւններ:

Հնչյունների սղման երևույթը նկատվում է բառակազմութեան, հոլովակազմութեան և խոնարհման շրջանակներում, ինչպես նաև հանդես է գալիս որպես բարբառային արտասանութեան գրսեորում:

Այսպես, հնչյունի սղման օրինակ է իսկական բարդութեան մեջ ա հոդակապի բացթողումը: Օրինակ՝ «Իսկ եկեղեցականն և մի ոմն կրօնաւորացն գնացեալ առաջի սրբոյն սեղանոյն, ասեն...» (11): «Աղաչեաց իշխանն Միծառնիկ՝ եթէ հնարեա և զողացիր զխաշն զի եկեղեցականն քո աղգական է» (54):

Հայերենում բառաբարդման եղանակով կազմված տեղանունների մեջ սովորաբար գրվում է ա հոդակապը (հմմտ. Տիգրանակերտ, Երվանդաշատ և այլն): «Տարոնի պատմութեան» մեջ կան այնպիսի տեղանուններ, որոնք չեն պահպանում այդ հոդակապը⁶: Օրինակ՝ «Եւ շինէ զաւերեալն Զիւնկերտ քաղաք մեծ» (30): «Եւ մարդպան կայ թաղեալ ի դուռն կաթողիկէին և Զիւնկերտ Տարօնոյ ի Պորպ քաղաքի» (58): «Ներսէս Հայոց կաթողիկոս, որ ի Տայոց էր ծննդեամբ, այն որ զվաղաւրդկերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց...» (55):

Դասական գրաբարի իրեաւ փոխադարձ դերանվան ե, իսկ Ողական տեղանվան մեջ ա ձայնավորները ընկել են (հմմտ. իրեաւ—իրաւ, Ողական—Ողկան): Օրինակ՝ «...և ի մէջ առեալ զզօրսն Պարսից և խմբացաւ պատերազմ ընդ իրաւս, մինչև զի ոչ գոյր հնար ձանաչել զմիմեանս...» (50): «Իսկ ոմանք յՈղկանայ ելեալ գնացին որսոյ պատճառանօք երկերիւր և յիսուն այր» (40) և այլն:

Բարբառային արտասանութեան հետեւեալքով մի քանի անձնանունների մեջ նույնպես ստացվում է հնչյունների սղում: Օրինակ՝ «Իսկ իշխանն Արշուց կողմանն Գորգ Շատախօս (փխ. Գէորգ), որ կոչեաց զանունն զաւառին իւրում Շատախ վասն աւելի անունն իւրում...» (54): «Ի նույն ամին վախճանեաց երանելին Թողիկ (փխ. Թէոդոսիկ < Թէոդորոս-իկ), հայրն վանացն Գլակայ...» (29):

6 Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևերի, Երևան, 1964, էջ 455—457:

Երբեմն նկատվում է բառավերջի ֆ, ն բաղաձայնների սղում (հմմտ. ի ներս, ի կողմ, փխ.՝ ի ներֆս, ի կողմն): Օրինակ՝ «...դուք միաբան ի քաղաքն դարձէք և ի ներս մտեալ՝ դյաղթութեան փողն հնչեցուցէք...» (22): «...և ի վախճանիլն իւր ետ տանել զինքն ի վանսն իննականեան, և կայ ի կողմ արեւելից երեք քայլ հեռագոյն յեկեղեցոյն» (12):

Մի քանի բառեր թեք հոլովաձեւերում ունեն ւ, ի (թեք հոլովներում՝
ւ) ձայնավորների անկում: Օրինակ՝ «...և դառնալն առ Միհրան տէր Մշու, Գալհրայ, Խուլթայ, Շատխոյ, և Սասնոյ» (15): «Բայց զանոյշ գի- նին Ասորոց և Սալնայ և զՄովսրայ այս երկու տարի է, որ յինէն կըտ- րեալ էին...» (38): «Իբրեւ խմբեցաւ պատերազմն յեղերս Արաձանոյ, առ անտառովն...» (50):

Մի քանի հատուկ անուններ գործածվում են զուգահեռ ձեւերով: Օրի- նակ՝ «...և կայ թաղեալ ի նոյն տեղւոյն, զոր Հայրբլուր կոչեն...» (29): «Եւ ի սոյն աւուրն վախճանեցաւ երանելին Ստեփաննոս, և կայ առ այլ հարսն ի Հայրաբլուրն» (43): «Կոմիտաս (եկաց հայր վանացն.— Վ. Հ.) ամս ութ» (8): «Սա ի ժամանակս Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի գնաց առ նա...» (8): «...և կոչեաց զանուն նորա Գարհար...» (30): «...որ և շինեաց զՊորպ քաղաք և զամուրն Գրահար» (30):

3. ՆՈՐ ԲԱՌԵՐ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Մամիկոնյանը «Տարոնի պատմութիւնը» գրել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ գրաբարն իբրեւ գրավոր լեզու դեռեւս գործուն էր: Ա. Այտընյանը 2. Մամիկոնյանի պատմութիւն լեզվի մասին այս- պիսի ընդհանուր բնութագրութիւն է տալիս. «Այս նշանաւոր պատմա- գրէն չազատուած՝ հարկ է վերջապէս իւր մէկ էական նկարագիրն ալ աշ- քէ չկորսցնել՝ գրաբարը չէ թէ նախամեծար եղած է իրեն, այլ իրօք գրաբար մատենագրելու դիտատուութիւնն այնպէս որոշ է՝ որ բացա- յայտ ռամկական կարծածները խեղճած է գործածել, նաեւ այնպիսի- ներն որոնք իրմէ գէթ հարիւր տարի յառաջ ծանօթ և գործածական էին: Զոր օրինակ կը զգուշանայ —եւ յոգնակիէն՝ որ առաջիններն անխիղճ գործածեր էին, կխորշի ամէն բառէն փոխանակ՝ ամենայն, որ գիտենք թէ արդեն իւր նախնեացը ծանօթ էր. —աժ զերբայէն՝ որ իրեն անուր չէր: Այս ամենքն հազիւ մէյ մէկ տեղ կը սպրդին իւր գրչէն (Ա. Այտըն- յանը տողատակին բերում է համապատասխան օրինակները.— Վ. Հ.),

որ ըսել է քէ ժամանակի աշխարհիկ լեզուն չի ներկայանար մեզի այս մատենագրութեան մեջ (ընդգծումները մերն են. — (վ. Ն.)⁷:

Ա. Այտընյանի միանգամայն ճիշտ դիտողությունից բխում է հետեւյալը. եթե Ն. Մամիկոնյանը գրաբարի բառապաշարին (և ոչ միայն բառապաշարին) քիչ հետամուտ եղած լիներ, ապա այսօր մեզ հասած կլինեին ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից ավելի շատ տրվյալներ: Այնուհանդերձ այս պատմության լեզվի մեջ տեղ են գտել ժամանակի «աշխարհիկ լեզվի» միավորներ, որոնք կազմում են հեղինակի բառապաշարի առանձնահատկությունները:

«Տարոնի պատմության» լեզուն հայ բանասիրության մեջ համարվում է դասական գրաբարից բավական հեռացած, ժամանակի խոսակցական լեզվի տարբեր շերտերից ահագին տարրեր պահպանած, որոշակի ոճական յուրահատկություններով հանդես եկած իրողություն: Այս պատմության լեզուն համեմատաբար լավ է ուսումնասիրված «նոր բարեգիրք հայկադէպն լեզվի» աշխատության հեղինակների կողմից: Ոչ պակաս ուշադրություն են հատկացրել նրան նաև մեծանուն լեզվաբաններ Ա. Այտընյանը, Ն. Հյուբշմանը, Ն. Աճառյանը:

ՆՃԲ-ի հեղինակները այս պատմության բառապաշարին և հատկապես վերջինիս նորակազմություններին անդրադառնում են հայոց լեզվի բառապաշարի յամբողջականացման և իմաստային վերլուծության ժամանակ:

ՆՃԲ-ի հեղինակները հաճախ բառահոգված են առանձնացնում այս պատմության տվյալների հիման վրա, ինչպես օրինակ՝ աւելխօս, բարձրաբուն, բռնատեղ, դիարած, զրուցատար, զրուցարար, քլփատ, իշխանորդի, խստակօճնութիւն, կնկղատուր, ձեռնատեղ, մարգարտապըսակ, մօրաքաքախ, մօրահեղձ, պատերազմազլուխ, Բարազլուխ բաների դեպքում:

Մի քանի բաներ ՆՃԲ-ում հիշատակվում են և՛ Ն. Մամիկոնյանի, և՛ հետագա հեղինակների անուններով: Սրանց ժամանակագրությանը հետեւելիս պարզվում է, որ դրանցից մի քանիսը նախապես կիրառվել է Ն. Մամիկոնյանի մոտ, ապա նոր՝ ուրիշների: Այսպես, ՆՃԲ-ի հեղինակները այժմարած բառի դեպքում հիշատակում են հետագա հեղինակների, այնուհետև Ն. Մամիկոնյանին, թեև ճիշտ հակառակն էր սպասելի: Փոխատու բառի ժամանակ նշվում են երեք ետին վկայություններ, իսկ մինչ այդ չի հիշատակվում այս պատմությունը: Քարակոփ բառի դեպ-

7 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 128—129:

քում թվարկվում են նախ հետագա հեղինակներ (հմտ. Հովհաննես կաթողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը), այնուհետև՝ Հ. Մամիկոնյանը։ ՆՀԲ-ի հեղինակները երբեմն տալիս են Հ. Մամիկոնյանի լեզվի բառապաշարի միավորը Զենոբ (Զենոբ Գլակ) անվան հղումով։ Մօտենալ բառը բերվում է միայն Գ. Նարեկացու վկայությամբ, այնինչ այս բառը նախապես հանդիպում է «Տարոնի պատմության» մեջ։

Որոշ բառեր դուրս են մնում ՆՀԲ-ի բառացանկերից, թեև մյուս՝ «Առձեռն բառարան հայկազնյան լեզվի» աշխատության մեջ՝ դրանք լրացվում են. այսպիսի բառերից են հետևյալները՝ րագուած, ձեռաց-կոծ, ձիաաաբ, ձիագող և այլն։

Ինչպես արդեն գիտենք, Ա. Այտրնյանը դասական գրաբարի և նրա հետագա փուլերի բառաքերականական, իմաստային, ինչպես նաև ոճական վերլուծությունների ճանապարհին անդրադառնում է նաև այս հեղինակի երկի լեզվական իրողությունների առանձնահատկություններին։

Ա. Այտրնյանը Հ. Մամիկոնյանի պատմության բառապաշարի մեջ գտնում է այնպիսի բառեր, որոնք չեն կիրառվում մինչ այս հայտնի մատենագրական երկերում⁸։ Դրանք հետևյալներն են՝ հալաւ, շէր, սապոն, պապ(°)։ Այնուհետև խոսում է այնպիսի բառերի և բառաձևերի մասին, որոնք իբրև ժողովրդախոսակցական լեզվի տարրեր բավական նոսր էին կիրառվում դասական գրաբարում, այնինչ այստեղ ունեն համեմատաբար մեծ թվով գործածություններ։ Ա. Այտրնյանի լեզվաքննությունից պարզվում է, որ դասական գրաբարին զուգընթաց գոյություն ունեցած խոսակցական լեզվի տարրերը առավել ներթափանցուն են դառնում հետագա դարերում։ Այս տեսակետը հետագայում քնդդրուելու է գտնում լեզվաբանության մեջ⁹։

Հ. Աճառյանը «Տարոնի պատմության» լեզվի բառապաշարի առանձնահատկությունները գնահատում է հայերենի բարեշրջության առումով և հատկապես աշխարհաբարի սկզբնավորման մեջ ունեցած դերի ու նշանակության տեսակետից¹⁰։ Այս «Պատմության» լեզվի նոր բառերը Հ. Աճառյանի կողմից հիմնականում ստուգաբանված են, թեև մինչև այժմ մնում են մեկ-երկու շատուգաբանված բառեր¹¹։ Քիչ չեն

8 Ա. Այտրնյան, նշվ. աշխ., էջ 124—125։

9 Հմտ. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 217—221։

10 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 228—229, Նույնի՝ Հայոց անձանունների բառարան, հ. Գ, Երևան, 1945, էջ 551։

11 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—7, Երևան, 1926—1935։

նաև Հ. Աճառյանի կողմից ներկայացված այն նորակազմ բառերը, որոնք հարստացնում են հայերենի ընդհանուր բառապաշարը:

Անդրադառնալով «Տարոնի պատմության» բառապաշարի նոր բառերին և նոր իմաստային կիրառություններին առանձին-առանձին, ինչպես նաև այն հարցին, թե հեղինակի բառապաշարի նորակազմությունները հայոց լեզվի պատմության ընթացքում ինչպիսի արժեք են ձեռք բերում:

1) Հալալ բառը նախապես հիշատակվում է ՆՁԲ-ի հեղինակներին կողմից՝ վկայակոչելով միմիայն Հ. Մամիկոնյանին: Ա. Այտընյանը նույնպես այս բառը համարում է «Տարոնի պատմության» «նորանոր բառերից»: Հալալ բառի իմաստը բացահայտվում է բնագրում, ուր այն հոմանիշ է հանդերձ (զգեստ) բառին՝ «...և դարձեալ զտապոնի գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն գիշահոտ հալաւն և զարիւնաթաթախ հանդերձսն լուսնալ տուաք և ագաք» (37):

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» այս բառը նշվում է իբրև բարբառային միավոր: Եվ իրոք, այն գոյություն ունի միայն բարբառներում. այս հեղինակի լեզվի մեջ կիրառվում է իբրև ժողովրդախոսակցական լեզվի բառային միավոր:

2) Հ. Աճառյանի ստուգաբանությամբ պապ բառը լինելով համանուն միավոր՝ այս պատմության մեջ արտահայտում է «հոր հայր» իմաստը և կապ չունի այլ՝ «հայրապետ, կաթողիկոս» իմաստի հետ: Օրինակ՝ «...և ինքն յուղարկեաց զերիվարն նոցա ի Մուշ աւան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապ անուան՝ վահան Կամսարական...» (34): Հ. Աճառյանը պապ բառի «հոր հայր» իմաստով կիրառության դեպքում վկայակոչում է նախ Փիլոն Եբրայեցուն, ապա՝ Հ. Մամիկոնյանին և ուրիշներին: Իսկ ՆՁԲ-ի հեղինակները թվարկում են չորս հեղինակներ, որոնցից չորրորդը Հ. Մամիկոնյանն է (ՆՁԲ, 2, 599):

Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցինք, Ա. Այտընյանն այն համարում է Հ. Մամիկոնյանի բառապաշարի «նորանոր» բառերից: Այս հակասում է ՆՁԲ-ի և Հ. Աճառյանի կողմից Փ. Եբրայեցու մոտ հենց «հոր հայր» իմաստով նախնական կիրառության մատնանշմանը: Ընդունելի համարելով ՆՁԲ-ի հեղինակների և Հ. Աճառյանի ճիշտ տեսակետները այս առումով, պապ բառը չենք ընդունում որպես «Տարոնի պատմության» բառապաշարի նոր բառ կամ բառապաշարի նորություն:

3) Սապոն բառը փոխառյալ է, ընդ որում բառարանագիրների վկայությամբ և ժամանակագրական տեսանկյունից առաջին անգամ Հ. Մամիկոնյանի երկի մեջ է ավանդվում: Օրինակ՝ «...և դարձեալ զսա-

պոնի գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրաց գիշահոտ հալան և զարիւնաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ագաք» (37), ՆՃԲ-ի հեղինակները, Հ. Աճառյանը հիշատակում են նախ՝ «Տարոնի պատմության», ապա նոր՝ Մաղաքիա արեղայի (ԺԳ դար) և ուրիշների անունները (ՆՃԲ, 2, 694—695, Արմ., 96):

4) Փանդանել բայը նույնպես Հ. Մամիկոնյանի բառապաշարի նորություններից է: Հ. Աճառյանը բացատրում է, որ այս բառը նշանակում է «ցրվել, թշնամին հալածելով ասդին անդին փախցնել» (ՀԱ, 122, Արմ, 1146): Օրինակ՝ «Եւ ի մէջ առեալ զօրսն Պարսից, և սկսան փանդանել զի իշխան Պալունեաց կտրեաց երկու իշխանս, և եհան զնոսա մինչև ի Հաշտեանս» (52):

Բառի ստուգաբանությունը վերջնականապես հայտնի չէ. ամենայն հավանականությամբ փանդանել բայը գոյացել է փոխառյալ միավորի հիման վրա: Այս բառի փանդ- արմատից ունենք նաև Փանդիկ տեղանունը՝ ուղիղ և Փանդիկալ թեք ձևերով, ինչպես օրինակ՝ «Եւ փախուցեալ ընդ երեսս դաշտին փախստեայք լինէին, և անուանեցաւ տեղին այն Փանդիկ» (52): «Վասն զալոյն Վարդուհրայ, և մեռանելոյն ի Փանդիկալ յիսուն հազար արսն յեղր Արածանոյ» (49):

5) Հ. Աճառյանը դիմէսլեկոս բառի համար իբրև նախնական վկայություն հիշատակում է Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը»՝ այնուհետև վկայակոչում է ուրիշների: Օրինակ՝ «Իսկ նա ուխտ սիրոյ զնէր ի միջի, ոչ միայն մարգարան Հայոց և պարսից համարեալ, այլև դիմէսլեկոս առնել բովանդակ Հոռովմոց» (56): Հ. Աճառյանը ավելացնում է նաև այն, որ բառի ուղիղ ձևը պետք է եղած լիներ ղեմեսլեկոս, որի առաջին ե ձայնավորը տարնամանությամբ փոխվում է ի ձայնավորի, իսկ երկրորդը՝ է ձայնավորի (Արմ., 501): Այս տեսակետից Հ. Մամիկոնյանի պատմության մեջ առաջին անգամ հանդիպող դիմէսլեկոս բառը զրոհորվում է ե>ի, ե>է հնչյունափոխություններով:

6) Դասական գրաբարում կային քլիփ բառը և սրանից կազմված ու կիրառված քլփատել, քլփատիշ, քլփատուքիւն և այլն: Բառաձևերը, որոնք կազմվել են առ արմատի և -իշ, -ուքիւն ածանցների հետ բաղադրվելով. -առ(ել) բայարմատը հանդես է եկել իր բուն՝ բայական իմաստով:

Հ. Մամիկոնյանի պատմության մեջ կիրառվում է քլիփ-ի հնչյունափոխված քլփ-տարբերակից և -առ բառակազմական ածանցից գոյացած բառաձև՝ քլփատ: Օրինակ՝ «Եւ հրամայեա, նա զամենեցուն

զբիթսն կտրել և զքլփատսն, և արկանել ի մախաղ» (23): «Եւ զորս ի ցամաքն սպանին, զբիթսն, և զքլփատսն կտրէին և՝ պահէին» (23):

2. Աճառչանը, նկատի ունենալով Հ. Մամիկոնյանի պատմության այս իրողությունը, գրում է. «Հետինները սխալ ստուգաբանելով բառս ենթադրել են «ծածուկ անդամ» ԱԲ կամ «ծածուկ անդամի կաշին» (ըստ արդի հայկաբանների)» (Արմ., 1243—1244): Այս բառի քլիփ արմատական ճիշտ և նախնական իմաստը նշանակում է «օձիքի կամ գրպանի եզերքին՝ ամրության կամ դարդի համար կարված երիզ»: Քլիփ արմատից քլփատ նորակազմությունը, անկասկած, առաջանում է քլփատել, քլփատիչ, քլփատութիւն և նման ձևերի հիման վրա՝ առ բացակազմական ածանցը վերածելով արմատի տարրի:

7) Հ. Մամիկոնյանի պատմության մեջ հանդիպում է նաև շէր նոր բառը: ՆՀԲ-ի հեղինակները, Հ. Աճառչանը այս բառի համար իբրև եզակի վկայություն հիշատակում են միայն Հ. Մամիկոնյանին: Բառի իմաստը բացահայտվում է բնագրում, որը նշանակում է «երգ, ժողովրդական բանաստեղծություն, ժողովրդական երգ»¹²: Օրինակ՝ «Որ և յետոյ ի հոտել դիտականցն յորդենել շէր հանեալ ասէին. «Կերան գազանք զմարմինս դիականցն Վարազայ եւ գիրացան...» (42):

Այս կապակցությամբ Հ. Աճառչանը այսպիսի դիտողություն ունի. «Համեմատությունը ճիշտ և փոխառությունը ստույգ կարելի է համարել միայն այն ժամանակ, երբ ընդունինք, թե Մամիկոնյանի սույն հատվածը ավելի ուշ գործ է կամ հետո ավելացրած» (Արմ., 334): Այս դիտողությունն ունի իր պատճառները: Հ. Աճառչանը այն բանասեր-լեզվաբաններից էր, որոնք Հ. Մամիկոնյանին համարում էին VII դարի մատենագիր (հմտ. Արմ., Երևան, 1971 թ., էջ 44): Հ. Աճառչանը արաբական փոխառությունների հարցում այն կարծիքին էր, թե արաբների տիրապետության սկզբնական շրջանում հայերենի՝ արաբերենից փոխառած բառերի քանակը ընդհանրապես «աննշան» է եղել (հմտ. ՀԼՊ, 2, 173): Իսկ այս պատմության բառապաշարի մեջ, ինչպես տեսնում ենք, առկա են այդպիսի փոխառյալ բառեր, որոնք նախապես գործածական են եղել ժամանակի խոսակցական լեզվի մեջ:

Դասական գրաբարի, բառապաշարի որոշ միավորներ այս պատմության մեջ հանդես են գալիս ոչ միայն իրենց նախկին իմաստներով,

¹² Այս բառը, ինչպես ստուգաբանում է Հ. Աճառչանը, փոխառյալ է արաբ. Տի'ր կամ Տի'ր «երգ, բանաստեղծություն» ձևից: Հավանաբար, արաբ. Տի'ր ձևը տվել է նախապես հայ. շեյր, ապա՝ շէր:

այլև նոր իմաստային կիրառություններով: Այդպիսի բառերից են հետևյալները:

1) ՆՆԲ-ի հեղինակները, Հ. Աճառյանը ցից բառի համար նշում են երկու իմաստ՝ «սրածայր փայտ» և «ցցուն, ցցյալ (որևէ բան)» (ՆՆԲ, 923—924, Արմ., 1073): Բառի իմաստային կիրառություններից երկրորդի դեպքում հեղինակները վկայակոչում են Հ. Մամիկոնյանին (այլև՝ «Գիրք վաստակոցը»՝ իբրև ետին վկայություն): Վերոհիշյալ իմաստներից երկրորդը արտահայտվում է «Տարոնի պատմության» հետևյալ օրինակում. «...եւ կտրեաց զբիթսն, և ցուցանէր աշտցն, և պատռեալ զփորն, ետ ծառային հանել զլեարդն և ղնել ի բերանն, և հարեալ զգանական ի փորն և ետ թողուլ ի ցից» (25): Ըստ Հ. Հյուբշմանի ցից բառը փոխառյալ է ասոր. *seṣṣa* «սեպ» ձևից¹³:

2) Խիստ բառի համար Ա. Այտընյանը Հ. Մամիկոնյանի Պատմության մեջ գտնում է բոլորովին մի նոր իմաստային կիրառություն, որը բնորոշ է համարում «ռամկորենին»¹⁴: Օրինակ՝ «...եւ խիստ վաստակեցաւ Սմբատ յաւուրն յայնմիկ, բայց ի թիկունս եհաս նմա վարազ իշխաւն Պալունեաց...» (40): Ըստ ՆՆԲ-ի հեղինակների տվյալների հայերենում այս բառը ընդհանրապես կիրառվում էր երեք՝ «կարծր, պինդ, կուռ», այլև՝ «դժվարին, ծանր» և «խիստ, խստագույնս» իմաստներով (ՆՆԲ, 945): Հ. Աճառյանը խիստ բառի համար իբրև մի այլ կամ չորրորդ իմաստ ավելացնում է «հույժ շատ» նոր իմաստը՝ ելնելով «Տարոնի պատմության» բնագրի ընձեռած տվյալներից (Արմ., 498):

Մյուս կողմից, խիստ բառարմատից բառաբարդման և ածանցման ճանապարհով գոյացած խստակրօնութիւն բառի դեպքում ՆՆԲ-ի հեղինակները նշում են միայն Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» (ՆՆԲ, 987):

Այս բառի «հույժ, շատ» իմաստը գործուն և կենսունակ է ժամանակակից հայերենում:

3) Ա. Այտընյանը «Տարոնի պատմության» բառապաշարի որոշ միավորների նոր իմաստային կիրառությունների առումով գրում է. «Հետնագոյն ռամկօրենին հատուկ նշանակութիւններ սովորական (են) եղած՝ որ հնոց քովը շատ ցանցաւ էին, կան նաեւ որոշ նշանակութիւններ, որոնց մեջ նշանաւոր է այլ շաղկապը, որուն առաջին անգամ հոս կը հանդիպինք. «Դուք զտաճարսն այլ յայրել էք ի տալ» (26)¹⁵:

¹³ H. Habschmann, Armenische Grammatik, b. 2, Leipzig 1897, էջ 310.

¹⁴ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 181—183.

¹⁵ Ա. Այտընյան, նշվ., աշխ., էջ 126—127.

ինչպես նկատելի է, այլ շաղկապը կիրառվում է այնպիսի իմաստով, որ հավասարաբեռ է դառնում ժամանակակից գրական հայերենի էլ-ին։ Այս իմաստով այլ-ը նախապես կիրառված ենք գտնում Հ. Մամիկոնյանի երկի մեջ։

4) Այս երկի բառապաշարի մեջ հանդես են գալիս դասական գրաբարից ավանդված կողմն, կոյս («կողմ» իմաստով) բառերը և սրանց հավասարաբեռն դեռ բառը, որոնք բնագրային կիրառությունների մեջ նյութի շարադրանքին հաղորդում են ոճական-նրբերանգային տարբերություններ։ Օրինակ՝ «Եւ երթեալ ի վերայ լերինն, ընդ երիս դեմս դարան գործեալ, և զդպիրն և զնուիրակն առաքեաց առ Վաշիր անդ» (26)։ «Իսկ Սմբատ զՎահան կողմնապահ էր թողեալ ի գիշերի չորեք հազարաւ, և երկու հազար ի դարանի կացուցեալ ընդ երկուս դեմս» (16)։ Բերված օրինակներում դեռ բառը իմաստային կիրառության այս եղանակով փոխարինում է դասական գրաբարի կողմն, կոյս կանոնական ձևերին։

5) Հ. Մամիկոնյանի երկի բառապաշարի մեջ կտրել բայը հաճախ կիրառվում է «անջատել, հանել, առանձնացնել» նշանակություններով¹⁶։ Բերենք հետևյալ օրինակները. «Իսկ Սմբատայ կտրեաց ի գիշերին երկու հազար այր հեծելոց» (34)։ «Քանզի որդի նորա Սմբատ ընդ մեջ անցեալ, կտրեաց չորեք հազար երիվարս. և անցանէր յայնկոյս Արածանոյ» (31)։

6) Հ. Մամիկոնյանն երբեմն օգտագործում է յուզարկել բայը «ուզարկել» նշանակությամբ, թեև, ինչպես նշում է նաև Ա. Աբրահամյանը, «գրաբարի համար նման դեպքում ավելի գործածական է առաքել բայը, սակայն սրա գործածությունը ևս բացառված չէ»¹⁷։ Ունենք հետևյալ օրինակները. «... և ինքն յուզարկեաց ղերթվարսն նոցա ի Մուշ աւան՝ առ որդին իւր, որ կոչէր Ըստ պապ անուանն՝ Վահան Կամսարական, զի զհետևակս բաղաքին հեծեալս արասցէ, և յուզարկեսցէ փութով» (34)։

7) «Տարոնի պատմության» լեզվի բառապաշարի իմաստային նոր կիրառությունների հետաքրքրական փաստերից է նաև այն, որ գրաբարի զի շաղկապի նշանակությամբ, թեև փոքր-ինչ պակաս, բայց հանդես է գալիս ու հարաբերական դերանոմը¹⁸։ Հիշենք հետևյալ բնութա-

16 Ա. Այտրեյան, նշվ. աշխ., էջ 124։ Ա. Աբրահամյան, Դրաբարի ձևերի, էջ 456։

17 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 456։

18 Նույն տեղում։

գրական օրինակը. «Կամ եկ՝ զի պատերազմիմք, և կամ հնազանդեաց և տուր հարկս» (34):

Այսպիսով, «Տարոնի պատմութիւնը» աչքի է ընկնում նաև դրաբարի բառապաշարային միավորների նոր խմատային կիրառութիւններով, որոնք հարստացնում են այս երկի լեզուն:

2. Մամիկոնյանի բառապաշարի մեջ աչքի են ընկնում որոշ նորակազմութիւններ: «Պատմութիւն» շարադրանքի մեջ հանդես եկած նորակազմ բառերը գոյանում են հայերենի բառակազմական ընդհանուր օրինաչափութիւններով և արդյունք են կամ հեղինակային լեզվի՝ հեղինակային բառատեղծման և ինքնուրույն կիրառութիւն, կամ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարային որոշակի հնարավորութիւնների հեղինակային օգտագործման:

Այս «Պատմութիւն» բառապաշարի նորակազմութիւնները հետեւյալներն են. այծարած, աւելախօս, բարձրաբուն, բոնասեղ, դիւարած, զրուցատար, զրուցարար, քիկնախառն, քիկոծել, իշխանորդի, խնտակօնութիւն, ծայրատել, կնկղաւոր, ձեռնատեղ, ձիագող, մարգարտապսակ, միանաշակ, մօրաքաթախ, մօրահեղձ, պատերազմագլուխ, փոխառու, քաղաքապետ և այլն: Օրհնակ՝ «...և ետ զենուլ ի վերայ ձեռինն և սրոյն, զի իջցէ արիւնն և թուլացուցէ զբռնատեղն» (41): «Եւ քարկացեալ Վաշդեան, ետ ածել զՀամամ, ծայրատել զոտս և զձեռս նորա» (50): «...Սմբատայ ողի առեալ, ածեալ զսուրն և եհար զուսն, և քիկնախառն ի վայր ընկէց զգլուխ աւագի նոցա» (47): «...ինքն աստի, և քաղաքացիքն անտի քառասուն այր մօրահեղձ արարին» (22): «...անցանէին հանդէպ մօրաքաթախ Յձ քաղաքի» (58):

Վերահիշյալ նորակազմ բառերը «Տարոնի պատմութիւն» մեջ ունեն ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ խմատային կիրառութիւններ, հարստացրել են հեղինակի երկի լեզուն: Այսպես, բնագրում դիւարած և այծարած բառերը գործածվելով միևնույն նախադասութիւն մեջ ստեղծում են բառախաղային հակադրութիւն, ինչպես՝ «Եւ կացեալ աւուրա տասն, խնդիր արար Սուրեն եղբորորդոյ իւրոյ՝ թէ ո՞ր է: Իսկ նքացուցին բերդն՝ թէ անդ է. և նա ասէ. «Անդ այծարած է թէ դիւարած»: Եւ ծիծաղեալ Սմբատայ ընդ աղի բանսն Սուրենայ, առաքեաց և ետ բերել զկինն և զօրդին առաջի իւր» (37): Մյուս կողմից, մօրահեղձ և

մօրաքաթախ, ձեռնատեղ և բռնատեղ նորակազմ բառերը նյութի շարադրանքը օժտում են հոմանիշային-ոճական բազմազանությունը¹⁹:

Հ. Մամիկոնյանի բառապաշարի նորակազմ բառերի կենսունակությունը հայոց լեզվի պատմության առումով կարելի է որոշել բառարանագրական հիշատակումներից՝ ժամանակակից հայերենի բառարաններում սրանց տեղ գտնելու կամ չգտնելու հիմունքով:

Այս տեսակետից, պարզվում է, որ Հ. Մամիկոնյանի բառապաշարի նորակազմ բառերի մի մասը չի կորցրել իր բառիմաստային կենսունակությունը և հայերենի ժամանակակից փուլում ունի կիրառական ակտիվություն: Այդպիսի բառերից են, օրինակ, անլախօս, բարձրաբուն, բռնատեղ, զրուցատաբ, իշխանորդի, ձիագող, մարգարտապսակ, ծայրատել, խստակրօնութիւն և այլն միավորները: Բառերի մի այլ մասը, եթե ժամանակակից գրական հայերենում ոչ կենսունակ կամ պակաս կենսունակ կարող են թվալ, ապա գեղարվեստական խոսքի մոգական ուժով դրանք կարող են վերակենդանության շունչ առնել և դառնալ գրական լեզվի բառապաշարի կենսունակ միավորներից: Այդպիսի բառերից թերևս կարելի լինի նշել հետևյալները՝ մօրահեղձ, մօրաքաթախ, կնկղաուր, միանաշակ և այլն: Այսպես, Ստ. Մալխասյանցի բառարանում «մեռած բառեր կամ նշանակություններ» ունեցողներ են համարվում քֆակոձել, խստակրօնութիւն, ձորամուտ, միանաշակ, մօրահեղձ միավորները: Իսկ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» հիշյալ բառերից, օրինակի համար, քֆակոձել, խստակրօնութիւն բառերը բերվում են իբրև հայերենի արդի փուլի գործածական միավորներ:

Այսպիսով, Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» բառապաշարի նորակազմ բառերը ճնշող մեծամասնությամբ դարերի ընթացքում չեն կորցրել իրենց բառիմաստային կենսունակությունը և հասել են մինչև հայերենի ժամանակակից փուլը և մտել վերջինիս ընդհանուր բառաֆոնդի մեջ: Կան նաև այնպիսի բառային միավորներ, որոնք նախորդների համեմատությամբ ոչ կենսունակ կամ պակաս կենսունակ են: «Տարոնի պատմության» նորակազմ բառերից մի քանիսն այժմ ունեն կամ արտահայտում են այլ բառային իմաստներ՝ կապված լեզվի պատմության ընթացքում կրած իմաստային փոփոխությունների հետ:

¹⁹ Ըստ ՆՁԲ-ի և Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» ձեռնատեղ բառն ունի «ձեռքի ափ» իմաստը, իսկ ալստեղ ստի կոթ» իմաստով է գործածվում: Ըստ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» այն իմաստափոխվելով նշանակում է «բռնակ» ընդհանրապես:

2. Մամիկոնյանը իր երկի շարադրանքի ընթացքում գործածում է մի շարք տեղանուններ, որոնք նույնպես բառապաշարային նորություն են: Պատմության հեղինակը հաճախ բացատրում է իր գործածած տեղանունների իմաստը, որոնք հիմնականում կեղծ՝ ժողովրդական ստուգաբանություններ են և արտացոլում են հեղինակի որոշ մոտեցումը, վերաբերմունքը այդ տեղանունների բնիմաստների (էտիմոլոգիա) մեկնության հարցում: Մյուս կողմից, չի բացառվում այն հանգամանքը, որ 2. Մամիկոնյանը կարող էր օգտագործած լինել ժողովրդի շուրթերին տարածված այդ տեղանունների այգալիսի բացատրություն-ստուգաբանությունը:

Այգալիսի տեղանուններից են հետևյալները՝ Առաղս, Առինչս, Աստղաբեդ, Թմբաձոր, Համամաշէն, Հանդիսեանհ, Հոնրնկէց, Մահու ագառակ, Մահու բլուր, Մոկկունհ, Յեսասանկ, Ներքինանկնիս, Մեմաձոր, Վայրանկանիս և այլն: Օրինակ՝ «Եւ իբրեւ վճարեցաւ պատերազմն հրամայեաց ծածկել զնոսա ի ձորս և ի հեղեղատս և կոչեցաւ բլուրն Մահու բլուր» (36): «...էհար զտէգն ի թիկունս նորա, և անցոյց ընդ ողն երիւվարին և ասէ. «Այժմ անկանիս»: Եւ կոչեցաւ անուն տեղոյն Ներքինանկնիս» (52): «...և բազմաց կորուստ եղև այն օր, և շորեքհազար գլուխ համարով ընկեցին ընդ քարն, որ կոչեցաւ Հոնրնկէց» (46):

Նշված հատուկ անունների մեջ նկատվում են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ առանձնահատկություններ՝ հնչյունների սղում, հնչյունափոխություն, տարբերակային կիրառություններ և այլն:

Այսպիսով, 2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» բառապաշարի առանձնահատկություններից մեկն էլ նոր բառերի և դասական գրաբարի ենթաշրջանում արդեն տեղ գտած բառային միավորների իմաստային նոր կիրառությունն է, որն արտացոլում է ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի և նրա ոճերի իրողությունների մի մասը միայն: Բառային նորակազմությունները և նոր հատուկ անունները ամբողջացնում են «Տարոնի պատմության» բառապաշարը:

4. ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Լեզվի բառային միավորները խոսքի մեջ հանդես են գալիս որոշակի իմաստներով: Բառային միավորները բառակապակցական փոխհարաբերության մեջ երբեմն վերաիմաստավորվում են և ստանում դարձվածային իմաստ: Բառային միավորները խոսքի մեջ «դարձվածային միասնություն են ստանում այն դեպքում, երբ բառակապակցության բաղադրիչները

կորցրել են իրենց առանձին, անկախ բառային իմաստները և բառակապակցական միասնության մեջ ստանում են նոր իմաստ, որն այլևս հավասար չէ բաղադրիչների առանձին բառիմաստների գումարին»²⁰:

Հայոց լեզուն բավական հարուստ է դարձվածային միավորներով: Հին հայերենի, ինչպես նաև հետագա փուլերի բառապաշարը աչքի է ընկնում դարձվածային միավորների առատությամբ²¹:

Դարձվածային միավորները արժեքավոր են խոսքի այլաբանական, փոխաբերական, շրջասացական և այլ կարգի ոճավորումների տեսակետից: Հանդես գալով ոճական ղանադան եղանակներով՝ սովորական բառերի և բառակապակցությունների հետ միասին դարձվածային միավորները դառնում են գրականության լեզվի, հեղինակային ոճի գրսեւորման ինքնատիպ ու յուրահատուկ միջոցներ:

Դարձվածային միավորները սովորաբար բնութագրվում են ձևական և իմաստային հատկանիշներով: Որպես դարձվածային միավորների ձևական կամ արտահայտության պլանի հատկանիշներ նշվում են դարձվածային բաղադրիչների բաղմանդամությունը, անտեղափոխելիությունը (կայուն շարահատություն), անփոխարինելիությունը (տվյալ բաղադրիչի փոխարինումը ուրիշով կարող է հանգեցնել դարձվածային իմաստի խաթարման), կապակցական սեղմությունը (որոշ քերականական երևույթների բացթողում) և այլն: Իսկ իբրև իմաստային կամ բովանդակության պլանի հատկանիշներ առանձնացվում են այդ նույն բաղադրիչների իմաստային սերտությունը, բաղադրիչների առանձնակի իմաստների մթապնումը սրանց վերաիմաստավորման ճանապարհին՝ դարձվածային իմաստի գոյացման հետևանքով և այլն²²:

20 Մ. Балли, Французская стилистика, М., 1961, էջ 97:

21 Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները համեմատաբար լավ են ուսումնասիրված, այնինչ հին հայերենի և միջին հայերենի բառապաշարի այս մասը մինչև այժմ մնում է չհետազոտված (Տես, Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1964, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959 Ա. Մաքաբաջյան, Արդի հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, Ա. Սուխասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, Պ. Ռեղիբյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, 1971, Երևան, Կ. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, Ա. Սուխասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975):

22 Հմմտ. Մ. Балли, նշվ. աշխ., 100—102: В. В. Виноградов, Русский язык (грамматическое учение о слове), М., 1972, էջ 23—30, В. Н. Телия, Фразеология (տե՛ս, «Теоретические проблемы советского языкознания», М., 1972, էջ 257—277), И. М. Шанский, Лексикология современного русского языка, М., 1972, էջ 196—215:

Իբրև ֆունկցիոնալ-ոճական հատկանիշներ կարելի է նշել դարձվածային միավորների հաղորդակցական ընդհանուր ճանաչողականությունը, ոճական խտացումը, հաղորդման մեջ ֆունկցիոնալ կողմնորոշվածություն առաջացնելու ունակությունը և այլն:

Ե. Բալլին դարձվածային միավորների համար իբրև իմաստային ամենաընդհանուր հատկանիշ առանձնացնում է «դարձվածի փոխարեն մի սովորական բառ դնելու հնարավորությունը կամ անհնարինությունը», որն էլ անվանում է «բառ-նույնականացնող»²³:

Վ. Վինոգրադովը, նկատի ունենալով ուսուցիչների դարձվածային միավորների ձևային և իմաստային ընդհանուր կողմերն ու տարբերությունները, առանձնացնում է երեք ենթատեսակ՝ դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն և դարձվածային կապակցություն, որին ն. Շանսկին ավելացնում է շորորոգ ենթատեսակը՝ դարձվածային արտահայտությունը:

Զ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» դարձվածային միավորների քննության ժամանակ առաջնորդվում ենք հետևյալ գործնական սահմանումով. դարձվածային միավորը մեկից ավելի բառերի հարադրական կամ կապակցական այնպիսի փաղաղրություն է, որն աչքի է ընկնում բաղադրիչների իմաստային սերտությամբ, մթադնումով, վերաիմաստավորումով, այդ նույն բաղադրիչների բաղմանդամությամբ, անփոխարինելիությամբ, միասնությամբ, ինչպես նաև ֆունկցիոնալ-ոճական նպատակամղվածությամբ և կողմնորոշվածությամբ:

Շ. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածային միավորների ուսումնասիրության ժամանակ հիմնական ուշադրությունը հատկացվում է դրանց ծագումնային, ֆունկցիոնալ-ոճական, կառուցվածքային՝ բառային բաղադրիչների կազմի, կաղապարների առանձնահատկություններին:

1) Անդրադառնալով դարձվածային միավորների ծագման հարցին, այսինքն՝ ինչպիսի աղբյուրներից են գալիս դարձվածային միավորները և ինչպիսի տարբերություններ ունեն միմյանցից:

Մնալով տվյալ լեզվի սահմաններում, ընդհանրապես, հնարավոր է ցույց տալ այս կամ այն դարձվածային միավորի գոյացումը լեզվի ժամանակային (անցյալի, ժամանակակից), տարածքային (բարբառային, խոսվածքային), ինչպես նաև սոցիալական-ֆունկցիոնալ (գրական, ժողովրդախոսակցական) շերտերից: Իսկ դուրս գալով տվյալ լեզվի շրջա-

23 Ս. Балли, նշվ. աշխ., էջ 100:

նակներից կարելի է մատնանշել դարձվածային միավորների առաջացումը փոխառության, թարգմանության կամ պատճենման ճանապարհով:

Այս տեսակետից, Հ. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածքները ծագում են հիմնականում երկու՝ հայերենի նախորդ ենթաշրջանների (հատկապես՝ դասական գրաբարի) և ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի և նրա ոճերի ակունքներից: Հայերենի բառապաշարի այդ հնարավորությունները օգտագործվել են հեղինակի կողմից:

Հ. Մամիկոնյանի «Պատմություն» դարձվածային միավորները բաժանվում են երկու խմբի՝ նախկինում կիրառություն գտած դարձվածային միավորներ և առաջին անգամ այս պատմության բառապաշարի մեջ հանդիպող միավորներ:

Փոքր-ինչ սակավ են հանդիպում նախկինում կիրառություն գտած դարձվածային միավորները, որոնք մեծ մասամբ հանդիպում են Աստվածաշնչի մեջ, մասամբ՝ Ազաթանգեղոսի, Եղիշեի, Ղ. Փարպեցու երկերում:

Այսպիսի դարձվածային միավորներ են հետևյալները՝ բառնալ զգլուխ (ուրումն), գնել արեամբ (ոմամբ), դնել բանս ի բերան (ուրումն), ընդ գինի մտանել, դուռն դժոխոց, ի բացեայ թողուլ, ի գլուխ ելանել, զօրածողով լինել, ի մտի կալ(ն)ուլ, լի լինել խնդութեամբ, խմբել պատերազմ, հասանել ի քիկունս, մտանել ի պատերազմ, նստել յաթոռ (ուրումն), տալ ի ձեռս (ումեմն) և այլն:

Սակայն միշտ չէ, որ հեղինակի բառապաշարի տվյալ դարձվածային միավորը, թեև դասական գրաբարում նախապես կիրառություն գտած, «Տարոնի պատմության» շարադրանքի մեջ հանդես է գալիս նույնպիսի իմաստով, ինչպիսին որ ունեցել է դասական գրաբարում: Այս առումով նկատելի են որոշ տարբերություններ, որոնց հիման վրա դարձվածքները միավորում ենք երկու ենթախմբի մեջ:

Առաջին ենթախմբի մեջ մտնում են այն դարձվածային միավորները, որոնք Հ. Մամիկոնյանի մոտ կիրառվում են այնպիսի ձևաիմաստային դրսևորումներով, ինչպիսիք որ էին դասական գրաբարի ենթաշրջանում կամ հետագայում: Այդպիսին են հետևյալ միավորները՝ բառնալ զգլուխ (ուրումն), դնել բանս ի բերան (ուրումն), դուռն դժոխոց, ընդ գինի մտանել, ի գլուխ ելանել, ի մտի կալ(ն)ուլ, ի քիկունս հասանել, խմբել պատերազմ, մտանել ի պատերազմ, նստել յաթոռ (ուրումն), տալ ի ձեռս (ումեմն), զօրածողով լինել:

Բերում ենք մի քանի բնագրային զուգահեռ օրինակներ՝ «Եւ եհար ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով, եւ հատեալ եբարձ զգլուխ նորա...» (Սգր., Յուդ., ԺԳ, 10): «...և քանզի դեռևս կային կենդանի՝ և

ապա բարձին զգլուխս նոցա սրով» (Ագաթ., 1909, 112): «Արդ որովհետեւ տիրատեաց էք, ես բառնամ զգլուխս քնի» (Մամիկ., 36): «...եւ եղբանս ի բերանս նոցա խօսել ընդ եղբարս իւրեանց նաթանիմ...» (Սգր., Եզր., Ը, 17): «Սկսաւ բանս ի բերան դնել մոգպետին և մոգացն, որք մատուցեալ յանդիման ասէին ցթագաւորն...» (Եղիշէ, 1957, 142): «Եղբանս ի բերան Հայոց զօրացն Մուշեղ իշխան Մամիկոնենից և Հայոց մարդպան...» (Մամիկ., 13): «...եւ որդին Աղբայ ընդ գինի մտեալ էր եւ արբեալ ի Մոկրով...» (Սգր., Գ թագ., Ի, 16): «Իբրեւ ընդ գինիս մտին, հրամանս ետ թագաւորն» (Ագաթ., 30): «Ապա իբրեւ ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին» (Բուզ., 1883, 45, նաև 196): «Իսկ նոցա ժողովեալ ի տաճար մի ընդ գինի մտին...» (Մամիկ., 24): «Յամին հարիւրորդի եօթանասներորդի երկրորդի, զօրածողով լինէր Դեմետր, եւ անցանէր ի կողմանս Մարաց եւ Պարթեւացն...» (Սգր., Ա Մակ., ԺԴ, 1): «Զպատմութիւնս արանց անուանեաց ի մտի կալցի, եւ դարձուածս առականց մտցէ» (Սգր., Սիրաք., ԼԹ, 2): «Դարձեալ զօրածողով լինէր Խոսրով արքայ ի վերայ Յունաց երկրորդ անգամ, ի մտի կալեալ զմահն Միհրանայ քեռորդուն իւրոյ...» (Մամիկ., 30): «...հրամայեաց կոչել զփղապետն Նիկոնովր, ետ զօրս ի ձեռս, եւ կացոյց սպարապետ կողմանցն Հրէաստանի...» (Սգր., Բ Մակ., ԺԴ, 12): «Ոչ ալգպէս տէր, այլ տուր ի ձեռս իմ չորեք հազար այր, որ գնամք ի վերայ ամուր բերդիցն՝ ուր մտերիմք նորա են և գանձքն. գուցէ բռնացեալ՝ ոչ տացեն ձեռն իմ, ապստամբ դիս կարծելով...» (Մամիկ., 25):

Սրանց կողքին տեղ են գտել այնպիսի միավորներ, որոնք Աստվածաշնչում չեն արտահայտում դարձվածային իմաստ և այս առումով հանդես են եկել որպէս սովորական բառակապակցութիւններ: Օրինակ՝ «...և ճակատեցան յանդիման Աղամեկայ. եւ Մովսէս եւ Ուր ելին ի գլուխս բլրոյն» (Սգր., Ելք, ԺԷ, 1): «...եւ գինի եւ արբեցութիւն մի արբցէ, եւ երկաթ մի ելցէ ի գլուխ նորա» (Սգր., Ա թագ., Ա, 11):

Նման կապակցութիւնները V դարի որոշ պատմիչների և Հ. Մամիկոնյանի մոտ կիրառվում են որպէս դարձվածային միավորներ: Օրինակ՝ «Եւ այսպէս վճարեալ՝ հրաման Պարսից թագաւորին ի գլուխ ելանէր» (Փարպ., 1904, 25): «Եւ ի գլուխ ել աղօթք Մանգնոսի, զի երեք հազար այր ի միում գիշերի սատակեցան» (Մամիկ., 57):

Մտանել ի պատերազմ դարձվածային միավորը նախապէս կիրառվում է Աստվածաշնչի մեջ, ընդ որում մտանել բաղադրիչը հանդես է գալիս առանձին, ինչպէս նաև իր հակադրիչ՝ ելանել բայի հետ, այն է՝ մտանել և ելանել ի պատերազմ: Հ. Մամիկոնյանի մոտ հանդիպում է

սրանցից միայն առաջին ձևով կազմված միավորը: Օրինակ՝ «Եւ եթէ առնուցու ոք կին նորոգ, մի մոցէ ի պատերազմ, եւ մի անկցի ի վերայ նորա...» (Սգր., Բ օրէնք, ԻԴ, 5): «...եւ կարօղ եմ այսօր՝ որպէս յորժամ առաքեաց զիս Մովսէս, նոյնպէս եւ արդ կարօղ եմ մտանել և ելանել ի պատերազմ» (Սգր., Յեսու, ԺԴ, 11—12): «Իսկ քաջն Մուշեղ քաջալերեալ զզօրան, հաղիւ հաւանեցոյց մտանել ի պատերազմ» (Մամիկ., 15):

Աստվածաշնչում հանդիպում ենք մեկ դարձվածային միավորի այնպիսի տարբերակային կիրառութիւնների, երբ մի դեպքում անվանական բաղադրիչը հատկացուցչային կապակցութիւն է, որի հատկացուցիչը հանդես է եկել հոմանիշ գոյգով (հմմտ. նստել յարո՞ւ քաղաւորութեան, նստել յարո՞ւ արհայութեան), մյուս դեպքում անվանական նույն բաղադրիչը դրսևորվել է առանց այդ լրացման (հմմտ. նստել յարո՞ւ): Օրինակ՝ «...ի մարտ պատերազմի հարի վանեցի զնա եւ զզօրս իւր, եւ նստայ յարո՞ւ քաղաւորութեան նորա» (Սգր., Ա Մակ., Ժ, 53—54): «Օրն յաւորս բարութեան յորում դարձար դու նրկիր նախնեաց քոց, եւ նստար յարո՞ւ արհայութեան հարց քոց...» (Սգր., Ա Մակ., Ժ, 55—56): «Եւ Սողոմոն նստաւ յարո՞ւ Դաւթի՝ ամաց երկոտասանից...» (Սգր., Գ թագ., Բ, 12):

2. Մամիկոնյանի պատմութեան մեջ հանդիպում են միայն նստել յարո՞ւ իշխանութեան, նստել յարո՞ւ տարբերակները: Օրինակ՝ «Եւ ետ վախճանելոյն Մուշեղայ՝ նստաւ յարո՞ւ իշխանութեան նորա վահան...» (Մամիկ., 28—29): «Եւ յետ սակաւ ամաց եսպան Փոկաս զՄօրիկ, և ինքն նստաւ յարո՞ւ նորա» (Մամիկ., 14):

Դրունգ դժխոց դարձվածային միավորը, ի տարբերութիւն նախորդ դարձվածային միավորների, ունի միայն անվանական բաղադրիչներ: «Տարոնի պատմութեան» մեջ գործածվում է նույնպիսի իմաստով, ինչպիսին որ է Աստվածաշնչում: Օրինակ՝ «...աղաչէին ի գութ դառնալ մեծաւ ողորմութեամբ, փրկել զհաւատացեալս ի յուսոյ, զհասեալ մերձեցեալս ի դրունս դժխոց» (Սգր., Մակ., Ե, 28): «...մանավանդ թէ մտեալ էին ի դրունս դժխոց, փոխանակ դուռն այնր օրհասին՝ խնջոյս ուրախութեան կացուցեալ...» (Սգր., Գ Մակ., Զ, 22): «Քանզի սա է դուռն դժխոց և կապան մահու» (Մամիկ., 28):

Վերջին օրինակում դուռն դժխոց դարձվածային միավորին հոմանիշ է կապան մահու դարձվածային միավորը, որն ունի դարձյալ անվանական բաղադրիչներ: Կապան մահու դարձվածը չի կիրառվում Աստվածաշնչում, դասական պատմիչների երկերում:

Հասանել ի քիկունս դարձվածային միավորը նախնական գրսեորում-
ներ ունի Աստվածաշնչում, ուր դարձվածի բաղադրիչները երբեմն ընդմի-
ջարկվում են այլ բառերով: Օրինակ՝ «Ի քիկունս վաղվաղակի հասանի-
ցեն» (Սգր., Ա Մակ., Ը, 27): «Ոչ ոք էր որ ի քիկունս հասանէր» (Սգր.,
Եսայ., ԿԳ, 5): Հ. Մամիկոնյանի մոտ այս դարձվածային միավորի բա-
ղադրիչները երբեք չեն ընդմիջարկվում այլևայլ բառերով, և իբրև բայա-
կան բաղադրիչ հանդես են գալիս հասնալ կայ, հասնալ էր կազմութուն-
ները: Օրինակ՝ «...մի երկնչիք, զի սուրբ Կարապետն մեզ ի քիկունս հա-
սնալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմի» (Մամիկ., 34): «Եւ եհաս ի քի-
կունս օգնականութիւն աստուծոյ» (Մամիկ., 40): «Սուրբ Կարապետն ինձ
ի քիկունս հասնալ էր, և ես ի ձեռաց անօրինաց մեռանէի» (Մա-
միկ., 41—42):

Երկրորդ խմբի մեջ մտնում են այնպիսի դարձվածային միավորնե-
րը, որոնք իրենց նախնական կիրառությունների համեմատությամբ պա-
րունակում են դարձվածային բաղադրիչների շարադասության որոշակի
տարբերություններ՝ հակադրվելով նաև նախորդ ենթախմբի մեջ մտած
միավորներին: Այսպիսին են արեամբ գնել, ի բացեայ թողուլ դարձվա-
ծային միավորները:

«Տարոնի պատմության» մեջ գնել արեամբ դարձվածային միավորը
բաղադրիչների ներսում ունի բով դերանունը, իսկ Աստվածաշնչում
դարձվածի մեջ կան բայական բաղադրիչների խնդրային, անվանական
բաղադրիչների հատկացուցչային լրացումներ, այլև նկատելի է այն
հանգամանքը, որ Հ. Մամիկոնյանի մոտ արեամբ բաղադրիչը նախադաս
է, իսկ Աստվածաշնչում՝ հտադաս, բով դերանունը երկու դեպքում էլ
գրվում է դարձվածային միավորից հետո: Օրինակ՝ «...զի զհնար՝ եւ գնե-
ցեւ զմեզ Աստուծոյ արեամբ բով՝ յամենայն ազգաց եւ լեզուաց...»
(Սգր., Յայտ., Ե, 9): «Յիշեա զորս արեամբ բով գնեցեւ և մահուամբ քով
որդեգիրս արարեբ...» (Մամիկ., 16):

Հ. Մամիկոնյանը մեկ անգամ գործածում է ի բացեայ թողուլ դարձ-
վածային միավորը հետևյալ նախադասության մեջ՝ «Եւ իբրև մօտեցան ի
տեղին, Վաշիր արս հարեւր ի բացեայ երող վասն այլ թշնամեացն...»
(27): Այս դարձվածի համար իբրև նախնական կիրառություն կարելի է
նշել Աստվածաշնչում հանդես եկող ի բացեայ առնել, ի բացեայ լինել
դարձվածները, եթե նկատի ունենանք բայական բաղադրիչների իմաստա-
յին մերձավորությունը՝ հատկապես ռճական կիրառության տեսակետից:
Օրինակ՝ «Մի ի բացեայ առնէր, զի նեղութիւնք մերձեալ են, եւ ոչ ոք է որ

օգնէ ինձ» (Սգր., Սաղ., 17, 22): «...ոչ եւս ի բացեալ եղիցում մեք ի քէն, կեցուցես դու զմեզ...» (Սգր., Սաղ., 28, 19):

2. Մամիկոնյանի «Տարոնի պատմութեան» բառապաշարի մեջ առաջին անգամ հանդիպող դարձվածային միավորները հիմնականում բխում են ժամանակի խոսակցական լեզվի և նրա ոճերի ակունքներից, իմաստային տեսակետից կապվում են ժամանակի ժողովրդական կամ աշխարհիկ լեզվամտածողութեան հետ:

Այս կարգի դարձվածային միավորները նույնպես աչքի են ընկնում բառապաշարի պատկերավորութեամբ, այլաբանութեամբ, հեղինակի պատմագրական խոսքին հաղորդում են ոճական նրբերանգային դույներ՝ կապվելով ժողովրդի կյանքի այս կամ այն դրվագի ինքնատիպ, գեղեցիկ շարադրման, նկարագրման հետ:

«Տարոնի պատմութեան» մեջ գործածվում են հետևյալ նոր դարձվածային միավորները՝ ամրացուցանել զգաւառն, առաջի դնել ի փախուստ, ի բաց կ(են)ալ ի մարգպանութենէն, գալ փացեալ ալեօֆ, զկեանս առաջի դնել, ձիոյ ագին տեսանել տալ, զմահն առաջի դնել, մտանել ի ռազմն, շուն արածել տալ, պատառել զռազմն, պսակել սրով, սուր ի վերայ դնել, տալ (զոմն) ի բլուրն, զփող պատերազմին ննչեցուցանել: Օրինակ՝ «...և թողեալ կողմնապետն Ապահունիս, և փացեալ ալեօֆ եկն ի գլուխ Տարօնոյ» (30): «...և մտեալ ի ռազմն ցրուեաց զժողովեալսն ի վերայ զօրսն իւրոյ» (47): «...սակայն զմահն և զկեանս առաջի եղեալ, բարձեալ զմուրճն ի վեր՝ իջոյց ի վերայ գագաթանն Նիխորճիշի (13): «...և սուր ի վերայ եղեալ՝ կոտորէր զնոսա...» (48) և այլն:

2) Ֆունկցիոնալ-ոճական առանձնահատկությունների տեսակետից 2. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածային միավորները նույնպես բաղմադան են:

Դարձվածային միավորները «Տարոնի պատմութեան» շարադրանքի մեջ ինքնանպատակ չեն կիրառվում: Հեղինակը օգտագործում է հայերենի տարբեր շերտերից բխող և այդ շերտերով պայմանավորվող այնպիսի դարձվածային միավորներ, որոնք ունեն որոշակի հաղորդակցական նշանակություն, միասին ամբողջացնում են պատմութեան բառապաշարի դարձվածային ոճական հարստությունը:

Ընդհանուր առմամբ, դարձվածային միավորների ուսումնասիրության կարևորագույն հայեցակետերից մեկն էլ այն է, որ լեզվական այս կարգի միավորները քննվում են ըստ լեզվի ոճական—հուղարտահայտչական առանձնահատկությունների: Այս դեպքում բացահայտվում են հաղորդակցական գործընթացում հանդես եկող համապատասխան միա-

վորների ոճական կիրառության շրջանակները, այլև գեղագիտական հագեցվածության եղանակները և արդյունավետությունը²⁴:

Ըստ այսմ, Հ. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածային միավորները ծառայում են որոշակի նպատակների՝ հաղորդակցական շղթայի մեջ հանդես են գալիս ըստ կոնկրետ ֆունկցիաների: Այսպես, դարձվածային միավորների մի մասը հանդես է գալիս ռազմական հրթերին և համապատասխան տեսարաններին նվիրված հատվածները շարադրելիս. մյուս մասը ծառայում է եկեղեցական կյանքի դեպքերին և անցքերին անդրադառնալիս, մեկ ուրիշ մասը՝ ժողովրդի նիստուկացի, սովորույթի, մտածողության պատկերավոր նկարագրությունների ժամանակ: Ըստ այսմ էլ, «Տարոնի պատմության» բառապաշարի դարձվածային միավորները կարելի է բաժանել հիմնական երեք գործառական-ոճական խմբերի:

ա) Մի շարք դարձվածային միավորներ արտահայտում են ռազմական գործողություններ և վիպական հերոսներին լեռնադրող հասկացությունների անվանումներ: Երբեմն հերոսների խոսքը օժտված է լինում նույնպիսի խոսքային միավորներով: Այս բնույթի դարձվածներից են հետևյալները՝ ամրացուցանել, զգալուն, առաջի դնել ի փախուստ, գալ փախեալ ալեօֆ, խմբել պատերազմ, մտանել ի պատերազմ, սուր ի վերայ դնել, ձիոյ ագին տեսանել տալ, պատառել զոգզմն, զկատարած կենաց հասուցանել, զփող պատերազմին հնչեցուցանել և այլն: Օրինակ՝ «Իսկ նա ոչ ինչ յղեաց պատասխանի, այլ սկսաւ ամրացուցանել զգալուն» (15): «Եւ ապա ի մէջ առեալ զզօրս ի Հայոց, ամենեցուն զկատարած կենաց հասուցանէին» (58): «...Իսկ քաջն Մուշեղ քաջալերեալ զզօրսն, հազիւ հաւանեցոյց մտանել ի պատերազմ» (13): «...և իբրեւ խթեցին զշորիսն սրով և արկին ի բանակսն, և ինքեանք զհետն մտեալ՝ զփող պատերազմին հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել...» (45):

բ) Մի խումբ դարձվածային միավորներ արտահայտում են այնպիսի բառային և բառակապակցական համակցություններ, որոնք մտնում են հեղինակի լեզվի կրոնապաշտամունքային և եկեղեցական բառապաշարի շերտերի մեջ: Դրանցից են հետևյալները՝ գալ ի վերայ եկեղեցւոյն, կապել զբերանս գազանացն, ի զուլս ելանել, հասանել ի թիկունս, դուռն դոխոց, ի բարեխօս սուրբ Կարապետն կոչել, ի յօգնութիւն սուրբ Կարապետն կոչել, կործանել գտեղիսն հաւատոյ և այլն: Օրինակ՝ «...որ զմահն նորա լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանեար, զոր ինձ ետ աս-

²⁴ Հմմտ. Н. М. Шанский, նշվ. աշխ., էջ 249—265:

տուած, զի ա՛րդ իշխեցեր զալ ի վերայ եկեղեցւոյն աստուծոյ» (31): «...սա խնդրեաց ի սուրբ Կարապետէն, կապել զբերանս գազանացն, որք բեկանէին զլուսաբերսն եկեղեցւոյն» (29):

գ) Մի այլ խումբ դարձվածային միավորներ արտահայտում են պատմութեան մեջ տեղ գտած առօրյա-խոսակցական, ժողովրդի նիստուկացի, ինչպէս նաև մտածողութեան և այլ իրողութիւններին վերաբերող հասկացութիւնների անվանումներ, ինչպես՝ այժ արածել տալ, շուն արածել տալ, գտանել պարսիկս լեզուաւ, զարթուցանել զգալ, զարթուցանել զառնւծ, զմահ առաջի դնել, զկեանս առաջի դնել, յարբունս հասանել և այլն: Օրինակ՝ «...սպա թէ ոչ, զնացէք դուք երեքեանդ յԱրծրունիս այժ արածէք, և բերդին ծառայութիւն արարէք...» (37): «...սակայն զմահն և զկեանս առաջի եղեալ, բարձեալ զմուրճն ի վեր՝ իշոյց ի վերայ գազաթանն Նիխորճիշի» (13) և այլն:

3) Սովորաբար դարձվածային միավորները կաղապարվում են ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելութեան, բաղադրիչների դարձվածային վերաիմաստավորման ճանապարհին կրած շարահյուսական-շարադասական փոփոխութեան հաշվառման, ըստ տվյալ խոսքի մասով դրսևորված բաղադրիչի ետադաս կամ առաջադաս լինելու հանգամանքի²⁵:

Նույնպիսի սկզբունքով կարելի է առաջնորդվել Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմութեան» դարձվածային միավորների կառուցվածքային առանձնահատկութիւնների քննութեան ժամանակ: Ըստ այսմ, ելնելով Հ. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածային միավորների կառուցվածքային առանձնահատկութիւններից, նշում ենք հիմնականում երկու ընդհանուր և խոշոր խմբեր՝ դասակարգման հիմքում ընդունելով այն ամենաէական հատկանիշը, որ գոյական անուն բաղադրիչը մի դեպքում հաջորդում է բայական բաղադրիչին, իսկ մի այլ դեպքում՝ նախորդում: մյուս բաղադրիչները ածանցյալ են և շարահյուսվում են սրանց հետ, հարում են սրանց:

Հ. Մամիկոնյանի բառապաշարի դարձվածային միավորները կառուցվածքի տեսակետից աչքի են ընկնում բաղադրիչների ոչ-կայուն շարադասութեամբ. բայական բաղադրիչը մերթ նախորդում, մերթ հաջորդում է անվանականին: Դարձվածային բաղադրիչները երբեմն ընդմիջարկվում են այլևայլ բառերով, լրացվում խնդրառական և պարագայական անդամներով:

Առաջին խումբը կազմում են բայ + գոյական բաղադրիչներով կազմ-

25 Հմտ. Н. М. Шанский, նշվ. աշխ., էջ 215—226:

ված դարձվածային միավորները: Այս պատմության տվյալները ցույց են տալիս, որ բայ-+գոյական ընդհանուր կաղապարի մեջ մտնող միավորները փոքր-ինչ շատ են, որոնց բայական բաղադրիչները կանոնավորապես դրվում են անդեմ և դիմավոր՝ բայաձևերով, գոյական բաղադրիչները առնվում են ուղղական, հայցական, գործիական և ներգոյական հոլովներով: Բաղադրիչների միջև գոյացած շարահյուսական հարաբերությունները կանոնավոր են, դասական գրաբարի համեմատությամբ՝ օրինաչափ: Գոյական բաղադրիչները երբեմն ունենում են և որոշյալ հոգը (հմմտ. ի բլուրն, ի ռազմն և այլն):

ա) Բայ-+գոյական բաղադրության մանրակաղապարի մեջ են մտնում հետևյալ դարձվածային միավորները՝ ամրացուցանել զգաւոն, բառնալ զգլովս, գնալ ի պատերազմ, զարքուցանել զառեւծ, գնել արեամբ (ոմամբ), խմբել պատերազմ, մտանել ի պատերազմ, մտանել ռազմն, նստել յաթոռ (ուրումն), պատառել զռազմն, պսակել սրով, տալ ի ձեռս (ումնմն), տալ (զոմն) ի բլուրն, հասանել ի քիկունս և այլն:

բ) Հարադիր բայ-+գոյական բաղադրիչներով հանդես եկած միավորներ են հետևյալները՝ առաջի դնել ի փախուստ, գալ ի վերայ եկեղեցոյն, դնել ի բերան (ուրումն) բանս, լի լինել խնդութեամբ, կապել զբերանս զազանացն և այլն: Այս խմբի մեջ մտնող միավորները գերազանցապես դարձվածային կապակցություն և դարձվածային արտահայտություն են: Դեռ ի վերայ եկեղեցոյն դարձվածային կապակցության անվանական մասը սեռական հոլովով ունի և հոգը:

գ) Բայ-+գոյական-+գոյական բաղադրությամբ հանդես է եկել եղակի կործանել զտեղիսն աստուծոյ դարձվածային կապակցությունը:

դ) Բայ-+դերբայ-+գոյական կաղապարի համար նույնպես ունենք եզակի օրինակ՝ գալ փախցեալ ալեօֆ, ուր դարձվածային իմաստի գոյացման մեջ նկատելի է այլաբանական ոճական երանգավորում, որպիսի եղանակով արտահայտվում է պատմության հերոսներից մեկի՝ խոսրով թագավորի, զայրույթի, մոլեգնության շարիք («ալիքները»):

ե) Բայ-+գոյական-+նախադրություն-+գոյական կաղապարը բաղադրության տեսակետից բավական ծավալուն է: Այստեղ ունենք լինել բայի և գոյականի բառակապակցական այնպիսի հարաբերություն, որն իր հերթին նախադրությամբ կապակցվելով մի այլ գոյականի հետ, վերաիմաստավորումով ստանում է դարձվածային արժեք: Այսպիսին են լինել իշխան ի վերայ հօտի, լինել ապաստանիչ ի վերայ ժառանգութեան միավորները: Սրանք կոնկրետ անվանումով դարձվածային արտահայտություններ են:

դ) Բայանուն + գոյական + բայ կաղապարի մեջ մտնում է եղակի՝
զկատարած կենաց հասուցանել դարձվածային միավորը:

Մյուս խումբը կազմում են գոյական + բայ բաղադրիչներով դրսե-
վորվող դարձվածային միավորները: Այս խմբի մեջ մտնող միավորները
կառուցվածքի տեսակետից նախորդի հակառակն են: Կաղապարային հիմ-
նական բաղադրիչները իրենց հերթին երբեմն ուղեկցվում են զանազան
թեքված և դերբայական բայաձևերով, նախդիրներով և նախադրու-
թյուններով:

ա) Գոյական + բայ կաղապարը այս խմբի մեջ մտնող դարձվածա-
յին միավորների հիմնական տիպն է: Այստեղ ունենք հետևյալ կարգի
միավորները՝ ռազմ կարգել, զորածոդով լինել, յարբունս հասանել,
ընդ գինի մտանել, ի բարեխօս կոչել, ի յօզնութիւն կոչել, ի գլուխ ելա-
նել, ի մտի կալ(ն)ուլ, գետավելժ առնել և այլն:

բ) Գոյական + հարադրավոր բայ կաղապարի մեջ մտնում են զմահ
առաջի դնել, զկեանս առաջի դնել, սուր ի վերայ դնել դարձվածային
միավորները:

գ) Գոյական + բայ + բայ կաղապարի մեջ մտնում են այժ արածել
տալ, շուն արածել տալ դարձվածային միավորները, որոնք գոյանում
են արածել տալ պատճառական հարադիր բայի և այժ, շուն գոյական-
ների դարձվածային հարաբերությունից:

դ) Գոյական + գոյական + հարադրավոր բայ կաղապարի մեջ առ-
նըվում է ձիոյ ազին տեսանել տալ դարձվածային միավորը, որտեղ
տեսանել տալ հարադրությունը՝ իբրև միաձուլվ բաղադրիչ, հարաբե-
րակցվել է հատկացուցչային կապակցության հետ՝ ստեղծելով դարձ-
վածային արտահայտություն:

Վերոհիշյալ երկու մեծ կաղապարներից բացի, ըստ էության,
ունենք նաև երրորդը, որը պարունակում է միայն անվանական բաղա-
դրիչներով դարձվածային միավորներ՝ գոյացած դարձվածախմբաստա-
յին որոշակի սերտությամբ (հմմտ. դրունք դժոխաց, կապանք մահու):

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» բառապաշարի դարձ-
վածային միավորների ծագումնային, գործառական-ոճական և կա-
ռուցվածքային առանձնահատկությունների քննությունը հանգեցնում է
հետևյալ կոնկրետ եզրակացություններին.

1) Ծագումնային առանձնահատկությունների տեսակետից դարձ-
վածային միավորները բաժանվում են երկու՝ հայերենի նախորդ ենթա-
շրջաններում կիրառված և ըստ մեր տվյալների առաջին անգամ այս
պատմության լեզվի մեջ հանդիպող, դարձվածային միավորների խում-

բերի: Այս միավորների մի մասը գործածություն ունի հայերենի նախորդ ենթաշրջաններում, այսինքն՝ հին հայերենի բառապաշարի որոշ դարձվածային միավորներ այս հեղինակի մոտ գործածվում են նույն իմաստներով: Սրանցից բացի կան այնպիսի նախնական կիրառություններ ունեցող միավորներ, որոնք ունեն հետևյալ նրբությունները: Մի դեպքում, նախնական կիրառությունը տվորական բառակապակցություն է, արտահայտում է առարկայական անմիջական բառակապակցական իմաստ, իսկ Հ. Մամիկոնյանի մոտ հանդես է գալիս դարձվածային իմաստով: Մյուս դեպքում, որոշ նախնական կիրառություն գտած դարձվածային միավորների բաղադրիչները փոքր-ինչ այլ կերպ են շարադասվում, հանդես են գալիս հակառակ, լրացական բառերի հետ միասին, որոնք կամ պահպանվում են, կամ փոփոխվում: Մի այլ դեպքում, այս պատմության տվյալ դարձվածային միավորի բայական բաղադրիչի դիմաց նախնական կիրառություններում ունենք այդ նույն բաղադրիչին իմաստով մերձավոր մի այլ բաղադրիչ: Բոլոր դեպքերում այս հեղինակի բառապաշարի մեջ կիրառվածները որակվում են նախնական կիրառություն գտած դարձվածային միավոր անվանումով:

2) Ֆունկցիոնալ-ոճական առանձնահատկությունների տեսակետից դարձվածային միավորները առանձնանում են հիմնականում երեք ոլորտի մեջ: Պատերազմական գործողությունների, եկեղեցական կյանքի որոշ դրվագների, ժողովրդի մտածողության, նիստուկացի և այլն ձևերի մասին շարադրելիս հեղինակը ոճական նպատակներով գործածում է որոշակի ու համապատասխան դարձվածային միավորներ:

3) Կառուցվածքային առանձնահատկությունների քննությունից պարզվում է, որ օգտագործվում են առնվազն երկու բառային բաղադրիչներով գոյացող (իսկ սա բնական է) դարձվածային միավորներ, ըստ որում սրանց մի մասը հանդես է գալիս բայ+գոյական բաղադրիչներով՝ կոնկրետ կիրառությունների մեջ ունենալով տարբերակներ, ուղեկցվելով այլ խոսքի մասերի պատկանող բառերով, որոնք հաջորդում կամ նախորդում են հիմնական բաղադրիչներին, մյուս մասը կազմվում է գոյական+բայ բաղադրիչներով, որոնք նույնպես ունեն մանրակաղապարներ՝ իրենց որոշ նրբություններով հանդերձ: Երկու դեպքում հանդիպում են միայն անվանական բաղադրիչներով կազմված դարձվածային միավորներ, որոնք ունեն հատկացուցչային շարահյուսական հարաբերություն:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզվի ձևաբանական առանձնահատկությունների քննության ժամանակ ուշադրության հիմնական առարկան են թվակազմության, հոլովակազմության (նաև՝ դերանվանական), բայական համակարգի կրած փոփոխությունները՝ կապված հայերենի զարգացման ընդհանուր օրինաչափությունների և քրննարկվող հեղինակի լեզվական առանձնահատկությունների հետ:

1) Թվի քերականական կարգը հին հայերենի նախորդ երկու ենթաշրջանների համեմատությամբ չի ցուցաբերում ձևաբանական արտահայտության և բովանդակության պլաններում դրսևորված ակնհայտ տարբերություններ. չկան հոգնակերտ նոր մասնիկներ: Հին հայերենի՝ լայն կիրառություն ունեցող -ֆ (-ց, -ս) հոգնակերտ մասնիկների կողքին մեկ անգամ դրսևորվում է -եւ մասնիկը: Օրինակ՝ «Եւ եկեալ իշխանին Հաշտենից, ասէ. «Զի՞ եղեն պարսիկքն»: Եւ նոքա ասեն. «Աւասիկ են ընդ Հայերոյդ»: Եւ կոչեցաւ անուն տեղոյն Հայկերտ» (53):

Գրեթե հին հայերենի օրինաչափությունների սահմանում են մնում հավաքական գոյականների, անհոգնական, անեզական բառերի դրսևորման եղանակները:

Անհոգնական բառերը, որոնք սովորաբար բաժանվում են ա) անհոգնական անձնանունների, տեղանունների, մականունների, բ) վերացական հասկացությունների անունների, գ) նյութական աշխարհի եզակի առարկաների անունների¹, լայն կիրառություն ունեն «Տարոնի պատմության» մեջ:

Առաջին խմբի բառերից են Գալլ Վահան, Գորգ Շատախօս հատուկ անունները, Ասուր, Փանդիկ («փանդանեկ» նոր բառից) մականունները և այլն:

¹ Э. Г. Туманян, Древнеармянский язык, М., 1972, էջ 175, 2. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 44—52:

Հայերենում հոգնակիությունը արտահայտվում է նաև հավաքական բառերի միջոցով, որոնք բաղադրվում են որոշակի մասնիկներով. «Այդ մասնիկները երկու տեսակ են՝ 1) գրաբարի բուն հոգնակերտի՝ ք-ի հետ բաղադրվող մասնիկներ... և 2) այլ կարգի մասնիկներ: Այս երկու կարգի մասնիկների մի մասը հանդիպում է ուշ շրջանի գրաբարում կամ միջին հայերենում, բայց անշուշտ իր հիմքերն է ունեցել և ավելի վաղ շրջանում...»²: Ք-ով բաղադրված մասնիկներն են՝ -այք, -եայք, -անք, -իք, -ինք, -ոյք, -ունք, մյուս՝ այլ հոգնակերտ-հավաքական մասնիկները՝ -ան, -անի, -եան, -եար, -եր, -իկ, -ական, -նեար, -որայ, -որեայ, -տի, -ոտի, -ուի, -ստանք³:

Նտդասական գրաբարի և նախամիջին ենթաշրջաններում, ինչպես նշում են այս առումով կատարված ուսումնասիրությունները⁴, հոգնակերտ-հավաքական մասնիկների թիվը ավելանում է:

Հ. Մամիկոնյանի լեզվում հավաքական գոյականները բավական քիչ են կիրառվում: Նղածներն էլ կազմվում են -անիք, -եանք, -որայ, -տի մասնիկներով: Օրինակ՝ «Ձայս ամենայն ասացին, և ի դէպ էր վասն իրացն, որ և կոչեցաւ անուն գեղջն Շիրականիք (42): «...բանդի իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնենից՝ կտրեաց զերկու աւանսն ի վանացն...» (12): «...ես Յովհան մամիկոնեան եպիսկոպոս, երեսներորդ հինգերորդ ի Զենոբայ առաջին եպիսկոպոսէն մամիկոնենից...» (60): «Իշխան Արծրունեաց... շինեաց բազում եկեղեցիս և վանորայս...» (9): «...դտանէին սպանեալ պարսիկքն՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի՝ չորեքհազար» (36): «...որք ընդ իմով իշխանութեամբ էին, դարս և զկանայս և զմանկտիս, զնաւատացեալս...» (60) և այլն:

Միշտ չէ, որ բառերն ունենում են ձևափոխության համամասնություն. հանդիպում են դեպքեր, երբ բառերն «իմաստով եղակի են և ձևով՝ հոգնակի»⁵: «Տարոնի պատմության» մեջ անեղական բառերը

2 Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 85—86:

3 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 86—87:

4 Ա. Բագրատունի, Հայերեն քերականության ի պէս զարգացելուց, Վիեննա, 1852, էջ 47—48, A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 85, Հ. Անադյան Լիակատար քերականություն հայոց լեզվի, ի. 3, Երևան, 1957, էջ 529—530, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 86, Ա. Արաքանյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1964, էջ 21, Յ. Գ. Туманян, նշվ. աշխ., էջ 175—176: Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 70—76:

5 Հ. Անադյան, նշվ. աշխ., էջ 856—870: Մ. Ասատրյան, Անեղական բառերը հայերենում, ՊՐԶ, 1960, 3, էջ 124—135:

համեմատաբար շատ են կիրառվում՝ դրսևորվելով հիմնականում -ելիք, -իք, -է մասնիկներով: Օրինակ՝ «... և տուեալ նոցա դանձա և երիվարս՝ արձակեցին ի պարտիկս, լինել զրուցատարս սխալեցան՝ որ հանդիպեցաւ...» (53): «Յիշեա, ասեն, զԲախտիս մեր. և որպէս ի հեռուստ օգնեցեր, ի մոտոյս մի վերջանար ի մէջ» (40): «... և ասէ ցիշխանն. «Աւադիկ է տուրսդ»: Իսկ նա ասէ. «Հաւանիմ տրոցդ, բայց հարեւր և ուխտուն հազար փայտ են տարեալ ի Քարթէոյ...» (38): «Սա բազում անգամ բարիս խոստանայ, և բազում անգամ չարիս...» (43) և այլն:

2) 2. Մամիկոնյանի լեզվի հոլովման առանձնահատկութիւնները նույնպէս բավական ակնառու են: Անվանական և դերանվանական բոլոր թեք ձևերը ներկայացնում են մի կողմից դասական գրաբարից եկող ընդհանուր օրինաչափութիւնները, մյուս կողմից՝ նախամիջին ենթաշրջանի մեջ վերջիններիս կրած փոփոխութիւնների որոշ մասը, որ մուտք գործելով հեղինակի լեզվի մեջ՝ արտացոլում են հայերենի համապատասխան երևոյթների զարգացման միտումները:

ա) Դասական գրաբարում կանոնաւոր ի հոլովման պատկանող արօտ բառը այստեղ շեղվում է դեպի ո հոլովումը, իսկ սպաս բառը ցուցաբերում է ի/ու հոլովիչների զուգահեռութիւն⁶: Օրինակ՝ «...և ինքն պատրաստի արարեալ զգարանակալսն, հրամայեաց ծառայիցն՝ կտրել զերիվարսն արօտոյ պատճառաւ» (23): «...և զարդարեաց զնա հրաշալի սպասիւք և կազմութեամբ» (42): «...և զսուրբ խաչն գերեաց, և առեալ զնաց ի պարտիկս, և եղեալ զսուրբ խաչն հանդերձ սպասուիմ մինչև յեկն և ի տասն ամի թագաւորութեան իւրում» (54):

Հայ մատենագրութեան մեջ առաջին անգամ այս հեղինակի կողմից գործածված սապոն բառը, հոլովվելով ի հոլովիչով, ամբլացնում է այդ հոլովման պատկանող բառերի քանակը: Օրինակ՝ «... և դարձեալ զսապոնի գինսն վախտուն հազար դահեկան, որ զքո զօրաց փշահոտ հալան և զարինաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ագաք» (37):

բ) Պարզ ա հոլովման պատկանող Վաշղեան անձնանունը դրսևորում է ա/ո հոլովիչների զուգահեռութիւն: Օրինակ՝ «Բայց որդին նորա Տիրան հրամանաւ Վաշղեանայ... գնաց ի դուռն խոսրովայ...» (56):

6 2. Մամիկոնյանին նախորդող մատենագիրներից, օրինակ, խորենացին չունի սպաս բառի որևէ կիրառութիւն, Եղիշի մոտ բառս չունի թեք ձևեր, Փարպեցին ունի սպասուի (38), ձևով միայն, իսկ Եղիշին ունի՝ սպասու (160, 200), այլև իբրև հեռագրական տարբերութիւն՝ սպասիւք (69): Վերահիշյալ մատենագիրներից ոչ ոք չունի արօտ բառի կիրառութիւն ընդհանրապէս:

«Զոր դիպող ժամանակ գտեալ՝ որդին Վաշդենոյ Զոշիկ վրաց իշխանն» (58):

Վարազ անձնանունը ծագումնաբանորեն բխում է վարազ հասարակ գոյականից: Վերջինս դասական գրաբարում պատկանում էր ու հոլովման և երկրորդաբար ենթարկվում ի-ա հոլովման⁷: Այստեղ Վարազ հատուկ անունը թեքվում է ա հոլովիչով և մտնում այս հոլովման պատկանող գոյականների շրջանակի մեջ: Օրինակ՝ «Կերան զազանք զմարմինս դիականցն Վարազայ և գիրացան» (42): «Իսկ նա՛ ընդդէմ դարձաւ և կտրեաց զգլուխ երիվարին Վարազայ և ընկէց» (52):

գ) Ո հոլովման պատկանող մի քանի հատուկ անուններ նույնպես ունեն գուգահեռ հոլովիչներ՝ Մուշ→Մշոյ, բայց նաև՝ Մշու, Մամիկոնեան→Մամիկոնենոյ, բայց նաև՝ Մամիկոնեից: Օրինակ՝ «...առեալ զՄուշեղ զտէրն Մշոյ և Խութայ և Տարօնոյ...» (13): «...ապա շինեաց զեկեղեցին՝ որ ի վերայ բլերն Մշու...» (55): «...որ քսան և իններորդ էր ի սրբոյ Գրիգորէ, և յիշխանութեան Վահանայ Մամիկոնենոյ» (56): «...քանզի իշխան ոմն անօրէն՝ տանն վամիկոնեցի՝ կտրեաց զերկու աւանսն ի վանացն» (12):

Դասական գրաբարում մուրն գոյականը պատկանում էր ո հոլովման⁸: Հետագայում ենթարկվում է նաև ի-ա խառը հոլովման: Այս պատմության մեջ բառը կիրառվում է մուրն→մրնով և մուրն→մր-նին, մրնօֆ (մրնաֆ) և այլն ձևերով: Օրինակ՝ «...և հասեալ Սմբատայ եհար մրնովն ի վերայ գագաթանն և գոգեաց սաղաւարտն, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարտն մրնին Սմբատայ...» (35): «...և սկսան մրնօֆ հարկանել, և ոչ գտին» (20):

Բլուր գոյականը դասական գրաբարում պատկանելով ո հոլովման, այստեղ հանդես է գալիս ներքին թեքման ե հոլովմամբ, ինչպես, օրինակ՝ «...և ապա ի վաղին սկսան մեւս դօրս Պարսից գալի ի վերայ բլերն ի նոյն տեղին» (27, ինչպես նաև՝ 34, 35, 40, 55): Բլեր հոլովածէր նորակազմություն է. այս բառը ո պարզ հոլովմամբ չի գործածվում Հ. Մամիկոնցանի պատմության մեջ:

դ) Դասական գրաբարում ու հոլովման ենթահամակարգը որոշակի

7 Հմմտ. Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 314: Եզնիկի մոտ, օրինակ, կա վարազ հասարակ գոյականը՝ եղակիում ի հոլովմամբ. «Որպէս վարազի... ուտի միսն, և ոչ վնասի» (66): Փարպեցին ունի վարազացն (10) ձևը:

8 Մուրն բառը հին հայերենում ո հոլովիչի կողքին ունի նաև ի-ա հոլովիչ. այս հիմնադրովում է նաև այս տվյալներով (Հմմտ. Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 278): Խորենացին ունի մրնով (290), իսկ իբրև ձեռագրական տարբերություն՝ մրնաֆ:

օրինաչափությունների կողքին ունեւր նաև որոշ խախտումներ: Հ. Մամիկոնյանի լեզվում նույնպես այս հոլովման պատկանող բառերը հանդես են գալիս ոչ միայն հիմնական օրինաչափություններով, այլև շեղումներով: Այսպես, բիւր բառը հիմնականում հոլովվում է ու հոլովիչով՝ ունենալով նաև ո հոլովատիւ⁹: Այս պատմության մեջ բառս ունի ի—ա հոլովիչի յարբերություն՝ կիրառւած բիւրօf (բիւրաօf) ձևով: Օրինակ. «...յիշեաց խորով զուխտն Մօրկայ՝ որ ի մէջ նորա և իւրն, և եկն էանց ի Յոյն շորեքտասան բիւրօf, և բրեաց բալում աւան, և դաւառն և դարձաւ» (15):

Դասական գրաբարում ման բառը հոլովվում էր կրկնակ ձևերով՝ աւնուն և ձեղուն բառերի նմանությամբ՝ մահուան, մահուանք, մահուանց, ինչպես նաև մահու, մահուց և այլն: Վերջինները համեմատաբար պակաս տարածւած էին համարվում դասական գրաբարի համակարգում¹⁰:

«Տարոնի պատմության» մեջ ման բառը գործածվում է յոթ անգամ մահու (էջ 14, 14, 16, 16, 18, 22, 31), մեկական անգամ մահուն (59), զմահու (24) և երեք անգամ Մահու որպէս հատուկ անվան բաղադրիչ (հմտ. Մահու ագարակ՝ 34, 40, Մահու բլուր՝ 36) ձևերով, իսկ մահուան, մահուանն ձևերով մեկական (56, 14), մահուամբ (18, 20) երկու անգամ: Ինչպես նկատելի է, այս պատմության մեջ մահու թեքումը մահուան թեքման համեմատությամբ ավելի տարածւած է:

Շեղումներ են ցուցաբերում նաև հետևյալ բառերը՝ նակատ—նակատուն (հիւ. նակատուն), դրօշ—դրօշացն (հիւ. դրօշուցն), զգեստ—զգեստիցն (հիւ. զգեստուցն)¹¹: Օրինակ՝ «Իսկ նորա կալեալ զպատ-

9 Եղնիկն ու Փարպեցին ունեն համապատասխանաբար բիւրուց (155, 217) և բիւրոց (51) ձևերը:

10 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 32: Ինչպես նշում է նաև Ա. Աբրահամյանը, ըստ Ստ. Մալխասյանցի ման բառի ավելի նախնական ձևն էր մահուն, որն էլ աւնուն, ձեղուն գոյականների հետ կազմում էր որոշակի խումբ (հմտ. Ստ. Մալխասյանց. Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 25—26): Եղնիկն ունի մահուան ձևի 23 կիրառություն, իսկ մահուն՝ 13: Փարպեցին նույնպես զուգահեռաբար կիրառում է մահուան/մահու ձևերը՝ 8 անգամ մահու, 3 անգամ մահուան, որոնցից մեկական անգամներ՝ իբրև ձեռագրական տարբերություն: Եղիշեի մոտ մահուան ձևով կիրառությունները գերազանցում են մյուսներին:

11 Հ. Անադյան, Հայերեն արձատական բառարան, հ. 4, Երևան, 1930, էջ 566—568: Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 313: Դրօշ բառը ուղղական հոլովով օգտագործել են Եղնիկը և Խորենացին, իսկ Եղիշեն ունի դրաւիցն (96) և որպէս ձեռագրական տարբերություն՝ դրաւուց/զգրաւուց ձևերը: Փարպեցին գործածում է այս բառի դրօշիցն (72) ձևը միայն:

գամառորսն, հրաքոյց շամփուր մի երկաթի և եղ պսակ շուրջ նակա-
տովն...» (47): «...մինչև զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց
միայն ձայն փողոցն և ի տեսս դօշաքն» (35): «...և որք ընդ դռն
յայնկոյս անցանէին, զայն ի տունս արկեալ ի զգեստիցն կողոպտէին և
զգլուխսն կտրէին...» (22):

Դասական գրաբարում աջ բառը ենթարկվում էր ու հոլովման, թեև
ունենր նաև ո, հետևաբար՝ ի հոլովումներ¹²: Այս պատմության մեջ կի-
րառվում է ո հոլովումով: Օրինակ՝ «Ողջ լեր ի դիցն աշոյ» (37): «...և
ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբ աշոյ՝ ի բաց իջանէր» (33):

ե) Հ. Մամիկոնյանի պատմության մեջ կան այնպիսի բառեր, որոնք
ակնառու տարբերություններ են ցուցաբերում դասական գրաբարի ի-ա
խառը հոլովման ենթահամակարգից: Այսպիսի կիրառություններ ունեն
անտառ—→անտառովն (փխ. անտառան)¹³, վայր—→վայրուցն (թեև կան
նաև՝ վայրի, վայրին)¹⁴, բերդ—→բերդին, բերդիցն¹⁵, նենգ—→նենգով
փխ. նենգի)¹⁶: Օրինակ՝ «Իբրև խմբեցաւ պատերազմ յեզերս Արածա-
նոյ, առ անտառովն՝ որ կոչի Կաղամախեսց բլուր...» (50): «...գուցէ
որ թշնամի, ասէ, յարձակիցի և դուք չէք ընդել վայրուցն» (23): «...այլ
տուր ի ձեռս իմ շորեք հազար այր, որ գնամք ի վերայ ամուր բերդիցն՝
ուր մտերիմք նորա են և զանձքն» (21): «Եւ ինքն սկսաւ կոչել զիշ-
խանսն խաբեությամբ ի խորհուրդ և նենգով այնպէս առնէր...» (25):

զ) Փոփոխություններ են նկատվում նաև դերանվանական հոլո-
վումների մեջ: Հաճախ իւր դերանվան հետ հանդես է գալիս ն հնչույթը,
որը Ա. Այսրենյանի ճիշտ դիտողությամբ հոգ չէ, ինչպես՝ ի մէջ նորա
և իւրն, ունէր ընդ իւրն: Օրինակ՝ «...յիշեաց Խոսրով զուխտն Մօրկայ՝
որ ի մէջ նորա և իւրն, եկն էանց ի Յոյնս շորեքտասան բիւրօք...» (15):

12 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 272: Եզնիկը և Եղիշեն չունեն աջ բառի թեք ձևերով
Հիրառություն, Խորենացու և Փարպեցու մոտ կա միայն ո հոլովիչով:

13 Հմմտ. Հ. Անադյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 452,
Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 284: Անտառ՝ բառը չի կիրառվում Եզնիկի և Փարպեցու
մոտ, Խորենացին ունի միայն անտառին (233, 265, 294) ձևը:

14 Հմմտ. Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 1070, Գ. Զա-
հուկյան, նշվ. աշխ., էջ 297: Եղիշեն վայր բառը չի կիրառում թեք ձևերով, Խորենացին
ունի՝ վայրի (359), ի վայրի (339), Եզնիկը՝ վայրացն (106), վայրաց (160), Փարպե-
ցին՝ վայրին (123), ի վայրացն (102):

15 Հ. Աճառյանը նշում է ի-ա հոլովում (տես Հ. Անադյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 442):

16 Հ. Աճառյանի կողմից նենգ բառին ի-ա կամ հետևաբար՝ ի, ո հոլովիչների հատ-
կացումը այս պատմության տվյալներով հաստատվում է (տես, Հ. Անադյան, նշվ. աշխ.,
էջ 84): Եզնիկը և Եղիշեն չեն գործածում այս բառը, Խորենացու մոտ կա վասն նենգին
(79), իսկ Փարպեցու մոտ՝ նենգով (75, 84) ձևերով:

Դասական գրաբարում այս ցուցական դերանունը հոգնակի սեռականում և տրականում ունեւ կանոնավորապես այս, այսոցիկ կարճ և երկար ձևերը, որոնց դիմաց այս պատմության մեջ հանդիպում է համապատասխան իմաստով այսոց նոր ձևը: Օրինակ՝ «Եւ մինչ նոքա զայն պատերազմն անցուցին և վճարեցին, և յառաջսն եկին այսոց, և նոքա դեռ չէին եկեալ ի Մծմակն...» (24): Այս և նման ձևերի մասին Ա. Այտրնյանը գրում է. «Այս ամենքն որ ստորին դարուց ռամկօրէնին սովորականներն են, մենք առաջին անգամ այս հեղինակի քով կգտնենք»¹⁷:

Դասական գրաբարի փոխադարձ դերանուններից անուղղական իրեւաց, զիրեւաս, իրեւօֆ (իրեւաւֆ) ճիշտ ձևերի կողքին հանդիպում ենք ընդ իրարս ձևի կիրառութիւնների: Օրինակ՝ «...և խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, մինչև զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս...» (35): «Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, և կամէին փախչել վահանեանքն, յորժամ նոցա միաբան աղաղակեցին...» (50)¹⁸:

3) Դասական գրաբարի բայական համակարգը նույնպես «Տարոնի պատմության» մեջ արտացոլվել է որոշ փոփոխութիւններով: Դրսևորվում են այնպիսի դերբայական ձևեր, որոնք նորութիւն են դասական գրաբարի համեմատութեամբ: Փոփոխութիւն է նկատվում նաև դիմավոր բայաձևերի հիմքակազմութեան, խոնարհման տիպերի առանձնացումների մեջ: Եղանակաժամանակային ձևերը ավելի փոխանցելի են դառնում նախորդ ենթաշրջանների համեմատութեամբ: Նկատելի են ժամանակաձևերի իմաստային ազատ կիրառութիւններ միմյանց փոխարեն և մեկը մյուսի իմաստով: Վերջիններս հավաստում են դասական գրաբարի ներսում գոյութիւն ունեցող ժամանակաձևերի անկայուն կիրառութիւնների հետագա տարածումը:

Այս պատմության մեջ փոփոխութիւններով հանդես եկած բայերի թիվը ընդհանուր քանակի համեմատութեամբ այնքան էլ մեծ չէ և չի խախտում մեր պատկերացումները դասական գրաբարի խոնարհումների ավանդական խմբավորումների մասին: Այսպիսի փոփոխութիւնները նույնպես պայմանավորված են ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի ազդեցութեամբ:

¹⁷ Ա. Այտրնյան, նշվ. աշխ., էջ 125:

¹⁸ Ա. Այտրնյանը այս կապակցութեամբ նույնպես գրում է. «Շատ հաճախ է դարձած զիրար, իրեւաս, իրեւաց»: Դասական գրաբարի համեմատութեամբ վերջին երկուսը կանոնավոր են, այնինչ զիրար ձևի չենք հանդիպում «Տարոնի պատմության» մեջ, թերևս այս առումով նկատի է առնվել ընդ իրարս ձևը:

ա) Անորոշ դերբայը՝ դասական գրաբարում ունեցած համարյա քոլոր կիրառություններից բացի, այստեղ հանդես է գալիս նաև հետևյալ տիպի կազմության մեջ, ինչպես՝ ի գալ են, ի տալ էք: Օրինակ՝ «Զի Յոյնք են ի գալ ի վերայ մեր, ասէ» (27): «Դուք ինձ վնասակարք էք, որ զտաճարսն այլ յայրել էք ի տալ...» (26):

Որպես նորակազմություն դասական գրաբարի համեմատությամբ, Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզվում դրսևորվում է նաև ման մասնիկով բայաձև, որը այստեղ ունի դերբայական իմաստ և համապատասխան կիրառություն: Այս մասնիկով ունենք քաղման (քաղումն-ից) ձևը, որը բաղադրվում է այլ կարգի բառերի հետ և պատմության մեջ արտահայտում է մի տեսակ հարակատարի իմաստ՝ նախադասության մեջ գերադանցապես հանդես գալով բաղադրյալ ստորոգյալի շարահյուսական ֆունկցիայով: Այստեղ ունենք ընդամենը երեք օրինակ՝ դրսևորված միմիայն քաղման ձևով: Օրինակ՝ «Ինքն վախճանեցաւ և կան քաղման առ Արծրունեաց իշխանին, ի կողմն արեւելից ճակատուն» (28): «... և կայ ի քաղման ի նմին տեղւոջն որ դեռ ևս Արձան կոչի անուն տեղինն» (28): Եւ կայ ի քաղման ի դուռն սրբոյ Կարապետին, առաջի սեմոցն» (33):

Այս ձևը ումն հանգով բայանունների սեռական-տրական հոլովաձևն է¹⁹: Բերված օրինակներում քաղման և սրա բաղադրյալ կան ի քաղման, կայ ի քաղման կազմությունները, ըստ երևույթին, կառվում են հեղինակի ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի որոշակի առանձնահատկությունների հետ: Քանի որ հայերենի որոշ նոր բարբառներ ունեն նույնպիսի կազմություններ, ապա հավանաբար այսպիսի ձևերի գոյությունը առնչվում է նաև բարբառային-տարածքային (տեղիտորիալ) որոշակի տարբերությունների ու յուրահատկությունների հետ: Բայական այս ձևի գոյությունը արժեքավոր է ոչ միայն հեղինակի լեզվի բնութագրման, այլ հայերենի պատմության ուսումնասիրության առումով ընդհանրապես:

«Տարոնի պատմության» մեջ հանդիպում ենք նաև ած մասնիկով հարակատար դերբայի եզակի կիրառության: Օրինակ՝ «Գնացի և տեսի առ նմա զգիրսն, որ ի նոյն իննականեան վանսն էր գրած և նա ի զօրաց

19 Տես, Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունները, Երևան, 1953, էջ 99—103, Գ. Զանուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 48:

ուստէք ունէր ի Պարսից կամ այլ ուրուր...» (50): Նկատի ունենալով Ա. Այտընյանի այս առումով արած միանգամայն ճիշտ մեկնաբանությունը, Հ. Մամիկոնյանի լեզվի այս փաստը հայերենի ած մասնիկով հարակատար դերբայի մասին եղած հնագույն տվյալներից պետք է համարել, եթե ոչ՝ ամենահնագույնը²⁰:

բ) Դիմավոր բայաձևերի հիմքակազմության, խոնարհման տիպերի կրած փոփոխությունները հիմնականում հետևյալներն են:

Դասական գրաբարի անկանոն խոնարհման լսել բայը կիրառվում է իբրև ե խոնարհման կանոնավոր բայ: Օրինակ՝ «...որ զմահն նորա լսեցեք, և զիմ կորովութիւնս ծանեար... զիա՞րդ իշխեցեի՞ր զալ ի վերայ եկեղեցւոյն» (31): Այստեղ լսեցեք բայաձևը նորակազմություն է:

Այս պատմության մեջ գործածվում է միևնույն բայի նեղեն, նեղէին, նեղեցի, նեղեցաք, նեղեցան և նեղացար թեք ձևերը: Երեք բայաձևի դեպքում ունենք -եց, իսկ մեկի դեպքում՝ -աց ցոյականություն. ստացվում է եց//աց զուգահեռ ցոյականություն: Ա. Այտընյանը նեղացար բայաձևը համարում է նորակազմություն: Օրինակ՝ «...Վաշտեան գրեալ թուղթ առ Տիրան այսպէս. «նեղացար պանդխտութեամբ, արդ արի եկ՝ զի խորհեսցուր ինչ արժանի» (57):

Այս պատմության մեջ կիրառվում են խրեցին, խրեցեն և խիքացեն ձևերը: Ըստ Հ. Աճառյանի, խէք «խղճի խայթ» արմատից գոյացած խիքալ ձևը նախնական իմաստային կիրառություններից զատ այստեղ գործածվում է նոր, երրորդ՝ «ցավել, սգալ» իմաստով: Օրինակ՝ «...գաղանք եղկեսցեն զիս և թռչնոց ազդ խիքացեն ընդ իս» (10): խրել (<խիք) արմատից խրեցեն ձևը Հ. Մամիկոնյանի մոտ կիրառվում է «սրով բղել, բոթել, մշտել» իմաստով, որը պատկանում է նաև ժամանակակից հայերենում²¹: Օրինակ՝ «Եւ իբրև խրեցին զջորիսն սրով և արկին քի բանակն» (45): Հ. Աճառյանը խրեցեն ձևի անորոշը դնում է խրալ «խեթի նաչի» և այս իմաստով վկայակոչում է Հ. Մամիկոնյանի այս կիրառությունը²²: Օրինակ՝ «Զբազմութիւն դիւացն կապեսցեն ի տեղոջն յայսմիկ, զի խրեցեն զծուլացեալսն յաստուածապաշտութենէ...» (18): Բերված օրինակներում խիքացեն և խրեցեն ձևերը կազմում են ա//ե զուգահեռ լծորդություններ, որոնցից առաջինը ձևաիմաստային տեսակետից նորակազմություն է:

Մատչիմ բայը այստեղ դասական գրաբարի հրամայականի (մա-

20 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 126—127:

21 Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 578:

22 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1972, հ. 2, էջ 361, 364:

տեայֆ//մատերուֆ կանոնավոր հոգնակիներէ կողքին ունի նաեւ մատիֆ նորագոյացութիւնը: Օրինակ՝ «Իսկ նորա ի բլուրն ելեալ, ասէր. «Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիֆ» (35):

Ի խոնարհման փրծանիմ//պրծանիմ բայն այստեղ դարձել է ու խոնարհման բայ՝ պրծնուլ, ինչպես, օրինակ՝ «... ասէ Վախտանգն. «Կաց հարճորդի, թէպէտ զբազումս ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուս ի ձեռաց քաջ արանցս...» (35):

Ու խոնարհման մածնուլ, ուռնուլ բայերի դեպքում նկատելի է ի թուլ բաղադրիչի առկում անցյալ կատարյալի հիմքում, փոխանակ՝ ի > ե հնչյունափոխութիւն: Օրինակ՝ «Եւ մածաւ սուրն ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել...» (40): «Կուղ կերեալ ուռաւ որպէս զարջ, և աղուէս հպարտ եղև քան զառեծ...» (42):

Հասանել բայի հրամայական եղանակի եզակի թվի հա՛ս ձևի փոխարեն կիրառվում է մեկ անգամ հասի՛ր, ինչպես, օրինակ՝ «Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հասի՛ր յօգն ծերոյս» (33):

Լինել բայը հրամայականի հոգնակիում ունի լի՛ւ նորակազմութիւնը (փխ. լերո՛ւֆ, լիջի՛ւֆ): Օրինակ՝ «Տուք զձեզ ի բլուրն, զի տեղին աջող է պատերազմի և անձնապահ լի՛ւ մինչև մեր զօրն հասանէ» (40):

Դասական գրաբարում դառնալ, իմանալ բայերի հրամայականն էր դա՛րձ, դա՛րձի՛ր, դա՛րձարո՛ւֆ և իմա՛, իմացարո՛ւֆ, որոնց դիմաց այստեղ երբեմն ունենք դա՛րձէ՛ւֆ, իմացէ՛ւֆ նորակազմութիւնները: Օրինակ՝ «...և ետ խրատ՝ թէ յորժամ նոքա ի ձեզ հային, դուք միաբան ի քաղաքն դա՛րձէ՛ւֆ... և դուռն քաղաքին ի բաց թողէք...» (22): «... ապա թէ ոչ ձեզ այլ հնար իմացէ՛ւֆ» (37)²³:

Դասական գրաբարում փախչիւմ բայը հրամայականում ունի նաև փախեա՛յֆ, փախերո՛ւֆ ձևերը, որոնց դիմաց այստեղ գործածվում է փախի՛ւֆ նոր բայաձևը: Փախի՛ւֆ բայաձևը լի՛ւ ձևի հետ միասին ներկայացնում են դասական գրաբարի օրինաչափութիւնների խախտման և նոր միտումների գրաւորման դեպքեր: Օրինակ՝ «...Զի՞ պապուեցաք, փախիֆ, որ մեք կոտորեմք (48):

Այսպիսով, Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմութիւն» լեզուն պարունակում է մի շարք կարևոր ձևաբանական առանձնահատկութիւններ, որոնք դասական գրաբարի համեմատութեամբ նորակազմութիւններ և զուգահեռ ձևեր են: Դրանք գրական լեզվի մեջ են ներթափանցում մեծ

²³ Դա՛րձէ՛ւֆ, իմացէ՛ւֆ ձևերը իրենց հետագա արմատավորումն են գտնում՝ դառնալով ժամանակակից հայերենի հոգնակի հրամայականի հիմնական ձևեր:

մասամբ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից: Այսպիսի ձևերի կիրառությունը նշանակալից չափով պայմանավորված է հեղինակի լեզվի առանձնահատկություններով: Հ. Մամիկոնյանը օգտագործելով լեզվի գրական և խոսակցական տարբերակների արտահայտչական հնարավորությունները՝ կարողանում է հասնել ոճական նշանակալից անհատականացման:

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» պարունակում է նաև շարահյուսական-շարադասական փոփոխություններ, նախասիրած բառակապակցությունների տարածուն կիրառության դեպքեր:

Հայոց լեզվի պատմությանը վերաբերող որոշ աշխատություններում իբրև այս դարին վերաբերող լեզվական՝ շարահյուսական առանձնահատկությունների ուսումնասիրության աղբյուր հաճախ ընտրվում է այս պատմությունը²⁴:

Հ. Մամիկոնյանի պատմության լեզվի շարահյուսական-շարադասական առանձնահատկությունները դրսևորվում են հիմնականում ենթակայի և ստորոգցալի ձևաբանական արտահայտության, ենթակայի լրացումների և նրանց շարադասական տիպական կիրառությունների, նախդիրների, նախադրությունների և որոշ շաղկապների կապակցման մեջ:

1) Այս պատմության լեզվի շարահյուսական կառուցվածքի մեջ ևս ենթական հանդես է գալիս ուղիղ և թեք հոլովաձևերով:

Թեք հոլովաձևերով ենթակայի կիրառությունը բնորոշ էր դասական գրաբարին՝ հատկապես հունաբան հայերենի փուլում, ուր նկատվում էր թարգմանական գրականության ազդեցությունը²⁵:

«Տարոնի պատմության» մեջ թեք հոլովաձևով առնված ենթակայի հոլովը գերազանցապես սեռականն է. տրական, հայցական հոլովներով ենթակայի կիրառություններ չեն հանդիպում: Շարահյուսական այս առանձնահատկությունից բխում է մյուսը, այն է՝ սեռական հոլովով դրված ենթական ընդհանուր առմամբ գործածվում է անցյալ դերբայով առնված ստորոգցալի հետ: Օրինակ՝ «Խսկ Վահագնայ ի մօրին

24 Հմմտ. Н. К. Кусикьян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959.

25 Դասական գրաբարի հոլովների իմաստային նշանակությունների և շարահյուսական կիրառությունների առանձնահատկություններին կարելի է ծանոթանալ Վ. Առաքելյանի «Գրաբարի հոլովների իմաստային նշանակությունները» աշխատությանը (Թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր), Երևան, 1944:

տուեալ զնոսա, ժմանք այլ ոչ կարացին ելանել...» (24): «Իսկ նորա տեսեալ զսուսերն մերկ ի ձեռին նորա, ոչ իշխեաց ումեք ձայն տալ...» (45): «Եւ հայեցեալ Վահանայ ի գունդն կրօնաւորացն, ետես յաջ թևս նոցա երիտասարդ մի...» (50—51):

Ինչպես նկատելի է, ընդգծված կապակցութիւնները, ըստ էութեան, դերբայական դարձվածներ են՝ արտահայտված սեռական հոլովով դրված ենթակայով և անցյալ դերբայով առնված ստորոգյալով: Հ. Մամիկոնյանի պատմութեան մեջ այսպիսի կապակցութիւնները ընդհանուր առմամբ դրվում են որպէս բարդ նախադասութեան բաղադրիչ պարզ նախադասութիւններ և համարյա միշտ հանդես են գալիս բարդ նախադասութեան սկզբում: Այսպիսի կառուցները գլխավոր նախադասութեան նկատմամբ լինում են կամ համադաս, կամ ստորադաս բաղադրութեան անդամներ: Այսպէս, բերված նախադասութիւններից մեկի՝ «Եւ հայեցեալ Վահանայ ի գունդն կրօնաւորացն» մասը համադր է մշուսին՝ «ետես յաջ թևն նոցա երիտասարդ մի» մասին: Սրանք կարելի է դիտել իբրև բաղմակի ստորոգյալներով պարզ համադասական նախադասութիւններ, որոնք իրենց հերթին ունեն լրացումներ: Իսկ բերված օրինակներից առաջինն ունի ստորադասական կապակցում. «Եւ Վահանայ ի մօրին տուեալ զնոսա» գլխավոր նախադասութիւնից բխում է մշուսի «ժմանք այլ ոչ կարացին ելանել» երկրորդական նախադասութիւնը:

Այսպիսի նախադասութիւնները աշխարհաբար թարգմանելիս կարելի է օգտագործել մերթ դերբայական դարձված-բառակապակցութիւն, ինչպէս՝ «Իսկ նա տեսնելով նրա ձեռքի մերկ սուրը՝ չհամարձակվեց որևէ մեկին ձայն տալ», և մերթ որպէս բաղմակի ստորոգյալներով նախադասութիւն, ինչպէս՝ «Եւ Վահանը նայեց կրօնավորների գնդին, տեսավ նրանց մեջ աչ կողմում մի երիտասարդի», և մերթ էլ որպէս ժամանակի պարագա երկրորդական նախադասութիւն, ինչպէս՝ «Երբ նա տեսավ նրա ձեռքի մերկ սուրը, չհամարձակվեց որևէ մեկին ձայն տալ» և «Երբ Վահանը նայեց կրօնավորների գնդին, տեսավ նրանց աչ կողմում մի երիտասարդի»:

2) Ինչպէս իր տեղում նշել ենք, այս պատմութեան մեջ կան —աժ, —ման մասնիկներով բայեր, որոնք ըստ էութեան ստորոգյալներ են՝ օժանդակ բայի հետ մտնելով որոշակի շարահյուսական փոխհարաբերութեան մեջ: Օրինակ՝ «Գնացի և տեսի առ նմա զգիրսն, որ ի նոյն իննակներն վանսն էր գրած, և նա ի զօրաց ուստէր ունէր...» (59): «... և նստաւ յաթոռ նորա մանկիկն Ստեփաննոս, որդի իշխանին

Արծրունեաց, որոյ մայրն հերձաւ, և կան ի քաղման ծնօղքն նորա ի նոյն վանսն» (29): «Ի սոյն ամի շինեաց Մուշեղ զսուրբ Կարապետն և ինքն վախճանեցաւ և կայ ի քաղման առ Արծրունեաց իշխանին...» (28)²⁶:

«Տարոնի պատմութեան» մեջ ստորոգյալը հանդես է գալիս նաև այնպիսի կազմութեամբ, որը բաղադրվում է անորոշ դերբայով, օժանդակ բայով և ընդմիջարկվում ի նախդրով: Ունենք այսպիսի կազմութեան ընդամենը երկու օրինակ, ինչպես՝ «Զի Յոյնք են ի գալ ի վերայ մեր, ասէ...» (27): «Դուք ինձ վնասակարք էք, որ զտաճարսն այլ յայրել էք ի տալ...» (26):

Այսպիսի ստորոգյալի կազմութեան ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները շին վրիպել լեզվաբանների հայացքից²⁷: Այսպիսի բաղադրություն ունեցող ստորոգյալի, ինչպես նաև —աժ մասնիկով և օժանդակ բայով կազմված ստորոգյալի մասին, նկատի ունենալով հատկապես Հ. Մամիկոնյանի պատմութեան տվյալները, Գ. Զահուկյանը գրում է. «Գրաբարի մեջ խոսակցական-բարբառային լեզվի օգտին կատարվող նախկին շեղումներն այս ենթաշրջանում (նկատի ունի VI—VII դարերը՝ Հ. Մամիկոնյանին ընդունելով իբրև VII դարի հեղինակ. —Վ. Հ.) բազմանում են, առաջանում են նոր շեղումներ, հաճախանում են հնչյունափոխական, քերականական, բառապաշարային-խմաստաբանական տարբերությունները, հանդիպում են —աժ-ով դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ կազմվող ձևեր, այլև «յոյնք են ի գալ» տիպի կազմություններ, որոնք հետագայում խիստ հաճախանում են և ակունք տալիս նոր ժխտականի կազմության համար և այլն»²⁸:

3) Ենթակայի լրացումներից որոշիչ-որոշյալի և բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունները (ենթակայի լրացումները իրենց լրացումներով), ի հակադրություն հատկացուցիչ-հատկացյալի կապակցության, շարահյուսական բաղադրության և շարահյուսական-խմաստային առումներով ավելի մերձավոր են միմյանց նկատմամբ: Վերջիններս իրենց հերթին ունեն որոշակի շարահյուսական տարբերա-

26 Այսպիսի կապակցությունների առկայությունը Հ. Մամիկոնյանի երկում կարևոր է հայոց լեզվի զարգացման պատմության համար՝ քերականական իրողությունների մասնակագրությունը որոշելու տեսակետից:

27 Հմմտ. Ա. Այալընյան, նշվ. աշխ., էջ 126—127: Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 219: Նույնի՝ Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 60:

28 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 41:

կիշ հատկանիշներ: Բացահայտիչ-բացահայտչալի կապակցությունը բնութագրվում է առանձնահատուկ արտասանական երանգավորումով, շարադասական կայուն ետևառաջությամբ (հմմտ. Վախտանգ՝ զնորին հօրեղբայրն և նորին հօրեղբայրն՝ զՎախտանգ):

Գրաբարի որոշիչ-որոշչալի և հատկացուցիչ-հատկացչալի կապակցություններին նվիրված առանձին աշխատություններին²⁹ տվյալները օգնում են Հ. Մամիկոնյանի պատմության լեզվի համապատասխան իրողությունների առանձնահատկությունների բացահայտմանը:

Հայտնի է, որ դասական գրաբարում (բացառությամբ «Աստվածաշնչի») նախադաս որոշիչները գերադասեցում են ետագաս որոշիչներին³⁰: Իսկ ինչպիսի՞ն է «Տարոնի պատմության» մեջ որոշիչ-որոշչալի կապակցության շարադասությունը սրանց համեմատությամբ:

Այս նպատակով «Տարոնի պատմության» որոշակի հատվածի³¹ մեջ կատարված վիճակագրությունից պարզվում է, որ այս հեղինակի լեզվի հիշյալ հատվածի մեջ գործածված 173 որոշիչներից 134-ը նախադաս են, իսկ 39-ը՝ ետագաս (մոտավորապես 3,5:1 հարաբերությամբ):

«Տարոնի պատմության» այս նույն հատվածում գրքեկրված հատկացուցիչ-հատկացչալի կապակցության տվյալները խոսում են այն մասին, որ հատկացուցիչը ճնշող մեծամասնությամբ ետադասվում, հաջորդում է իր հատկացչալին: Նույն հատվածում ունենք նախադաս-հատկացուցչի ընդամենը 44 կիրառություն, իսկ ետագասի՝ 146 կիրառություն (մոտավորապես 3,3:1 հարաբերությամբ):

Վերոհիշյալ վիճակագրական տվյալները բավական պերճախոս են և հստակ պատկերացում են տալիս «Տարոնի պատմության» մեջ տեղ գտած որոշիչ-որոշչալի և հատկացուցիչ-հատկացչալի շարադասական կիրառությունների մասին:

Հ. Մամիկոնյանի պատմության մեջ բացահայտիչ-բացահայտչալի

29 Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշչալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972, Մ. Միևսյան, Հատկացուցիչ-հատկացչալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1960 (թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր):

30 Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 10—11: Վ. Խալարյան, Գրաբարի մի բանի առանձնահատկություններ եղնիկի լեզվում, Երևան, 1944 (թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր):

31 «Տարոնի պատմության» հիշյալ հատվածը սկսվում է «Դարձեալ զօրամոզով եղև ետսրով արբայ...» նախադասությունից և վերջանում «... և եպիսկոպոսն հալածական լինէր երկիրն Յունաց» նախադասությամբ (տես էջ 30—43):

կապակցութիւնը նախորդ երկուսի համեմատութեամբ ունի պակաս զըր-
սեւորումներ: Այսպէս, օրինակ, նախորդ երկու և այս կապակցութեան
համար ընտրված վերոհիշյալ հատվածում ունենք բացահայտիչ-բաց-
ահայտյալի ընդամենը 19 կիրառութիւն: Իբրեւ բացահայտյալ հան-
դես են գալիս գոյականները, որոնք «իրար հետ այնպիսի հարաբերու-
թեան մեջ են մտնում, որտեղ ընդհանուրը բացահայտվում է մասնա-
վորով, կամ ընդհակառակը՝ մասնավորը բացահայտվում է ընդհանու-
րով, հասարակ անունը՝ հատուկ անունով, հատուկը՝ հասարակով,
առարկաների ու երեւոյթների անունները հատկանիշների անուններով
և ընդհակառակը»³²:

Ելնելով այս պատմութեան համապատասխան տվյալներից, կա-
րող ենք ասել, որ ստորոգյալի լրացումների մեջ ոչ մի ակնառու փոփո-
խութիւն չի նկատվում:

4) Հ. Մամիկոնյանի պատմութեան լեզվի շարահյուսական կա-
ռուցվածքի մեջ նկատվում են նաև նախդիրների, նախադրութիւնների,
որոշ շաղկապների՝ շարահյուսական նախկին համաձայնութեան խախտ-
ման հետ առնչվող փոփոխութիւններ:

Ա. Այտընյանը խոսելով նախդիրների շարահյուսական կիրառու-
թիւնների մասին, գրում է, որ դասական գրաբարում նախդիրները
խոսքի կառուցվածքի տեսակետից ունենալով իրենց որոշակի նշանա-
կութիւնը, հետագա դարերում իրենց տեղը մասամբ զիջում են նա-
խադրութիւններին. «Ե դարուն սկիզբէն՝ քիչ անգամ բարձրագոյն ոճով
գրողներուն քով, եւ պարզագոյն կամ ստորին ոճով գրողներուն քով
յաճախ կ'տեսնուի՝ նախադրութիւն փոխանակ նախդրի: Եւ այս կերպ
խօսուածքը բնականապէս պարզման սկզբանն արդիւնքն է...»³³:

Ա. Այտընյանը նշում է նաև այն, որ Հ. Մամիկոնյանի «Տարոնի
պատմութեան» մեջ գործածվում է հետ մակբայը, որի փոխարեն սպաս-
վում էր ընդ նախդրի կիրառութիւն: Օրինակ՝ «Այլ թէ սէր եկիր առնել,
զկինդ ի հետ ընդէր ածեր, մի թէ որդի՞ խնդրես յերանաց մերոց...»
(31): «Եւ առեալ զՍուրէն անցին գնացին յայնկոյս Արածառնոյ, և զկինն
և զորդին ի հետ տարան» (38):

Դասական գրաբարի որոշ նախդիրների շարահյուսական-գործա-
ռական փոփոխութիւնների մասին Ա. Այտընյանը գրում է. «Ի և զ նախ-
դիրներուն կամաց կամաց անհետանալուն սկիզբը տեսանք որ բավա-
կան հին է, բայց այս հեղինակի քով բացահայտ կը գտնենք նաեւ առ

32 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսութիւն, հ. 1, Երևան, 1958, էջ 269:

33 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 123:

և ընդ նախորաց վերանալուն սկիզբը, որ անցմամբ մը եղած կ'երևայ-
այսինքն՝ առ և ընդ ի սկզբան ի նախորի փոխված, որպեսզի ետքէն
բոլորովին զեղուին, կամ վերջահոլովի դառնան»³⁴:

Ելնելով Հ. Մամիկոնյանի պատմության տվյալներից, Ա. Այտըն-
յանը այս կապակցությամբ նշում է առ նախորի կիրառություն ի նախ-
որի փոխարեն: Օրինակ՝ «... և նշան տուեալ էր, թէ յորժամ զոք ի ձեղ
ուղարկեմ, ի Միհրան գնացէք, և այլ զօրս ածէք» (22): Նույն էջում
հանդիպում են նաև առ նախորի կանոնական, ճիշտ գործածություններ,
ինչպես, օրինակ՝ «Եւ նոքա դարձան առ Միհրան...» (22): «...և քսան
այր ի պարսիկ զօրացն աւետաւորս առաքեր առ Միհրան...» (22):

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» շարահյուսական կա-
ռուցվածքը աչքի է ընկնում նաև նախադասության անդամների անհա-
մաձայնության որոշ երևույթներով: Վերջիններս դասական գրաբարի
համապատասխան երևույթների դարերի ընթացքում կրած փոփոխու-
թյունների մասնակի արտացոլումներն են՝ տեղ գտած այս պատմու-
թյան շարադրանքի մեջ: Ա. Այտընյանը նկատի ունենալով հատկապես
այս պատմության ընձեռած տվյալները՝ գրում է. «Համաձայնութեան
նկատմամբ գրաբարէն խոտորմունքն առհասարակ նոյն են Ծ դարու
ընտանեկան ըստածներուն հետ, միայն աւելի յաճախ եւ աւելի բացա-
յայտ. մանաւանդ սեռականի եւ տրականի իրարմէ շղանաղանուիլը,
տրականին՝ ներգոյականի հետ շփոթիլը, եւ ուրիշ նմանները, որոնց-
մով շատ անգամ գրաբարի կանոնաց անտեղեկութիւն կը գիտուի՝ քան
ընտանեկան լեզուի յատկութիւն»³⁵: Օրինակ՝ «Յարեան դարանակալքն
աստի և անտի, և առեալ զնոսա ի մէջ՝ կոտորեցին, ոչ ողորմելով
ուրում» (փխ. ումեֆ, 28): «Իսկ Մուշեղ առեալ ընդ իւր բառասուն իշ-
խան, առանց այլ ուրում, կազմեցան զօրէն պատերազմի...» (փխ.
ումեֆ, 14): «... և նա ի զօրաց ուստէք ունէր ի Պարսից կամ յայլոց
ուրում, որ ապականեալ զերկիր...» (փխ. ումեֆ, 59): «Իսկ որ աւագն
էր ի ձիագողսն, որոյ Սրէմն կոչէին, դարձաւ ընդդէմ...» (փխ. ուրում,
39): «...սա եկն ի դաշտն Տարօնոյ առ այր մի՝ որոյ անուն էր Միծառ-
նիկ» (փխ. ուրում, 55):

Նկատվում են նաև շարահյուսական անհամաձայնության այլ դեպ-
քեր: Մի դեպքում այս դերանունը, մյուս դեպքում երկու թվականը
եղակի բացառականով վերցված գոյականի հետ կիրառվում են ուղղա-

34 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 126—127:

35 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 128:

կան հոլովով՝ տրական հոլովի փոխարեն, չնայած այն հանգամանքին, որ առնում են ի նախդիր: Մի այլ դեպքում երկու թվականը գործածվելով իշխան գոյականի հետ, թվով չի համաձայնեցվում վերջինիս հետ: Օրինակ՝ «... և անցույց ի տեղի թագստեան զպարսկէն շատուտ կողմանէ, և ի բլերն յայս կողմանէ...» (փխ. յայսմ կողմանէ, 34—35): «Եւ երկու կողմանէն ռազմ գաղտ կարգեաց...» (փխ. յերկուց կողմանց, 35): «Եւ զերկու իշխանսն Պարսից կախեալ ծառոյն խեղդեցին, և ինքեանք դարձան յերկարսն...» (փխ. զերկուս իշխանսն, 39):

Այսպիսով, Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմութիւնը» պարունակում է շարահյուսական կառուցվածքի այնպիսի առանձնահատկութիւններ, որոնք գրական լեզվի մեջ են ներթափանցում հիմնականում ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից, անկախ այն բանից, թե պատմութեան հեղինակը որքանով է հետամուտ եղել դասական գրաբարի համակարգային օրինաչափութիւններին և վերջիններս ինչպես են իրականացվել նյութի կոնկրետ շարադրանքի ընթացքում:

«ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՈՃՐ

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» աչքի է ընկնում ոճի բազմազանությամբ, որը բխում է պատմության բովանդակության բազմազանությունից: Ինչպես գիտենք, Հ. Մամիկոնյանի պատմությունը իր ամբողջության մեջ Տարոնի ժողովրդական գրույցների, վիպական կամ առասպելախառն պատմությունների այնպիսի ժողովածու է, ուր կան նաև տեղական եկեղեցական կյանքի, վանականների սովորությունի ու նիստուկացի մասին տեղեկություններ, Սուրբ Կարապետի վանքի, Ծիծառնա խաչի հետ առնչվող միջադեպեր: «Տարոնի պատմության» գլուխների վերջում մեկ-երկու նախադասությունների սահմաններում հանդիպում են կրոնական բովանդակության կտորներ:

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» ոճի ուսումնասիրության ժամանակ ուշադրությունը հատկացվում է հետևյալ հարցերին: Նախ, նյութի ուսումնասիրության հիման վրա բացահայտվում են հեղինակային ոճի ակունքները, այսինքն՝ ցույց է տրվում, թե հեղինակի ժողովրդախոսակցական լեզվի տարրերով հարուստ գրաբարախոս լեզուն ինչպիսի ոճական համադրության է հասել: Երկրորդ, հեղինակը ինչպիսի ոճական հնարաններով է շարադրում իր պատմությունը: Այս տեսակետից, հանդիպում են այնպիսի ոճական միջոցներ և եղանակներ, որոնք չնայած բխում են հայերենի ընդհանուր ոճերի օրինաչափություններից, բայց այս պատմության մեջ դրսևորվում են հեղինակի նախասիրությամբ, հիմք են դառնում հեղինակի անհատական ոճի ձևավորման համար: Երրորդ, հեղինակային ոճի առանձնահատկություններից են հոմանիշ, հականիշ բառերի առատ և բազմազան, յուրօրինակ կիրառությունները, որոնք պատմության շարադրանքի ոճին հաղորդում են պարզություն, հստակություն: Չորրորդ, «Տարոնի պատմության» շարադրանքի մեջ նկատվում են նախասիրած կազմություն տնեցող նախադասություններ, դրանց շարահյուսական-շարադասական

յուրահատուկ բաղադրություններ և յուրովի կիրառություններ: Հ. Մամիկոնյանը հակում ունի այնպիսի բարդ համադասական նախադասությունների նկատմամբ, որոնք իրականանում են զանազան շաղկապներով: Վերջիններիս ոճական փիրառությունները՝ բարդ նախադասությունները շաղկապներով կամ շաղկապի շարահյուսական պաշտոն կատարող բառերով սկսելը, համադասական նախադասությունների շաղկապներով կապակցելը, շաղկապների կրկնությունները, այս կամ այն շաղկապի գործածությունը որոշակի կառուցվածքի նախադասությունների կամ դերբայական դարձվածների հետ, — այս բոլորը պայմանավորվում են հեղինակային ոճի առանձնահատկություններով:

1. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՃԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ութերորդ դարի հայերենը դասական դրաբարի պատմական զարգացման հետագա դրսևորումներից է, ընդհանուր հայերենի կոնկրետ իրողություններից մեկը: Այս դարից ավանդված և մեզ հասած մատենագրական երկերը ունեն հարուստ լեզվանյութ, որն արտացոլում է ժամանակի գրական հայերենի օրինաչափությունները և առանձնահատկությունները, տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր հայերենի տարածքային և ֆունկցիոնալ-ոճական տարբերակները:

Ընդհանուր լեզվի ներսում գոյություն ունեցող ֆունկցիոնալ-ոճական տարբերակները ընդհանրապես բնորոշ են բոլոր լեզուներին՝ վերջիններիս զարգացման բոլոր փուլերում: Այս առումով է. Աղայանը գրում է. «...միևնույն ժամանակաշրջանի գրական-ընդհանուր լեզուն ստանում է իր տարբերակումները՝ ժանրային ոճ, թեմատիկ ոճ, հեղինակային ոճ, «գրասենյակային լեզու», մասնագիտական-զբաղմունքային «լեզուներ» («բժիշկների լեզու», «արտիստական լեզու» և այլն), որոնք ընդհանուր անունով կոչվում են ոճեր: Իբրև ընդհանուր նրևույթ, բոլոր ոճերը մնում են կանոնական համակարգի շրջանակներում և հանդիսանում են կանոնի տարբեր դրսևորումները»¹:

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» որպես պատմագրական գործառական ոճի երևույթ, աչքի է ընկնում ոչ միայն հայ պատմագրական նախորդ երկերի (հատկապես Փ. Բուզանդի «Հայոց պատմության») հետ ունեցած որոշ ոճական ընդհանուր կողմերով, այլև բաղմամբով և բազմազան յուրահատկություններով:

¹ Է. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 23:

2. Մամիկոնյանն իր պատմությունը շարադրում է որոշակի նպատակներով: Հեղինակի կարևոր նպատակներից մեկն այն է, որ հետագա սերունդներին ավանդի ժողովրդի շուրթերին հնչող (մասամբ գրի առնված) տեղական գրույցները, որոնք զուրկ չէին միասնության ու անկախության ձգտումներից: Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու այս պատմության շարադրանքի ոճը այդքան ժողովրդական է, կենդանի և անպաճուճ: Հեղինակը ձգտում է հաղորդակցվել ժողովրդի խոսակցական լեզվի ոճական հնարաններով, որին թերևս խանգարում է հեղինակի դասական գրաբարի իմացությունը, եկեղեցականի գրաբարախոս լինելը:

Ինչպես գիտենք, Փ. Բուզանդի «Հայոց պատմության» մի շարք հատվածների համար նույնպես աղբյուր են ծառայել մեր առաջին ժողովրդական հին վեպի՝ «Պարսից պատերազմի» գրույցները և վիպասացությունները: Փ. Բուզանդի «Հայոց պատմության» և Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» միջև որոշակիորեն ընդհանուր բան կա՝ ոչ միայն բովանդակության, այլև նյութի շարադրման, խոսքի ոճավորման տեսակետից: Այդ ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ հենվում են ժողովրդական բանավոր գրույցների խոսակցական-ոճական առանձնահատկությունների վրա:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորումները ակնառու են «Տարոնի պատմության» շարադրանքի այն հատվածներում, որտեղ խոսվում է վիպական հերոսների ռազմական քաջագործությունների մասին: Այստեղ նկատվում են վիպական հերոսների ակնհայտ չափազանցումներով փառաբանումներ, ժողովրդական մտածողության, հոգեբանության, սովորույթի հետ առնչվող բարոյախրատական խոսքեր, որոշ անեծքներ ու վատաբանություններ, ինչպես նաև հեգնանք, ծաղր ու ծանակ, քամահրանք պարունակող արտահայտություններ:

Ընդհանրապես «Տարոնի պատմության» այն հատվածներում, որտեղ խոսվում է աշխարհիկ կյանքի երևույթների մասին, շարադրանքը ներծծված է ժողովրդախոսակցական ոճերին բնորոշ միջոցներով և եղանակներով:

Հ. Մամիկոնյանի լեզվաոճի մեջ նկատվում է նաև գրաբարի՝ հատկապես եկեղեցական գրականության, ոճերի ազդեցությունը: Գրաբարյան ոճական երևույթները հանդիպում են համարյա ամեն մի դրվագում, բայց առավել ցայտուն՝ եկեղեցական կյանքի արարողությունների մասին շարադրվող հատվածներում: Այս կարգի երևույթները քիչ չեն նաև վիպական հերոսների խոսքի և բնորոշ արտահայտությունների մեջ:

Մյուս կողմից, հեղինակը հաճախ իր խոսքը կառուցում է դասական գրաբարի ոճերին յուրահատուկ միջոցներով և եղանակներով:

Օգտվելով վերոհիշյալ երկու կարգի ոճական աղբյուրներից, հեղինակը միաժամանակ ցուցաբերում է որոշակի ինքնուրույնություն, ոճական յուրահատկություն: Այս պարագայում նկատելի են հետևյալ համագամանքները:

Նախ, հեղինակային ոճական յուրահատկության արդյունք են բառապաշարի մեջ նկատված նոր բառերի կիրառությունները, նորակազմությունները, դասական գրաբարից եկող որոշ բառերի նոր իմաստային կիրառությունները, ինչպես նաև մի շարք քերականական առանձնահատկությունների դրսևորումները: Եվ երկրորդ, Հ. Մամիկոնյանի խոսքի յուրահատկությունները, ոճական ինքնուրույնությունը զգացվում է ոչ միայն հայտնի պատմագրական, ժողովրդախոսակցական ոճերի ինքնուրույն գործածությունների, այլև հեղինակի խոսքը բաղադրող նախադասությունների և նախադասության անդամների ազատ՝ անկայուն շարադասության, շաղկապների, նախդիրների և նախադրությունների բազմազան կիրառությունների, բարդ նախադասությունները համարյա միշտ նույն կառուցվածքը ունեցող դերբայական դարձվածքներով սկսելու մեջ:

Ըստ այսմ, «Տարոնի պատմության» ոճը հիմնականում գոյանում է դասական գրաբարյան և ժամանակի ժողովրդախոսակցական ոճերի աղուրներից, որոնք համադրվում են հեղինակի խոսքային անհատականության մեջ և կազմում են նրա ոճի հարստությունը:

Անդրադառնալով հեղինակի ոճի վերոհիշյալ երկու կարգի աղբյուրներին. նախ՝ գրաբարյան, այնուհետև՝ ժողովրդախոսակցական ոճական աղուրների մասին:

1) «Տարոնի պատմության» ոճի մեջ համեմատաբար պակաս են կիրառվում գրաբարյան ոճական երևույթները: Սրանք հիմնականում հետևյալներն են՝ բառային ավելադրություններ, պեսպիսություններ, գրաբարում արդեն հանդես եկած դարձվածային միավորների, ոճերի և արտահայտությունների կիրառություններ:

ա) Դասական մատենագիրների երկերում իբրև ոճական երևույթ բավական տարածված է բառային ավելադրությունը: «Գրվածքի ոճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ արտահայտելու համար հեղինակները, որպես ոճական միջոց, գործադրում են ավելադրությունները, որոնք տարբեր բնույթի են լինում: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նույնանիշ և

հոմանիշ բառերի ավելադրությունը: Սա բնորոշ է նրանով, որ մի բառի հետ ավելադրությամբ հադես են դալիս նաև նույնանիշ և հոմանիշ այլ բառեր, որոնք տվյալ դեպքում քերականական նոր ֆունկցիա չեն ընդունում²:

Այսպես, Ագաթանգեղոսի, Փ. Բուղանդի, Եղիշեի մոտ հանդիպում են բառային ավելադրությամբ խոսքի ոճավորման բաղմամբով դեպքեր: Օրինակ՝ «... ի սպանանել զնա Արտաշրի որդուց Սասանայ, որ էր նախարար ոմն Ստահր գաւառէն, որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից, որ լին խոտեցին անաբգեցին զտէրութիւն Պարթեւաց...» (Ագաթ., էջ 15): «Արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհի Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց... զի եկեսցեն բնեցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց» (Բուղ., էջ 144): «Մոռացան կանացի տկարութիւն, և եղեն արուբ առաքինիք ի հոգեւոր պատերազմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կարեւորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա» (Եղիշէ, էջ 202) և այլն:

«Տարոնի պատմության» մեջ նույնպես հանդիպում են բառային ավելադրությամբ խոսքի ոճավորման դեպքեր: Օրինակ՝ «Եւ այսպէս բազում ժամանակս կեցեալ ի սոյն խստակրօնութեան ամս քսան» (9): «Զայսոսիկ լուեալ Վախտանգայ՝ խրոխտացաւ, ըմբոստացաւ...» (30): «Դարձեալ զօրաժողով եղև խոսքով արքայ, երկուրդ անգամ ի մտի կալեալ զմահն Միհրանայ քեռորդուն իւրոյ...» (30): «... և տարան զզլուխն Միհրանայ առ արքայն խոսքով, և նա խոսկեցաւ, պղտորեցաւ, ամաշեաց զամօքն յաւիտենից...» (28): «Եւ իբրև ել անտի տիկինն, խստացին, ոխացան, տրտմեցան յոյժ ընդ իրսն տպասաւորքն եկեղեցւոյն, և ոչ պատրաստեցին կնոջն կերակուր» (10—11): «... և զփող պատերազմին հնչեցուցին, և առձեռն սկսան կոտորել, և կանչեալ զարհուրեցան, ժպրհեցան և աղմկեցան յոյժ» (46) և այլն:

Հ. Մամիկոնյանի «Պատմության» մեջ հանդիպում է նաև ոճական մի երևույթ, որը կոչվում է վերացականը թանձրացականի փոխարեն: Ոճական այս երևույթը տարածված էր դասական գրաբարում: Օրինակ՝ «Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտի, որ անուանեալ կոչի յանուն Արայի Այրաբատ...» (Նորենացի, 1913, էջ 51): «... վասն այնորիկ յանձն իւր տարութերէր, եթէ յո՞ թափեցից զդռնութիւն թունից, կամ ո՞ւր բացատրեցից զբազմութիւն նետիցն» (Եղիշէ, էջ 7)³:

2 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 403:

3 Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 406—407:

2. Մամիկոնյանի մոտ հանդիպում են այսպիսի օրինակներ. «Իսկ վախտանգայ ի ցասումն բարկութեան շարժեալ վասն Ռահանայ, առաքեաց դարձեալ զԱսուր ի վերայ ութ հազարաւ» (32): «Զոր և բազում քահանայիք և քսան եպիսկոպոսօք տօն ցնծութեան կատարեցին փերկական տեղեացն ուր զհաւատսն ունէին» (22):

բ) Բառային պեսպիսությունը նույնպես հայերենի ոճերին բնորոշ երևույթներից է: Այս դեպքում զուգադրվում են իմաստով մերձավոր՝ հոմանիշ, նույնանիշ բառեր, միևնույն յարմատից գոյացած տարբեր բառաձևեր, բառակապակցություններ, որոնք խոսքը ամբողջացնում են իմաստային զանազան նրբերանգներով:

Ա. Ա. Աբրահամյանը նկատի ունենալով դասական մատենագիրների երկերում հանդիպող բառային պեսպիսության տվյալները, գրում է (մեջբերում ենք անում ամբողջությամբ՝ նշնիկից բերված օրինակի հետ միասին). «Հեղինակները հաճախ միևնույն միաբեր կրկնում են տարբեր բառերով՝ նույնանիշ կամ հոմանիշ: Այս երևույթը ընդունված է կոչել պեսպիսություն: Օրինակ՝ «... եւ այս կառք զարմանալիք ի հակառակ և յանճման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ միմիայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ արշավին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան...» (Նշնիկ, I, Գ, էջ 14): Այս հատվածում միմիայն իմաստը արտահայտված է միմիայն, եւթ հոմանիշներով, կոլմ իմաստը (դեպի երեսի կողմը, դեպի առաջ)՝ կոլմն, հանդէպ բառերով, ընթանալու գաղափարը՝ արշաւել, վարգել, սլանալ բառերով, դեպի ամեն կողմ գաղափարը՝ «յամենայն կողմանս», «ընդ հանուր», «ընդ բնաւս» արտահայտություններով»⁴:

2. Մամիկոնյանի լեզվաոճի մեջ նույնպես գործածվում են պեսպիսություններ: Օրինակ՝ «... իսկ եթէ վասն թշնամութեան (է) Կարապետն ընդ մեզ, և ո՞չ ինքն ի կնոջէ ծնաւ, և զտէրն ինքն ի կնոջէ է ծնեալ, և ո՞չ առաքեալքն մայր ունէին» (10): «... և զօրացեալ զօրացն առաջի եղեալ զնոսա ի փախուստ, և կալան ի նոցանէ քառասուն և ութ իշխան կենդանւոյն» (13): «... և հայի ի փոքր ամրոցն Մեծամօր ներքոյ Նարդակայ՝ զոր Անդառն կոչեն, ետես կիսն ի հիւսիսական կողմանէն տեսութիւն զարմանալի...» (11): «Իբրև ետես վահան եթէ գնան ամբողջ, զնախանձն ատուծոյ նախանձեալ՝ յարձակեցաւ ի վերայ նոցա, և սկսաւ կոտորել զնոսա» (32):

⁴ Ա. Աբրահամյան, *Նշվ. աշխ.*, էջ 406:

Հ. Մամիկոնյանը բառային պեսսիստություն է ստեղծում գրական և ժողովրդախոսակցական շերտերին պատկանող բառային միավորներով: Օրինակ՝ «... և դարձեալ զսապոնի գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն գիշահոտ հալան և զարինաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ազաք» (36—37):

զ) Դարձվածային միավորները նույնպես հեղինակային ոճի գրսեւորման լավագույն միջոցներից են: Հ. Մամիկոնյանը պատմության շարադրանքի մեջ ոճական նպատակներով գործածում է խոսքին պատկերավորություն, սեղմություն և արտահայտչականություն հաղորդող աշխարհի դարձվածային միավորներ, որոնք նախապես կիրառվել էին հայ մատենագրության մեջ: Օրինակ՝ «Եւ եղ քան ի բերան Հայոց զօրացն Մուշեղ իշխան Մամիկոնենից և Հայոց մարդպան...» (13): «Եւ վարդուհրի ոչ եմուտ ի պատերազմ» (50): «Եւ յետ վախճանելոյն Մուշեղայ նստաւ յարոռ իշխանութեան նորա վահան, իշխան մամիկոնէից տան» (28—29): «Եւ խիստ վաստակեցաւ Սմբատ յաւուրն յայնմիկ, բայց ի քիկունս եհաւ նմա վարազ իշխան Պալունեաց, և առաջի եղեալ զզօրսն գետալէժ առնէին» (48): «... և սուր ի վերայ եղեալ փախստական արարին մինչև ի դարանն» (47): «Իսկ նոցա ժողովեալ ի տաճար, ընդ գինի մտին...» (24) և այլն:

Ընդհանուր առմամբ, ինչպես բերված օրինակների, այնպես էլ իրենց սեղմ ուսումնասիրված դարձվածային միավորների կիրառումները «Տարոնի պատմության» ոճի բնութագիրը ներկայացնող տվյալներ են, որոնք թե ընդհանուր հայերենի և թե հեղինակային ոճերի անբաժանելի մասն են կազմում:

դ) «Տարոնի պատմության» որոշ հատվածներում կան աշխարհի ոճեր և արտահայտություններ, որոնք սովորաբար հանդիպում են եկեղեցական աղոթքներում՝ մտնելով նաև եկեղեցական գրականության համապատասխան նմուշների մեջ: Օրինակ՝ «Իսկ գնացեալ ի Մանեայ ալրան, և կացեալ անդ ամս եւթն, վախճանի ի կենացս ի փառս աստուծոյ» (7): «... որ ստեղծեւ զմարդն ի պատկեր և բարեբարութեանդ, և կացուցեւ զնա իշխան ի վերայ երկրի...» (16): «Եւ յասել զամէնն, եկն ձայն յերկնից՝ որ ասէր. «Եղիցի ձեզ որպէս և կամիք...» (19): «... և տեսին զկրօնաւորսն յարտասուս և յաղօթս պարապեալ և յարձակեալ ի վերայ եւթանքեան կոտորեցին...» (19): «Սա խնդրեաց ի սուրբ Կարապետէն, կապել զբերանս գազանացն՝ որք բեկանէին զլուսաբերսն եկեղեցւոյն» (29): «... Սուրբ Կարապետ, յայտնեա և այսօր զեզ ծա-

ռայից քոգ. զի վասն քո մեռանիմք ի վերայ հաւատացելոց Քրիստոսի» (35):

2) Սովորաբար ժողովրդական զրուցները, վիպերգերը և այլ կարգի ժողովրդական ստեղծագործությունները արտացոլում են տվյալ ժողովրդի աշխարհիկ մտածողությունը, հոգեբանությունը, սովորությունները, նիստուկացը և սրանց հետ առնչվող բազմաթիվ ու բազմազան հարաբերությունները: Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ ևս առկա են այս կարգի իրողություններ: Ինչպես միշտ, այս դեպքում էլ նույնպես հիշյալ կարգի իրողությունները գրի առնվելիս կամ թեկուզ բանավոր պատմվելիս ներկայանում են ժողովրդախոսակցական լեզվի և ոճի յուրօրինակ տարրերով՝ լեզվամիավորներով, ոճական զանազան կարգի երևույթներով: Այս պատմության ոճական բնութագիրը ամբողջանում է նաև այսպիսի լեզվաոճական տարրերի հաշվին:

ա) «Տարոնի պատմության» մեջ գործածվում են ժողովրդական զրուցներին ընդհանրապես բնորոշ հետևյալ բառերն ու ոճական արտահայտությունները՝ բեկեալ սիրտ, եհան զոգին, կտրեաց զգլուխ և ձգեաց ի մախաղն, կտրեաց զբլիատն, համար կոտորածոյն, հատին զպարանոց նորա, մօրաքարախ արար, մօրահեղձ արար, մօրին ընկեց, շուն արածել տալ, ջաղխել զգլուխ, ուղեղն ընդ քիթն իջանէր, առսեր պատերազմի ընդ մէջ ածել, փհանալ ալեօք և այլն: Օրինակ՝ «Իսկ յետ ամսոյ միոյ ի յորս ելեալ, ընկէց զնա երիվարն, և եհան զոգին» (12): «Եւ կտրեաց զգլուխ, և ձգեաց ի մախաղն իւր...» (13): «Զոր զհետ մտեալ երկուց ոմանց, և յայնկոյս գետոյն ջաղխեցին զգլուխ նորա, ուղեղն ընդ քիթն իջանէր» (24): «... և իբրեւ տեսին զՊօղիկարպոս, վաղժաղակի հատին զպարանոց նորա և ընկեցին առաջի խաչին» (19): «... և առսեր պատերազմի ընդ մէջ ածեալ, այնպէս եկին առ թագաւորն» (14): «... և թողեալ կողմնապետն յԱպահունիս, և փհացեալ ալեօք եկն ի գլուխ Տարօնոյ (30) և այլն: Բերված օրինակներում նկատվող ժողովրդի սովորութիւնների, հոգեբանության, մտածողության արտահայտությունները միաժամանակ ուղեկցվում են որոշակի չափազանցումներով, գունավորմամբ: Այսպես, օրինակ, հերոսներից ոմանք կռվի թեժ պահերին, չնայած որ շտապում են, պարանոց են կտրում, սրախողխող անում, գլուխները, թլփատները առանձնացնում են, պահում՝ մարտի վերջում զոհերի քանակն իմանալու համար:

բ) Պատմության հերոսներից ոմանք կռիվների ժամանակ մուրն են գործածում, մի բան, որն առավել բնորոշ է ժողովրդական վիպերգերին և հեքիաթներին (հմմտ. գուրգ, վաղր և այլ կռիվ միջոցների օգ-

տագործումը տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործություններում): Օրինակ՝ «... և հասկալ Սմբատայ՝ եհար մրճովն ի վերայ գաթանն և գոգեաց զսաղաւարտն, և զխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարտն մրճին Սմբատայ, և հաղիւ կարաց հանել» (35):

Ինչպես գիտենք, «Սասունցի Դավիթ» էպոսում տարածված է գուրգերով կոխվը, որը նույնպես ժողովրդական բանավոր ստեղծագործությունը յուրահատուկ երևույթ է՝ կապված ժողովրդի մտածողության հետ: Ահա այսպիսի օրինակ՝

Մըսրա Մելիք շատ բարկացավ, ասաց.

— Դուրզ զարկեցեք, թող դա, սպանի:

Փահլեաններ գուրզ զարկեցին:

Դավիթ գուրզ աջ ձեռով բռնեց, թալեց երկինք,

Ձախով գուրզ մ'էլ բռնեց թալեց երկինք:

Մըսրա Մելիք է, որ տեսավ, շատ զարմացավ...⁵:

գ) «Տարունի պատմություն» մեջ գործածվում են ժողովրդախոսակցական ոճերից բխող թեմավոր, խոսքեր, պատրաստի նախադասությունն արժեք ունեցող արտահայտություններ, որոնք նույնպես հետապնդում են ոճական նպատակներ: Օրինակ՝ «Պարսից արքային և մեռեալ շուն մի ոչ տամ, որ նաշ ուտէ՝ առանց գնոյ, թող թէ զգոսա» (37): «...չորեքհարեւ հազար դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղջերուն և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ, զջրոյ և զհացի զինն քողում...» (38):

Սրանցից բացի, վիպական զրույցների և «պատմությունների» կողքին տեղ է գտել մի հիասքանչ պատառիկ, ուր նկատվում են մի կողմից խոսակցական ոճի տարրերի պահպանում, միակերպ նախադասություններ, թվարկման պարզություն, և մյուս կողմից, ոճական միջոցների բազմազան դրսևորումներ՝ պատկերավոր համեմատություն, այլաբանություն, չափազանցություն, կրկնություն, երևույթների էական հատկանիշների ընդգծումով պատկերների ստեղծում և այլն: Խոսքը հետևյալ հատվածի մասին է. «Կերան գազանք զմարմինս դիականցն վարադայ և գիրացան: Կուզ կերեալ՝ ուռաւ որպէս դարչ, և աղուէս հպարտ եղև քան դառեծ, գայլ, քանզի շատակեր էր, պաթեաց, և արջ, քանզի զոր ուտեն՝ չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ. անգեղք,

⁵ Տես, Սասունցի Դավիթ, հայկական ժողովրդական էպոս, 2-րդ հրատարակություն, Երևան, 1961, էջ 144:

քանզի ազահք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ, մկունք, քանզի շատ կրեցին ի ծական, ոտքն մաշեցան» (42): Այս հատվածը ժողովրդական բանավոր ստեղծագործության առանձին նմուշ է, որի մեջ պատկերավոր ձևով արտահայտվում է հերոսների քաջագործությունների գաղափարը:

դ) «Տարոնի պատմության» մեջ կան բարոյախրատական խոսքեր, անեծքներ, հերոսներին ուղղված դավաճաններ, որոնք արտահայտում են հեղինակի վերաբերմունքը այս կամ այն իրադարձության նկատմամբ՝ օգտագործելով խոսակցական ոճերին առանձնահատուկ արտահայտչամիջոցներ: Օրինակ՝ «Իսկ եպիսկոպոսն աղօթեալ առ աստուած լուսեամբ, միայն զայս հանեալ ի լոյս՝ թէ եղիցի քաղաքս խաւան և անբաւ, և ոչ ոք իցէ որ բնակիցի ի սա յաւիտեանս յաւիտենից» (57): «... իսկ Վահանայ կոչեաց զորդին իւր զՏիրան քաջ, և ասէ. «Որդեակ, մի վասն զի ի մեծութեան ես՝ պատրիք ի մեղաց, և մի վասն զի մանկիկ ես՝ խաբիր ի գեղ կանանց. այլ չիշեա զքո հարցն, որքան սրբութեամբ և ամբծութեամբ ծառայեցին աստուծոյ: Մի մոռանար զծառայութիւն սրբոյ Կարապետին. զի ի պատերազմունս նա էր՝ որ օգնէր մեզ. այլ եթէ շատակեաց վամիս լինել, ի պղծութենէ մի պատրիք, որպէս և չես իսկ: Եւ դու ծառայեա աստուծոյ և կրօնաւորաց նորա սրբութեամբ, որպէս ես ծառայեցի, զի ոչ պատրեցայ ի գեղոյ, և ոչ զրկեցի, և ոչ նեղեցի զտառապեալս. քանզի ամենեւան՝ որք ընդ իմով իշխանութեամբ էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս ի Քրիստոս, իբրև զեղբայրս և զընտանիս տան իմոյ հոգայի խնամով որպէս հարբն իմ: Որդեակ, զնոյն և դու արասցես, տէր զօրաց ուսցէ զքեզ» (49—50):

Առաջին օրինակում նկատվում են ժողովրդական անեծքներ հիշեցնող խոսքեր, իսկ երկրորդում՝ ժողովրդի խոսք ու զրույցին բնորոշ ձևեր ու եղանակներ. խրատներ, միևնույն խոսքի զանազան, բազմիցս կրկնություն, զուգահեռների անցկացում, պատկերավոր համեմատություններ, համոզչական նպատակով համապատասխան փաստերի մեջբերումներ և այլն:

ե) Վիպական որոշ հերոսներ օժտված են ռազմական խորամանկությամբ, Հ. Մամիկոնյանի բառով ասած՝ իմաստությամբ: Ըստ այսմ, «Տարոնի պատմության» տրոշ հերոսներ տարբերվում են «Պարսից պատերազմի» վիպասանության հերոսներից⁶: Այսպես, օրինակ, Գայլ Վա-

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 308:

հանը, որը Հ. Մամիկոնյանի երկի առանցքային վիպական հերոսներից է, օժտված է խորամանկության ու հնարամիտ ռազմական «քաղաքականություն» վարելու գծերով: Զանազան որոգայթներով ու հնարանքներով է նա կոտորում հակառակորդ ուժերին: «Պատմության» մեջ ժողովրդական զրույցներին բնորոշ դույններով ու երանգներով ներկայացվում են համապատասխան հատվածներ: Վերջիններս պարունակում են ժողովրդախոսակցական լեզվին առանձնահատուկ լեզվական մտածողության տարրերով պայմանավորված ոճական արտահայտություններ: Բերենք այս վարդի երեք հատված-օրինակ՝ «Իսկ Վահանայ լցեալ խմաստութեամբ առեալ երկերիւր կաշեայ ասպար, և արկ զհարներ զօրօք ամեհեօք, երկաթ մի յայս կոյս ասպարին, երկաթ մի այն... քանզի և զօրքն ընդ ձայն ասպարացն, և ընդ զօրացն աղմկել, և ընդ փողոց բախեալ խրտուցեալ, յամենայն կողմանս լոկ արշաւէին ի բանակսն. և զօրքն կարծէին եթէ հեծեալ է, և ձայնս ի սուսերաց ի կոտորելոյ է, իւրաքանչիւր ոք լոկ վայ. ճշէին, ոչ գիտելով զհետս անձանց...» (45—46): «...և ետ խրատ՝ թէ յորժամ նոքա ի ձեզ հային, դուք միաբան ի քաղաքն դարձէք, և ի ներս մտեալ՝ զյաղթութեան փողն հնչեցուցէք և զդուռն քաղաքին ի բաց թողէք, զի նոքա կարծիցեն թէ առին զքաղաքն» (22): «...և գնացեալ գաղտութեամբ եմուտ ընդ ստորոտ խորանին առ Տիգրան: Իսկ նորա տեսեալ սուսերն մերկ ի ձեռին նորա, ոչ իշխեաց ումեք ձայն տալ, կարծեաց թէ կարասին կամի զողանալ... և մտեալ մեռ այլ ծառային Վահանայ կտրեաց զգլուխ նորա, և ժողովեալ զկարասին և զպատուական ակունսն և զընտիր սուսերսն, ել գնաց» (45):

Դայլ Վահանը այս և նման միջոցներով է խուճապահար անում թշնամուն, հեշտացնում կոտորածն ու հաղթանակը: Վիպական այս հերոսի ռազմական գործունեության մեջ հանդես եկող խորամանկության գծերը հասնում են տիպականացման աստիճանի, ուր անուրանալի է դառնում լեզվական-ոճական խտացումների դերը:

Այսպիսով, Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» ոճը գույանում է պատմագիտական ֆունկցիոնալ ոճերի շրջանակներում, ըստ որում հիմնականում երկու՝ դասական և մասամբ ետդասական գրաբարյան և ժամանակի ժողովրդախոսակցական (ժողովրդական բանավոր զրույցներին առանձնահատուկ) լեզվական միավորների ոճավորումներով՝ հիմնված հեղինակային-ոճական ակնհայտ նախասիրությունների վրա:

Լեզվի նյութական տարրերից բառերը և բառակապակցությունները առարկայական աշխարհի մասին եղած հասկացությունների կրողներն են: Բառը հեղինակային խոսքի մեջ ստանում է կոնկրետություն և հասկացության արտահայտումը կապում է կոնկրետ նշանակության հետ: Հաճախ այս կոնկրետ կիրառությունը ոչ ամբողջովին ու հիմնովին է զրոսերում հիմքում ընկած հասկացությունը՝ վաստակած առարկայական աշխարհի ճանաչողության և վերարտադրման յուրօրինակ բաղմադանության հետ: Սրա հետևանքով գոյանում են միևնույն հասկացության լեզվական արտահայտությունը ծառայող բառային խմբեր, որոնց մեջ ներառվող բառերը միմյանց նկատմամբ զտնվում են իմաստային մերձավոր, նույնական, ինչպես նաև հակադիր հարաբերությունների մեջ: «...բառը ղգայություններ առաջացնող առարկայի ներկայացուցիչը չէ, այլ տվյալ պահին առարկայի մասին մեր ունեցած հայացքի արտահայտությունը այնքանով, որքանով որ ձեռք է բերվում բառը: Այստեղ է միևնույն առարկայի արտահայտման զանազանության գլխավոր աղբյուրը... Լեզուն ներկայացնում է ոչ թե առարկաները, այլ միշտ հասկացությունները նրանց մասին՝ բառի ծնունդի ժամանակ ինքնուրույն առաջացած մտքով»⁷:

Լեզվի մեջ գոյություն ունեցող և խոսքի տվյալ պահին կիրառվող բառային (և ոչ միայն բառային) հոմանշությունը և հակառակությունը դառնում են հեղինակային ոճի, խոսքի անհատականության ստեղծման լավագույն միջոցներից:

Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ հոմանիշ բառերի գործածությունները մեծ թիվ են կազմում, որոնք նյութի շարադրանքը իմաստային առումով դարձնում են ինքնին ճոխ ու հարուստ, յուրովի օժտում են ոճական գծեր ու առանձնահատկություններ:

Հոմանիշ բառերը այստեղ կիրառվում են միասնաբար, չնայած որ բխում են հայերենի մերթ նախորդ փուլերից, մերթ ժողովրդախոսակցական լեզվի շերտերից: Այսպես, օրինակ, հալա և հանդերձ հոմանիշ բառերը հայերենի տարբեր շերտերի պատկանող միավորներ են և կողք կողքի գործածվելով ստեղծում են պատումի ոճական բաղմադա-

7 В. Гумбольдт, О различии организмов человеческого языка и о влиянии этого различия на умственное развитие человеческого рода, СПб., 1859, էջ 91—92.

նություն: Օրինակ՝ «...դարձեալ զսապոնի դինսն... որ զքո զօրացն գիշահոտ հալաւն և զարինաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ազաք» (37): Նույնը կարելի է ասել նաև փանդանել և փախուցանել բայական միավորների հոմանշային կիրառությունների մասին: Օրինակ՝ «Եւ ի մէջ առեալ զզօրսն Պարսից, և սկսան փանդանել, զի իշխան Պալունհաց կտրեաց երկու իշխանս...» (52): «Իբրև գիտացին արքն եւթն, որք խոտաճարակք էին, երկին ի վանսն և զամենեսեան փախուցին զկրօնաւորսն» (15—16):

Կան այնպիսի միավորների հոմանշային կիրառություններ, որոնք գոյանում են հայերենի բառապաշարի առկա հնարավորությունների և բառակազմական ճանապարհով նորակազմ ձևերի յուրօրինակ օգտագործմամբ և տեքստային համատեղմամբ: Այսպես, ունենք դեսպան, զրուցատար լինել և զրուցարար հոմանիշների կիրառություններ, որտեղ վերջին երկուսը հեղինակի լեզվի նորակազմություններից են, իսկ առաջինը՝ գրական լեզվի միավորներից: Դեսպան բառը հոմանիշ է մյուս երկուսին, որոնք միմյանց համեմատությամբ գտնվում են նույնանիշ իմաստային հարաբերության մեջ: Օրինակ՝ «Իսկ Վահան յանձին կալեալ զիրսն, սկսաւ դեսպանս կազմել և առ նա յուղարկել...» (21): «Եւ հրամայեաց արս քառասուն թողուլ զաւցատարս Պարսից արքային» (28): «Եւ իբրև վճարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւն, երկերիւր այր համարով թողեալ զրուցարարս այլոցն վասն առն՝ զոր տեսին ի գիշերին...» (34):

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն, որ կան այնպիսի հոմանիշներ, որոնք բխում են հայերենի նախորդ փուլերից և նույնպիսի հոմանշային իմաստային դրսևորումներով էլ հանդես են գալիս այս պատմության մեջ: Հոմանիշ միավորները տեքստային կիրառությունների մեջ ընդհանրապես և այս պատմության մեջ մասնավորապես գործածվում են կամ միեւնույն նախադասության մեջ, կամ շարադրանքի միեւնույն մասում, կամ էլ շարադրանքի տարբեր հատվածներում: Օրինակ՝ «Տեսանեմ այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ... տեսանեմ առ նա սուր սրեալ և քացուցեալ և յաբեան ներկեալ...» 11): «Եւ ինքեանք եկեալ իջաւանեցան ի վանացն գեւղն, զոր կոչեն Կենաց վայրք. և իբրև մտին ի գեւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն, և երգս առեալ բազում իրաց՝ գովէին: Որ և յետոյ ի հոտել դիականցն և յորդնել, շէր հանեալ՝ ասէին...» (41): Բերված օրինակներում քացուցեալ և յաբեան ներկեալ միավորները միեւնույն նախադասության մեջ դրսևորված հոմանիշ զույգեր են,

իսկ երգս առեալ և շէր հանեալ արտահայտութիւնները՝ շարադրանքի միենույն հատվածում կիրառվող հոմանիշ զույգեր:

«Տարոնի պատմութեան» մեջ հանդես եկած հոմանիշ բառերը ըստ իմաստային փոխհարաբերութեան հատկանիշի կազմում են երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ հոմանշային շարքեր, և ըստ այսմ էլ, բաժանվում են հետևյալ խմբերի:

1) Երկանդամ հոմանշային զույգեր են կազմում հետևյալ հոմանիշ միավորները՝ աթոռ-թագաւորութիւն, ածել-բերել, ահեակ-ձախ, աղաղակել-աղմկել, աղաչել-խնդրել, աճապարել-փութալ, ամօթ-նշաւակ, անդրանիկ-առաջին, անցք-դէպք, աշխարհ-երկիր, արարեալ-ըստեղծութեամբ, արտաքս-ղուրս, արքա-թագաւոր, բաժանել-զերծանել, բազում-շատ, գազաթն-գլուխ, երթալ-գնալ, երդնուլ-խոստանալ, երջանիկ-ուրախ, ընծայ-պարգև, թիկնապահ-դեմէսլեկոս, թողուլ-լքանել, թուել-համարել, ժողովել-հաւաքել, ծածկել-կաշնուլ, խորհել-զմտաւածել, կոտորել-բեկանել, կուտել-հաւաքել, ձեռն-աջն («սուրբ ձեռք»), մարտնչել-պատերազմել, մերձ-մօտ, նեղանալ/նեղենալ-խռովել, սատարել-օգնել, վերստին-կրկին, տուրք-հարկ և այլն:

2) Եռանդամ հոմանշային շարքեր են կազմում հետևյալ հոմանիշ միավորները՝ այգի-բուրաստան-անդաստան, ասպտամբել-ըմբոստանալ-եկանել ի թագաւորութենէն, աւերել-բրել-քանդել, գէշ-ղի-ղիալ, երդումն-խոստումն-ուխտ, երիվար-ծի-նծույզ, զօրաւոր-զօրապետ-պատերազմագլուխ, ընկալնուլ-ըմբռնել-իմանալ, թուանալ-պակասել-վաստակել, թուր-սուր-սուսեր, ազդ-աւետիս-լուր, խառանել-խեղդել-հեղծուլ, եկեղեցի-խորան-տաճար, խրոխտանալ-փքանալ ալեօք-որոտանալ, անուանել-կանչել-կոչել, դեհ-կոյս-կողմն, վախճանիլ-մեռանիլ-սատակել, տեղեկանալ-լսել-իմանալ և այլն:

3) Քառանդամ հոմանշային շարքեր են կազմում հետևյալ հոմանիշ միավորները՝ արձակել-յուզարկել-առաքել-յղել, եզր-վճար-վախճան-վերջ, կտրել-չատանել-բաժանել-ջաղխել և այլն:

4) Բազմանդամ հոմանշային շարքեր են կազմում հետևյալ հոմանիշ միավորները՝ զլխատել-սպանանել-զկատարած կենաց հասուցանել-պատժապարտել-զենուլ, ընկղմել-թաթաւել-ընկենուլ-մօրահեղձ առնել, յոյժ-խիստ-շատ-կարեւիշ-սաստիկ-կարի, կրօնաւոր-կնկղաւոր-վանական-սեւազգեստ և այլն:

Վերոթիւարկյալ հոմանշային շարքերը ձևակազմական տեսակետից աչքի են ընկնում հետևյալ առանձնահատկութիւններով: Հոմանիշ միավորների մի մասը հարաբերակցութեան մեջ է մտնում իբրև տարբեր

բառային միավորները (հմմտ. ածել-բերել, ընկալնուլ-ըմբռնել-իմանալ): Մյուս մասը կազմվում է մասամբ որպես տարբեր բառային միավորներ. մասամբ իբրև միևնույն բառարմատից գոյացած առանձին բառաձևեր (հմմտ. զօրաւոր-զօրապետ-պատերազմագլուխ, սուր-սուսեր-թուր, գէշ-դի-դիակ): Մի այլ մասը գոյանում է որևէ բառակապակցությամբ կամ բայական հարադրությամբ (հմմտ. խորհել-զմտաւ ածել, ընկղմել-թաթաւել-ընկենուլ-մօրահեղձ առնել):

Իմաստային տեսակետից վերոհիշյալ միավորների մեջ առավել ճոխ և ոճական նրբերանգային գույներով հարուստ են բաղմանդամ հոմանշային հարաբերակցության մեջ գտնվող շարքերը, հետադարձ համեմատականությամբ պակաս՝ քառանդամ, և այսպես մինչև երկանդամ հոմանշային գույգերը:

Հոմանիշ բառերի առատ և բաղմազան գործածությունները բխում են հեղինակի ոճական անհատականությունից և կապվում են նրա լեզվական նախասիրությունների հետ:

«Տարոնի պատմության» մեջ հանդիպում են ոչ միայն հոմանիշ բառերի, այլ հոմանիշ արտահայտությունների բաղմազան կիրառություններ: Օրինակ՝ «Բայց զանոյշ գինին Ասորոց և Սալնայ և զՄոխրայ այս երկու տարի է՝ ուր յինէն կտրեալ էին, և ինքեանք արբին, զայն թող տան. և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուսան՝ զոր կերեալ են շորեքհարեւր դահեկան, զայդ ամենայն թող բերեն» (38): Այստեղ, մի կողմից, հոմանշային ոճական հարաբերության մեջ են ուր յինէն կտրեալ էին, զոր առեալ են շարահյուսական միավորները, մյուս կողմից, զայն թող տան, զայդ ամենայն թող բերեն արտահայտություններ:

«Տարոնի պատմության» ոճի մեջ հականշության երևույթը, ի հակադրություն հոմանշության, բավական պակաս դրսևորվածություն ունի: Այսուհանդերձ, հեղինակային խոսքի մեջ իմաստային հակադրության ստեղծման նպատակով օգտագործվում են հականիշ բառեր և արտահայտություններ, որոնք ոճական արժեք են ստանում:

Հականիշ բառերը գործածվում են կամ միևնույն նախադասության, կամ տարբեր նախադասությունների մեջ: Օրինակ՝ «Եւ իբրև աղդ եղև առ թագաւորն խոսրով, և խնդաց յոյժ, իսկ զօրքն Յունաց արամեցան սաստիկ» (14): Այս օրինակի մեջ խնդաց և արամեցան միավորները հականիշներ են՝ կիրառված միևնույն նախադասության մեջ:

Հականիշ բառեր են գործածվում հետևյալ պարբերության մեջ՝ «Քաջ և հօգօր բազկիդ վահանայ սկայի, դիցն օգնականութեամբ ողջոյն...

վատ և թոյլ անձինք վախտանգայ, և խող քոյոց դասուց՝ որք զաղբս ճաշակեն, ողջոյն: Այլ թեպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց ընդ անմտութիւնդ քո լացի...» (31): Բերված օրինակում քաջ և վատ, հօգօր և թոյլ, խնդացի և լացի բառային միավորները միմյանց նկատմամբ հականշային հարաբերության մեջ են:

Այստեղ չենք խոսում այնպիսի հականիշ բառերի մասին, որոնք հանդիպում են պատմության շարադրանքի տարբեր հատվածներում և, ըստ այդմ էլ, խոսքի ոճավորման արժեք են ստանում միմիայն պատմության լեզվանյութի ամբողջության մեջ առնված:

3. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ-ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվի շարահյուսական միավորները տարբեր հեղինակների խոսքի մեջ տարբեր եղանակներով և զանազան հաճախականությամբ են կիրառվում: Շարահյուսական միավորների ոճական կիրառությունները հեղինակային խոսքի յուրահատկություններից են: Միշտ չէ, որ հեղինակի խոսքի ոճական յուրահատկությունները հենվում են լեզվական միավորների տարբերությունների վրա: Հաճախ նախնական կիրառություն գտած լեզվական միավորները հետագա գործածությունների մեջ՝ հետին շրջանի հեղինակի խոսքի մեջ, ստանում են ոճական արժեք՝ կապված տվյալ միավորի դրսևորման հաճախականության, և ամենակարգերը՝ հեղինակի ոճական վերաբերմունքի հետ: Այս դիտողությունը տարածվում է նաև լեզվի շարահյուսական միավորների և նրանց ոճական արժեքավորման վրա:

2. Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ ուշադրություն են դրավում նաև շարահյուսական-ոճական կիրառությունները: Սրանք հիմնականում հետևյալներն են: Նախ, սովորաբար համադասական նախադասություններից կազմված բարդ նախադասությունների ճնշող մեծամասնությունը սկսվում է այնպիսի բառակապակցությամբ կամ դերբայական դարձվածով, որի ենթական արտահայտվում է սեռական հոլովով, իսկ ստորոգյալը՝ անցյալ դերբայով: Երկրորդ, պատմության շարադրանքի մեջ բավական շատ են շաղկապների և որպես շաղկապ հանդես եկող միավորների գործածությունները: Եւ շաղկապի ոճական գործածությունները գերազանցում են մյուսներին թե քանակով և թե ոճական բաղմազանությամբ⁸: Այս տեսակետից, «Տարոնի պատմության»

⁸ Եւ շաղկապի առատ և ոճական բաղմազան դրսևորումներով աչքի են ընկնում, օրինակի համար, Աստվածաշունչը և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»

շարադրանքի ոճը թերևս առնչվում է Աստվածաշնչի հետ կամ կրում է վերջինիս ակնառու ազդեցությունը: Երրորդ, պատմության հեղինակը նախընտրում է բարդ նախադասություններով շարադրանք, ուր նախադասության անդամները հաճախ ունենում են ազատ շարադասություն: Պարզ համադասական նախադասություններով շարադրանքը պատմության ոճին հաղորդում է անպաճուճություն, հեշտասահ ընթացք, որոնք հեղինակի լեզվի շարահյուսական-ոճական բնութագրի մի մասն են կազմում:

Առանձին-առանձին խոսենք սրանց մասին:

1) Դասական գրաբարում կային սեռական հոլովով առնված ենթակայի և անցյալ դերբայով արտահայտված ստորոդյալի շարահյուսական միավորի՝ դերբայական դարձվածի, բազմաթիվ կիրառություններ: Այսպես, օրինակ, Ագաթանգեղոսի մոտ հանդիպում են այսպիսի գործածություններ. «Իսկ նորա առեալ զերիվարն և զասպազէնն նորին և զիւր զառնազէնն առեալ կապեալ ի թիկունս ի վերայ մկանաքն և լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ» (Ագաթ., էջ 109): «Իսկ ընդ այն հայեցեալ Հաբեյի՝ ի հօտիցն գառանցն ընծայեալ պտուղ՝ ի խաշանցն մատուցանէր» (Ագաթ., էջ 151) և այլն:

«Տարոնի պատմության» մեջ այսպիսի շարահյուսական կառույցները բավական հաճախակի են, ունեն գրելաձևի սահմաններում ընդգրկվող ոճական կիրառության արժեք: Հաճախ պատմության միևնույն էջում հանդիպում են այնպիսի շարահյուսական կառույցի բազմաթիվ օրինակներ. «Եւ նորա բարկացեալ առաքեաց վեց հազար այր ի վերայ նորա ի Մուշ» (31): «Եւ նորա գիշերագնաց եղեալ, գնաց ի վերայ նորա՝ որք իջևանեալք էին ի Մծմակն» (31): «Իսկ նոցա զազազակ բարձեալ, ասեն...» (31):

«Տարոնի պատմության» 41-րդ էջում կան 13 համառոտ և ընդարձակ նախադասություններ, որոնցից 8-ը սկսվում են այսպիսի շարահյուսական կառույցով: Բացի այս, նույն էջում հանդիպում են նույնպիսի կառույցի այլ կիրառություններ՝ այլևայլ նախադասությունների մեջ, բարդ նախադասությունների այլ մասերում: Օրինակ՝ «Եւ նորա թողեալ զանեակ քնն յողիմ իւր Վահան, և ինքն քաջաբար որպէս արծուի՝ կանչեալ դիմեաց ի վերայ: Ու և ի դողման հաւեալ ամենայն երիվարացն, և հասեալ ի թիկունս Սմբատայ, և բախեալ զտէգն ի վերայ պարսկին թի-

պոեմը (տես Վարագ Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 109—122):

կանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին, և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն»: Այս պարբերութի մեջ ընդգծված կապակցութիւնների մի մասը հանդես է գալիս նախադասութեան սկզբում, մյուս մասը՝ նախադասութեան մեջտեղում. բոլորն էլ համադասական շարահյուսական հարաբերութեան մեջ են:

Սրանցից բացի, այս էջի մեջ մյուս նախադասութիւնների սկզբում հանդիպում են իսկ Սմբատայ ելեալ յեզր պատերազմին, եւ փոխեալ այլ սուր, իսկ նորա փոխեալ զոտնն, զոր տեսեալ Վարազայ իշխանին, իսկ Սմբատայ լուեալ շարահյուսական միավորները:

Այս էջում, միայն մեկ դեպքում է, որ նախադասութիւնը սկսվում է ուղղական հոլովով դրված ենթակայի և անցյալ դերբայով առնված ստորոգյալի շարահյուսական կառուցով (հմմտ. «Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք...»): Այս էջի մնացած շորս նախադասութիւններն ունեն դիմավոր բայաձևով արտահայտված ստորոգյալներով սկսվող նախադասութիւններ (հմմտ. «Զի որչափ և զօրքն բազմանային, նոքա յանձօգս լինէին»): «Եւ իբրեւ սկսան ոմանք երկմտել ի զօրացն Սմբատայ...»):

Բացի այս, նախադասութիւնների այլ մասերում հանդիպող նույնպիսի կազմութիւններից են հետեւյալները՝ (Սմբատայ) ելեալ յերիվարն, և (Սմբատայ) ի մէջ առեալ զնինգ հարեւսն, զոր տեսեալ զօրացն, և այսպէս արարեալ (Սմբատայ): Փակագծերում բերում ենք համադասութեան պայմաններում զեղչված ենթակաները:

Այսպիսով, միայն մեկ էջում հանդիպում են միեւնոյն տիպի շարահյուսական կառուցի այսքան լայն և բազմազան (ենթակաների զեղչում, նախադասութեան սկզբում կամ այլ մասերում հանդես գալը) գործածութիւնները խոստում են հեղինակի շարադրանքի շարահյուսական-ոճական յուրահատկութիւնների մասին: Դասական գրաբարում սովորական կիրառութիւն համարվող այսպիսի շարահյուսական կառուցը Հ. Մամիկոնյանի երկի մեջ ոճական արժեք ունի՝ կապված գործածութեան ընդգծված հաճախականութեան հետ: Այսպիսի դերբայական դարձվածները իրենց իմաստով և կիրառութեամբ ձուլվում են բարդ նախադասութեան մյուս՝ դիմավոր բայաձևով ստորոգում արտահայտող նախադասութեանը, կապվում են նախադասութեան մյուս մասերով արտահայտվող բովանդակութեանը, որոնք միմյանց հետ մի տեսակ ժամանակային հաջորդականութիւն, պատճառ-հետեւանքային հարաբերութիւն են կազմում: Օրինակ՝ «Իսկ Վահանայ տուեալ զնոսա մօրացն՝ զբազումս կոտորեաց, և զբազումս խոցոտեաց, և երկերիւր այր ի մօրն անդր ընկըղ-

մեաց»։ Այս օրինակում նկատվում է բարդ նախադասության մասերի արտահայտած գործողությունների ժամանակային հաջորդականություն։ Իսկ մեկ այլ օրինակում՝ «Նւ նորա բարկացեալ առաքեաց վեց հազար այր ի վերայ նորա ի Մուշ», ղգացվում է գործողությունների պատճառ-հետևանքային հարաբերությունը։

2) Հ. Մամիկոնյանը նախընտրում է նախադասությունները սկսել շաղկապներով։ Այսպես, օրինակ, պատմության 33-րդ էջում չկա մի նախադասություն, որ սկսվի առանց շաղկապի կամ որպես այդպիսին հանդես եկող մի այլ բառի։ Այս էջում տեղ գտած ընդամենը 16 պարզ և ընդարձակ նախադասություններից 10-ը սկսվում են եւ շաղկապով։ Իբրև մակբայը գործածվում է երկու նախադասության սկզբում, իսկ շաղկապը հանդես է գալիս երեք անգամ և միայն մեկ անգամ՝ զի շաղկապը։ Նկատելի է, որ եւ շաղկապի գործածությունը այս պատմության մեջ ամենածավալունն է։ Եթե սրան ավելացնենք նաև եւ շաղկապի 19 զանազան կիրառությունները նախադասությունները և նախադասության անդամները կապակցելիս, սրանց էլ՝ գումարենք այլ կարգի՝ ֆանգի, եքէ, զի (միայն շարահյուսական միավորների միջև), ու, որպէս բառերի 6 կիրառությունները, ապա պարզ կդառնան հեղինակի շարահյուսական-ոճական հակումները շաղկապների և որպես այդպիսին գործածվող բառերի նկատմամբ։

Պատմության 35-րդ էջում նույնպես բոլոր նախադասությունները սկսվում են շաղկապներով, ընդ որում դարձյալ մեծամասնություն են կազմում եւ շաղկապի գործածությունները. 14 նախադասություններից 10-ի դեպքում դրվում են եւ, մնացած դեպքերում իբրև և իսկ շաղկապները՝ հավասարաչափ։

Եւ շաղկապը պատմության մեջ (բովանդակության պլանում) ունի շարադասական այնպիսի կիրառություններ, որոնք իրենց ամբողջության մեջ նույնական են դասական գրաբարի համապատասխան կիրառությունների հետ⁹։ Սրանցից բացի, եւ շաղկապը «Ճարոնի պատմության» մեջ ունի ոճական կիրառություն։ Եւ շաղկապը հաճախ գործածվում է իբրև հարակրկնության ոճական միջոց, ուր թվարկվող գործողությունները տրամաբանական ընթացքով հաջորդում են միմյանց։ Եւ-ի հարակրկնությունը ստեղծում է նախադասության մասերի միջև համամասնություն, ամբողջացնում է այդ մասերը՝ իրենց արտահայտած իմաստների մեջ։ Օրինակ՝ «Եւ կտրեաց զգլուխ, և ձգեաց ի մախաղն իւր, և յորդորեալ

⁹ Հմմտ. Պ. Շարախանյան, Գրաբարի շաղկապները, Երևան, 1960, էջ 82—92։

ղըօրսն ի պատերազմն, և զօրացեալ զօրացն, առաջի եղեալ զնոսա ի փախուստ, և կալան ի նոցանէ քառասուն և ութ իշխան կենդանւոյն, և համար կոտորածոյն ոչ երեւէր՝ վասն բազմութեան» (13): «Իշխանն Հաշտենից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք հազար վեցհարեր այր, և իշխանն Պալունեաց երկու հազար և երկերիւր, և իշխանն Արշուց երեք հազար, և իշխանն Նղնուտայ հինգ հազար, և իշխանն Վահան ութ հազար, և Սմբատ որդի նորա վեց հազար. ընդ ամենայն քսան և ութ հազար» (31—32):

«Տարոնի պատմութեան» մեջ սեռականով ենթակայի և անցյալ դերբայով ստորոգյալի կառուցքը դրսևորվում է որոշակի շաղկապների ուղեկցմամբ: Այսպիսի շարահյուսական կառուցքի զանազան դրսևորումները՝ հանդես գալով նախադասութիւնների սկզբում, իրենցից առաջ ունենում են որոշակի շաղկապներ. տվյալ շաղկապով և դերբայական դարձվածով՝ ամբողջացած կառուցքի կիրառութիւնները խոստում են հեղինակի ոճի մասին, շնայած որ այսպիսի կառուցքների նախնական գործածութիւններ կան դասական գրաբարի այս կամ այն երկի մեջ: Տարբերութիւնն այն է, որ այստեղ այսպիսի կիրառութիւնները հետևողականութեան և օրինաչափութեան են հասնում և շարահյուսական-ոճական արժեք են ստանում:

Ելնելով պատմութեան համապատասխան տվյալների վիճակագրութիւնից կարելի է խոսել այսպիսի կիրառութիւնների հետևյալ տիպերի մասին:

ա) Սովորաբար բարդ կառուցվածքի այն նախադասութիւններում, որոնք սկսվում են եւ շաղկապով, այս եւ շաղկապին մեծ մասամբ հաջորդում է սեռականով ենթակայի և անցյալ դերբայով ստորոգյալի շարահյուսական կառուցքը, այնուհետև՝ բարդ նախադասութեան համադասական կամ ստորադասական լրացումները: Օրինակ՝ «Եւ զայս ասացեալ կնոջն, հանեալ բազում անուշահոտ խունկս տայր սպասաւորացն...» (10): «Եւ նորա լուեալ, զաւուրս երիս իբրեւ զմեռեալս դէտէր անխօս» (20): «Եւ Սմբատայ ձայնս արձակեալ, ասէր. «Սուրբ Կարապետ, յայտնեա և այսօր զքեզ ծառայից քոց...» (33) և այլն:

բ) Նույնը կարելի է ասել նաեւ իսկ շաղկապով սկսվող նախադասութիւնների մասին. իսկ շաղկապով սկսվող բարդ նախադասութիւնների դեպքում իսկ-ին սովորաբար հաջորդում է սեռական կամ ուղղական հոլովով և անցյալ դերբայով դերբայական դարձված, այնուհետև՝ բարդ նախադասութեան մյուս մասերը: Օրինաչափութիւնը ոճական է, բացառութիւնները՝ լեզվական: Օրինակ՝ «Իսկ նորա գնա-

ցեալ ի Մանեայ այսն, և կացեալ անդ ամս եւթն, վախճանի ի կենացս ի փառս աստուծոյ» (7): «Իսկ նորա առեալ՝ սկսաւ արտասուել, և ողբալով ասէ. «Վայ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ ի բարեաց» (9): «Իսկ Վահանայ յարկարծակի առեալ բարձ մի, աճապարեաց և նզեաց ի վերայ բերանոյ նորա և հարաւ ի վերայ նորա...» (45): «Իսկ խոսում զնացեալ վրէժխնդիւ Մօրկայ, և եկեալ անցանէր ընդ Կարնոյ քաղաքն...» (14) և այլն:

Ինչպես նշել ենք, գրաբարի մատենագիրների մոտ նույնպես կան այս կառույցով և իսկ շաղկապով գործածութիւններ: Այսպես, օրինակ, Եղնիկի մոտ հանդիպում է ընդամենը մեկ դեպք, ինչպես՝ Իսկ այլոց ի գրոյ պատճառս առեալ, ասեն» (Եղնիկ, 1826, էջ 188):

դ) Դասական գրաբարի ոճերի հետևութեամբ հիշյալ շաղկապների դիմաց հանդես է գալիս եւ իբրև արտահայտութիւնը, ընդ որում այն դեպքերում, երբ նախադասութեան սկզբում եւ շաղկապի հետ գործածվում է նաև իբրև, ապա սովորաբար սրանց հաջորդող շարահյուսական կապակցութիւնները ունենում են ուղղական հոլովով ենթակա և դիմաւոր բայաձևով ստորոգյալ: Օրինակ՝ «Եւ իբրև վնարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւն, երկերիւր այր համարով թողեալ զրուցատարս այլոցն վասն առն՝ զոր տեսին ի գիշերի...» (34): «Եւ իբրև վնարեցաւ պատերազմն, հրամայեաց ծածկել զնոսա ի ձորս և ի հեղեղատս...» (36): «Եւ իբրև ազդ եղեւ առ բազաւորն խոսում, և խնդաց յոյժ...» (14): ««Եւ իբրև ել անտի տիկինն, խստացին, ռխացան և տրտմեցան յոյժ ընդ իրան սպասաւորքն եկեղեցւոյն...» (10—11) և այլն:

դ) Երբ նախադասութիւնը սկսվում է միմիայն իբրև բառով, ապա համարյա միշտ ունենում ենք բարդ նախադասութեան կաղմի մեջ մտնող դիմաւոր բայաձևերով արտահայտված ստորոգյալներով նախադասութիւններ, որոնք միմյանց նկատմամբ ստորադասական շարահյուսական հարաբերութեան մեջ են գտնվում: Օրինակ՝ «Իբրև խմբեցաւ պատերազմն ական կալաւ Սմբատ որդին Վահանայ, ի վերայ Ասուրայ...» (33): «Իբրև նակատեցան ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղթահարեցին զՍմբատ...» (35): «Իբրև լուաւ զայն թագաւորն երկեալ, քանզի մանուկ էր» (14) և այլն:

3) «Տարոնի պատմութեան» մեջ պարզ և բարդ համադասական նախադասութիւնների կիրառութիւնները անհամեմատ մեծ թիւ են կազմում և գերակշռում են բարդ ստորադասական նախադասութիւնների գործածութիւններին: Այս իրողութեան լավագոյն վկայութիւնն

են շաղկապների ընձեռած տվյալները. պատմության մեջ համադասական շաղկապները մի քանի անգամ շատ են գործածվում, քան ստորադասականները: Սրանց ավելացրած նաև այնպիսի համադասական նախադասությունների դրսևորումները, որոնք շարադասվում են առանց շաղկապների:

Պարզ և ընդարձակ նախադասություններով բաղադրված համադասական և ստորադասական նախադասությունները ունեն ոճական միտումներ. հեղինակը օգտագործում է ժողովրդական բանավոր և գրի առնված զրույցները, որոնք սովորաբար ունենում են ժողովրդախոսակցական պարզ ու հստակ շարադրանք: Հեղինակը մոտ ու հարազատ մնալով պատմության ակունքներին՝ շարադրում է նույնպիսի պարզությամբ: Այս դեպքում որոշակի դեր ու նշանակություն ունեն շարադրանքի բաղադրիչ նախադասությունների հավասարազոր կապակցումները, իրար հաջորդող գործողությունների թվարկում հիշեցնող ընթացքը և այլն: Օրինակ՝ «Եւ մինչ դեռ նա դայն ասէր, տասն այր պատեցին զՎահան. որպէս որք զանտառսն հատանեն, այնպէս յանխնայ կոփէին և նոքա: Եւ սկսաւ պակասիլ Վահան. և ձայն բարձեալ, ասէր. «Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հասիր յօգն ծերոյս»: Զի էր ամաց ութսուն և ութից: Իսկ նորա քաջաբար ի վերայ յարձակեալ որպէս արծիւ սրաթոխ, ասէր. «Օգնեա մեզ սուրբ Կարապետ»: Եւ անդէն ևհատ զգլուխ որդւոյն Ասուրայ, և ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբ աչոք ի բաց ընկենոյր: Եւ զօրացեալ Վահանայ, զվեց երիւմարին զգլուխսն կտրեաց, և մատնեաց տէր ի ձեռս նոցա զզօրսն Պարսից, և փախտական արարին զնոսա մինչև ցերեկոյն: Եւ ի յոսթ հազարէն երեք հազար միայն զնացին առ Վախտանգ: Եւ նորա լուռ եղեալ մինչև ցմիւս ամն. և ի նոյն ամին վախճանեցաւ Վահան քաջն վրէժխնդիր ի վերայ եկեղեցւոյն, և ետ տանել զինքն ի Գլակայ վանսն, և կայ ի թաղման ի դուռն սրբոյն Կարապետին, առաջի սեմոցն» (33):

Այսպիսով, 2. Մամիկոնյանը «Տարոնի պատմության» մեջ գործածում է դասական գրաբարից եկող, ժողովրդախոսակցական ոճերի մեջ ակունքներ ունեցող մի շարք շարահյուսական ոճական կիրառություններ՝ համարվող երևույթներ, որոնք հեղինակի խոսքի մեջ ունենալով հաճախակի, օրինաչափ և միակերպ գործածություններ, ստանում են ոճական արժեք և, իբրև հեղինակային ոճի առանձնահատկությունների մի մաս, բնութագրում են «Տարոնի պատմության» ոճը:

1) Հ. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» արժեքավոր մատենագրական երևույթ է հայոց լեզվի պատմության զարգացման ընթացքը ավելի հանդամանալից և ամբողջական ուսումնասիրելու, ինչպես նաև հին հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզվական էությունը բացահայտմանը մոտենալու տեսակետից: Այս երկի հետ առնչվող պատմաբանասիրական, թարգմանական և բնագրային հրատարակության բերումով կատարված աշխատանքների արտահայտած այն տեսակետը, ըստ որի «Տարոնի պատմությունը» VIII դարի գործ է, համոզիչ, հավաստի և ճշմարիտ է դառնում լեզվական և ոճական քննությանը ձեռք բերված տվյալների հիման վրա: «Տարոնի պատմության» լեզվական նյութի քննությանը բացահայտվում են հնչյունական, բառապաշարային (հատկապես փոխառությունները և սրանց մեջ՝ արաբական փոխառությունները, որոնք կարող էին հիմնավորվել հայերենի խոսակցական տարբերակներում և գրական նորմայի մեջ ներթափանցել ոչ շուտ, քան VIII դ. սկզբներից), ձևաբանական առանձնահատկություններ, որոնք ներկայացնում են դասական գրաբարից բավական հեռու ընկած մի ժամանակահատվածի լեզվական վիճակի գծեր, որոնցով ավելի զգալի են դառնում գրական լեզվի վրա խոսակցական տարբերակի ունեցած ազդեցությունը և հետագա փոփոխությունների սաղմերի արմատավորումը:

2) Հ. Մամիկոնյանի լեզվի բառապաշարը բովանդակության առումով բավական հարուստ է և ինքնատիպ, բխում է հայերենի ընդհանուր գրական և ժամանակի խոսակցական տարբերակներից, համակարգվում է պատմագրական ֆունկցիոնալ ոճի մեջ և, ըստ այսմ, բաշխվում է հիմնականում մեկ տասնյակից ավել խումբ կազմող ֆունկցիոնալ-իմաստային շերտերի մեջ՝ հանդես գալով իբրև հասարակական-քաղաքական, ռազմապետական, իրավական, կրոնապաշտամունքային, մշակութային կյանքի, բնության երևույթների և կենդանիների, մարդուն և նրա մարմնի մասերին վերաբերող, մարդկային զգացմունք, վերաբերմունք և հարաբերություն արտահայտող, դրամական, տարածական և ժամանակային չափ, ազդակցական կապ նշանակող, առօրյա խոսակցության մեջ հանդիպող և առտնին իրեր, հարաբերություններից տվող հասկացությունների անվանումներ:

3) «Տարոնի պատմության» բառապաշարը պարունակում է նախկինում կիրառություն գտած և հայերենի տվյալ փուլի հարստացման

գործում կարևոր նշանակություն ունեցող այնպիսի բառեր և բառաձևեր, որոնք արդյունք են լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների ու ազդակներով պայմանավորված երևույթների՝ բառակազմության (բառաբարդման, ածանցման) և փոխառության: Բառակազմության մեջ մտնող բառաբարդման երևույթները կառուցվածքի տեսակետից համահունչ են և հարադատ հայեցողի համապատասխան օրենքներին ու կանոններին: Հիշյալ օրենքների և կանոնների շրջանակներում բառային բարդությունները ներկայացնում են որոշակի տիպերով պարզակվող իմաստաչի խմբեր ու կոնկրետ կաղապարներ: Անխկալկան բարդությունների մեջ մտնող կրկնավորներն ունեն աննշան գործածություն: Հարադրավոր բարդությունները ընդգրկվում են իմաստային երեք խմբերի մեջ, ընդ որում «անել» իմաստով հանդես եկող հարադրավոր բայերը կազմում են ինք, «լինել» իմաստով հանդես եկողները՝ երկու, իսկ շարժման իմաստով հանդես եկողները՝ հինգ կաղապարներ՝ չհաշված մենակաղապար կիրառությունները: Զուգադրական բայերը կազմում են չորս կաղապար՝ չհաշված մենակաղապար կիրառությունները: Պատճառական հարադիր բայերը նախորդ երկուսի համեմատությամբ ունեն պակաս գործածություն: Կցական և բաղճյուտական բարդությունները նույնպես ունեն աննշան գործածություններ՝ հանդես գալով հիմնականում թվականների կազմության մեջ և այդուհանդերձ չպարունակելով որոշակի նորություն: Հիմնականում առաջնորդվելով, նորակազմ իսկական բարդությունների տվյալներով՝ պարզվում է, որ լեզվական այս իրողությունները գոյանում են հայերենին ընդհանրապես բնորոշ կանոններով ու եղանակներով, ըստ որում բարդության մասնակից բաղադրիչները կրում են որոշակի հնչյունափոխություն, պատկանում են այս կամ այն խոսքի մասին, որի դեպքում առանձնացվում են հիմնականում երեք կաղապարներ, ինչպես նաև մտնում են որոշակի շարաճյուտական փոխհարաբերության մեջ: Բառապաշարի մեջ ածանցման երևույթը հայերենի նախորդ ենթաշրջանների համեմատությամբ էական տարբերություններ չի ներկայացնում: Հայոց լեզվի պատմության տեսակետից բավական կարևոր նշանակություն ունեցող երևույթներ են մի առանձին խումբ կազմող բառերի մեջ՝ խոսակցական լեզվի (կամ բարբառային արտասանության) հետևանքով դրսևորված հնչյունական այն փոփոխությունները, որոնք փաստորեն շեղումներ են գրական լեզվի կանոնակառությունից:

4) Նոր բառերը և իմաստային կիրառությունները «Տարոնի պատմության» բառապաշարի մեջ գրավում են զգալի տեղ: Սրանք իբրև

բառապաշարի առանձնահատկություններ՝ արտացոլում են ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի համապատասխան իրողությունների մի մասը, պայմանավորվում են այդ իրողությունների նկատմամբ հեղինակի ցուցաբերած ոճական հսկումներով և նախասիրությամբ: Բառային նոր միավորների մի մասը և որոշ բառերի նոր իմաստային կիրառությունները կենսունակություն են ունեցել՝ գոյատևելով մինչև ժամանակակից հայերենի փուլը, դառնալով վերջինիս գործուն հաղորդակցական տարրերից: Ըստ երևույթին, նոր բառերի արժեք ունեն նաև «Պատմության» մեջ կիրառված մի քանի տեղանունները:

5) Դարձվածային միավորների ծագումնային, ֆունկցիոնալ-ոճական և կառուցվածքային առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ բառապաշարի համապատասխան միավորները, նախ, մի մասով կապվում են հայերենի նախորդ ենթաշրջանի հետ, մյուս մասով՝ նոր կիրառություններ են, ըստ որում, որոշ նախնական կիրառություններ (ձևական և իմաստային ինչ-ինչ հատկանիշներով) այստեղ ցուցաբերում են զգալի տարբերություններ, իսկ նոր կիրառությունները արտացոլում են հայերենի հետագա զարգացման տվյալների մի մասը՝ դրսևվորված հեղինակի ոճական նախասիրությամբ, երկրորդ, ներկայացնում են հիմնականում երեք ֆունկցիոնալ խմբավորումներ՝ կապված երկի կոնկրետ բովանդակության հետ, երրորդ, խմբավորվում են երկու խոշոր կաղապարների մեջ՝ ունենալով համապատասխանաբար վեց և չորս մանրակաղապարներ (չհաշված առնականական բաղադրիչներով գոյացած մեկ մենակաղապարը):


6) «Տարոնի պատմության» լեզուն պարունակում է մի շարք արժեքավոր ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ, որոնք դասական գրաբարի համեմատությամբ նորակազմություններ կամ զուգահեռ ձևեր են: Վերջիններս նախամիջին ենթաշրջանի գրական լեզվի մեջ են ներթափանցում մեծ մասամբ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվից, մասամբ պայմանավորվում են հեղինակի լեզվի յուրահատկություններով՝ անկախ այն բանից, թե որքանով է նա հետամուտ եղել դասական գրաբարի համապատասխան օրինաչափություններին և վերջիններս ինչպես են իրականացվել նյութի կոնկրետ շարադրանքի ընթացքում:

7) «Տարոնի պատմության» ոճը գոյանում է հայերենի դասական գրաբարյան և նախամիջին ենթաշրջանի ժողովրդախոսակցական ոճերի ակունքներից, որոնք համադրվում են հեղինակի խոսքային անհատականության մեջ: Դասական գրաբարյան ոճական երևույթները համե-

մատաբար պակաս են. կիրառվում են բառային ավելադրություններ, պեսպիսություններ, գրաբարյան դարձվածային միավորներ, ոճեր և արտահայտություններ: Ժողովրդախոսակցական ոճական երևույթները դրսևորումները պայմանավորված են «Պատմության» բովանդակությամբ, ուր զգալի մաս են կազմում ժողովրդի մտածողությունը, հոգեբանությունը, սովորություններն ու նիստուկացը արտացոլող ժողովրդական գրույցներն ու պատմությունները:

8) Հոմանիշ և հականիշ բառերը նույնպես ունեն ոճական արժեք. «Տարոնի պատմության» մեջ հոմանիշ բառերի կիրառությունները անհամեմատ մեծ թիվ են կազմում: Մագելով լեզվի տարբեր աղբյուրներից՝ հոմանիշ բառերը ստեղծում են տեքստի ոճական նրբերանգային բաղադրանքություն: Իմաստային փոխհարաբերության հաշվառման տեսակետից՝ հոմանիշ բառերը կազմում են 4 կարգի հոմանշային շարքեր՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ, որոնք միաժամանակ ունեն արտահայտության պլանի բաղադրանքություններ: Հականիշ բառերի պակաս կիրառություններն իսկ նյութի շարադրանքին հաղորդում են ոճական գույներ և երանգներ:

9) 2. Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» հատկանշական է նաև շարահյուսական ոճական կիրառություններով: Հեղինակը նախընտրում է համադասական նախադասություններով կազմված բարդ նախադասությունների որոշակի մասը սկսել այնպիսի դերբայական դարձված հանդիսացող շարահյուսական միավորով, որը գոյանում է սեռական հոլովով դրված ենթակայի և անորոշ դերբայով առնված ստորոգյալի շարահյուսական փոխհարաբերությունից: Շաղկապների կիրառությունները բավական մեծ թիվ են կազմում, որոնց հիման վրա առանձնացնում ենք շարահյուսական-ոճական կիրառությունների շրջախմբեր: 2. Մամիկոնյանը նախընտրում է բարդ նախադասություններով շարադրանք, ուր նախադասության անդամները ունենում են ազատ շարահասություն: Շարահյուսական-ոճական կիրառությունները բացահայտվում են տեքստի որոշակի հատվածների վիճակագրական վերլուծությամբ:



ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՔ — Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
- Ազաթ. — Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909:
- Արմ. — Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—7, Երևան, 1926—1935:
- Բիւզ. — Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
- ԳԱՏ — ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտութիւնների սերիա):
- Եզնիկ — Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
- Եղիշե — Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատու-
թեամբ ձեռագրաց, աշխատասիրութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957:
- ԺՀԼԲԲ — Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1—3, Երևան,
1969—1970:
- ԼՀԳ — ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հասարակական գիտութիւնների սերիա):
- ՀԱ — «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր):
- ՀԳ — Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմութիւն, հ. 2, Երևան, 1951:
- Հյուբշ. — H. Hubschman, Armenische Grammatik, b. 1—2, Leipzig, 1896—1897.
- Մամիկ. — Յովհաննու Մամիկոնեանի հայկականի Պատմութիւն Տարօնոյ, Վենե-
տիկ, 1732:
- ՄԲԲ — Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան,
1944—1945:
- ՆՀԲ — Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Ալեքեան Մ., Նոր բառգիրք հայկազնեան լեզուի,
հ. 1—2, Վենետիկ, 1836—1837:
- ՊԲՀ — «Պատմա-բանասիրական հանդէս» (ամսագիր):
- Սգր. — Աստուածաշունչ մատենան հին և նոր կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմա-
նութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց,
Վենետիկ, 1860:
- Գործք — Գործք առաքելոց:
- Ելք — Ելք:
- Բ. օրէնք — Երկրորդումն օրինաց:
- Յեսո. — Գիրք Յեսուայ՝ որդոյ Նաւեայ:
- Ա թագ. — Ա գիրք թագաւորութեանց:
- Եզր — Եզր:
- Եսայ. — Մարտիրոսութիւն Եսայայ:
- Մենդ. — Մնունդք:
- Ա մակ. — Ա գիրք Մակարայեցոց:
- Բ մակ. — Բ գիրք Մակարայեցոց:

Մարկ. — Աւետարան ըստ Մարկոսի:

Մատթ. — Աւետարան ըստ Մատթէոսի:

Սաղ. — Գիրք Սաղմոսաց Դաւթի:

Սիրաք. — Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ:

Յայտն. — Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ:

Փիլիպ. — Առ Փիլիպեցիս Թուղթ:

Փարս. — Ղազարայ Փարսեցոյ՝ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ВЯ—«Вопросы языкознания» (ամսագիր):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

- Արզաշյան Գ. Բանասիրական հետախուզումներ, «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4:
- Արզաշյան Գ. «Սերեռոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965:
- Արեղյան Մ. Գրաբարի քերականություն, Երևան, 1936:
- Արեղյան Մ. Երկեր, հ. 1 և 2, Երևան, 1966, 1968:
- Արեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
- Աբրահամյան Ա. Ա. Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1958, 1964:
- Աբրահամյան Ա. Ա. Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
- Աբրահամյան Ա. Ա. Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962:
- Աբրահամյան Ս. Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:
- Ալեքսանյան Վ. Սովետահայ պոեզիայի լեզվական մի քանի առանձնահատկությունների մասին, ՊԲՀ, 1965, 3, 203,—210:
- Ալիկենան Ն. Դասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932:
- Ալիկենան Ն. Մատենադարական հետազոտություններ, հ. Բ, Վիեննա, 1924:
- Ակնարկներ միջին դարական հայերենի պատմության, հ. 1—Բ, Երևան, 1972—1975:
- Աղայան Է. Որակական անցումներ լեզվի մեջ, ԳԱՏ, 1958, 2:
- Աղայան Է. Գրաբարի քերականություն (Սինխրոնիա), հ. Ա, գիրք 1, Երևան, 1964:
- Աղայան Է. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
- Անադյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1—6, Երևան, 1952—1971:
- Անադյան Հ. Հայոց անձնանունների բառարան, հ. 1—5, Երևան, 1942—1962:
- Անադյան Հ. Հայերեն արժատական բառարան, հ. 1—7, Երևան, 1926—1935: Երկրորդ հրատարակություն՝ հ. 1, Երևան, 1971, հ. 2, Երևան, 1973:
- Անադյան Հ. Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951:
- Անադյան Հ. Քննություն նոր Զուղայի բարբառի, Երևան, 1940:
- Անեմյան Վ. Գրական արժատահայերենի ձևավորումը, Երևան, 1971:
- Այտընեան Ա. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
- Անանեան Պ. Ո՞վ է Սերեռոսի Պատմության հեղինակը, «Բազմավեպ», Վենետիկ, 1970:
- Առաքելյան Վ. Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց), Երևան, 1945:
- Առաքելյան Վ. Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975:
- Առաքելյան Վ. Հայերենի ոճաբանության մի քանի խնդիրների մասին, ԳԱՏ, 1952, 2, էջ 32—35:
- Առաքելյան Վ. Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1960:
- Առաքելյան Վ. Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954:

Առաքելյան Վ. Դրաբարի հատընտիր, Երևան, 1946:

Ասատրյան Մ. Անեղական բառերը հայերենում, ՊՐՀ, 1960, 3:

Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հհ. Ա—Բ, Երևան, 1970—1972:

Ավագյան Ա. Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը, Երևան, 1964:

«Արարատ», 1911, № 3:

Ավետիսյան Հ. Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1972:

Ավետիսյան Տ. Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը («Հայոց լեզվի կառուցվածք», Երևան, 1975):

Անտիֆեան Գ. Քերականության հայկական, Վենետիկ, 1815:

Բագրատունի Ա. Հայերեն բերականությունից ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Բաբսեղյան Հ. Արդի հայերենի բառի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:

Բաբսեղյան Հ. Հատուկ անուն (տեսական-նկարագրական ակնարկ), Երևան, 1964:

Բեղիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1972:

Գալբրեհան Յ. Մաշտոցեան լեզուն, ՀԱ, 1913, էջ 719—723:

Գալեմեմարեան Գ. Ոսկեդարեան և ոչ-ոսկեդարեան հայերէնը, ՀԱ, 1893, էջ 257—272:

Գառպարյան Գ. Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968,

Գաբեգիւնյան Գ. Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:

Գյուլբուրդյան Ս., Ալ. Շիրվանզադեի լեզվական մշակույթը, Երևան, 1966:

Գրիգորյան Վ. Ստեփանոս Սյունեցի, Բելյուրթ, 1958:

Գրիգորեան Մ. Գ. Դիտողութիւններ և սրբագրութիւններ Սերէոսի պատմագրոց բնագրին վերայ, Վիեննա, 1973:

Գեորգյան Կ. Հայերենի դարձվածքները, Երևան, 1969:

Զարբանալյան Գ. Հայկական հին զպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար), Վենետիկ, 1886:

Զարբանալյան Գ. Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889:

Զամինյան Ա. Հայ գրականության պատմություն, Ա մաս, Ն/Նախիջևան, 1914:

Թադէոս Աստուածատուեան Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895:

Իշխանյան Ռ. Բաղունցի լեզվական արվեստը, Երևան, 1965:

Իշխանյան Ռ. Տերյանի լեզվական արվեստը, Երևան, 1974

Իշխանյան Ռ. Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը. Երևան, 1971:

Խալաթյան Գ. Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրություն, Վիեննա, 1893:

Խալաթյան Վ. Դրաբարի մի բանի առանձնահատկություններ եզնիկի լեզվում, Երևան, 1944: (Թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր):

Կանոնգիրք հայոց, Զեռագրերի համեմատութեամբ խմբեց Արսէն Ղլտճեան, Թիֆլիզ, 1913:

Կարստ Հ. Հայերենի -եր, -նի, -ուի, -տի հոգնակերտները, ՀԱ, 1803:

Հայկական համարաբան, № 1—7, Երևան, 1972—1974:

Հայ ժողովրդի պատմություն, I մաս, Երևան, 1958:

Հայոց լեզվի զարգացումը Սովետական շրջանում, Երևան, 1973:

Հյուբշման Հ. Հայկական հատուկ անունները, ՀԱ, 1893:

Հովհաննիսյան Ռ. Հին հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը, Երևան, 1972:

Հովհաննիսյան Լ. Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը (թեկնածուական դիսերտացիա), Երևան, 1972:

Ղազարյան Ա. Գրաբարի դասագիրք, Երևան, 1951:

Ղազարյան Ա. Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:

Ղազարյան Ա. Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961:

Ղազարյան Ա. Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960:

Ղարիբյան Ա. Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երե-
վան, 1937:

Ղարիբյան Ա. Հայ բարբառադիտություն, Երևան, 1953:

Ղարիբյան Ա. Հայերենի անվանական հոլովման զարգացման երկու ներքին օրենքները,
ԳԱՏ, 1955, 8, էջ 15—37:

Ղափանցյան Գ. Հնդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939:

Ղափանցյան Գ. Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961:

Ճշմարիտյան Ժ. Գերբայական դարձվածք արդի հայերենում, Երևան, 1961:

Մալխասեանց Ստ. Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891:

Մալխասեանց Ստ. Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892:

Մարգարյան Ա. Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:

Մարգարյան Ա. Ում-ով անկատարի առաջացման հարցի շուրջը, ՊԲՀ, 1966, 2,
էջ 178—186:

Մելիք-Բախշյան Ս. Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1968:

Միևնայան Մ. Հատկացուցիչ-հատկացվալի կապակցությունը գրաբարում, Երևան, 1960
(Յեկնածուական գիտերտացիա, ձևագիր):

Մկրտչյան Ռ. Հին հայերենի «անկանոն» կամ «զարտուղի» հոլովումը և նրա զարգա-
ցումը, Երևան, 1969:

Մուրվալյան Ա. Հայոց լեզվի դարձվածքաբանություն և բայակազմություն, Երևան, 1959:

Յովնանեան Ղ. Հետազոտութիւնք նախնեաց ումկօրէնի վրա, Վիեննա, 1897:

Շառաբխանյան Պ. Գրաբարի շաղկապները, Երևան, 1960:

Շառաբխանյան Պ. Գրաբարի ուղեցույց, Երևան, 1967:

Շառաբխանյան Պ. Գրաբարի դասընթաց, Երևան, 1974:

Չալրխեան Վ. Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուա-
ծովք աշխատասիրեալ ի հ. Արսենէ Այտընեան, Վիեննա, 1885:

Պապոյան Ա. Պարույր Սեակի շափածոյի լեզվական արվեստը, Երևան, 1971:

Պապոյան Ա. Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1975:

Պառնասյան Ն. Քերականական համանիշները ժամանակակից հայերենում (գոլտորա-
կան գիտերտացիա), Երևան, 1971:

Պետրոսյան Լ. Հովհաննէս Թումանյանի լեզվի և ոճի մի քանի առանձնահատկություն-
ներ, ՊԲՀ, 1961, 1, էջ 72—81:

Պետրոսյան Հ. Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:

Պողոսյան Պ. Բաշի հղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում
(հղանակա-ժամանակային կիրառություններ), Երևան, 1959:

Ջանուկյան Գ. Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:

Ջանուկյան Գ. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Ջանուկյան Գ. Հին հայերենի հոլովման սխտիմը և նրա ծագումը, Երևան, 1959:


Ջանուկյան Գ. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադար-
յան Հայաստանում (V—XV տղ.), Երևան, 1954:

Ջանուկյան Գ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

- Ջահուկյան Գ. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
- Ջահուկյան Գ. Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:
- Սալլանթեան Մ. Քերականութիւն գրաբար լեզուիս Հայոց, Ի Մոսկով, 1827:
- Սուրխալյան Ա. Հայերենի դարձվածների և դարձվածաբանական հոմանիշների մասին, ՊԲՀ, 1970, 1, էջ 197—210:
- Սուրխալյան Ա. Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971:
- Սևակ Գ. Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1948:
- Սևակ Գ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
- Վահանյան Գ. Հայոց լեզվի ոճաբանության ձևերի, Երևան, 1956:
- Վարդանյան Վ. Հայ գրականությունը VII դարում, Երևան, 1958:
- Տեր-Մինասյան Ե. Այսպես կոչված Պարսից ժողովրդ (Պատմա-բանասիրական հետազոտություններ), Երևան, 1971:
- Քոսյան Վ. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:
«Եվրոպա», Վիեննա, 1852, № № 21, 31:
- Օրմանյան Մ. Ազգապատում, Կ/Պրինս, 1912:
- Адмони В. Г., Сильман Т. И., Отбор языковых средств и вопросы стиля, ВЯ. 1954, № 4.
- Античные теории языка и стиля, М.—Л., 1936.
- Ахманова О. С. Словарь лингвистических терминов, М., 1966.
- Ахманова О. С., Натан Л. Н., Полторацкий А. И., Фатющенко В. И. О принципах и методах лингвистических исследований, М., 1966.
- Балли Ш. Французская стилистика, М., 1961.
- Будагов Р. А. История слов в истории общества, М., 1971.
- Будагов Р. А. К вопросу о языковых стилях, ВЯ, 1954, № 3.
- Будагов Р. А. Литературные языки и языковые стили, М., 1967.
- Веденина Л. Г. Шор Е. А., Некоторые приемы стилистического исследования текста, М., 1972.
- Виноградов В. В. Русский язык: грамматическое учение о слове, изд. 11, М., 1972:
- Виноградов В. В. О языке художественной литературы, М., 1959.
- Виноградов В. В. Стилистика, теория поэтической речи, поэтика, М., 1963.
- Виноградов В. В. Стиль Пушкина, М., 1941.
- Виноградов В. В. Язык Пушкина (Пушкин и история русского литературного языка), М., 1935.
- Виноградов В. В. Итоги обсуждения вопросов стилистики, ВЯ, 1955, № 1.
- Виноградов В. В. Проблема авторства и теория стилей, М., 1961.
- Винокур Г. О. Культура языка (Очерки лингвистической технологии), М., 1925.
- Винокур Г. О. Избранные работы по русскому языку, М., 1946.
- Гальперин И. Р. Речевые стили и стилистические средства языка, ВЯ, 1954, № 4.
- Гвоздев А. Н. Очерки по стилистике русского языка, М., 1952.
- Гвоздев А. Н. Современный русский язык, I—II, М., 1973.
- Ефимов А. И. Язык сатиры Салтыкова-Щедрина, М., 1953.
- Ефимов А. И. Задачи сравнительной стилистики восточнославянских языков, М., 1963.

- Ильинская И. С. О языковых и неязыковых стилистических средствах, ВЯ, 1954, № 5.
- Кацнельсон С. Д. Содержание слова, значение и образование, М.—Л., 1965.
- Кацнельсон С. Д. Типология языка и речевое мышление, М., 1972.
- Ковтун Л. С. О значении слова, ВЯ, 1955, № 5.
- Колосс Л. Л. О предмете стилистики, ВЯ, 1953, № 3.
- Костомаров В. Г. Культура речи и стиль, М., 1960.
- Курилович Е. Заметки о значении слова, ВЯ, 1955, № 3.
- Кусикьян И. К. Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959.
- Ларин Б. А. Очерки по фразеологии, М., 1956.
- Ларин Б. А. Лекции по истории русского литературного языка (X—середина XVIII века), М., 1975.
- Левин В. Д. О некоторых вопросах стилистики, ВЯ, 1954, № 5.
- Мамонов В. А., Розенталь Д. Э., Практическая стилистика современного русского языка, М., 1957.
- 4-ый Международный съезд славистов (Тезисы докладов), М., 1962.
- Обнорский С. П. Очерки по истории русского литературного языка старшего периода, М.—Л., 1946.
- Общее языкознание (Методы лингвистического анализа), М., 1970.
- Общее языкознание (Внутренняя структура языка), М., 1972.
- Очерки по стилистике русского языка, М., 1959.
- Очерки по стилистике русского языка и литературному редактированию, М., 1961.
- Первая всесоюзная конференция по испанской филологии (Тезисы докладов), Л., 1970.
- Пешковский А. М. Избранные труды, М., 1959.
- Пешковский А. М. Вопросы методики родного языка, лингвистики, стилистики, М.—Л., 1930.
- Пиотровский Р. Г. О некоторых стилистических категориях, ВЯ, 1954, № 4.
- Потоцкая Н. П. Стилистика современного французского языка, М., 1974.
- Практическая стилистика русского литературного языка, М., 1974.
- Проблемы неидиоматической фразеологии, М., 1971.
- Проблемы лингвистической стилистики (Тезисы докладов), М., 1969.
- Реформатский А. А., Введение в языковедение, М., 1947.
- Розенталь Д. Э., Практическая стилистика русского языка, М., 1974.
- Словарь синонимов русского языка, т. I, Л., 1970.
- Смирницкий А. С. Значение слова, ВЯ, 1955, № 2.
- Сорокин Ю. С. К вопросу об основных понятиях стилистики, ВЯ, 1954, № 2.
- Срезневский И. И. Мысли об истории русского языка, СПб., 1850.
- Степанов Г. В. О художественном и научном стилях речи, ВЯ, 1954, № 4.
- Степанов Ю. С. Французская стилистика, М., 1965.
- Степанов Ю. С. Основы общего языкознания, М., 1974.
- Томашевский В. В. Стилистика и стихосложение, Л., 1959.

- Туманян Э. Г. Древнеармянский язык, М., 1972.
- Тынянов Ю. Н. Проблема стихотворного языка (Статьи), М., 1965.
- Чижик-Полейко А. И. Стилистика русского языка, Воронеж, 1964.
- Чичерин А. В. Идеи и стиль (О природе поэтического слова), М., 1963.
- Чичерин А. В. О языке и стиле романа-эпопеи «Война и мир», Львов, 1956.
- Шанский Н. М. Фразеология современного русского языка, М., 1972.
- Шахматов А. А. Введение в курс истории русского языка, часть I; Исторический процесс образования русских племен и наречий, Пг., 1916.
- Шахматов А. А. Сборник статей и материалов, М., 1947.
- Феодоров А. В. В защиту некоторых понятий стилистики, ВЯ, 1954, № 5.
- Функциональный стиль общенаучного языка и методы его исследований, М., 1974.
- Язык и стиль античных писателей, Л., 1966.
- Adontz N. Denys de Thrac et les commentateurs arméniens, Louvain, 1970.
- Cressot M. le style et ses technique: Precis d'analys stylistique, Paris, 1959.
- Jean Mamigonien Continuation de l'histoire de Daron, traduit pour la premier fois de l'arménien, par Jean-Raphael Emine (Collection des historiens anciens et modernes de l'Arménie, par Victor Langlois, tome 1, Paris, 1867).
- Jensen H. Armenische Grammatik, Heidelberg, 1959.
- Hübschmann H. Armenische Grammatik, b. 1—2, Leipzig, 1895—1897.
- Marouzeau J. Precis de stylistique française, Paris, 1959.
- Meillet A. Recherches sur la syntaxe comparée de l'arménien, Lysbonne, 1962.
- Meillet A. Altarmenische Elementarbuch, Heidelberg, 1964.
- Meillet A. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936.



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան (Լ. Հովսեփյան)	5
Գ. Կ. Բաղդիշյան	
ՍԵՐԵՈՍԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ	
Ներածություն	9
Գլուխ առաջին. Բառապաշարը	17
Փոխառյալ բառեր	29
Ածանցում և բառաբարդում	31
Գլուխ երկրորդ. Ձևաբանական առանձնահատկություններ	36
Հոգնակներու մասնիկներ	44
Առաջին և երկրորդ ասպտիկներ	47
Բաղադրյալ ժամանակներ	51
Հարադրալոր բայեր	53
Զուգադրական բայեր	58
Նախդրի և նախադրության զործածությունը	61
Գլուխ երրորդ. ՈՃԸ	63
Համանիշ բառեր	70
Հականիշ բառեր	73
Բառերի և արտահայտությունների օգտագործման յուրահատկություն և նախընտրություն	75
Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառեր և արտահայտություններ	86
Իմաստաբանական առանձնահատկություններ	88
Բայական ժամանակների ոճական կիրառությունը	89
Իմաստի սաստկացում	92
Ավելադրություն	93
Բնվարկում	95
Ոճի այլ առանձնահատկություններ	96
Սերբոսի վերաբերմունքն իր օգտագործած սկզբնաղբյուրների լեզվի նկատմամբ	107
Եզրակացություններ	109
Օգտագործված աղբյուրներ	110

Վ. Գ. Համբարձումյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ «ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԼԵՁՈՒՆ ԵՎ ՈՃԸ . . .	111
Ն ե ր ա ժ ու թ յ ու ն	111
Գլուխ առաջին. Բ ա ո ա ս լ ա շ ա ր ը	121
1. Բառասպաշարի աղբյուրները և շերտերը	122
2. Բառակազմական միջոցները և եղանակները	125
3. Նոր բառեր և իմաստային կիրառություններ	138
4. Դարձվածային միավորները	148
Գլուխ երկրորդ. Ք ե ր ա կ ա ն ա կ ա ն ա ո ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն եր ը	161
Գլուխ երրորդ. «Տ ա ր ո ն ի ս լ ա տ մ ու թ յ ա ն» ո ճ ը	178
1. Հեղինակային ոճի ակունքները	179
2. Հոմանիշ և հականիշ բառերի ոճական կիրառություններ	189
3. Շարահյուսական-ոճական կիրառություններ	193
Եզրակացություններ	200
Համառոտագրություններ	204
Գրականության ցանկ	206

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

Հրատարակչական խմբագիր՝ Ժ. Բ. Ափինյան
Գեղարվեստական խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխնիկական խմբագիր Լ. Կ. Հաբուրյունյան
Սրբագրիչ՝ Է. Ա. Սոխիկյան

ИБ № 226

Հանձնված է շարվածքի 30. 10. 1980 թ.: Ստորագրված է տպագրության 23. 03. 1981 թ.:
ՎՋ 03568: Չափը 60×84¹/₁₆: Թուղթ № 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր
տպագրություն: Պայմ. 12,25, տպագր. 13,5 մամուլ: Հրատ. 11,72: Տպաքանակ 1500:
Պատվիր № 1121: Հրատ. № 5389: Գինը 1 ո. 90 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, 19, Բարեկամության 24 գ

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,
Բարեկամության փ., 24

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
ул. Барекамутян, 24.

1 n. 90 4.

- 3 12 5 4

A ¹¹
65109

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220065109